

ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի
հայաստանյան գրասենյակ

ՀՀ Կրթության և գիտության
նախարարություն

ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Երևան 2005

ՀՀ մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակման ծրագիրն իրականացրած աշխատանքային թիմ`

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (թիմի ղեկավար)

ԱՆԱՀԻՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր (փորձագետ)

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏԻՉՅԱՆ

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (փորձագետ)

ՆԵԼՍՈՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (փորձագետ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն6

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ.

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ,
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ9

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ9

 Հավելվածներ 19

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ).....20

 2.1. Հետազոտության մեթոդաբանական և մեթոդական հիմքերը.....20

 2.2. Աշխատանքային զբաղվածության երևույթի ծավալներն ուսանողների շրջանում21

 2.3. Ուսանողների աշխատանքային զբաղվածության մակարդակն ըստ ուսումնառության տարիների22

 2.4. Աշխատանքային զբաղվածության երևույթն ըստ մասնագիտությունների.....23

 2.5. Աշխատող ուսանողների վարձատրության չափը25

 2.6. Աշխատանքային գործունեության հիմնական դրդապատճառները25

 2.7. Հավելվածներ26

3. ՀՀ ԲՈՒՀԵՐԻ 2002թ. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ
(«Շրջանավարտ 2002» սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն).....29

 3.1. Հետազոտության մեթոդական և մեթոդաբանական հիմքերը.....29

 3.2. Հետքուհական առաջին տարի.....30

 3.3. Բուհն ավարտելուց երեք տարի անց: Երիտասարդ մասնագետների ներգրավվածությունը ՀՀ աշխատաշուկայում31

 3.4. Ի՞նչ միջոցների են դիմում աշխատանք չունեցող երիտասարդ մասնագետներն աշխատանք փնտրելու ընթացքում.....37

 3.5. ՀՀ աշխատաշուկայում 2001-2002 ուս. տարվա շրջանավարտների ներգրավվածության ընդհանուր նկարագիրը.....38

 3.6. Աշխատաշուկայում ներգրավման տեմպերն ու ժամանակահատվածը41

 3.7. Աշխատաշուկայի գրավիչ և մտահոգիչ կողմերը.....45

 3.8. Բուհական գիտելիքները և մասնագետների պատրաստման գործընթացը՝ շրջանավարտների գնահատականներով.....48

 3.9. Հավելվածներ53

4. «ԳԻՆԴ» ԳՈՎԱԶԳԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՏԵՆՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ65

 4.1. Հետազոտության նկարագրությունը65

 4.2. Աշխատանքի պահանջարկն ըստ ֆիզիկական և մտավոր, կայուն և ժամանակավոր բնութագրերի, տնտեսության պետական և մասնավոր հատվածների.....66

 4.3. Տարբեր մասնագիտությունների տեսակարար կշիռն աշխատանքի պահանջարկում՝ ըստ «Գինդ» շաբաթաթերթի հայտարարությունների.....67

 4.4. Հավելվածներ 71

5. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՈՎ.....	75
5.1. Հետազոտության մեթոդական հիմքերը.....	75
5.2. Մասնագիտությունների վարկանիշը: Հասարակական հեղինակության և եկամտաբերության փոխկապվածությունը.....	76
5.3. Կրթությունը հայ հասարակության արդիականացման տեսանկյունից.....	80
5.4. Մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը որպես որոշիչ գործոն.....	85
5.5. Եզրակացություն.....	87
5.6. Հավելված.....	88
6. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՅԿԱՅՎԱԾ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	91
6.1. Հետազոտության մեթոդական և մեթոդաբանական հիմքերը.....	91
6.2. Հետազոտված կազմակերպությունների ընդհանուր նկարագիրը.....	93
6.3. Աշխատակազմի համալրման խնդիրները.....	94
6.4. Աշխատողների որակավորման բարձրացման և վերապատրաստման հիմնախնդիրը.....	96
6.5. Գործատուների գնահատականն ու վերաբերմունքը մասնագիտական ուսումնական հաստատություններին.....	98
6.6. Մասնագիտական ուսումնական հաստատություններին գործատուների օժանդակության պատրաստակամությունը.....	100
6.7. Գործատուների կանխատեսումներն ու ակնկալիքները տնտեսության զարգացման, աշխատաշուկայի ծավալների և աշխատուժի պահանջարկի վերաբերյալ առաջիկա 5-10 տարիների ընթացքում.....	102
6.8. Որքանով է հնարավոր կանխատեսել և բավարարել աշխատուժի պահանջարկի ծավալները մոտակա և միջնաժամկետ հեռանկարում.....	108
6.9. Հավելվածներ.....	111
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.....	121
7.1. Ներածական դատողություններ.....	121
7.2. Աշխատանքի շուկայում իրավիճակը և պահանջարկը.....	122
7.3. Բանվորական կադրերի պատրաստման գործող համակարգը.....	125
7.4. Եզրակացություններ և առաջարկություններ.....	128

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԳ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	132
1. Մասնագիտական կրթության բնագավառում պետության ֆինանսական մասնակցության ձևերն ու եղանակները: Կրթության վարկավորման պետական համակարգի ներդրման անհրաժեշտությունը.....	132
2. Մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման օղակներում գործատուների ներգրավման և արտադրական (արտագնա) պրակտիկայի կազմակերպման բարելավման անհրաժեշտությունը.....	145
3. Աշխատաշուկայի հետ մասնագիտական ուսումնական հաստատությունների կապի համակարգման և կարիերայի զարգացման կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը.....	149
4. Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և.....	152

վերապատրաստման մեխանիզմների ձևավորումը.....	152
5. Բուհական երկաստիճան կրթության և դրա հետ կապված՝ շուկայական պահանջարկի անհամապատասխանության մասին	155
6. Գործատուներին ՀՀ բուհերում նպատակային ուսման գործուղելու իրավունք տալու մասին	156
7. ՀՀ բուհերում ուսման վարձաչափի սահմանման մասին	158
8. Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ինտեգրվելու քաղաքականությունը որպես ՀՀ բուհական համակարգի զարգացման կարևոր գրավական	158
9. Առաջարկություններ նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի համար	159
10. Հավելվածներ	162
11. Օգտագործված գրականություն և աղբյուրներ	165

Ներածություն. ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ

ՈՒ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Հիմնախնդրի էությունը

Ժամանակակից հասարակության և տնտեսության զարգացման գործընթացներում էապես կարևոր է մասնագիտական կրթության համակարգի արդյունավետ գործառնությունը: Այն առանցքային նշանակություն ունի տնտեսության աճող պահանջարկի բավարարման, տնտեսական համակարգի զարգացման, բնակչության կրթամակարդակի բարձրացման, աշխատանքային զբաղվածության ծավալների ավելացման, գործազրկության կրճատման, աղքատության հաղթահարման, սոցիալական վերընթաց մոբիլության առումով բաց համակարգի ձևավորման և այլ հասարակական խնդիրների լուծման տեսանկյունից:

1990թ-ից ի վեր Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության համակարգում կատարվել են արմատական վերափոխումներ: Արմատավորվել է վճարովի կրթության համակարգը, պետական ուսումնական հաստատություններին զուգահեռ գործում են ոչ պետական կրթական հաստատություններ: Ընդունվել են ոլորտը կարգավորող օրենսդրական հիմնարար ակտեր, փաստաթղթեր և որոշումներ, մեկնարկել է եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու գործընթացը:

Առաջընթաց միտումների կողքին կան նաև լուծման կարոտ խնդիրներ և բացթողումներ: Թույլ է և չկարգավորված աշխատաշուկայի և մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև փոխադարձ կապը, տնտեսավարող սուբյեկտների և մասնագիտական կրթօջախների համագործակցությունը, բավարար չեն մասնագիտական կրթական համակարգի գործունեության սոցիալական արդյունավետությունը, շուկայամետ կողմնորոշումը, ոլորտի ֆինանսական գործում պետության մասնակցության արդյունավետության աստիճանը, առկա են կրթության որակի և բովանդակության հետ կապված խնդիրներ:

ՀՀ մասնագիտական կրթության համակարգի հետագա զարգացման ու կատարելագործման, աշխատաշուկայի փոփոխվող ու աճող պահանջներին դրա գործունեության համապատասխանեցման, այդ ոլորտում իրականացվող պետական քաղաքականության ճիշտ և ճկուն կազմակերպման նպատակով կարևորվում է կրթության ասպարեզում տիրող իրավիճակի, առկա միտումների ու հնարավորությունների, տնտեսության և աշխատաշուկայի հետ կապի, մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետ եղանակների հետազոտման դերը:

Ներկայացվող ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանը՝ իրականացնելով հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ՀՀ աշխատանքի շուկայում առկա պահանջարկն ու առաջարկը, վերհանել այդ ոլորտում գոյություն ունեցող միտումները՝ ուրվագծելով հնարավոր հեռանկարները
- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության մասնագիտական (մասնավորապես բուհական) համակարգի հնարավորությունները՝ աշխատաշուկայի պահանջարկը բավարարելու տեսանկյունից
- հետազոտել, սահմանել հասարակական զարգացման նոր պայմաններում մասնագիտական կրթության համակարգին առաջադրվող հիմնական խնդիրները, նախանշել դրանց լուծման ուղիները
- գնահատել մասնագիտական կրթության ոլորտի կառավարման գործում պետական կառույցների դերն ու հնարավորությունները, վերլուծել քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիներն ու եղանակները
- հետազոտել մասնագիտական կրթության համակարգի և աշխատաշուկայի միջև կապերի ու համագործակցության արժեքավոր փորձը, մշակել երաշխավորություններ հայաստանյան իրականության համար
- մշակել հայեցակարգային մոտեցումներ և առաջարկություններ ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում տարվող պետական քաղաքականության զարգացման նպատակով:

Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները

Ծրագրի էմպիրիկ նյութը ձևավորվել է իրականացված վեց սոցիոլոգիական հետազոտությունների և պաշտոնական վիճակագրական տվյալների ուսումնասիրման արդյունքում:

Ուսումնասիրվել է ՀՀ աշխատաշուկայի կառուցվածքը, ընդհանուր բնութագիրն ու զարգացման միտումները:

Ուսումնասիրվել են աշխատաշուկայում ՀՀ բուհերի ուսանողների ներգրավվածության (աշխատանքային զբաղվածության) երևույթը, դրա պատճառներն ու միտումները:

Հետազոտվել են ՀՀ աշխատաշուկայում բուհերի շրջանավարտների ինտեգրման առանձնահատկությունները, մեխանիզմները, տեմպերն ու ժամանակահատվածը, այդ գործընթացին նպաստող և խոչընդոտող իրողությունները:

Վերլուծվել ու համակարգվել են զանգվածային լրատվության միջոցներում աշխատանքի պահանջարկ ներկայացնող հայտարարությունները:

Ուսումնասիրվել է տարբեր մասնագիտությունների վարկանիշը, վերլուծվել են դրանց նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորող հիմնական գործոնները հայ իրականության մեջ:

Անցկացվել է ընտրանքային հետազոտություն գործատուների շրջանում, վերհանվել են աշխատակազմի համալրման, աշխատողների որակավորման բարձրացման ու վերապատրաստման հետ կապված խնդիրները:

Ուսումնասիրվել են տնտեսության զարգացման և աշխատուժի պահանջարկի վերաբերյալ գործատուների կանխատեսումները առաջիկա 5-10 տարիների ընթացքում, մասնագիտական ուսումնական հաստատությունների և տնտեսավարող սուբյեկտների համագործակցության հնարավորությունները:

Վերլուծվել, համակարգվել ու ամփոփվել են ՀՀ մասնագիտական կրթության ոլորտի, տնտեսության և աշխատաշուկայի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության անհրաժեշտ տվյալներ:

Ձևակերպված հիմնախնդիրների, մշակված առաջարկությունների մասնագիտական վերլուծության ու փորձաքննության նպատակով կազմակերպվել են քննարկումներ ֆոկլուս-խմբերի եղանակով՝ ՀՀ բուհերի և նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարների ու նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ:

Մշակվել են մի շարք առաջարկություններ ու երաշխավորություններ ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում իրականացող քաղաքականության վերաբերյալ:

Ծրագրի հաշվետվությունը բաղկացած է երկու մասից:

Առաջին մասում ներկայացվում են սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները, առկա գործընթացների ու վիճակագրային տվյալների վերլուծությունները:

Երկրորդ մասում շարադրվում են ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում պետական քաղաքականության բարելավման և զարգացման նպատակով մշակված հայեցակարգային մոտեցումներն ու առաջարկությունները:

Խոսք շնորհակալության

Ծրագիրն իրականացրած հետազոտական խումբն իր շնորհակալությունն է հայտնում ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակին՝ տեխնիկական և ֆինանսական հովանավորության, ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ կազմակերպական և տեղեկատվական աջակցության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը և «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությանը՝ անհրաժեշտ տվյալների տրամադրման, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ղեկավարությանը՝ աշխատանքային պայմանների ապահովման համար և ծրագրի հիմնադրույթների մասնագիտական քննարկման փուլի մասնակիցներին:

Ծրագիրն իրականացվել է 2005թ. մայիս-նոյեմբեր ամիսներին:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ.
ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ,
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և ԱՊՀ մյուս երկրներում դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Ներկայումս ՀՀ աշխատանքի շուկայի ձևավորման խոչընդոտներ են զանգվածային սեփականաշնորհման բացասական հետևանքները, թաքնված գործազրկությունը հատկապես գյուղատնտեսական շրջաններում, օրենսդրական դաշտի անկատարությունը, աշխատաշուկայի ենթակառուցվածքների, այդ թվում տեղեկատվական դաշտի թույլ զարգացումը, աշխատուժի չկարգավորված միգրացիան:

ՀՀ աշխատանքի շուկայում առկա են մի շարք խնդիրներ, այդ թվում աշխատանքի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության հետևանքով առաջացած մեծածավալ գործազրկությունը, թաքնված զբաղվածությունը, աշխատաշուկայի և տնտեսության անհավասարաչափ զարգացումն ըստ մարզերի, աշխատաշուկայի ենթակառուցվածքների թույլ զարգացումը, զբաղվածության քաղաքականության մեջ ֆինանսական լծակների թույլ կիրառումը:

ՀՀ աշխատանքի շուկայում ընթացիկ իրավիճակը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով: Ընդհանուր առմամբ, 2001թ-ից սկսած նկատվել է առաջարկի և պահանջարկի տարբերության տարեցտարի նվազման միտում: 2004թ. աշխատանքի առաջարկը կազմել է ընդամենը 142,7 հազար մարդ, մինչդեռ աշխատանքի պահանջարկը շեշտակիորեն աճել է, որի արդյունքում 2004թ. մեկ թափուր աշխատատեղին բաժին է ընկել ընդամենը 229 աշխատանք փնտրող: *Տես հավելված 1:*

Գործազրկության ցուցանիշը (հաշվարկված, որպես գործազուրկների միջին թվաքանակի հարաբերություն աշխատուժի թվաքանակին կամ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակին) 2004թ. կազմել է 9.4 տոկոս՝ 2000թ. 11.7 տոկոսի դիմաց (աղյուսակ 1): Ընդ որում, կանանց գրանցված գործազրկության մակարդակն ավելի քան կրկնակի չափով գերազանցում է տղամարդկանց գործազրկության մակարդակը: Սակայն, գրանցված գործազրկության վերաբերյալ տվյալները չեն արտացոլում տնտեսության մեջ իրական գործազրկության մակարդակը, որը պետք է ընդգրկի նաև չգրանցված և թաքնված գործազրկությունը:

Ըստ գնահատումների, գործազրկության իրական մակարդակը մոտ երկու-երեք անգամ գերազանցում է պաշտոնական ցուցանիշը: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004թ. իրականացված 2539 տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների համաձայն, գործազրկության իրական մակարդակը Հայաստանի Հանրապետությունում, հաշվարկված Աշխատանքի

միջազգային կազմակերպության մեթոդաբանության հիման վրա, կազմել է 31.6 տոկոս (աղյուսակ 2): Ընդորում, կանանց գործազրկության մակարդակը դիտարկվող ժամանակահատվածում մշտապես գերազանցել է տղամարդկանց գործազրկության ցուցանիշը: Այսպես, 2004թ. այն կազմել է 37.6 տոկոս՝ 26.6 տոկոսի դիմաց:

Անհրաժեշտ է նշել, որ գործազրկության գրանցված պաշտոնական ցուցանիշի և աշխատուժի ընտրանքային հետազոտության (ԱԸՀ) արդյունքում ստացված տվյալների միջև տարբերությունը բնորոշ է ոչ միայն Հայաստանին, այլև մի շարք անցումային տնտեսությամբ այլ երկրների: ԱՊՀ և բալթյան երկրներում ԱԸՀ-ի արդյունքում ստացված գործազրկության տվյալները գերազանցում են պաշտոնական վիճակագրական տվյալները: Այսպես, դեռևս 1999թ. այդ տարբերությունը կազմում էր Ռուսաստանում՝ ավելի քան 7 անգամ, Ուկրաինայում և Էստոնիայում՝ 3 անգամ:

Աղյուսակ 1. Պաշտոնական գործազրկության մակարդակն ըստ սեռի¹

	<i>տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ, %</i>				
	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Ընդամենը	11.7	10.4	10.8	10.1	9.4
Տղամարդ	8.0	6.9	7.2	5.9	5.2
Կին	15.7	14.1	14.5	14.4	13.6

Աղյուսակ 2. Գործազրկության մակարդակն ըստ սեռի³

	<i>տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ, %</i>		
	Ընդամենը	Տղամարդ	Կին
2001թ.	38.4	36.8	40.2
2002թ.	35.3	31.4	39.7
2003թ.	31.2	24.9	38.2
2004թ.	31.6	26.6	37.6

Աշխատանքի բարձր առաջարկի և նվազ պահանջարկի հետևանքով ՀՀ աշխատանքի շուկան բնութագրվում է մեծ լարվածությամբ:

Հայաստանում աշխատանքի շուկայի ձևավորման վրա ազդեցություն են գործել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

- վատթարացող ժողովրդագրական իրավիճակը,
- պատերազմի, շրջափակման հետևանքով բնակչության միգրացիան՝ փախստականների ներգաղթը և Հայաստանից բնակչության արտագաղթը,
- տնտեսության կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև հախտուն, զանգվածային սեփականաշնորհումը, որոնք հանգեցրին զբաղվածության ճյուղային կառուցվածքի թվացյալ արդիականացմանը (կվազիմոդեռնացմանը), որի արդյունքում մի

¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

³ Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված՝ աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների; «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004թ. հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ, Երևան, էջ 111:

կողմից ավելացավ զբաղվածությունը ծառայությունների ոլորտում, իսկ մյուս կողմից աշխատուժը վերաբաշխվեց արդյունաբերության և շինարարության ոլորտներից դեպի գյուղատնտեսություն: Չանգվածաբար սեփականաշնորհված ձեռնարկությունների ցածր տեխնոլոգիական վերազինման պայմաններում դրանց զգալի մասը անգործության մատնվեց, առաջացնելով աշխատանքի թաքնված շուկա:

Վերլուծությունները վկայում են այն մասին, որ տարեցտարի ավելանում է բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակի մեջ: Այսպես, օրինակ, եթե 2000թ. նրանք կազմում էին գործազուրկների 35.8 տոկոսը, ապա 2004թ.` 38.3 տոկոսը: Ընդորում, բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող գործազուրկների գերակշիռ մասը կազմում են կանայք (2000թ.` 62.8 տոկոս, 2004թ.` 64.3 տոկոս):

ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության ցուցանիշը, որը հաշվարկվում է իրական ՀՆԱ-ի մեկ տոկոս փոփոխության դիմաց զբաղվածության տոկոսային փոփոխության չափով, Հայաստանում առաջին անգամ որպես դրական է գրանցվել 2003-2004թթ. (աղյուսակ 3): Իսկ 1994-2002թթ. այդ ցուցանիշը բացասական էր, թեև իրական ՀՆԱ-ի աճը տարեցտարի ավելի բարձր և կայուն դրական էր, ինչը բացատրվում է մի շարք պատճառներով, այդ թվում տնտեսության բարեփոխումներով (ներառյալ սեփականաշնորհումը), արտադրության կառուցվածքային տեղաշարժերով, ստվերային զբաղվածության առաջացմամբ: Անհրաժեշտ է արձանագրել, որ 2002-2004թթ. զբաղվածության աճի ցուցանիշի ճշգրտումը կատարվել է 2001թ. մարդահամարի արդյունքների հիման վրա: Ելնելով փաստացի տվյալներից, կարելի է եզրակացնել, որ քննարկվող ժամանակաշրջանում իրական ՀՆԱ-ի աճն ապահովվել է ոչ թե աշխատատար ճյուղերի զարգացման, այլ առավել հումքատար արտադրությունների, այդ թվում, հանքահումքային արդյունաբերության, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և թանկարժեք մետաղների վերամշակման և դրանցից պատրաստվող իրերի արտադրության ընդլայնման հաշվին: Եվ դա այն դեպքում, երբ այնպիսի աշխատատար ճյուղում, ինչպիսին գյուղատնտեսությունն է, զբաղված է մոտավորապես կես միլիոն մարդ կամ ամբողջ տնտեսության մեջ զբաղվածների գրեթե կեսը: Սա վկայում է այն մասին, որ գյուղատնտեսության մեջ պահպանվում է աշխատանքի արտադրողականության շատ ցածր մակարդակ, տեխնոլոգիական հետամնացություն և ստվերային գործունեություն: Այնուհանդերձ, նկատվում է աշխատատար ճյուղերի զարգացման միտումը, այդ թվում, գյուղատնտեսության և գյուղմթերքների վերամշակման արտադրության, ծառայությունների ոլորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների:

Աղյուսակ 3. Չբաղվածության առաձգականությունը ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ-ում 1994-2004թթ.⁴

	Հայաստան		
	Իրական ՀՆԱ-ի աճը (%)	Չբաղվածության աճը (%)	Չբաղվածության առաձգականությունը ՀՆԱ-ի նկատմամբ
1994	5,40	-3,61	-0,67
1995	6,90	-0,75	-0,11
1996	5,90	-2,76	-0,47
1997	3,30	-4,42	-1,34
1998	7,30	-2,54	-0,35
1999	3,30	-2,92	-0,89
2000	5,90	-1,58	-0,27
2001	9,60	-0,10	-0,01
2002	13,20	-12,53	-0,95
2003	13,90	0,11	0,01
2004	10,10	0,30	0,03


Աշխատաշուկայում աշխատանքի առաջարկի ու պահանջարկի համապատասխանության (matching) գնահատման համար կիրառվում են տարբեր ցուցանիշներ: Վերլուծության համար հիմնական ցուցանիշ է հանդիսանում Բևերիջի կորը (գրաֆիկ 1): Աշխատանքի առաջարկի և պահանջարկի համապատասխանեցման գործընթացի վերլուծությունը դժվարանում է այն պատճառով, որ անհրաժեշտ տվյալների մի մասը բավարար չէ (հատկապես թափուր աշխատատեղերի կտրվածքով): Թիվ 1 գրաֆիկում ներկայացված կորը հայտնի է որպես **Բևերիջի կոր** և արտահայտում է գործազրկության մակարդակի (u) և թափուր աշխատատեղերի ցուցանիշի (v) միջև հարաբերակցությունը:

Հայաստանի համար Բևերիջի կորի փոփոխությունները 1996-2004թթ. ներկայացված են գրաֆիկ 1-ում: Թափուր աշխատատեղերի ցուցանիշը ներկայացված է տոկոսային արտահայտությամբ՝ աշխատանք փնտրողների ընդհանուր թվաքանակի նկատմամբ:

Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ տվյալ դեպքում հաշվի են առնվում զբաղվածության ծառայության կողմից գրանցված գործազրկության և թափուր աշխատատեղերի պաշտոնական ցուցանիշները: Գծապատկերում գծային ռեգրեսիայի կորը հակադարձ կախվածություն է ներկայացնում գործազրկության մակարդակի և թափուր աշխատատեղերի ցուցանիշի միջև:

⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ-ի տվյալներ:

Գրաֆիկ 1. Գործազրկության և թափուր աշխատատեղերի ցուցանիշների ռեգրեսիոն հարաբերակցությունը ՀՀ-ում 1996-2004թթ. (տոկոսներով)⁵



— Փաստացի գրանցված կորը;
 - - - - - Գծային ֆունկցիա

Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, թափուր աշխատատեղերի և գործազրկության ցուցանիշները փոփոխվում էին տարբեր ուղղություններով, ինչը վկայում է տնտեսության պարբերաշրջանային տատանումների մասին: 1999-2000թթ. տեղի է ունեցել Բևերիջի կորի կտրուկ տեղաշարժ դեպի աջ, որը պայմանավորված էր 1999թ. հունվարի 1-ից ընտանեկան նպաստների համակարգի ներդրմամբ (գործազուրկի կարգավիճակը անհրաժեշտ նախապայմաններից էր այդ համակարգում ընդգրկվելու համար): Մակայն թափուր աշխատատեղերի մոտավորապես նույն ցուցանիշի պայմաններում գործազրկության մակարդակի որոշակի աճը վկայում է բարձր կառուցվածքային գործազրկության մասին: Այդ նույն միտումը 1990-ական թվականներին բնորոշ էր նաև Եվրոմիության երկրներին: 2001-2002թթ. նկատվում է թափուր աշխատատեղերի ցուցանիշի և գործազրկության մակարդակի միաժամանակյա աճ, ինչը կարող է պայմանավորված լինել թափուր աշխատատեղերի և գործազուրկների համապատասխանեցման (matching) գործընթացի և զբաղվածության ծառայությունների գործունեության ցածր արդյունավետությամբ: Մինչդեռ 2003-2004թթ. գրանցված հակառակ միտումը (թափուր աշխատատեղերի ցուցանիշի և գործազրկության

⁵ Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ և «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներ; հեղինակի հաշվարկներ:

մակարդակի նվազում) արտահայտում է զբաղվածության ծառայությունների գործունեության որոշակի բարելավումը²:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2010թ-ից սկսած Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի շուկայի լարվածությունը կթուլանա, աշխատանքի առաջարկը կնվազի, կապված աշխատունակ տարիք թևակոխող բնակչության թվաքանակի կրճատման, և կենսաթոշակի անցնողների թվաքանակի ավելացման հետ:

Տնտեսության զարգացման կայուն տեմպերը հնարավորություն են տալիս որոշել աշխատանքի պոտենցիալ պահանջարկը, ելնելով ձեռնարկությունների զարգացման և արտադրության ընդլայնման հեռանկարներից:

Որակական տեսանկյունից աշխատանքի ընդհանուր պահանջարկն իրենից ներկայացնում է տնտեսական կատեգորիա, որը կարևոր նշանակություն ունի երկրի տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման համար: Հաշվի առնելով աշխատուժի մասնագիտական-որակական մակարդակը, պահանջարկը ստորադասվում է հետևյալ հիմնական խմբերի՝

- բարձրորակ աշխատուժի պահանջարկ,
- միջին որակավորման աշխատուժի պահանջարկ,
- ցածր որակավորման աշխատուժի պահանջարկ,
- չորակավորված աշխատուժի պահանջարկ:

Զարգացած երկրներում գերակշռում է բարձրորակ աշխատուժի նկատմամբ պահանջարկը: Եվրոյի գոտու երկրներում աշխատուժի կրթական մակարդակի աճին զուգահեռ գործազրկությունը զգալիորեն նվազում է: Այսպես, 2000թ. նշված գոտու երկրներում բարձրագույն կրթություն ունեցողների գործազրկության մակարդակն ընդամենը 5 տոկոս էր կազմել, մինչդեռ միջնակարգ կրթություն ունեցողների համար այն կազմել էր՝ 7,5 տոկոս (upper secondary education) և 11,2 տոկոս (lower secondary education): Այդ հանգամանքը վկայում է բարձր կրթական մակարդակ ունեցող աշխատուժի նկատմամբ ավելի բարձր պահանջարկի մասին: Իրոք, 1992-2000թթ. բարձրագույն կրթություն ունեցողների զբաղվածության տարեկան աճը միջին հաշվով կազմել է 3,3 տոկոս, մինչդեռ միջնակարգ կրթություն ունեցողների համար այն կազմել էր՝ 1,1 տոկոս (upper secondary education) և 0,6 տոկոս (lower secondary education): *Տես հավելված 2 :*

ԱՊՀ պետություններում, այդ թվում նաև Հայաստանում անցումային ժամանակաշրջանում որակյալ աշխատուժը կամ դուրս է մղվել արտադրությունից, կամ մասնակիորեն արտագաղթել է, որի արդյունքում զբաղված աշխատուժի կազմում ավելացել է միջին և ցածր որակավորման աշխատուժի տեսակարար կշիռը: Այդ երևույթի բացասական հետևանքներից է վերջին տարիներին նկատվող բարձրորակ աշխատուժի, հատկապես բարձր որակավորում ունեցող բանվորների պակասը, որը պետք է լրացվի արհեստագործական և միջին մասնագիտական կրթական համակարգի վերականգնման միջոցով:

² Ինչպես վկայում են Եվրոպական կենտրոնական բանկի հետազոտությունները, 1997-2000թթ. եվրոյի գոտու երկրներում հիմնականում գրանցվել է Բևերիջի կորի վերընթաց տեղաշարժ և աշխատանքի առաջարկի ու պահանջարկի անհամապատասխանության աճ հատկապես կրթության և զբաղմունքի առանձին տեսակների գծով: “Labour market mismatches in euro area countries”, European Central Bank, March 2002, p. 17, Eurostat (LFS), ECB հաշվարկներ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկան բնութագրվում է ընդհանուր ցածր պահանջարկով, քանի որ զբաղվածության ծառայությունների կողմից գրանցված թափուր աշխատատեղերի քանակը խիստ անբավարար է: Մակայն ստվերային զբաղվածության իրողությունը վկայում է, որ աշխատանքի իրական պահանջարկն ավելի բարձր է: Ընտրանքային դիտարկումները ցույց են տվել, որ չգրանցված կամ թաքնված զբաղվածության ոլորտում ընդգրկված է ավելի քան 200 հազար մարդ: Ինչպես ցույց են տվել 2001-2004թթ. ԱՎԾ-ի կողմից կատարված ընտրանքային հետազոտությունների արդյունքները, թաքնված զբաղվածությունը կազմել է տնտեսության մեջ զբաղվածների 22.6 տոկոսը, որոնց մի մասը հաշվառված են որպես գործազուրկներ: Ընդորում, բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակի մեջ 2004թ. կազմել է 12.7 տոկոս, իսկ չգրանցված գործունեություն իրականացնող գործատուներինը և ինքնազբաղվածներինը՝ 9.9 տոկոս:

Աշխատանքի պահանջարկի կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին հինգ տարիներին այն էապես բարելավվել է ի հաշիվ, նախ և առաջ, վերամշակող արդյունաբերության մեջ աշխատուժի պահանջարկի ավելացման: Ըստ աղյուսակ 4-ի տվյալների, 2005թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ զբաղվածության ծառայության կողմից գրանցված թափուր աշխատատեղերի ավելի քան մեկ-քառորդը բանվորական մասնագիտությունների գծով է, ընդորում պահանջարկի 85 տոկոսից ավելին կենտրոնացած է Երևան քաղաքում:

Աղյուսակ 4. Աշխատուժի պահանջարկի մասնագիտական կառուցվածքը 2005թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ⁶

Հ.Հ.	Մասնագիտություններ	Ըստ ՉՏԿ-ների տվյալների		Ըստ ՉԼՄ-ներից և այլ աղբյուրներից հավաքած տվյալների	Ընդամենը
		Երևան	Մարզեր		
1	Ինժեներներ	4	-	1	5
2	Ուսուցիչներ	5	100	-	105
3	Բժիշկներ, դեղագործներ	1	218	1	220
4	Հաշվապահներ, գործավարներ	4	2	6	12
5	Սպասարկման ոլորտի մասնագետներ	109	13	26	148
6	Բանվորական մասնագիտություններ	290	42	8	340
7	Հսկիչներ, գործակալներ	7	7	1	15
8	Կարողներ	47	120	1	168
9	Վարորդներ	27	2	2	31
10	Պահակներ, հավաքարարներ	167	2	1	170
11	Այլ մասնագիտություններ	55	36	29	120
	ԸՆԴԱՄԵՆԸ	716	542	76	1334

⁶ Աղյուսակը կազմված է «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալների հիման վրա:

Հատկապես բարձր է պահանջարկը այնպիսի մասնագիտությունների գծով, ինչպիսիք են կարող, մանող, գործող, ջուլիակ, փականագործ, վարորդ, խառատ և այլն: Մինչդեռ 1999թ. արդյունաբերության մեջ աշխատուժի պահանջարկն ընդամենը 28 տոկոս էր:

Մեկ այլ խնդիր է գործատուների պահանջարկի բավարարումը որակյալ մասնագետներով, քանի որ գործազուրկների զգալի մասը ցածր մասնագիտական պատրաստվածության պատճառով չի համապատասխանում ազատ աշխատատեղերին ներկայացվող պահանջներին: **Դրա հետ կապված՝ կարևորվում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթական համակարգի վերականգնումն ու զարգացումը աշխատանքի շուկայի պահանջարկին համապատասխան:**

Ըստ հանրապետության տարածաշրջանների՝ աշխատանքի պահանջարկն անհավասարաչափ է բաշխված: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության աշխատանքի ընդհանուր պահանջարկի մոտ 80 տոկոսը բաժին է ընկնում Երևան քաղաքին, իսկ մնացած թափուր աշխատատեղերը հիմնականում բաժին են ընկնում Սյունիքի և Շիրակի մարզերին:

Ինչպես վկայում են մարզերում իրականացված ընտրանքային հետազոտությունների արդյունքները, այնտեղ նույնպես առկա է պահանջարկ բանվորական կադրերի նկատմամբ: Այսպես, «Միջին մասնագիտական կրթական համակարգի զարգացման աջակցություն» Եվրոմիության Տասիս ծրագրի շրջանակներում Լոռվա և Տավուշի մարզերում իրականացված հետազոտության արդյունքների համաձայն հատկապես բարձր է փականագործների, խառատների, շինարարների, կարող բանվորների պահանջարկը (աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Գործատուների պահանջարկն ըստ մասնագիտությունների/զբաղմունքների վանաձոր և Իջևան քաղաքներում⁷

Գործունեության կոդը	Մասնագիտություն	Պահանջվող աշխատողների թվաքանակը
Վանաձոր		
	Փականագործ	373
	Քարտաշ	245
	Եռակցող բանվոր	219
	Նորոգող, մոնտաժող բանվոր	209
	Կարող բանվոր	154
	Համակարգչային օպերատորներ	126
Իջևան		
	Տնտեսագիտություն, հաշվապահություն և աուդիտ (ըստ ճյուղերի)	34
	Կահույքագործ	26
	Տեքստիլագործ	25
	Համակարգչային օպերատոր	17
	Շինարար	17

⁷ Աղյուսակը կազմված է գործատուների պահանջարկի ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա:

Ըստ ընտրանքային հետազոտությունների արդյունքների, Հայաստանի Հանրապետությունում բարձր է պահանջարկը որակյալ տնտեսագետների նկատմամբ, ինչը պայմանավորված է հանրապետությունում վերջին տարիներին գրանցված տնտեսական աճի բարձր ցուցանիշներով: Հատկապես բարձր է պահանջարկը հաշվապահների, մենեջերների, բիզնեսի և մարքեթինգի գծով մասնագետների, բիզնես-պլաններ կազմելու ունակություններ ունեցող մասնագետների, ֆինանսիստների և բանկային գործի մասնագետների նկատմամբ ինչպես տեղական մասնավոր ձեռնարկությունների և խորհրդատվական ընկերությունների, այնպես էլ արտասահմանյան ընկերությունների ՀՀ-ում գործող մասնաճյուղերի կողմից: Այսպես, Իջևան քաղաքում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքների համաձայն գործատուների պահանջարկի մասնագիտական կառուցվածքում հատկապես բարձր է տնտեսագետների, այդ թվում, հաշվապահների, ատլիտորների պահանջարկը:

Աշխատանքի պահանջարկի վերլուծությունն ԱՊՀ այլ պետությունների համեմատ ցույց է տալիս, որ զբաղվածության ծառայություններում գրանցված աշխատուժի պահանջարկը Հայաստանում զգալիորեն ցածր է ԱՊՀ մյուս պետություններից: Մյուս կողմից, չզբաղված աշխատանք փնտրողների թվաքանակի ցուցանիշով Հայաստանը զիջում է միայն Ռուսաստանին և Ուկրաինային: Արդյունքում, մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածության պաշտոնապես գրանցված ցուցանիշը քսան և ավելի անգամ գերազանցում է ԱՊՀ մյուս պետությունների համապատասխան միջին ցուցանիշը:

Աշխատանքի ընդհանուր առաջարկի ձևավորման վրա ազդող կարևորագույն գործոններից է գիտատեխնիկական առաջընթացը կամ տեխնոլոգիական հեղափոխությունը: Այն պայմանավորում է արտադրության միջոցների և աշխատուժի որակական զարգացումը, սակայն, մյուս կողմից նպաստում է արտադրության ոլորտից աշխատուժի ազատմանը: Այնպիսի զարգացած տնտեսությամբ երկրում, ինչպիսին է ԱՄՆ-ը, բանվորների 86 տոկոսը կազմում են որակյալ բանվորները: 1990-ական թվականներին Արևմտյան Գերմանիայում գրասենյակային ծառայողների զբաղվածությունը 40 տոկոսով կրճատվել է՝ կապված գրասենյակային նոր սարքավորման ներդրման հետ:

ԱՄՆ-ում կատարված հետազոտությունների հիման վրա կանխատեսվում է տնտեսագետների համար աշխատատեղերի աճ, հատկապես տնտեսության մասնավոր հատվածում, գերազանցապես խորհրդատվական և գիտական հետազոտություններով զբաղվող ընկերություններում:⁸ Դա պայմանավորված է համաշխարհային տնտեսության մեջ առկա խառնաշփոթ իրավիճակով, աճող մրցակցությամբ և այն հանգամանքով, որ բիզնեսի ոլորտում կատարվող կանխատեսումները զգալի չափով հիմնված են

⁸ “Economics Careers, Jobs and Degree Information”, www.CareerOverview.com, 2004.

քանակական վերլուծության վրա: Հետևաբար, տնտեսագետների ունակություններն ավելի արժեքավոր են դառնում տնտեսության տարբեր ոլորտներում:

Ինչպես ցույց է տալիս տարբեր երկրների (այդ թվում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Բալթյան երկրների և Արևմուտքի) փորձը աշխատանքի շուկայի և զբաղվածության ոլորտում արդյունավետ քաղաքականության իրականացման գծով, զբաղվածության ապահովման դժվարին խնդրի հաղթահարման միակ ուղին զբաղվածության ակտիվ քաղաքականության հետևողական իրականացումն է և ներդրումներն են մարդկային կապիտալի մեջ:

Ըստ հաշվարկների, ակտիվ քաղաքականությունը պասիվի համեմատ նույնիսկ ավելի էժան է, եթե նկատի ունենանք գործազրկության բոլոր բացասական հետևանքները, այդ թվում մարդկային կապիտալի կորուստը, արտագաղթը, հանցագործությունների աճը, սոցիալական զրկանքները և օտարումը հասարակությունից:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Աշխատանքի պահանջարկի շարժը 1992-2004թթ.

(ժամանակաշրջանի վերջի դրությամբ)

Տարիներ	Չեռնարկությունների աշխատանքի պահանջարկը (հազ. մարդ)	Աշխատանք փնտրողների թվաքանակը (հազ. մարդ)	Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը (մարդ)
1992	1.6	64.4	40
1993	1.0	110.2	110
1994	0.5	97.3	183
1995	1.1	133.3	121
1996	0.8	149.7	181
1997	0.9	185.6	217
1998	0.6	148.8	269
1999	0.8	202.2	255
2000	0.6	178.8	319
2001	0.5	162.8	313
2002	0.9	154.1	172
2003	0.7	148.4	201
2004	0.6	142.7	229

Աղբյուրը՝ «ՀՀ գրադվածության ծառայություն» գործակալության և ՀՀ ԱՎԾ տվյալներ

Հավելված 2. Աշխատանքի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն

(educational mismatch) ըստ կրթական մակարդակի եվրոյի գոտու երկրներում

Երկիր	Գործազրկության մակարդակը 2000թ. (%)				Անհամապատասխանությունն ըստ կրթական մակարդակի (var ui / u) (%)			
	Ընդա- մենը	Միջն. կրթու- թյուն (lower sec.)	Միջն. կրթու- թյուն (upper sec.)	Բարձրա- գույն կրթու- թյուն	2000	1992- 2000	1992- 1997	1997- 2000
Բելգիա	5.7	9.3	5.5	2.4	37	7	9	-2
Գերմանիա	7.9	14.0	8.0	4.2	39	19	11	8
Հունաստան	9.2	8.5	11.0	7.2	5	0	0	-1
Իսպանիա	12.3	14.1	11.4	9.2	4	-1	-2	1
Ֆրանսիա	9.2	14.0	8.0	5.1	24	11	2	9
Իռլանդիա	4.3	7.5	2.6	1.9	50	16	8	7
Իտալիա	8.4	10.0	7.4	6.1	6	2	0	2
Լյուքսեմբուրգ	2.4	3.4	2.1	1.4	17	-	-	-
Նիդերլանդներ	2.2	3.4	1.8	1.7	19	-29	-28	-1
Ավստրիա	4.5	8.2	4.0	2.4	47	25	4	21
Պորտուգալիա	3.4	3.5	3.8	2.4	5	-12	-1	-11
Ֆինլանդիա	8.1	12.2	8.9	4.8	20	4	5	0
Եվրոյի գոտու երկրներ (միջինը)	8.1	11.2	7.5	5.0	14	2	-1	3

Աղբյուրը՝ “Labour market mismatches in euro area countries”, European Central Bank, March 2002, p. 17, Eurostat (LFS), ECB հաշվարկներ:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
(Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ)

Բովանդակություն

- 2.1. Հետազոտության մեթոդաբանական և մեթոդական հիմքերը
- 2.2. Աշխատանքային զբաղվածության երևույթի ծավալներն ուսանողների շրջանում
- 2.3. Ուսանողների աշխատանքային զբաղվածության մակարդակն ըստ ուսումնառության տարիների
- 2.4. Աշխատանքային զբաղվածության երևույթն ըստ մասնագիտությունների
- 2.5. Աշխատող ուսանողների վարձատրության չափը
- 2.6. Աշխատանքային գործունեության հիմնական դրդապատճառները
- 2.7. Հավելվածներ

2.1. Հետազոտության մեթոդաբանական և մեթոդական հիմքերը

Հիմնախնդիրը.

Աշխատաշուկայի և դրանում ձևավորված պահանջարկի, ինչպես նաև վերջինիս՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության համապատասխանության մասին հետաքրքիր ցուցանիշներ են հանդիսանում աշխատաշուկայում ապագա մասնագետների՝ ուսանողների լրիվ կամ մասնակի ներգրավվածության տվյալներն ու միտումները: Այդ ցուցանիշները որոշակի պատկերացում են տալիս նաև մասնագիտական ուսումնական հաստատության և տնտեսության տարբեր ճյուղերի ու գործատուների միջև գոյություն ունեցող (նաև՝ տարերայնորեն ձևավորված) կապերի, ինչպես նաև դրանց ձևավորման ու զարգացման հնարավորությունների մասին:

Սույն ծրագրի բաղադրիչներից մեկը ՀՀ բուհերի՝ տարբեր մասնագիտություններ ներկայացնող ուսանողների շրջանում աշխատանքային զբաղվածության երևույթի, դրա ծավալների ու առանձնահատկությունների հետազոտումն էր:

Հետազոտության նպատակը.

- Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության բուհերի ուսանողների աշխատանքային զբաղվածության երևույթը, դրա ծավալները, ընդհանուր բնութագիրն ու հնարավոր միտումները:
- Վիճակագրական տվյալների միջոցով պատկերացում կազմել համեմատաբար ավելի մեծ պահանջարկ վայելող մասնագիտությունների մասին և համադրել այդ տվյալները աշխատաշուկայում առկա միտումների հետազոտման արդյունքների հետ:

Հետազոտությունն ուներ նկարագրական բնույթ: Դրա առջև դրված էին հետևյալ ***խնդիրները.***

- Պարզել, թե տարբեր մասնագիտությունների բնագավառում մասնագիտացող ուսանողների որ մասն է առկա ուսուցմանը զուգահեռ զբաղվում որոշակի եկամուտ ապահովող կայուն (մշտական) կամ ոչ կայուն (ժամանակ առ ժամանակ, սեզոնային) աշխատանքային գործունեությամբ:
- Աշխատող ուսանողների ո՞ր մասին է հաջողվել աշխատանք գտնել իր ապագա մասնագիտությամբ: Պարզել, թե աշխատաշուկայում ո՞ր մասնագիտության նկատմամբ գոյություն ունի ընդգծված պահանջարկ, որը թույլ է տալիս դեռևս չկայացած մասնագետներին ներգրավվել աշխատաշուկայում:
- Որքա՞ն է տարբեր մասնագիտությունների տեղ ուսանողների միջին ամսական եկամուտը ապագա մասնագիտությամբ աշխատելու պարագայում:
- Որո՞նք են բուհերի առկա ուսուցման համակարգում սովորողների աշխատելու հիմնական դրդապատճառները

Այս հարցերի պատասխանները հնարավորություն կտան պարզել, թե աշխատաշուկայում առկա իրավիճակում և միտումների պարագայում որ մասնագիտությունների նկատմամբ կա համեմատաբար ավելի մեծ պահանջարկ, ինչը հնարավորություն է տալիս ապագա մասնագետներին աշխատաշուկայում իրենց տեղը գրավելու առաջին քայլերը կատարել:

Հետազոտությունն անցկացվել է 2005թ-ի մայիսի 10-ից 30-ը՝ անկետավորման մեթոդով:

Հետազոտության ընտրանքը կազմվել է **բնային (ակունքային) սկզբունքով**: Ընտրանքում ընդգրկվել են երկու պետական՝ Երևանի պետական համալսարանի և Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, մեկ մասնավոր՝ «Հյուսիսային» համալսարանի՝ ընդհանուր առմամբ 13 ֆակուլտետներ: Հարցումն անցկացվել է այդ ֆակուլտետների բոլոր կուրսերում: Ընտրանքի ակունքներում ընդգրկված և հարցման պահին լսարանում ներկա ուսանողների թիվը կազմել է 3031: Համատարած հարցման սկզբունքով այդ համախմբությունից առանձնացվել են աշխատանքային գործունեությամբ զբաղվող 326 ուսանողներ, որոնք մասնակցել են անկետավորմանը: Այսինքն, **աշխատանքային զբաղվածության երևույթը տարբեր բուհերի՝ ընտրանքում ընդգրկված 13 մասնագիտությունների տեղ ուսանողների շրջանում կազմում է 10.8%:**


2.2. Աշխատանքային զբաղվածության երևույթի ծավալներն ուսանողների շրջանում

Հարցման արդյունքները վկայում են, որ հետազոտության ընտրանքում ընդգրկված բուհերի ուսանողների շրջանում աշխատանքային լրիվ կամ մասնակի զբաղվածության մակարդակը կազմում է 10.8%: Ընդդրում, 7.1%-ի աշխատանքը համապատասխանում է ապագա մասնագիտությանը: Իսկ 7.1%-ի աշխատանքն ունի կայուն, մշտական բնույթ: Կայուն աշխատանք ունեցող տարբեր մասնագիտությունների տեղ ուսանողների ուսումնառության տարիների միջին աշխատանքային ստաժը կազմում է մոտավորապես 16,5 ամիս:

ԵՊՀ-ի ուսանողների շրջանում աշխատանքային զբաղվածության ծավալներն ավելին են (15.5%), քան, օրինակ, հետազոտության ընտրանքում ընդգրկված ՀՊՄՀ (2.5%) և «Հյուսիսային» համալսարանի (9%) ուսանողների շրջանում:

ԵՊՀ-ի աշխատող ուսանողների 71.6%-ը (կամ ԵՊՀ ուսանողների ընդհ. թվի 11.1%-ը) աշխատում է իր ապագա մասնագիտությամբ: Մինչդեռ, ՀՊՄՀ-ի և «Հյուսիսային» համալսարանի պարագայում այդ թիվը կազմում է համապատասխանաբար՝ 33.3% և 37% (գրաֆիկ 1):

Գրաֆիկ 1. Աշխատանքային զբաղվածության մակարդակն ուսանողների շրջանում ըստ հետազոտության ընտրանքում ընդգրկված բուհերի




2.3. Ուսանողների աշխատանքային զբաղվածության մակարդակն ըստ ուսումնառության տարիների

Ինչպես վկայում են հետազոտության արդյունքները, ուսումնառության տարիներին զուգահեռ ուսանողների շրջանում ավելանում է աշխատանքային շուկայում ներգրավվածների թիվը: Ըստ 3 բուհերում անցկացված ուսումնասիրության տվյալների, առաջին կուրսեցիների շրջանում աշխատանքային զբաղվածություն ունեցողների թիվը կազմում է 2.9%: Այդ թիվը համեմատաբար ավելի մեծ է մասնավոր բուհերում: «Հյուսիսային» համալսարանում, օրինակ, այն կազմում է 5.8%: Դա, թերևս, մեկնաբանելի է, քանի որ մասնավոր բուհերում համեմատաբար ավելի զգալի է այն սովորողների թիվը, որոնք արդեն ունեն աշխատանք և ցանկանում են սովորել հետագա կարիերայի համար անհրաժեշտ բարձրագույն կրթության դիպլոմ ձեռք բերելու և արդեն ընտրված ոլորտում մասնագիտական պատրաստվածությունը խորացնելու համար:

Ուսումնառության տարիների ավելացմանը և մասնագիտական հմտությունների ձևավորմանը զուգահեռ աշխատաշուկայում այս կամ այն կերպ ներգրավված ուսանողների թիվն աճում է: 2-րդ և 3-րդ կուրսերում այն կազմում է 6.8%, 4-րդ կուրսում՝ 10.2%, իսկ 5-րդ և 6-րդ կուրսերում այդ թիվը հասնում է 33.7%-ի, որից 26%-ի աշխատանքը

համապատասխանում է իր ապագա մասնագիտությանը: (Տես հավելված 1: Իսկ ԵՊՀ-ի օրինակով այդ միտումները ներկայացված են գրաֆիկ 2-ում)¹:

Գրաֆիկ 2. Աշխատանքային զբաղվածության բնույթի փոփոխությունն ըստ ուսումնառության տարիների, ԵՊՀ-ի օրինակով (%-ներով՝ սովորողների ընդհանուր թվից)



2.4. Աշխատանքային զբաղվածության երևույթն ըստ մասնագիտությունների

Հետազոտության ընտրանքում ընդգրկվել էին 11 մասնագիտություններ ուսուցանող 13 ֆակուլտետներ: Ուսումնասիրությունը հաստատում է հետազոտական խմբի այն հիպոթեզը, որ ՀՀ աշխատաշուկայում ներկայումս համեմատաբար ավելի մեծ պահանջարկ է վայելում և այդ առումով աճի որոշակի միտումներ ունի ծրագրավորողի մասնագիտությունը: Ստացված տվյալների համաձայն, ԵՊՀ-ի մասնագիտությունների շարքում, օրինակ, աշխատաշուկայում զբաղվածության ցուցանիշով առաջին տեղում «ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության ներկայացուցիչներն են: Հարցմանը մասնակցած 217 ապագա ծրագրավորողների 27.2%-ն աշխատում է իր նախընտրած մասնագիտությամբ: Ընդ որում, վերջիններիս 88.2%-ն ունի կայուն աշխատանք, 67.6%-ն աշխատում է մասնավոր, ոչ պետական ձեռնարկություններում, իսկ 20.6%-ն էլ՝ պետական հիմնարկներում:

Աշխատաշուկայում ներգրավված ապագա ծրագրավորողների թիվը ուսումնառության տարիների աճին զուգահեռ մեծանում է: Եթե 1-ին և 2-րդ կուրսերում իրենց մասնագիտությամբ աշխատանք ունեցողների թիվը ԵՊՀ-ի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում կազմում է 3.8%, ապա մագիստրատուրայում (ուսումնառության 5-րդ և 6-րդ տարիներ) իրենց մասնագիտությամբ զբաղվածություն ունեցողների թիվը կազմում է մինչև 69%: Ընդ որում, նրանց 3/4-ը (53.4%) իր աշխատանքային գործունեությունն իրականացնում է մասնավոր ընկերություններում:

¹ Գրաֆիկը կազմված է ԵՊՀ-ում արածանագրված տվյալների հիման վրա՝ միտումն ավելի ամբողջական ներկայացնելու նպատակով, հաշվի առնելով այն իրողությունը, որ մյուս երկու բուհերում դեռևս չկա մագիստրատուրա:

Երկրորդ տեղում ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողներն են՝ 12.1% ցուցանիշով: Մագիստրատուրայում սովորողների շրջանում այդ թիվը կազմում է 27.9%:

3-րդ հորիզոնականում անգլերեն լեզվի ապագա մասնագետներն են՝ 12.0% ցուցանիշով: Մագիստրատուրայում սովորողների շրջանում այդ թիվը կազմում է 40.5%: Աշխատաշուկայում ներգրավված անգլերենի ապագա մասնագետների 73.1%-ն իր համար զբաղմունք է գտել մասնավոր սեկտորում:

4-րդ տեղում ԵՊՀ-ի իրավաբանական և սոցիոլոգիայի ֆակուլտետների ուսանողներն են 8.8% ցուցանիշով: (Տես աղյուսակ 1) Մագիստրատուրայի երկու կուրսերի համար այդ թիվը կազմում է 35.9%: (1-ին կուրսում՝ 34.4%, 2-րդ կուրսում՝ 39.3%): Աշխատող ապագա իրավաբանների կեսից ավելին իր աշխատանքային մկրտությունը ստանում է պետական հիմնարկներում: Եվ ընդհակառակը, սոցիոլոգիայում մասնագիտացող սովորողների հիմնական մասը աշխատանքային գործունեության առաջին քայլերը կատարում է հասարակական կազմակերպություններում և մասնավոր ընկերություններում: (Տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Աշխատանքային զբաղվածության երևույթն ըստ ֆակուլտետների

1. ԵՊՀ					
	Ֆակուլտետ	ներկաների թիվը	աշխ. թիվը	համ. է մաս.	չի համ.
			%	%	մաս. %
1.	ԻԿՄ	217	68 31.3%	59 27.2%	9 4.1%
2.	Ժուռնալիստիկա	190	28 14.7%	23 12.1%	5 2.6%
3.	Ռոմանագերմանական	491	74 15.1%	59 12.0%	15 3.1%
4.	Իրավաբանական	340	43 12.6%	30 8.8%	13 3.8%
5.	Սոցիոլոգիա	194	28 14.4%	17 8.8%	11 5.6%
6.	Տնտեսագիտական	206	21 10.2%	8 3.9%	13 6.3%
7.	Աշխարհագրական	136	13 9.5%	1 0.7%	12 8.8%
	ընդ. ԵՊՀ	1774	275 15.5%	197 11.1%	78 4.4%
2. ՀՊՄՀ					
8.	Պատմա- աշխարհագրական	428	7 1.6%	4 0.9%	3 0.7%
9.	Հայոց լ. և գրակ.	264	7 2.7%	2 0.8%	5 1.9%
10.	Տարրական կրթ. մանկ. և մեթոդիկայի	185	7 3.8%	1 0.5%	6 3.3%
11.	Թանգարանային գործ. և հուշարձ. պահպան.	79	3 3.8%	0 0.0%	3 3.8%
	ընդ. ՀՊՄՀ	956	24 2.5%	7 0.7%	17 1.8%

3. «Հյուսիսային» համայնարան					
12.	Լրագրության	161	15 9.3%	9 5.6%	6 3.7%
13.	Իրավագիտական	140	12 8.6%	1 0.7%	11 7.9%
	<i>ընդ. «Հյուսիսային» համայնարան</i>	<i>301</i>	<i>27 8.9%</i>	<i>10 3.3%</i>	<i>17 5.6%</i>
Ընդամենը		3031	326 11.1%	226 7.7%	100 3.4%

2.5. Աշխատող ուսանողների վարձատրության չափը

Աշխատանքի դիմաց վարձատրության առումով ևս առաջին հորիզոնականում իֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության ներկայացուցիչներն են: Նրանց միջին ամսական եկամուտը կազմում է մոտ 90 000 դրամ:

Իրենց աշխատանքի դիմաց վարձատրության չափով 2-րդը ԵՊՀ-ի լրագրության ֆակուլտետի ուսանողներն են՝ 61 000 դրամ ցուցանիշով:

3-րդը ապագա տնտեսագետներն են, որոնց միջին ամսական եկամուտը 55 275 դրամ է կազմում:

4-րդ տեղում ապագա իրավաբաններն են: ԵՊՀ-ի իրավաբանության ֆակուլտետի աշխատող ուսանողների միջին ամսական եկամուտը կազմում է 52 350 դրամ:

5-րդ տեղում ապագա սոցիոլոգներն են՝ 44 818 դրամ միջին ամսական եկամուտով:

2.6. Աշխատանքային գործունեության հիմնական դրդապատճառները

Աշխատաշուկայում իրենց առաջին քայլերն անող ուսանողների 9.2%-ը նշում է, որ ուսմանը զուգահեռ իր աշխատելու փաստը պայմանավորված է սոցիալական դժվար պայմանները հաղթահարելու, մասնավորապես ուսման վարձը վճարելու անհրաժեշտությամբ:

46.3%-ին գրավում է ապագա կարիերայի համար անհրաժեշտ փորձ ձեռք բերելու հնարավորությունը:

33.1%-ն էլ կարևորում է թե՛ դրամ վաստակելու և թե՛ ապագա կարիերայի համար անհրաժեշտ փորձ ձեռք բերելու հնարավորությունները:

3.7%-ն առկա ուսմանը զուգահեռ աշխատելու իր դրդապատճառները բացատրում է ծնողներից և շրջապատից անկախ և ինքնուրույն լինելու ցանկությամբ:

5.5%-ն էլ աշխատանքային գործունեության մոտիվացիան մեկնաբանում է ազատ ժամանակը հետաքրքիր և բովանդակալից դարձնելու ցանկությամբ:

Հավելված 1. Աշխատանքային զբաղվածությունն ըստ կուրսերի

2.7. Հավելվածներ

կուրս	ԵՊՀ				ՀՊՄՀ				«Հյուսիսսային» համալսարան				Ընդհանուր			
	համ.	չի համ.	ընդ. աշխ.	ընդ. ներկա.	համ.	չի համ.	ընդ. աշխ.	ընդ. ներկա.	համ.	չի համ.	ընդ. աշխ.	ընդ. ներկա.	համ.	չի համ.	ընդ. աշխ.	ընդ. ներկա.
1-ին	1.5% 4	3.0% 8	4.5% 12	268	0.3% 1	0.6% 2	0.9% 3	345	1.2% 1	4.6% 4	5.8% 5	87	0.9% 6	2.0% 14	2.9% 20	700
2-րդ	2.6% 10	4.6% 17	7.2% 27	373	0% 0	3.8% 8	3.8% 8	212	2.5% 2	9.8% 8	12.3% 10	81	1.8% 12	5.0% 33	6.8% 45	666
3-րդ	7.2% 27	2.1% 8	9.3% 35	378	0.9% 2	0.9% 2	1.8% 4	218	4.9% 4	3.7% 3	8.6% 7	81	4.9% 33	1.9% 13	6.8% 46	677
4-րդ	9.8% 29	3.0% 9	12.8% 38	296	3.3% 5	2.0% 3	5.3% 8	153	5.8% 3	3.8% 2	9.6% 5	52	7.4% 37	2.8% 14	10.2% 51	501
5-րդ	21.4% 71	9.1% 30	30.5% 101	331	0% 0	3.6% 1	3.6% 1	28	0 0	0 0	0 0	0	19.8% 71	8.6% 31	28.4% 102	359
6-րդ	43.7% 56	4.7% 6	48.4% 62	128	0 0	0 0	0 0	0	0 0	0 0	0 0	0	43.7% 56	4.7% 6	48.4% 62	128
ընդհ.	11.1% 197	4.4% 78	15.5% 275	1774	0.8% 8	1.7% 16	2.5% 24	956	3.3% 10	5.7% 17	9.0% 27	301	7.1% 215	3.7% 111	10.8% 326	3031

Հավելված 2. Հետազոտության հարցաթերթը՝ միաչափ տվյալներով

Միրելի բարեկամ,

սույն հարցման նպատակն է պարզել ուսանողների շրջանում աշխատանքային գրավածության երևույթի ընդհանուր նկարագիրը: Այս ուսումնասիրությունը աշխատաշուկայում երիտասարդ մասնագետների ներգրավվածությունը հետազոտող ծրագրի մի մասն է:

Հարցումն անանուն է: Ստացված արդյունքներն օգտագործվելու են միայն ընդհանրացված, վիճակագրական տվյալների ձևով:

Ձեր անկեղծ ու անկաշկանդ պատասխանները կօգնեն հետազոտության հեղինակներին լուծել իրենց առջև դրված խնդիրները և սեփական նպատակները կրթական մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող քաղաքականության բաղադրիչների զարգացմանը գործին:

Լրացվում է ուսանողի կողմից	Լրացվում է անկետայրի կողմից
1. Բուհը, 1.ԵՊՀ-84.4%, 2. ՀՊՄՀ-6.7%, 3. «Հյուսիսային»-8.9%	
2. Ֆակուլտետը	տվյալ կուրսում (խմբում) սովորողների ընդհանուր թիվը
3. Բաժինը	լսարանում ներկա ուսանողների թիվը- 3031
4. Կուրսը (վերցնել շրջանակի մեջ)՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ Ներկա ուսանողների թիվը՝ 700; 666; 677; 501; 359; 128	մշտական կամ ժամանակավոր աշխատանք ունեցողների թիվը- 326

5. Աշխատանքի բնույթը

կայուն, մշտական աշխատանք-7.1%				ոչ կայուն (ժամանակ առ ժամանակ, սեզոնային) աշխատանք-3.7%			
աշխատանքի բնույթը համապատասխանում է սպազա մասնագիտությանը 5.5%		աշխատանքի բնույթը չի համապատասխանում է սպազա մասնագիտությանը 1.6%		աշխատանքի բնույթը համապատասխանում է սպազա մասնագիտությանը 2.0%		աշխատանքի բնույթը չի համապատասխանում է սպազա մասնագիտությանը 1.7%	
աշխատում է պետական հաստատությունում	աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում և այլն	աշխատում է պետական հաստատությունում	աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում և այլն	աշխատում է պետական հաստատությունում	աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում և այլն	աշխատում է պետական հաստատությունում	աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում և այլն
2.3%	3.2%	0.4%	1.2%	0.5%	1.5%	0.3%	1.4%
43 484	80 558	30 250	48 211	45 000	31 731	46 666	30 984

6. Ամսական միջինացված եկամուտը (աշխատավարձը) դրամներով
(գրել վերևի համապատասխան սյունակում՝ գծի վրա)- *ընդհ. միջին աշխ-ը՝ 50 623դր.*

7. Եթե ունեք կայուն, մշտական աշխատանք (նշել եք 5.1-ից 5.4 կետերը), ապա գրեք, թե որքան է կազմում ուսանողական տարիներին զուգահեռ կուտակված Ձեր աշխատանքային ստաժը ամիսներով՝ *16ամիս (min.-0.5, max.-56)*:

8. Հետևյալ տարբերակներից ո՞րն է առավել ճշգրիտ բնորոշում աշխատելու Ձեր մոտիվացիան

8.1. դուք աշխատում եք ստիպված, սոցիալական դժվարին պայմանները հաղթահարելու նպատակով – **9.2%**

8.2. դուք աշխատում եք հետագա կարիերայի համար անհրաժեշտ փորձ ձեռք բերելու նպատակով - **46.3%**

8.3. և՛ մեկը, և՛ մյուսը - **33.1%**

8.4. ուզում է լինել անկախ և ինքնուրույն - **3.7%**

8.5 ազատ ժամանակը հետաքրքիր և բովանդակալից դարձնելու ցանկությունը - **5.5%**

8.6 այլ պատասխան - **2.1%**

9. Որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի ամսեկան միջին եկամուտը առանց Ձեր աշխատանքից ստացվող եկամուտների:

9.1. մինչև 10 000 դրամ – **2.5%**

9.2. 10 000-ից 20 000 դրամ – **4.6%**

9.3. 21 000-ից 40 000 դրամ – **3.7%**

9.4. 41 000-ից 60 000 դրամ – **7.7%**

9.5. 61 000-ից 80 000 դրամ – **6.1%**

9.6. 81 000-ից 100 000 դրամ – **9.8%**

9.7. 101 000-ից 120 000 դրամ – **9.2%**

9.8. 121 000-ից 140 000 դրամ – **2.1%**

9.9. 141 000-ից 160 000 դրամ – **3.4%**

9.10. 161 000-ից 180 000 դրամ – **4.3%**

9.11. 180 000 դրամից ավելի – **18.2%**

9.12. պատասխան չկա - **28.2%**

10. Հարցվողի սեռը՝

10.1. արական – **34.7%**

10.2. իգական – **65.3%**

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

3. ՀՀ ԲՈՒՀԵՐԻ 2002թ. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ

(« Շրջանավարտ 2002» սոցիոլոգիական հետազոտության

արդյունքների վերլուծություն)

Բովանդակություն

3.1. Հետազոտության մեթոդական և մեթոդաբանական հիմքերը

3.2. Ետբուհական առաջին տարի

3.3. Բուհն ավարտելուց երեք տարի անց: Երիտասարդ մասնագետների ներգրավվածությունը ՀՀ աշխատաշուկայում

3.4. Ի՞նչ միջոցների են դիմում աշխատանք չունեցող երիտասարդ մասնագետներն աշխատանք փնտրելու ընթացքում

3.5. ՀՀ աշխատաշուկայում 2001-2002 ուս. տարվա շրջանավարտների ներգրավվածության ընդհանուր նկարագիրը

3.6. Աշխատաշուկայում ներգրավման տեմպերն ու ժամանակահատվածը

3.7. Աշխատաշուկայի գրավիչ և մտահոգիչ կողմերը

3.8. Բուհական գիտելիքները և մասնագետների պատրաստման գործընթացը՝ ՀՀ բուհերի շրջանավարտների գնահատականներով

3.9. Հավելվածներ

3.1. Հետազոտության մեթոդական և մեթոդաբանական հիմքերը

Ուսումնասիրության նպատակն էր հետազոտել 2002թ-ին ՀՀ բուհերն ավարտած երիտասարդ մասնագետների՝ ՀՀ աշխատաշուկայում ներգրավման գործընթացի տեմպերն ու առանձնահատկությունները:

Հետազոտության առջև *խնդիր* էր դրված պարզել որոշակի ժամանակահատվածում (բուհն ավարտելուց հետո 3-4 տարվա ընթացքում) աշխատանք գտած շրջանավարտների տեսակարար կշիռը, աշխատանքի որոնման հիմնական մեթոդներն ու եղանակները, աշխատաշուկայում երիտասարդ մասնագետների համար ձևավորված պայմանները, ինչպես նաև բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման համակարգի դրական ու թերի կողմերը բուհերի շրջանավարտների գնահատմամբ:

Հետազոտության *ընտրանքը* մշակվել է բազմաստիճան եղանակով՝ *ակունքային և համամասնական* մեթոդների զուգակցմամբ:

Հարցմանը մասնակցել են 2001-2002 ուստարում առկա ուսուցմամբ ՀՀ պետական և ոչ պետական բուհերն ավարտած շրջանավարտներ:

Հարցվողների թվաքանակը որոշվել է հետևյալ բանաձևով.

$$Nt^2s^2$$

$n = \frac{Nt^2s^2}{N\Delta^2 + t^2s^2}$, որտեղ՝ *n*-ը ընտրանքային համախմբությունն է,

N-գլխավոր համախմբությունն է (*N*= 10584),

*s*² – հետազոտվող հատկանիշի դիսպերսիան է (*s*²= 0,3),

Հուսալիության հավանականությունը կազմում է՝ $1 - \alpha = 0,95$

α - նշանակալիության մակարդակն է, որը վերցվել է 0,05

Հուսալիության գործակիցը՝ $t = 1,94$

$\Delta = 0,03$ (ընտրանքի սահմանային սխալը վերցվել է 3%)

արդյունքում ստացվել է, որ $n = 1200$:

Այսպիսով, հետազոտված համախմբությունը կազմում է գլխավոր համախմբության 11.34%-ը: Հետազոտության ընտրանքի հետագա կառուցվածքը ձևավորվել է հաջորդ հինգ փուլերում:

Առաջին փուլում կազմվել է համամասնական ընտրանք՝ 2001-2002 ուս. տարվա պետական և ոչ պետական բուհերի շրջանավարտների թվաքանակի վիճակագրական հարաբերակցությամբ (համապատասխանաբար՝ 72.5% և 27.5%):

Երկրորդ փուլում՝ նշված համախմբություններից յուրաքանչյուրում կատարվել է ակունքային ընտրանք. ընտրվել են 13 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ և դրանց երկու տարածաշրջանային մասնաճյուղեր, ինչպես նաև 12 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ¹:

Ընտրանքի երրորդ փուլում, արդեն սահմանված ակունքային ընտրանքներում առկա համամասնություններին համապատասխան, համամասնական սկզբունքով որոշվել է յուրաքանչյուր բուհից հարցվելիք շրջանավարտների խմբաքանակը:

Չորրորդ փուլում հետազոտության շրջանակներում ընդգրկված բուհերում ակունքային ընտրանքի սկզբունքով առանձնացվել են 42 մասնագիտությունների գծով մասնագետներ պատրաստող 118 ֆակուլտետներ:

Հինգերորդ փուլում վերջիններիս շրջանավարտները ընտրանքային համախմբության մեջ ընդգրկվել են ըստ եղած վիճակագրական համամասնությունների (տվյալ բուհի ակունքային ընտրանքում առկա շրջանավարտների ընդհանուր թվաքանակում ունեցած տեսակարար կշռի): *Տես հավելված 2:*

Հետազոտությունն անց է կացվել 2005թ-ի հուլիսի 5-ից օգոստոսի 15-ը՝ հեռախոսային հարցման մեթոդով, ֆորմալիզացված հարցազրույցի սկզբունքով: Զրույցի միջին տևողությունը կազմել է 14 րոպե, հեռախոսազանգերի արդյունավետությունը՝ 35,4%:

3.2. Հետբուհական առաջին տարի

Հարցմանը մասնակցած ռեսպոնդենտների 50,9%-ը բուհն ավարտել է դիպլոմավորված մասնագետի կարգավիճակով, 41,8%-ը ստացել է բակալավրի աստիճան, իսկ 7,2%-ն էլ ավարտել է մագիստրատուրան:

¹ Սկզբնական փուլում ընտրանքում ընդգրկվել էին 6 ոչ պետական բուհեր (Երևանի տնտեսաիրավագիտական համալսարան, «Հայբուսակ», «Հյուսիսային», «Գլաձոր», «Ինտերլինգվա» և Մովսես Խորենացու անվան համալսարաններ): Սակայն համամասնական սկզբունքի համաձայն ընտրանքում ընդգրկված ոչ պետական բուհերի շրջանավարտների 27.5% (330 ռեսպոնդենտ) ծավալը լրացնելու կապակցությամբ առաջացած խնդիրները հետազոտական խմբին ստիպեցին նորոգել ընտրանքը, ընդլայնելով ոչ պետական բուհերի 2002թ-ի շրջանավարտների որոնման դաշտը և ընտրանքում ընդգրկել ևս 6 ոչ պետական բուհեր: *Տես՝ հավելված 2:*

Նրանց 20,7%-ը բուհն ավարտելուց հետո կրթությունը շարունակել է մագիստրատուրայում, 9,1%-ը՝ ասպիրանտուրայում, նոր մասնագիտություն ստանալու ճանապարհն ընտրել է 2,2%-ը:

Թեև, ըստ վիճակագրության, տարիներ շարունակ ՀՀ բուհերի ուսանողների մեծամասնությունը իգական սեռի ներկայացուցիչներ են², այնուհանդերձ, կրթությունը ասպիրանտուրայում շարունակելու հարցում տղաների ձգտումն ավելի մեծ է (բուհն ավարտելուց հետո ասպիրանտուրա է ընդունվել հարցմանը մասնակցած տղաների 13.5%-ը), քան գեղեցիկ սեռի ներկայացուցիչների շրջանում (7.1%):

2002թ. շրջանավարտների 54,1%-ը բուհն ավարտելուց հետո առաջին տարվա ընթացքում արդեն փորձել է առաջին քայլերն անել աշխատաշուկայում, սակայն ոչ բոլորին է հաջողվել աշխատանքային մկրտությունը վերածել կայուն և հիմնական զբաղմունքի:

Միշտ չէ, որ բուհն ավարտելուց հետո երիտասարդ մասնագետները կարողանում են կարճ ժամանակահատվածում ինտեգրվել աշխատաշուկայում: Նրանց 45.9%-ը բուհն ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում տարբեր պատճառներով դեռևս չի գտել աշխատանք: Վերջինների 28.6%-ը (հարցման մասնակիցների ընդհանուր թվի 13.3%-ը) այդ փաստը մեկնաբանում է աշխատաշուկայում իր մասնագիտական որակավորմանը համապատասխանող աշխատանք չգտնելու իրողությամբ: Նշված պատճառով աշխատանք չգտնողների թվաքանակը տարբեր է հետազոտության ընտրանքում ընդգրկված զանազան մասնագիտությունների համար:

Ստացած մասնագիտական որակավորմանը համապատասխան աշխատանք չգտնելու պատճառով բուհն ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանք չեն ունեցել առևտրի կազմակերպման ոլորտում մասնագիտացած շրջանավարտների 36.4%-ը, ֆիզիկոսների՝ 28.6%-ը, հոգեբանության և փիլիսոփայության մասնագետների՝ 23.8%-ը, իրավաբանների՝ 20.6%-ը, դեֆեկտոլոգների՝ 44.4%-ը, հայոց լեզվի և գրականության մասնագետների՝ 21.1%-ը, արևելագետների՝ 20%-ը:

Բուհն ավարտելուց հետո առաջին իսկ տարվա ընթացքում՝ ստացած մասնագիտությամբ աշխատաշուկայում ներգրավվելու առումով առավել «հաջողակ» մասնագիտությունների շարքում կարելի է առանձնացնել հետևյալները.

լրագրություն - 70%

քիմիա - 51.9%:

երաժշտական մասնագիտություններ - 50%

կիրառական մաթեմատիկա և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ - 45.8%

օտար լեզուներ (անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն) - 45%

3.3. Բուհն ավարտելուց երեք տարի անց: Երիտասարդ մասնագետների ներգրավվածությունը ՀՀ աշխատաշուկայում


Բուհերն ավարտելուց 3 տարի անց ՀՀ աշխատաշուկայում որոշակի եկամուտ ապահովող աշխատանք ունի հարցմանը մասնակցածների 59.5%-ը, ընդ որում տղաների մոտ այդ թիվը 13.3%-ով ավելին է (68.6%), քան կանանց շրջանում (55.3%):

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2003թ. և դիմամիկ շարքեր»: Վիճակագրական ժողովածու: Երևան, 2004թ., Էջ 69-70:

Ինչպես վկայում են հետազոտության տվյալները, տղաները, բուհն ավարտելուց հետո բանակում ծառայություն անցնելու պարագայում անգամ, ավելի հաջողակ են ՀՀ աշխատաշուկայում քիչ թե շատ կայուն եկամուտ ապահովող աշխատանք գտնելու հարցում, քան աղջիկները: Եթե 2002թ. բուհերն ավարտած տղաների 68.6%-ը 2005թ-ի հուլիս-օգոստոս ամիսների դրությամբ (բուհն ավարտելուց 3 տարի անց) ուներ աշխատանք, ապա իգական սեռի ներկայացուցիչների մոտ այդ թիվը կազմում էր 55.3%-ը:

Հետազոտության իրականացման ժամանակ (2005թ. հուլիս-օգոստոս ամիսներ) 2002թ-ի շրջանավարտների 22.9%-ը դեռևս շարունակում է աշխատանք փնտրել և սեփական գնահատականներով հայտնվել է գործազուրկի կարգավիճակում: Կանանց և տղամարդկանց շրջանում աշխատանք փնտրողների հարաբերակցությունը գրեթե նույնն էր (համապատասխանաբար՝ 23.1% և 22.4%): *Տես գրաֆիկ 1:*

Գրաֆիկ 1. *Աշխատանքային զբաղվածության և գործազրկության մակարդակները (ծավալները) 2002թ. բուհերն ավարտած տղաների և աղջիկների շրջանում 2005թ. հուլիս-օգոստոս ամիսների տվյալներով (2005թ. հուլիս-օգոստոս)*



Հարցման ենթարկվածների 17.6%-ն էլ թեև չէր աշխատում, սակայն իրեն գործազուրկ էլ չի համարել: Հատկանշական է, որ նրանցից 14.8%-ը երիտասարդ կանայք են, գլխավորապես՝ տնային տնտեսուհիներ:


Ըստ հետազոտության արդյունքների, աշխատանքային զբաղվածության միջին մակարդակը պետական բուհերի շրջանավարտների համար կազմել է 61.1%, իսկ ոչ պետական բուհերի շրջանավարտների համար՝ 55.2%:³ *Տես գրաֆիկ 2:*

Գործազրկության մակարդակը ևս մասնավոր բուհերի շրջանավարտների համար փոքր ինչ ավելին է՝ 25.5%, քան պետական բուհերի շրջանավարտների համար՝ 22%: Նշված տարբերություններն ու ցուցանիշները, թերևս, պետք է բացատրել պետական բուհերում կրթության և մասնագետների պատրաստման ավելի բարձր մակարդակով, ինչպես նաև

³ ԵՊՀ- պարագայում, օրինակ, այդ ցուցանիշը կազմել է 63,3%:

աշխատաշուկայում ոչ պետական բուհերի նկատմամբ դեռևս առկա որոշակի թերահավատությամբ:

Գրաֆիկ 2. Պետական և ոչ պետական բուհերի 2002թ. շրջանավարտների աշխատանքային զբաղվածության և գործազրկության ցուցանիշները



Գործազրկության միջին մակարդակը բուհերի 2002թ-ի շրջանավարտների մոտ կազմում է 22,9%⁴: Գործազրկության միջին մակարդակից բարձր ցուցանիշ է արձանագրվել հետևյալ բուհերի շրջանավարտների մոտ.

1. ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղ-33.3%
2. ՀՊՃՀ Գյումրիի մասնաճյուղ-31.3%
3. Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ-29.6%
4. ՀՊՃՀ-29.3%
5. Երևանի պետական լեզվագիտական համալսարան-28.2%
6. Վանաձորի մանկավարժական ինստիտուտ-26.7%
7. «Հյուսիսային» համալսարան-31.7%
8. Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարան-31.6%
9. Երևանի տնտեսաիրավագիտական համալսարան-30.2%
10. «Գլաձոր» համալսարան – 34.3%
11. «Ինտերլինգվա» համալսարան - 55%
12. Երևանի մենեջմենթի համալսարան – 31.3%

Տես հավելված 3:

Գործազրկության մակարդակը բավականին բարձր է նաև հետևյալ մասնագիտություններն ունեցող երիտասարդների շրջանում:

1. ընդերքաբանություն - 50%
2. առևտուր և ապրանքագիտություն - 50%

⁴ ՀՀ ԱՎԾ կողմից կատարված ընտրանքային հետազոտության տվյալներով գործազրկության մակարդակը 20-29 տարեկանների շրջանում կազմում է 25,9%: Հաշվարկներն ըստ «Աշխատուժը և մանկական զբաղվածությունը Հայաստանում» աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների: Երևան, 2004, էջ 49:

3. անասնաբուծություն, անասնաբուծություն - 50%
4. աստվածաբանություն - 50%
5. արևելագիտություն - 40%
6. ֆիզկուլտուրա - 37.5%
7. տրանսպորտային համակարգեր (ՀՊՃՀ) - 33%
8. կենսաբանական մասնագիտություններ – 30.3%
9. հոգեբանություն և փիլիսոփայություն – 28.6%
10. իրավագիտություն – 28.4%

Տես աղյուսակ 1:

Աղյուսակ 1. Ջրաղվածության ու գործազրկության ծավալներն ըստ մասնագիտությունների (աղյուսակը կազմված է ըստ գործազրկության մակարդակի աճի)

	Ֆակուլտետ/ մասնագիտություն	Աշխ. գրադ. ընդհ. մակ.	Գործ. մակ.	Չաշխատող ոչ գործազուրկներ
1.	Ռուսական բանասիրություն	87.5%	0%	12.5%
2.	Բուժկանխարգելում, դեղագիտություն	85.7%	0%	14.3%
3.	Առանձնաբուծություն	57,7%	3.8%	38.5%
4.	Հայոց լեզու և գրականություն	73.7%	5.3%	21.1%
5.	Սոցիոլոգիա, սոց. աշխատանք	61.6 %	7.7%	30.8%
6.	Երաժշտական մասնագիտություններ	57,7%	7.7%	34.6%
7.	Լրագրություն	80%	10.0%	10%
8.	Մանկաբուծություն	30%	10%	60%
9.	Բուժական գործ	41,5%	10.3%	48.3%
10.	Ագրոկենսաբանական մասնագիտություններ	60,9%	13%	26,1%
11.	Ռեժիսուրա և դերասանական արվեստ	80%	13.3%	6.7%
12.	Մաթեմատիկա	72.7%	13.6 %	13.6%
13.	Աշխարհագրություն, պատմ. և աշխարհագրություն	73.7%	15.8%	10.5%
14.	Գեղարվեստի մասնագիտություններ	83,3%	16.7%	0%
15.	Քիմիա	62.5 %	16.7%	20.8%
16.	Տնտեսական կառավարում	70,6%	17.6%	11.8%
17.	Կիրառական մաթեմատիկա, ինֆորմատիկա, համակարգչային տեխնոլոգիաներ	68.6 %	18.1%	13.3%
18.	Շինարարական մասնագիտություններ	76,2%	19%	4.8%
19.	Տնտեսագիտական մասն. բացի ԵՊՏԻ-ից	61.4%	20.9%	17.7%
20.	Ֆիզիկա	64.3%	21.4%	14.3%
21.	Ճարտարապետություն	77,8%	22.2%	0%
22.	Դեֆեկտոլոգիա	66.6%	22.2%	11.1%
23.	Պարենմաթերքի տեխնոլոգիա	44,4%	22.2%	33.3%
24.	Ֆինանսահաշվային	70.3%	24.3%	5.4%
25.	Մանկավարժական մասնագիտություններ	46.3%	24.6%	29%
26.	Ռադիոտեխնիկա և կապի համակարգեր	68.8%	25%	6.3%
27.	Էներգետիկա, էլեկտրոտեխնիկա	73.9%	26.1%	0%
28.	Միջազգային հարաբերություններ	53.4%	27.9%	18.6%
29.	Մեքենաշինություն, ճարտարագիտություն	48%	28%	24%
30.	Ֆրանսերեն, գերմաներեն	59%	28.2%	12.8%
31.	Իրավագիտություն	57.8%	28.4%	13.7%
32.	Հոգեբանություն և փիլիսոփայություն	61.9 %	28.6%	9.5%
33.	Թեթև արդյունաբերություն	71.4%	28.6%	0%
34.	Անգլերեն, թարգմանչություն	53.6 %	28.9%	17.5%
35.	Կենսաբանական մասնագիտություններ	48.5 %	30.3%	21.1%
36.	Տրանսպորտային համակարգեր	58.3%	33.3%	8.3%
37.	Ֆիզկուլտուրա	37,5%	37.5%	25%
38.	Արևելագիտություն	40 %	40.0%	20%
39.	Աստվածաբանություն	33.4%	50%	16.7%
40.	Ընդերքաբանություն	45%	50%	5%
41.	Առևտուր և ապրանքագիտություն	31,8%	50.0%	18.2%
	Ընդամենը.	59.5%	22.9%	17.6%

Քուին ավարտելուց 3 տարի անց շրջանավարտների 40.5%-ի չաշխատելու և գործազրկության պատճառները:

Պատճառների շարքում կան ինչպես օբյեկտիվ իրողություններ՝ կապված աշխատաշուկայում առկա գործընթացների ու սահմանափակ պահանջարկի, տվյալ մասնագիտության գծով մեծ առաջարկի և շուկայի հագեցվածության, բուհերում մասնագետների պատրաստման գործում եղած որոշ հիմնախնդիրների հետ, այնպես էլ սուբյեկտիվ, անհատական բնույթի գործոններ:

Ռեսպոնդենտների 12%-ը (չաշխատողների՝ 29.6%-ը) աշխատանք չգտնելու իրողությունը բացատրել է ՀՀ աշխատաշուկայում իրենց մասնագիտական որակավորմանը համապատասխանող աշխատատեղերի բացակայությամբ:

Այդ առումով առանձնանում են մի շարք մասնագիտություններ, որտեղ չաշխատելու դրդապատճառների շարքում զգալի տեղ է գրավում հիշյալ գործոնը: Այդ մասնագիտություններն են.

Աղյուսակ 2. Մասնագիտություններ, որոնց ներկայացուցիչների չաշխատելու փաստը որոշակիորեն պայմանավորված է մասնագիտական որակավորմանը համապատասխան աշխատանք չգտնելու գործոնով

	Մասնագիտությունը/ֆակուլտետը	Մասնագիտությանը համապ. աշխատանք չգտնողների %-ը	Գործազրկության ընդհ. %-ը	Չաշխատողների ընդհանուր %-ը
1.	Անասնաբուծություն, անասնաբուժություն	50%	50%	50%
2.	Ընդերքաբանություն	40%	50%	55%
3.	Ֆիզկուլտուրա	37.5%	37.5%	62.5%
4.	Աստվածաբանություն	33.3%	50%	66.6%
5.	Արևելագիտություն	30%	40%	60%
6.	Հոգեբանություն և փիլիսոփայություն	28.6%	28.6%	38.1%
7.	Ռադիոտեխնիկա և կապի համակարգեր	25%	25%	31.3%
8.	Կոմերցիա և ապրանքագիտություն	22.7%	50%	18.2%
9.	Դեֆեկտոլոգիա	22.2%	22.2%	33.3%
10.	Պարենամթերքի տեխնոլոգիա	22.2%	22.2%	55.5%
11.	Էներգետիկա, էլեկտրատեխնիկա	21.7%	26.1%	26.1%
12.	Ֆիզիկա	21.4%	21.4%	35.7%
13.	Մեքենաշինություն, ճարտարագիտություն և այլ մասնագիտություններ	20%	28%	52%
14.	Կենսաբանական մասնագիտություններ	18.2%	30.3%	51.4%
15.	Ֆինանսահաշվալի	16.2%	24.3%	28.7%
16.	Կիրառական մաթեմատիկա, ինֆորմատիկա, համակարգչային տեխնոլոգիաներ	13.3%	18.1%	31.4%
17.	Իրավագիտություն	10.8%	28.4%	42.1%

Անշուշտ, ստացած մասնագիտությամբ աշխատանք չգտնելու իրողությունը շատ դեպքերում կարելի է բացատրել է ՀՀ տնտեսական համակարգի ոչ կայուն, հաճախ նաև՝ տնտեսության առանձին ճյուղերի ճգնաժամային բնութագրով: Սակայն պակաս կարևոր չէ նաև աշխատաշուկայի պահանջներին բուհական կրթության որակական և բովանդակային համապատասխանության խնդիրը:

Օրինակ. 2002թ-ին բուհն ավարտելուց 3 տարի անց կիրառական մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում մասնագիտացած երիտասարդների 55.4%-ն է աշխատում է իր մասնագիտությամբ: Իսկ 2005թ-ին ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում անցկացրած հետազոտության արդյունքներով իրենց մասնագիտությանը համապատասխանող

աշխատանքային զբաղվածության երևույթն այդ բնագավառի ապագա մասնագետների շրջանում կազմում է 30.7%: Մագիստրատուրայի սովորողների շրջանում այդ թիվը հասնում է մինչև 70%:

Այս տվյալները, թերևս, խոսում են երկու իրողությունների մասին:

Նախ. պետական բուհերում տվյալ ոլորտում մասնագետների պատրաստման գործընթացը գտնվում է համեմատաբար ավելի բարձր մակարդակի վրա, քան ոչ պետական բուհերում: (հարցման ենթարկված 2002թ-ի շրջանավարտների շարքում ընդգրկված՝ ծրագրավորման և համակարգչային տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների 20.5%-ը ավարտել է ոչ պետական բուհեր):

Երկրորդ. պետական բուհերում էլ տարեց-տարի կատարելագործվում է ծրագրավորողների պատրաստման գործընթացը, ընդլայնվում են տեխնիկական հնարավորությունները, կիրառական գիտելիքների և հմտությունների ավանդման պրակտիկան:

Հատկանշական է, որ 2002թ-ի շրջանավարտ-ծրագրավորողներն իրենց ֆակուլտետի օրինակով մասնագետներ պատրաստելու բուհական գործընթացը համեմատաբար ցածր են գնահատել՝ 3.78 միավոր: Այդ ցուցանիշով ինֆորմատիկայի, կիրառական մաթեմատիկայի և համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում մասնագետներ պատրաստելու գործընթացը 42 այլ մասնագիտությունների շարքում հայտնվել է 32-րդ տեղում: *Տես աղյուսակ 8:*

Ուշագրավ է, որ նմանատիպ խնդիրները հատուկ են ԱՊՀ անդամ մյուս երկրներին ևս: ՌԻբրահինացի փորձագետներն, օրինակ, արձանագրում են, որ համակարգչային ծրագրավորման ոլորտում աշխատող ուկրաինացի ուսանողներն ավելի շատ են վաստակում, քան նրանց դասախոսները:⁵ Դա հանգեցնում է նրան, որ բարձր որակավորում ունեցող մասնագետները խուսափում են բուհում դասավանդելուց, նախընտրելով պրակտիկ և ավելի բարձր վարձատրվող աշխատանքը: Արդյունքում նվազում է տվյալ ոլորտում մասնագետներ պատրաստելու բուհական գործընթացի արդյունավետությունը:

Հարցման մասնակիցների 5.5%-ն էլ իր չաշխատելու իրողությունը պատճառաբանում է աշխատաշուկայում առկա պայմանների, մասնավորապես վարձատրության ոչ գրավիչ լինելով: (Այդ դրդապատճառը նշել է չաշխատողների 13.6%-ը):

Թեև աշխատավարձի նվազ չափը համեմատաբար ավելի քիչ դեր է խաղում երիտասարդ մասնագետների չաշխատելու գործում, այնուհանդերձ, այդ առումով առանձնանում են հետևյալ մասնագիտությունների ներկայացուցիչները.

Աղյուսակ 3. Մասնագիտություններ, որոնց ներկայացուցիչների չաշխատելու փաստը որոշակիորեն պայմանավորված է վարձատրության նվազ չափերով


	Մասնագիտությունը	Ցածր աշխատավարձի պատճառով չաշխատողների %-ը	Գործազրկության ընդհանուր մակարդակը	Չաշխատողների ընդհանուր %-ը
1.	կոմերցիա և ապրանքագիտություն (ԵրՊՏԻ)	27.3%	50%	68.2%
2.	տրանսպորտային համակարգեր (ՀՊՇՀ)	16.7%	33.3%	41.6%
3.	մեքենաշինություն և ճարտարագիտություն	12%	28%	52%
4.	միջազգային հարաբերություններ	11.6%	27.9%	46.5%
5.	արևելագիտություն (ԵՊՀ)	10%	40%	60%
6.	շինարարական մասնագիտություններ	9.5%	19%	23.8%

⁵ І єєі єààà Բ. Ծàèèèř ā ī ðī Õãñée: Ñããī āř ý è +ãðàç ī ýòü èãð. Æãçãðà "Äãí ēī ð". 03.06.2004 . <http://dancor.sumy.ua/articles/1245.htm>

	(ՀՊՃՀ)			
7.	անգլերեն թարգմանչություն	9.3%	28.9%	46.4%
8.	իրավագիտություն	8.8%	28.4%	42.1%
9.	գեղարվեստի մասնագիտություններ	8.3%	16.7%	16.7%
10.	քիմիա	7.4%	14.8%	33.3%
11.	ռեժիսուրա և դերասանական արվեստ	6.7%	13.3%	20%
12.	տնտեսագիտական մասնագիտություններ (բացի ԵՊՏԻ-ից)	6.3%	20.9%	38.6%

Աշխատանք չունեցող երիտասարդ մասնագետներից 16.3%-ն էլ աշխատաշուկայում իր չներգրավվածության երևույթը մեկնաբանում է անձնական, ընտանեկան դրդապատճառներով:⁶ *Տես գրաֆիկ 3:*

Գրաֆիկ 3. Չաշխատելու հիմնական պատճառները



Այսպիսով, ՀՀ աշխատաշուկայում երիտասարդ մասնագետների ներգրավման ճանապարհին թիվ մեկ խոչընդոտը տնտեսության թույլ զարգացածության հետևանքով **աշխատատեղերի բացակայությունն է, երկրորդը՝** նույն հանգամանքով պայմանավորված՝ **վարձատրության փոքր չափերը**: Երբեմն նշանակություն ունի նաև կրթության որակի և բովանդակության անհամապատասխանությունը աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին, որն առանձին ուսումնասիրության նյութ կարող է հանդիսանալ:

3.4. Ի՞նչ միջոցների են դիմում աշխատանք չունեցող երիտասարդ մասնագետներն աշխատանք փնտրելու ընթացքում

Աշխատաշուկայի և մասնագիտական կրթության հաստատությունների միջև անկանոն ու չկարգավորված հարաբերությունների իրողությանը ավելանում է Հայաստանյան իրականության մեջ երիտասարդ մասնագետներին աշխատաշուկայում ինտեգրելու առաքելություն ունեցող ենթակառուցվածքների բացակայությունը կամ թույլ գործառնությունը և համապատասխան մշակույթի չձևավորվածությունը:

⁶ Տվյալ դրդապատճառի գերակշռությունը պատասխաններում պետք է բացատրել այն փաստով, որ հարցման ենթարկված ռեսպոնդենտների 29%-ը ամուսնացած, երիտասարդ կանայք են, որոնց մեծամասնությունը զբաղված է տնային տնտեսությամբ ու երեխաների խնամքով: Հատկանշական է, որ իրենց չաշխատելու փաստը անձնական և ընտանեկան դրդապատճառներով բացատրողների 97.9%-ը (որոնք կազմում են հարցման մասնակիցների 15.9%-ը) կանայք են:

Աշխատանք չունեցող ռեսպոնդենտների կեսից ավելին՝ 61.3%-ը (հարցման ենթարկվածների՝ 24.8%-ը) զբաղմունք գտնելու նպատակով չի դիմել որևէ կազմակերպության:

11.5%-ն այդ նպատակով դիմել է զբաղվածության գործակալության կենտրոնի տարածքային ստորաբաժանմանը:

Աշխատանքի տեղավորման մասնավոր ծառայությունների օգնությանն է դիմել 8.4%-ը, 8.2%-ն էլ ապավինել է ծանոթ-բարեկամների օգնությանը: Աշխատանք փնտրողների միայն 6.8%-ն է այցելել տարբեր հիմնարկներ: 2.4%-ը արձագանքել է ՋԼՄ-ներում հրապարակված հայտարարություններին, 1.2%-ն էլ տեղադրել է հայտարարություններ ինտերնետ ցանցում: *Տես հավելված 1:*


Հատկանշական է, որ աշխատանք չունեցող տղամարդկանց շրջանում դրա փնտրտուքով զբաղվելու ակտիվությունը (57.2%) (այցելություններ հիմնարկություններ, հայտարարությունների հրապարակում, հրապարակված հայտարարություններին արձագանքում) մոտ երկու անգամ ավելի մեծ է, քան կանանց մոտ (32.7%):

3.5. ՀՀ աշխատաշուկայում 2001-2002 ու. տարվա շրջանավարտների ներգրավվածության ընդհանուր նկարագիրը

Ինչպես նշվել է, աշխատաշուկայում այս կամ այն կերպ ներգրավված է հարցմանը մասնակցած բարձրագույն կրթությամբ մասնագետների 59.5%: Ընդ որում, կայուն, մշտական աշխատանք ունի նրանցից 51.7%-ը: Մնացյալ 7.8%-ի աշխատանքն ունի ոչ կայուն, սեզոնային կամ ժամանակավոր բնույթ:


Բացի այդ, կայուն աշխատանք ունեցողներից ոչ բոլորն են աշխատում բուհում ստացած մասնագիտությամբ: Ստացած մասնագիտությանը համապատասխանող մշտական աշխատանք ունի 2002թ-ին բուհերն ավարտած երիտասարդ մասնագետների ընդամենը 38.3%-ը: Իսկ, ընդհանուր առմամբ, մասնագիտությանը համապատասխանող աշխատանք ունի նրանց 40.8%-ը: *Տես գրաֆիկ 4:*

Գրաֆիկ 4. ՀՀ աշխատաշուկայում ներգրավված՝ 2002թ-ի շրջանավարտների աշխատանքային զբաղվածության բնութագիրը



Աշխատանք ունեցող երիտասարդ մասնագետների 26.7%-ը աշխատում է պետական, բյուջետային հիմնարկներում, իսկ նրանց կեսից ավելին՝ 30.6%-ը, ինչպես և բնորոշ է շուկայական տնտեսություն ունեցող հասարակություններին, զբաղված է մասնավոր, ոչ պետական հաստատություններում: 2002-ի շրջանավարտների 2.3%-ն էլ աշխատաշուկայում զբաղվում է անհատական ձեռներեցությամբ: Բնական է նաև այն իրողությունը, որ վերջիններից միայն 0.1%-ին է հաջողվել կարճ ժամանակահատվածում դառնալ սեփական բիզնես ունեցող գործարար: *Տես գրաֆիկ 5:*

Գրաֆիկ 5. 2001-2002 ուս. տարվա ՀՀ բուհերի շրջանավարտների ներգրավվածությունը աշխատաշուկայում՝ ըստ պետական և ոչ պետական հատվածների



Անշուշտ, դեռևս կայացող և սեփական առաջնայնությունները հստակեցնող, դինամիկ, երբեմն դրամատիկ փոխակերպումներ ապրող տնտեսության համար էլ կարելի է առանձնացնել այնպիսի մասնագիտություններ, որոնք ունեն որոշակի պահանջարկ և՛ ընդհանրապես:

Ո՞ր մասնագիտություններն են շահեկանորեն աչքի ընկնում մասնագիտացմանը համապատասխանող կայուն և մշտական աշխատանք գտնելու առումով:

Ըստ ստացված տվյալների, **մասնագիտացմանը համապատասխանող աշխատանք ունենալու** տեսանկյունից առանձնանում են հետևյալ մասնագիտությունների ներկայացուցիչները.

1. գեղարվեստի մասնագիտություններ (կերպարվեստ, քանդակագործություն, գեղանկարչություն, դիզայն) – 75%
2. լրագրություն - 70%
3. ռուսական բանասիրություն – 62.5%
4. հոգեբանություն և փիլիսոփայություն – 57.1%
5. ռադիոտեխնիկա և կապի համակարգեր – 56.3%
6. մաթեմատիկա - 54.5%
7. կիրառական մաթեմատիկա, ինֆորմատիկա, համակարգչային տեխնոլոգիաներ – 54.2%
8. ֆինանսահաշվաչին – 54.1%
9. ատամնաբուժություն – 53.9%
10. ճարտարապետություն և շինարարական այլ մասնագիտություններ – 53.3%
11. աշխարհագրություն, պատմություն և աշխարհագրություն – 52.6%

- 12. ֆիզիկա - 50%
- 13. երաժշտական մասնագիտություններ - 50%
- 14. ֆրանսերեն, գերմաներեն լեզուներ – 48.7%
- 15. քիմիա - 48.1%

Աղյուսակ (վարկանիշային) 4. Աշխատանքի համապատասխանությունը բուհում ստացած մասնագիտությանը⁷

	Ֆակուլտետ / մասնագիտություն	Ընդ. աշխատ.		Գործազրկ. մակարդակը	Չաշխատող ոչ գործազուրկ. քիվը
		Համ. է	Չի համ.		
1.	Բուժկանխարգելում և դեղագիտություն	85.7%	0%	0%	14.3%
2.	Գեղարվեստի մասնագիտություններ	75%	8,3%	16.7%	0%
3.	Լրագրություն	70%	10%	10.0%	10%
4.	Ճարտարապետություն	66,7%	11,1%	22.2%	0%
5.	Ռուսական բանասիրություն	62.5%	25%	0.0%	12.5%
6.	Հոգեբանություն և փիլիսոփայություն	57.1%	4.8%	28.6%	9.5%
7.	Ռատիոտեխնիկա և կապի համակարգեր	56.3%	12.5%	25.0%	6.3%
8.	Կիրառական մաթեմատիկա, ինֆորմատիկա, համակարգչային տեխնոլոգիաներ	55.4%	13.2%	18.1%	13.3%
9.	Մաթեմատիկա	54.5%	18.2%	13.6%	13.6%
10.	Ֆինանսահաշվաշին	54.1%	16.2%	24.3%	5.4%
11.	Ատամնաբուժություն	53,9%	3,8%	3.8%	38.5%
12.	Աշխարհագրություն, պատմ. և աշխարհագրություն	52.6%	21.1%	15.8%	10.5%
13.	Շինարարական մասնագիտություններ	52,4%	23,8%	19.0%	4.8%
14.	Ֆիզիկա	50%	14.3%	21.4%	14.3%
15.	Երաժշտական մասնագիտություններ	50%	7,7%	7.7%	34.6%
16.	Ֆրանսերեն, գերմաներեն	48,7%	10,3%	28.2%	12.8%
17.	Քիմիա	41.7%	20.8 %	16.7%	20.8%
18.	Սոցիոլոգիա, սոց. աշխատանք	46.2%	15.4%	7.7%	30.8%
19.	Իրավագիտություն	45.1%	12.8%	28.4%	13.7%
20.	Տնտեսական կառավարում	44,1%	26,5%	17.6%	11.8%
21.	Հայոց լեզու և գրականություն	42.1%	31.6%	5.3%	21.1%
22.	Տնտեսագիտական մասն. բացի ԵՊՏԻ-ից	41.1%	20.3%	20.9%	17.7%
23.	Բուժական գործ	34.5%	7.0%	10.3%	48.3%
24.	Ազրկենասաբանական մասնագիտություններ	39,1%	21,7%	13.0%	26.1%
25.	Էներգետիկա, էլեկտրոտեխնիկա	39.1%	34.8%	26.1%	0%
26.	Ֆիզկուլտուրա	37,5%	0%	37.5%	25%
27.	Անգլերեն քարգմանչություն	34 %	19.6%	28.9%	17.5%
28.	Ռեժիսուրա և դերասանական արվեստ	33.3%	46.7%	13.3%	6.7%
29.	Դեֆեկտոլոգիա	33.3%	33.3%	22.2%	11.1%
30.	Մանկաբուժություն	30%	0%	10.0%	60%
31.	Թեթև արդյունաբերություն	28.6%	42.9%	28.6%	0%
32.	Մանկավարժական մասնագիտություններ	26.1%	20.3%	24.6%	29%
33.	Արևելագիտություն	25%	15 %	40.0%	20%
34.	Կենսաբանական մասնագիտություններ	24.2 %	24.2%	30.3%	21.1%
35.	Մեքենաշինություն, ճարտարագիտություն	24%	24%	28.0%	24%
36.	Միջազգային հարաբերություններ	23.2%	30.2%	27.9%	18.8%
37.	Ընդերքաբանություն	20%	25%	50.0%	5%
38.	Տրանսպորտային համակարգեր	16.7%	41.6%	33.3%	8.3%
39.	Աստվածաբանություն	16.7%	16.7%	50.0%	16.7%
40.	Առևտուր և ապրանքագիտություն	13,6%	18,2%	54.5%	18.2%
41.	Պարենամթերքների տեխնոլոգիա	11,1%	33,3%	22.2%	33.3%
	Ընդամենը	40.8%	18.7%	22.9%	17.6%

⁷ Մուգ ֆոնով առանձնացված մասնագիտությունների պարագայում բուհում ստացած մասնագիտությանը համապատասխանող աշխատանքային զբաղվածության ծավալները փոքր են ստացված ընդհանուր միջին ցուցանիշից՝ 40.8%-ից:


3.6. Աշխատաշուկայում ներգրավման տեմպերն ու ժամանակահատվածը

Ըստ ուսումնասիրության տվյալների, մինչև բուհն ավարտելը հարցման մասնակիցների 10.9%-ն արդեն ունեցել է աշխատանք: Ընդ որում, 9.1%-ի աշխատանքը համապատասխանել էր ապագա մասնագիտությանը:


Հաջորդ երեք տարիների ընթացքում կայուն, մշտական աշխատանք են գտել 2002-ի շրջանավարտների 51.7%-ը: 38.3%-ի աշխատանքը համապատասխանում է ստացած մասնագիտությանը: Այս ցուցանիշը պետական բուհերի շրջանավարտների դեպքում մոտավորապես 1.5 անգամ ավելի մեծ է (44.6%), քան ոչ պետական բուհերի շրջանավարտների պարագայում (30.6%): *Տես գրաֆիկ 2:*

Ի՞նչ ժամանակահատվածում է հաջողվել աշխատանք ունեցողներին գտնել իրենց տեղն աշխատաշուկայում: Աշխատանք որոնելու ժամանակահատվածը միջինացված տվյալներով նրանց համար կազմել է **4 ամիս**: Ընդ որում, աշխատանք ունեցողների մի զգալի մասի համար (24.3%) լրացուցիչ ժամանակ հարկավոր չէր, իսկ մյուսների համար այդ ժամանակահատվածը կազմել է **7.4 ամիս**: *Տես գրաֆիկներ 6;7; 8:*


Գրաֆիկ 6. 2001-2002 ուստարում ՀՀ բուհերն ավարտած շրջանավարտների՝ կայուն, մշտական աշխատանքի անցնելու դինամիկան մինչև 2005թ-ի առաջին կիսամյակը



Գրաֆիկ 7. 2001-2002 ուստարում ՀՀ բուհերն ավարտած շրջանավարտների, ստացած մասնագիտությանը համապատասխանող կայուն, մշտական աշխատանքի անցնելու դինամիկան



Գրաֆիկ 8. 2001 -2002 ուստարում բուիերն ավարտած շրջանավարտների, ստացած մասնագիտությանը չհամապատասխանող, սակայն կայուն, մշտական աշխատանքի անցնելու դինամիկան




Կայուն աշխատանք գտնելու առումով համեմատաբար ավելի մեծ ժամանակահատված է պահանջվել, օրինակ, աստվածաբանություն (16.5 ամիս), ֆիզիկա (7.7 ամիս), տնտեսական կառավարում (7.2 ամիս), մեքենաշինություն և ճարտարագիտական մասնագիտությունների (6.7 ամիս) ներկայացուցիչների համար:

Ո՞ր գործոններն են վճռորոշ դեր խաղացել աշխատանք գտնելու հարցում: Այս հարցի պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ բնագավառում գործընթացներն ու հարաբերություններն աչքի են ընկնում թույլ ինստիտուցիոնալիզացմամբ, ինքնաբերական կարագրով:

Աշխատանք ունեցող երիտասարդ մասնագետների 44.1%-ի համար (ընդհանուր թվի 22.7%-ը) աշխատանք գտնելու հարցում կարևոր դեր են խաղացել իրենց անձնական նախաձեռնություններն ու այցելությունները տարբեր հիմնարկություններ: 38.7%-ի (հարցման մասնակիցների 19.9%-ը) դեպքում էլ վճռորոշ են եղել ծանոթների, ընկերների առաջարկություններն ու միջնորդությունները:

Ցավոք, թույլ է ուսումնառության տարիներին անցկացրած արտադրական և արտագնա պրակտիկաների դերը: Մինչդեռ, ուսումնառության այդ օղակը կոչված է կարևոր դեր խաղալու ոչ միայն ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորման, այլև աշխատաշուկայում նրանց ինտեգրման առաջին քայլերին նպաստելու առումով: Սակայն աշխատանք ունեցող ռեսպոնդենտների միայն 25.1%-ն է (ընդհանուր թվի 12.9%-ը) կարևորել արտադրական պրակտիկայի ընթացքում ձևավորված կապերն ու ծանոթությունները աշխատանք գտնելու հարցում: *Տես գրաֆիկ 9:*

Գրաֆիկ 9. *Տարբեր գործոնների դերը կայուն, մշտական աշխատանք գտնելու հարցում*



- ՉԿՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺՐԱԳՐԻ ԿԱՐԻՔ Է ԳԳԱԳՎԵԼ ԱՌԱՄԱՆԱԿԱՆ ԱՏՈՐԼՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ԱՊՂՈՍԱԿՈՒՄ ԹՎԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՆՆԵՐԻ շՐՋԱՆՈՒՄ- 44,1% (ԱՄՆ-Շ՝ 22,7%-Վ)
- ՉԿՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺՐԱԳՐԻ ԿԱՐԻՔ Է ԳԳԱԳՎԵԼ ԱՌԱՄԱՆԱԿԱՆ ԱՏՈՐԼՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ԱՊՂՈՍԱԿՈՒՄ ԹՎԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՆՆԵՐԻ շՐՋԱՆՈՒՄ- 0,8% (ԱՄՆ-Շ՝ 0,4%-Վ)
- ՉԿՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺՐԱԳՐԻ ԿԱՐԻՔ Է ԳԳԱԳՎԵԼ ԱՌԱՄԱՆԱԿԱՆ ԱՏՈՐԼՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ԱՊՂՈՍԱԿՈՒՄ ԹՎԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՆՆԵՐԻ շՐՋԱՆՈՒՄ- 38,7% (ԱՄՆ-Շ՝ 19,9%-Վ)
- ՉԿՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺՐԱԳՐԻ ԿԱՐԻՔ Է ԳԳԱԳՎԵԼ ԱՌԱՄԱՆԱԿԱՆ ԱՏՈՐԼՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ԱՊՂՈՍԱԿՈՒՄ ԹՎԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՆՆԵՐԻ շՐՋԱՆՈՒՄ- 1% (ԱՄՆ-Շ՝ 0,5%-Վ)
- ՉԿՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺՐԱԳՐԻ ԿԱՐԻՔ Է ԳԳԱԳՎԵԼ ԱՌԱՄԱՆԱԿԱՆ ԱՏՈՐԼՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ԱՊՂՈՍԱԿՈՒՄ ԹՎԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՆՆԵՐԻ շՐՋԱՆՈՒՄ- 25,1%(ԱՄՆ-Շ՝ 12,9%)
- ՉԿՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺՐԱԳՐԻ ԿԱՐԻՔ Է ԳԳԱԳՎԵԼ ԱՌԱՄԱՆԱԿԱՆ ԱՏՈՐԼՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ԱՊՂՈՍԱԿՈՒՄ ԹՎԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՆՆԵՐԻ շՐՋԱՆՈՒՄ- 1,5% (ԱՄՆ-Շ՝ 0,8%-Վ)
- ՉԿՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺՐԱԳՐԻ ԿԱՐԻՔ Է ԳԳԱԳՎԵԼ ԱՌԱՄԱՆԱԿԱՆ ԱՏՈՐԼՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ԱՊՂՈՍԱԿՈՒՄ ԹՎԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՆՆԵՐԻ շՐՋԱՆՈՒՄ- 6,2% (ԱՄՆ-Շ՝ 3,2%-Վ)
- ՉԿՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺՐԱԳՐԻ ԿԱՐԻՔ Է ԳԳԱԳՎԵԼ ԱՌԱՄԱՆԱԿԱՆ ԱՏՈՐԼՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ԱՊՂՈՍԱԿՈՒՄ ԹՎԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՆՆԵՐԻ շՐՋԱՆՈՒՄ- 0,4% (ԱՄՆ-Շ՝ 0,2%-Վ)

Հարցման մասնակիցների 11.7%-ն աշխատանքի անցնելու համար մասնակցել է բուհական ծրագրից դուրս լրացուցիչ դասընթացների: Խոսքը վերաբերում է առանձնապես այն երիտասարդներին, որոնց աշխատանքը այս կամ այն չափով չի համապատասխանում ստացած մասնագիտությանը:

Ինչպես վկայում են հետազոտության տվյալները, վերապատրաստման կամ լրացուցիչ կրթական ծրագրերի մասնակցելու կարիք է զգացվել առանձնապես ստորև ներկայացվող աղյուսակում թվարկված մասնագիտությունների ներկայացուցիչների շրջանում:

Աղյուսակ 5ա. Բուհական ծրագրերից դուրս լրացուցիչ դասընթացների և կրթական ծրագրերի մասնակցածներն՝ ըստ մասնագիտությունների

	Մասնագիտությունը	Լրացուցիչ դասընթացների մասնակցածների %-ը տվյալ մասնագիտության ներկայացուցիչների շրջանում	Լրացուցիչ դասընթացների մասնակցածների %-ը կայուն աշխատանք ունեցող՝ տվյալ մասնագիտության ներկայացուցիչների շրջանում
1.	մաթեմատիկա	27.2%	54.5%
2.	աշխարհագրություն և պատմություն	26.3%	41.7%
3.	հոգեբանություն և փիլիսոփայություն	47.6%	83.3%
4.	աստվածաբանություն	16.7%	50%
5.	դեֆեկտոլոգիա	22.2%	40%
	<i>ընդամենը հարցման մասնակիցներից</i>	<i>11.7%</i>	<i>22.8%</i>


Լրացուցիչ կրթական ծրագրերի ու դասընթացների մասնակցելու, ինչպես նաև ստացած մասնագիտությունից տարբեր աշխատանք ունեցողների ցուցանիշները ավելի փոքր են հետևյալ մասնագիտությունների ներկայացուցիչների շրջանում.

Աղյուսակ 5բ.

	Մասնագիտությունը	Լրացուցիչ դասընթացների մասնակցածների %-ը տվյալ մասնագիտության ներկայացուցիչների շրջանում	Լրացուցիչ դասընթացների մասնակցածների %-ը կայուն աշխատանք ունեցող՝ տվյալ մասնագիտության ներկայացուցիչների շրջանում
1.	ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	9.6%	15.7%
2.	կենսաբանություն	3%	7.1%
3.	քիմիա	3.7%	7.1%
4.	իրավաբանություն	6.9%	12.5%
5.	երաժշտական մասնագիտ.	3.8%	6.7%
6.	գեղարվեստի մասնագիտ.	8.3%	12.5%
	<i>ընդամենը հարցման մասնակիցներից</i>	<i>11.7%</i>	<i>22.8%</i>

Ուսումնասիրության արդյունքները հաստատում են, որ աշխատաշուկայում ներգրավման տեմպերն ու հնարավորությունները ուղիղ համեմատական են երիտասարդ մասնագետների որակավորման աստիճանին և գիտելիքների մակարդակին: Հատկանշական է, որ բուհը միջակ առաջադիմությամբ ավարտած շրջանավարտների միայն 1/4-ն է 3 տարվա ընթացքում իր մասնագիտությանը համապատասխան աշխատանք գտել: Լավ սովորող ուսանողների մոտ այդ թիվը կազմում է 35.5%: Իսկ բուհը գերազանց առաջադիմությամբ ավարտած ուսանողների շրջանում՝ 52.3%:

Գրաֆիկ 10. Աշխատաշուկայում՝ ստացած մասնագիտությանը համապատասխանող աշխատանքով զբաղվածության ծավալներն ըստ որակավորման և գիտելիքների մակարդակի⁸




3.7. Աշխատաշուկայի գրավիչ և մտահոգիչ կողմերը

Հարցման արդյունքները հաստատում են, որ **աշխատանք ունեցող երիտասարդ մասնագետներին մտահոգող հիմնական գործոնը ցածր վարձատրությունն է:** Նրանց 81.9%-ի համար աշխատանքի դիմաց վարձատրությունը անբավարար է գույքային ապահովության (բնակարան, կահույք, մեքենա գնելու) առումով, իսկ 47.9%-ի համար անբավարար է նաև ընտանեկան ընթացիկ ծախսերը հոգալու տեսանկյունից: Վերջին առումով իրենց աշխատավարձը քիչ թե շատ բավարար է համարում 49.4%-ը:

Ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների համաձայն բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդ մասնագետի համար միջին աշխատավարձը կազմում է 63 681 դրամ: Ընդորում, ուշագրավ է, որ արական սեռի ներկայացուցիչները մոտ երկու անգամ ավելի գումար են վաստակում (93 240 դրամ), քան իգական սեռի ներկայացուցիչները (49 505 դրամ): *Տես գրաֆիկ 11:*

⁸ Գրաֆիկը կազմվել է ուսումնառության տարիներին իրենց առաջադիմության վերաբերյալ ռեսպոնդենտների հիմնագնահատականների հիման վրա:

Գրաֆիկ 11. ՀՀ բուհերի 2002թ-ի շրջանավարտների միջին ամսական եկամուտը՝ ըստ սեռերի



Աշխատաշուկայում ձևավորված պայմանները վարձատրության առումով ավելի բարենպաստ են առևտրի ոլորտի ներկայացուցիչների (123 000դր.), ֆինանսիստների (113 200դր.), ինֆորմացիոն և համակարգչային տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների (92 356 դր.), իրավաբանների (79 735դր.) համար:

Ցածր աշխատավարձով առանձնանում են ֆիզիկոսի (26 943 դր.), մաթեմատիկոսի (34 182 դր.), հայոց լեզվի և գրականության մասնագետների (31 182 դր.), մանկավարժների (30 739դր.), երաժշտագետ- արվեստագետի (27 261դր.) մասնագիտությունները: *Տես աղյուսակ 6.*

Աղյուսակ 6. ՀՀ բուհերի 2002թ. շրջանավարտների միջին ամսական եկամտի չափը՝ ըստ մասնագիտությունների⁹

	Ֆակուլտետ / մասնագիտություն	դրամ
1.	Առևտուր	123 000. 00
2.	Ֆինանսահաշվաչին	113 200. 00
3.	Ընդերքաբանություն	101 250. 00
4.	Մեքենաշինություն, ճարտարագիտական	100 625. 00
5.	Կիրառական մաթեմատիկա, ինֆորմատիկա, համակարգչային տեխնոլոգիաներ	92 355. 56
6.	Ռադիոտեխնիկա և կապի համակարգեր	82 000. 00
7.	Տնտեսական կառավարում	80 388. 89
8.	Գեղարվեստի մասնագիտություններ	80 111. 11
9.	Լրագրություն	80 000. 00
10.	Իրավագիտություն	79 734. 69
11.	Ռուս. բանասիրություն	77 714. 29
12.	Տնտեսագիտական մասն. բացի ԵՊՏԻ-ից	73 557. 75
13.	Ճարտարապետություն	67 500. 00
14.	Միջազգային հարաբերություններ	66 750. 00
15.	Էներգետիկա, էլեկտրոտեխնիկա	65 400. 00

⁹ Մուգ ֆոնով առանձնացված են այն մասնագիտությունները, որոնց ներկայացուցիչների միջին ամսական եկամտի չափերը փոքր են սույն հետազոտության արդյունքում արձանագրված միջին ցուցանիշից՝ 63 681 դրամից:

16.	Շինարարական մասնագիտություններ	63 333. 33
17.	Ագրոկենսաբանական մասնագիտություններ	63 260. 40
18.	Ֆրանսերեն, գերմաներեն	62 523. 81
19.	Բուժկանխարգելում, դեղագիտություն	62 666. 67
20.	Ռեժիսուրա և դերասանական արվեստ	58 181. 82
21.	Թեթև արդյունաբերություն	57 250. 00
22.	Սոցիոլոգիա, սոց. աշխատանք	51 142. 86
23.	Քիմիա	49 461. 54
24.	Բուժական գործ	46 666. 67
25.	Արևելագիտություն	46 500. 00
26.	Անգլերեն թարգմանչություն	43 282. 61
27.	Ատամնաբուժություն	43 100. 00
28.	Հոգեբանություն և փիլիսոփայություն	30 636. 36
29.	Տրանսպորտային համակարգեր	39 000. 00
30.	Կենսաբանական մասնագիտություններ	36 966. 67
31.	Դեֆեկտոլոգիա	35 166. 67
32.	Մաթեմատիկա	34 181. 82
33.	Պարենամաթերքի տեխնոլոգիա	33 333. 33
34.	Աշխարհագրություն, պատմ. և աշխարհագրություն	32 321. 43
35.	Հայոց լեզու և գրականություն	31 181. 82
36.	Մանկավարժական մասնագիտություններ	30 739. 13
37.	Երաժշտական մասնագիտություններ	27 261. 54
38.	Աստվածաբանություն	27 000. 00
39.	Ֆիզիկա	26 942. 86
40.	Մանկաբուժություն	23 000. 00
	Միջինը ըստ հարցման մասնակիցների	63 680. 70

Այնուհանդերձ, ունեցած աշխատանքը երիտասարդ մասնագետներին ընդհանուր առմամբ ավելի գրավում է հետաքրքրության (73.8%), շրջապատում ունեցած հեղինակության և հարգանքի (79.4%), ինքնադրսևորման և հոգեկան բավարարվածության (61.9%) առումներով: Տես հավելված 1.

Մի շարք առումներով՝ աշխատանքի հետաքրքրության, շրջապատում ունեցած հարգանքի, կարիերայի իրականացման, ազատ ժամանակի և հանգստի կազմակերպման տեսանկյուններից **առաջինը իրավաբանի մասնագիտությունն է: Երկրորդ հորիզոնականում** գրեթե նույնանման ցուցանիշներով **ծրագրավորողի և տնտեսագետի** մասնագիտություններն են:

Երիտասարդ մասնագետներին, որոնք առաջին քայլերն են անում աշխատաշուկայում նաև կարիերայի իմաստով, բնականաբար դեռևս չի բավարարում (45.4%) ուրիշների նկատմամբ ունեցած իշխանությունը, մասամբ նաև ազատ ժամանակի և հանգստի կազմակերպման հնարավորությունները:

**3.8. Բուհական գիտելիքները և մասնագետների պատրաստման գործընթացը՝
շրջանավարտների գնահատականներով**

Բավարա՞ր են արդյոք բուհում ստացած գիտելիքները լիարժեք մասնագետ դառնալու և աշխատանք գտնելու համար:

Այս հարցին միանշանակ դրական պատասխան է տվել հարցման մասնակիցների 54,8%-ը: Բուհական գիտելիքը բավարար համարողների թվաքանակը գրեթե նույնն է պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների մոտ (համապատասխանաբար՝ 55.4% և 53.6%): *Տես աղյուսակ 7:*

Աղյուսակ 7. «Բավարա՞ր են արդյոք բուհում ստացած գիտելիքները լիարժեք մասնագետ դառնալու և աշխատանք գտնելու համար»:

Բուհը	Այո	Մասամբ	Ոչ
Պետական բուհերի շրջանավարտները	55.4%	26.1%	18.5%
Ոչ պետական բուհերի շրջանավարտները	53.6%	35.2%	11.2%
<i>Ընդամենը</i>	54.8%	28.6%	16.6%

Տես հավելված 7:

Կան մի շարք մասնագիտություններ, որոնց ներկայացուցիչները բավականին բարձր են գնահատում բուհում ստացած իրենց գիտելիքները և մասնագետ պատրաստելու բուհական գործընթացը՝ սեփական ֆակուլտետի օրինակով: Այդ մասնագիտությունների շարքն են դասվում քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն, պատմություն, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք, հոգեբանություն և փիլիսոփայություն, ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն բանասիրություն, արևելագիտություն մասնագիտությունները: *Տես աղյուսակ 8:*

Աղյուսակ (վարկանիշային) 8. *Ռեսպոնդենտների միջին վիճակագրական գնահատականը մասնագետ պատրաստելու բուհական գործընթացին իրենց ֆակուլտետի օրինակով՝ ըստ մասնագիտությունների (5 բալային համակարգով)¹⁰*

	Ֆակուլտետ / մասնագիտություն	միջին վիճակագրական գնահատականը
1.	Ռուսական բանասիրություն	4.38
2.	Ֆրանսերեն, գերմաներեն	4.36
3.	Երաժշտական մասնագիտություններ	4.27
4.	Քիմիա	4.25
5.	Ագրարային մասնագիտություններ	4.24
6.	Բուժական գործ	4.21

¹⁰ Մուգ ֆոնով առանձնացված են հետազոտության արդյունքում արձանագրված միջին վիճակագրական գնահատականից (3.998) ցածր գնահատական ունեցող մասնագիտությունները

7.	Իրավագիտություն	4.18
8.	Աստվածաբանություն	4.17
9.	Ընդերքաբանություն	4.15
10.	Ատամնաբուժություն	4.15
11.	Հոգեբանություն և փիլիսոփայություն	4.14
12.	Ֆիզիկա	4.14
13.	Թեթև արդյունաբերություն	4.14
14.	Առևտուր	4.14
15.	Աշխարհագրություն, պատմ. և աշխարհագրություն	4.11
16.	Դեֆեկտոլոգիա	4.11
17.	Մեքենաշինություն, ճարտարագիտություն	4.08
18.	Սոցիոլոգիա, սոց. աշխատանք	4.08
19.	Անգլերեն թարգմանչություն	4.05
20.	Արևելագիտություն	4.00
21.	Կենսաբանական մասնագիտություններ	4.00
22.	Ֆիզկուլտուրա	4.00
23.	Հայոց լեզու և գրականություն	4.00
24.	Ռեժիսուրա և դերասանական արվեստ	4.00
25.	Բուժկանխարգելում, դեղագիտություն	4.00
26.	Տնտեսագիտական մասն. բացի ԵՊՏԻ-ից	3.98
27.	Մանկավարժական մասնագիտություններ	3.94
28.	Միջազգային հարաբերություններ	3.91
29.	Տնտեսական կառավարում	3.91
30.	Մանկաբուժություն	3.90
31.	Անասնաբուժություն, անասնաբուժություն	3.83
32.	Մաթեմատիկա	3.82
33.	Կիրառական մաթեմատիկա, ինֆորմատիկա, համակարգչային տեխնոլոգիաներ	3.78
34.	Պարենամթերքի տեխնոլոգիա	3.78
35.	Ճարտարապետություն	3.78
36.	Էներգետիկա, էլեկտրոտեխնիկա	3.78
37.	Տրանսպորտային համակարգեր	3.75
38.	Ֆինանսահաշվային	3.73
39.	Շինարարական մասնագիտություններ	3.71
40.	Լրագրություն	3.70
41.	Ռ-ադիոտեխնիկա և կապի համակարգեր	3.69
42.	Գեղարվեստի մասնագիտություններ	3.67
	Ընդամենը (միջինը)	3.998

Ընդհանուր առմամբ, հետազոտության ընտրանքում ընդգրկված մասնագիտություններն աշխատաշուկայում ունեցած պահանջարկի և մասնագետների պատրաստման գործընթացին տրված գնահատականների առումով կարելի է բաժանել 4 խմբի:

Առաջին խումբը կազմում են այն մասնագիտությունները, որոնց ներկայացուցիչները բարձր են գնահատում բուհում ստացած իրենց գիտելիքները և տվյալ ոլորտում մասնագետներ պատրաստելու բուհական գործընթացը: Միաժամանակ այդ մասնագիտություններն ունեն որոշակի պահանջարկ աշխատաշուկայում: Այս երկու գործոնների համադրումը հանգեցնում է տվյալ մասնագիտության գծով ցածր գործազրկության և զբաղվածության համեմատաբար մեծ ծավալների:

Մասնագիտությունների այդ խմբում առանձնանում են ռուսական բանասիրություն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներ, բուժական գործ, երաժշտություն, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք մասնագիտությունները:

Երկրորդ խումբը կազմում են այն մասնագիտությունները, որոնց գծով մասնագետներ պատրաստելու բուհական գործընթացը, ըստ հարցման մասնակիցների գնահատականների, գտնվում է անհրաժեշտ մակարդակի վրա, սակայն տնտեսության, հասարակական կյանքի ու հարաբերությունների տվյալ ոլորտի թույլ զարգացածության պատճառով պահանջարկի բացակայության կամ էլ տվյալ մասնագիտությունների բնագավառում ավելցուկային առաջարկի հետևանքով շատ երիտասարդ մասնագետներ մնում են առանց աշխատանքի՝ համալրելով գործազուրկների շարքերը: Այս խմբի մասնագիտություններն են. քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն, պատմություն, արևելագիտություն, ֆիզկուլտուրա, աստվածաբանություն, ընդերքաբանություն, էներգետիկա և էլեկտրատեխնիկա, հոգեբանություն և փիլիսոփայություն, անգլերեն լեզու, իրավագիտություն, ռեժիսուրա և դերասանական արվեստ:

Երրորդ խումբը կազմում են այն մասնագիտությունները, որոնց բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացը համեմատաբար ցածր է գնահատվում ռեսպոնդենտների կողմից, որոնց նկատմամբ, սակայն, աշխատաշուկայում առկա է որոշակի պահանջարկ: Մասնագիտությունների այս խումբը կազմում են ինֆորմացիոն համակարգչային տեխնոլոգիաներ և ծրագրավորում, մանկաբուժություն, ճարտարապետություն և շինարարական մասնագիտություններ, բուժկանխարգելում և դեղագիտություն, լրագրություն, գեղարվեստական և տնտեսագիտական տարբեր մասնագիտություններ:

Չորրորդ խմբի մեջ մտնում են այն մասնագիտությունները որոնց ոլորտում մասնագետների պատրաստման գործընթացը համեմատաբար ցածր է գնահատվում շրջանավարտների կողմից և որոնց նկատմամբ պահանջարկը ևս թույլ է աշխատաշուկայում: Ուստիև առկա են գործազրկության շոշափելի ծավալներ: Դրանք են. միջազգային հարաբերություններ, ռադիոտեխնիկա և կապի համակարգեր, տրանսպորտային համակարգեր, անասնաբուժություն և անասնաբուծություն, պարենամթերքի տեխնոլոգիա, թեթև արդյունաբերություն: *Տես աղյուսակ 9:*

Աղյուսակ 9. Մասնագիտությունների դասակարգումն՝ ըստ ՀՀ աշխատաշուկայում առկա պահանջարկի և դրանց ոլորտում մասնագետների պատրաստման գործընթացի զնահատականների

	ՀՀ աշխատաշուկայում համեմատաբար մեծ պահանջարկ ունեցող մասնագիտություններ	ՀՀ աշխատաշուկայում համեմատաբար նվազ պահանջարկ ունեցող մասնագիտություններ	
Մասնագետների պատրաստման գործընթացը գնահատվել է համեմատաբար բարձր	ռուս բանասիրություն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներ, բուժական գործ, երաժշտական մասնագիտություններ, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք, բուժկանխարգելում և դեղագիտություն	քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն, պատմություն, արևելագիտություն, ֆիզկուլտուրա, աստվածաբանություն, ընդերքաբանություն, էներգետիկա և էլեկտրոտեխնիկա, հոգեբանություն և փիլիսոփայություն, անգլերեն լեզու, իրավագիտություն, ռեժիսուրա և դերասանական արվեստ	+
Մասնագետների պատրաստման գործընթացը գնահատվել է համեմատաբար ցածր	ինֆորմացիոն-համակարգչային տեխնոլոգիաներ և ծրագրավորում, մանկաբուժություն, ճարտարապետություն և շինարարական մասնագիտություններ, լրագրություն, գեղարվեստի մասնագիտություններ, տնտեսագիտական մասնագիտություններ	միջազգային հարաբերություններ, ռադիոտեխնիկա և կապի համակարգեր, տրանսպորտային համակարգեր, անասնաբուժություն և անասնաբուծություն, պարենամթերքի տեխնոլոգիա, թեթև արդյունաբերություն	-
	+	-	

Ընդհանուր առմամբ, հարցման մասնակիցները բավականին բարձր են գնահատում ՀՀ բուհերում մասնագիտական կրթության մակարդակը: 5 միավորանոց համակարգով գնահատելիս՝ այն ըստ ռեսպոնդենտների պատասխանների կազմում է 4 միավոր:

Ընդ որում, էական տարբերություններ չկան պետական և ոչ պետական բուհերի շրջանավարտների գնահատականներում: Այդ փաստը, թերևս, կարելի է բացատրել պետական բուհերի շրջանավարտների ավելի բարձր պահանջկոտությամբ, գնահատման ավելի խիստ ու օբյեկտիվ չափանիշներով և մասնավոր բուհերի շրջանավարտների՝ սեփական որակավորումը կարևորելու միտումով:

Այնուհանդերձ, հարցման մասնակիցների 45.2%-ը լիարժեք մասնագետ դառնալու և աշխատանք գտնելու առումով բուհական կրթությունը բավարար է համարում միայն մասնակիորեն (28.6%) կամ էլ այն համարում է անբավարար (16.6%):

Եթե 54.9%-ը հավաստիացնում է, որ բուհում ստացած գիտելիքներն անհրաժեշտ են և բավարար աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար, ապա

43.7%-ը դրանք համարում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար: 1.1%-ն էլ, անգամ, դրանք համարում է ոչ անհրաժեշտ, ավելորդ:

Հայտնի է, որ փոխակերպվող կրթական համակարգում կան զանազան խնդիրներ ու լրամշակման կարիք ունեցող բաղադրիչներ, որոնք այս կամ այն չափով խոչընդոտում են մասնագիտական կրթության գործընթացը և անդրադառնում բուհական կրթության մակարդակի վրա:

Որո՞նք են այն հիմնական խոչընդոտներն ու բացթողումները, որոնք, ըստ ռեսպոնդենտների, բացասաբար են անդրադառնում բուհական կրթության գործընթացի վրա:

Հարցման մասնակիցների 25.6%-ը նկատում է, որ բուհում դասավանդվող գիտելիքներն ունեն գլխավորապես տեսական բնույթ և բավարար չէ գործնական գիտելիքների ու հմտությունների ավանդումը: Հատկանշական է, որ երիտասարդ մասնագետների 14.9%-ն էլ որպես մասնագետների պատրաստման և աշխատաշուկայում նրանց ներգրավման գործընթացում նկատելի բացթողում արձանագրում է ուսումնասիրտադրական պրակտիկայի ձևական և ոչ լիարժեք բնույթը:

4.5%-ի կարծիքով թերի են բուհերում ավանդվող թե տեսական և թե գործնական գիտելիքները:

7%-ն էլ տրամադրված է ինքնաքննադատորեն և գտում է, որ լիարժեք մասնագետ դառնալուն խոչընդոտում է սովորողների շրջանում նկատվող ոչ բավարար ձգտումն ու թերի կազմակերպվածությունը:

Ինչ վերաբերում է բուհերում առկա կազմակերպչական հիմնախնդիրներին ու կոռուպցիայի դրսևորումներին, որպես բուհական կրթության գործընթացը խոչընդոտող հանգամանքների, ապա այդ մասին վկայում են հարցման մասնակիցների 3.4%-ի պատասխանները: Տես հավելված 1:

3.9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Հետազոտության հարցաթերթը՝ միաչափ տվյալներով

.....
 Հարցաթերթի համարը _____
 Հարցազրույցավարի կողմ _____

0. Կոնտակտային թերթիկ

Չանգահարման օրր	Ժամը	Ռեպոնդենտի բնակավայրը	Հեռախոսը	Արդյունքը (նշել կողը)
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				

Արդյունքը

1. Չանգն անպատասխան էր 26.7%
2. Հարցվողը մեկնել է Հայաստանից 5.6%
3. Հրաժարվեցին հարցազրույցից 1.1%
4. Հարցվողը տեղափոխվել էր այլ բնակարան 6.8%
5. Խնդրեցին զանգել այլ ժամի 8.5%
6. Այլ խոչընդոտներ 15.9%
7. Հարցազրույցն իրականացվեց 35.4%

Հեռախոսային հարցման հարցաթերթ «Շրջանավարտ 2002»

1. Բուհը, որն ավարտել է հարցվողը
 (գրել) _____
2. Ֆակուլտետը (բաժինը) _____
3. 2002թ. ավարտել է
 - 3.1. բակալավրիատը -41,8%
 - 3.2. մագիստրատուրան -7,2%
 - 3.3. դիպլոմավորված մասնագետ է -50,9%

Հարցազրույցավար. Խոսենք այն մասին, թե ինչով եք զբաղվել բուհն ավարտելուց հետո մեկ-երկու տարվա ընթացքում.

4. Շարունակե՞լ եք արդյոք Ձեր մասնագիտական կրթությունը 2002թ-ին բուհն ավարտելուց հետո (որևէ տարբերակով).
 [կարելի է նշել 2 պատասխան]
 - 4.1 ոչ -70,3%
 - 4.2 շարունակել է ուսումը մագիստրատուրայում -20,7%
 - 4.3 շարունակել է ուսումը ասպիրանտուրայում -9,1%
 - 4.4 շարունակել է ուսումը այլ մասնագիտությամբ (ստացել է նոր մասնագիտություն) -2,2%
 - 4.5 անցել է վերապատրաստման դասընթացներ -1%
5. Կարո՞ղ եք ասել, որ բուհն ավարտելուց հետո 1 տարվա ընթացքում
 - 5.1 աշխատել եք ստացած մասնագիտությամբ -36,6%
 - 5.2 աշխատել եք, սակայն ոչ Ձեր մասնագիտությամբ -17,5%
 - 5.3 չեք աշխատել -45,9%

!Հարցնել նրանց, ովքեր չեն աշխատել (5.3 կետը նշողներին)!

6. Եթե չեք աշխատել, ապա ո՞րն է եղել պատճառը (մինչև 2 պատասխան)
 - 6.1 չեք կարողացել գտնել մասնագիտական որակավորմանը համապատասխանող աշխատանք -13,3%
 - 6.2 առաջարկվող աշխատանքը գրավիչ չի եղել վարձատրման առումով -1,3%

- 6.3 շարունակել եք ուսումը, որը թույլ չի տվել զբաղվել աշխատանքային գործունեությամբ -6,4%
- 6.4 անձնական, ընտանեկան դրդապատճառներով (ընտանիք է կազմել, զբաղվել երեխաների կամ հարազատների խնամքով և այլն) -10,7%
- 6.5 ծառայել է ՀՀ զինված ուժերում -11,2%
- 6.6 չի ցանկացել աշխատել (չի եղել դրա կարիքը) -3,2%
- 6.7; 6.8 այլ պատճառներ (գրել) - 0,2%

! Հարցնել բոլորին !

7. Ներկա պահին Դուք ունե՞ք որևէ աշխատանք, զբաղմունք, որը եկամուտ է բերում

- 7.1 այո (անցնել 10-րդ հարցին) -59,5%
- 7.2 ոչ, շարունակում է աշխատանք փնտրել (գործազուրկ է) -22,9%
- 7.3 ոչ, սակայն իրեն գործազուրկ չի համարում -17,6%

! Հարցնել նրանց, ովքեր չունեն աշխատանք (7.2; 7.3 կետերը) !

8. Ո՞րն է պատճառը, որ Դուք չեք աշխատում

- 8.1 չեք կարողացել գտնել մասնագիտական որակավորմանը համապատասխանող աշխատանք -12,0%
- 8.2 առաջարկվող (եղած) տարբերակները գրավիչ չեն եղել վարձատրման կամ այլ առումներով -5,5%
- 8.3 ուսումը շարունակելու հանգամանքը թույլ չի տալիս զբաղվել աշխատանքային գործունեությամբ -4,8%
- 8.4 անձնական, ընտանեկան դրդապատճառներով -16,3%
- 8.5 չի ցանկանում աշխատել (չկա դրա կարիքը) -1,6%
- 8.6; 8.7 այլ պատճառներ (գրել) - 0,4%

9. Ի՞նչ կազմակերպությունների կամ միջոցների եք դիմել աշխատանք գտնելու նպատակով (հնարավոր են 1-ից ավելի պատասխաններ)

- 9.1 զբաղվածության և գործազրկության կենտրոնի տարածքային ծառայությանը 4.7%
- 9.2 աշխատանքի տեղավորման մասնավոր ծառայություններին 3.4%
- 9.3 ծանոթների, բարեկամների օգնությանը 3.3%
- 9.4 անձամբ այցելել եք տարբեր հիմնարկություններ 2.8%
- 9.5 հրապարակել եք հայտարարություններ ՉԼՄ-ներում 0%
- 9.6 տեղադրել եք հայտարարություններ Internet ցանցում 0.5%
- 9.7 արձագանքել եք ՉԼՄ-ներում գետեղված՝ աշխատանք առաջարկող հայտարարություններին 1%
- 9.8 չի դիմել որևէ միջոցի կամ կազմակերպության 24.8%
- 9.9; 9.10 այլ տարբերակներ (գրել)

! Հարցնել նրանց, ովքեր ունեն աշխատանք (7.1 կետը նշողներին): Մյուսների համար անցնել հարց 22-ին

10. Ինչպիսի՞ն է Ձեր աշխատանքը

- այն կայուն, մշտական ընդունել է կրում, թե՞ ժամանակ առ ժամանակ, սեզոնային է
- Ձեր աշխատանքը համապատասխանում է արդյոք բուհում ստացած մասնագիտությանը
- Դուք աշխատում եք պետական, թե՞ մասնավոր հաստատությունում

10. Աշխատանքի բնույթը											
10.1 կայուն, մշտական աշխատանք 51.7%						10.2 ոչ կայուն (ժամանակ առ ժամանակ, սեզոնային) աշխատանք 7.8%					
11.1 38.3% աշխատանքի բնույթը համապատասխանում է ստացած մասնագիտությանը			11.2 13.4% աշխատանքի բնույթը չի համապատասխանում ստացած մասնագիտությանը			11.3 8.5% աշխատանքի բնույթը համապատասխանում է ստացած մասնագիտությանը			11.4 5.3% աշխատանքի բնույթը չի համապատասխանում ստացած մասնագիտությանը		
աշխատում է պետական հաստատությունում	աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում	անհատ ձեռներէց	աշխատում է պետական հաստատությունում	աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում	անհատ ձեռներէց	աշխատում է պետական հաստատությունում	աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում	անհատ ձեռներէց	աշխատում է պետական հաստատությունում	աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում	անհատ ձեռներէց
12.1 20.6%	12.2 16.8%	12.3 0.9%	12.4 4.8%	12.5 7.7%	12.6 0.9%	12.7 0.7%	12.8 1.7%	12.9 0.2%	12.10 0.6%	12.11 4.4%	12.12 0.3%

13. Ամսական միջինացված եկամուտը (աշխատավարձը) դրամներով գրել ներքևի գծի վրա - 63 680.7 դրամ

14. Եթե ավելի կոնկրետ բնութագրեք, Ձեր ներկայիս աշխատանքը որքանով է համապատասխանում բուհում ստացած մասնագիտությանը

- 14.1 լիովին համապատասխանում է
- 14.2 հիմնականում կամ մասամբ համապատասխանում է
- 14.3 հիմնականում չի համապատասխանում (անցնել հարց 21-ին)
- 14.4 բոլորովին չի համապատասխանում (անցնել հարց 21-ին)

! Հարցնել նրանց, ովքեր ունեն կայուն, մշտական աշխատանք և աշխատանքը համապատասխանում է մասնագիտությանը (11.1 կետը նշողներին)!

15. Երբվանից եք անցել հիմնական աշխատանքի

- 15.1 2000թ-ից 2.8%
- 15.2 2001թ-ից 1.9%

տարի	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
2002թ	3 2.1%	4 2.3%	5 4.8%	6 2.2%
2003թ	7 2.6%	8 1.2%	9 3.0%	10 0.8%
2004թ	11 1.8%	12 2.9%	13 3.1%	14 1.8%
2005թ	15 3.2%	16 2.2%		

! Հարցնել նրանց, ովքեր ունեն կայուն, մշտական աշխատանք և աշխատանքը չի համապատասխանում բուհում ձեռք բերած մասնագիտությանը (11.2 կետը նշողներին)!

16. Երբվանից եք զբաղվում աշխատանքային այդպիսի գործունեությամբ

- 16.1 2000թ-ից 0.6%
- 16.2 2001թ-ից 0.4%

տարի	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
2002թ	3 0.7%	4 0.1%	5 0.8%	6 1.0%
2003թ	7 0.7%	8 0.6%	9 0.8%	10 0.7%
2004թ	11 1.0%	12 1.7%	13 1.0%	14 0.4%
2005թ	15 2.0%	16 1.1%		

! Հարցնել բոլոր նրանց, ովքեր ունեն կայուն, մշտական աշխատանք (10.1 կետը նշողներին)!

17. Որքա՞ն ժամանակ էր Ձեզ անհրաժեշտ աշխատանք գտնելու համար (ամիսներով)

- 17.1 1րագուցիչ ժամանակ հարկավոր չէր – 24.3%
- 17.2 մինչև 1 ամիս – 5.1%
- 17.3 1-ից մինչև 3 ամիս – 5.3%
- 17.4 3-ից մինչև 6 ամիս – 5.7%
- 17.5 6-ից մինչև 12 ամիս – 7.2%
- 17.6 12-ից մինչև 18 ամիս – 1.3%
- 17.7 18-ից մինչև 24 ամիս – 2.3%
- 17.8 24-ից մինչև 36 ամիս – 0.3%

18 Աշխատանք գտնելու միջին ժամանակահատվածը

գրել ամիսներով - 3.88 ամիս

19 Հետևյալ գործոններից որո՞նք են վճռորոշ դեր խաղացել Ձեր՝ աշխատանք գտնելու հարցում (հնարավոր են մեկից ավելի պատասխաններ)

- 19.1 ուսումնական տարիներին անցկացրած պրակտիկաների (արտադրական պրակտիկայի) արդյունքում ձևավորած կապերն ու ծանոթությունները – 12.9%
- 19.2 ծանոթների, ընկերների խորհուրդներն ու առաջարկությունները – 19.9%
- 19.3 ՁԼՄ-ներում հրապարակվող հայտարարությունները – 3.2%
- 19.4 Ձեր անձնական նախաձեռնություններն ու այցելությունները համապատասխան հիմնարկություններ – 22.7%
- 19.5 Ձեր կողմից հրապարակված հայտարարությունները աշխատանք որոնելու մասին – 0.8%
- 19.6 գործազրկության և զբաղվածության կենտրոնի առաջարկությունները – 0.4%
- 19.7 աշխատանքի տեղավորման գործակալությունների առաջարկությունները – 0.5%
- 19.8; 19.9 այլ գործոններ – 0.2%

20. Աշխատանքի անցնելու համար Դուք մասնակցե՞լ եք արդյոք բուհից դուրս կրթական ծրագրերի կամ լրացուցիչ դասընթացների

20.1 այո 11.7%

20.2 ոչ 39.6%

21. Կարո՞ղ եք ասել, որ Ձեր մասնագիտական (աշխատանքային) գործունեությունը բավարարում է Ձեզ հետևյալ տեսանկյուններից

տեսանկյունները	այո	մասամբ	ոչ	դժվ. պատ.
21.1 աշխատավարձի (եկամուտի) առումով	22,7%	28,0%	46,9%	2,4%
21.2 ընտանեկան ընթացիկ ծախսերը հոգալու տեսանկյունից	20,2%	29,2%	47,9%	2,4%
21.3 գույքային ապահովվածության (բնակարան, կահույք, մեքենա) առումով	4,5%	12,6%	81,9%	1,0%
21.4 հետաքրքրության առումով	73,8%	16,8%	8,8%	0,6%
21.5 շրջապատում ունեցած հեղինակության (հարգանքի) առումով	79,4%	12,9%	5,9%	4 1,8%
21.6 մարդկանց նկատմամբ իշխանության (ազդեցության) առումով	19,6%	26,3%	45,4%	8,7%
21.7 ստեղծագործական մտեցման և սեփական նախաձեռնումների իրագործման հնարավորության տեսակետից	43,6%	31,0%	23,9%	1,5%
21.8 կարիերայի իրականացման տեսանկյունից	46,2%	20,0%	28,7%	5,0%
21.9 մասնագիտական կարողությունների և գիտելիքների իրականացման առումով	54,9%	23,0%	21,4%	0,7%
21.10 ինքնադրսևորման և հոգեկան բավարարվածության տեսանկյունից	61,9%	26,8%	10,5%	0,8%
21.11 ազատ ժամանակի, հանգստի կազմակերպման հնարավորության առումով	49,0%	30,4%	19,9%	0,7%

! Հարցնել բոլորին !

22. Բավարա՞ր են արդյոք բուհում ստացած գիտելիքները մեր ժամանակներում տվյալ մասնագիտությամբ լիարժեք մասնագետ դառնալու և աշխատանք գտնելու համար

22.1 այո-54,8%

22.2 մասամբ-28,6%

22.3 ոչ-16,6%

! Հարցնել 22.2 և 22.3 կետերը նշողներին !

23 Եթե բուհում ստացած գիտելիքները բավարար չեն կամ մասամբ են բավարար, ապա, ըստ Ձեզ, ո՞րն է պատճառը (հնարավոր են 1-ից ավելի պատասխաններ)

23.1 դասավանդող գիտելիքները հնացած են և չեն համապատասխանում ներկա պահանջներին 11%

23.2 դասավանդող գիտելիքներն ունեն գլխավորապես տեսական բնույթ և բավարար չեն գործնական գիտելիքներն ու հմտությունները 25.6%

23.3 դասավանդող գիտելիքներն ունեն գլխավորապես էմպիրիկ (փորձնական-կիրառական) բնույթ, թերի է տեսական գիտելիքների ավանդման գործը 3%

23.4 թերի են ավանդող թե՛ տեսական և թե՛ գործնական գիտելիքները 4.5%

23.5 լիարժեք մասնագետ դառնալուն խոչընդոտում է ուսանողների ոչ բավարար ձգտումն ու թերի կարգապահությունը 7.0%

23.6 լիարժեք մասնագետ դառնալուն խոչընդոտում են բուհում առկա կազմակերպչական խնդիրներն ու կոռուպցիայի դրսևորումները 3.4%

23.7 ուսումնառատարական պրակտիկայի ոչ լիարժեք բնույթը 14.9%

23.8; 23.9 այլ պատճառներ (գրել) - 0.8%

24. Ելնելով Ձեր փորձից, խնդրում են գնահատել բուհում ստացած գիտելիքների կարևորությունն ու արժեքավորությունը աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու տեսանկյունից: Հետևյալ դատողություններից որի՞ հետ եք համաձայն

24.1 բուհում ստացած գիտելիքները անհրաժեշտ են ու բավարար աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար-54,9%

24.2 դրանք անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար -43,7%

24.3 դրանք անհրաժեշտ չեն աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար -1,1%

24.4 այլ (գրել) - 0,1%

24.5 դժվարանում են պատասխանել -0,2%

25. Փորձեք 5 միավորանոց սանդղակով գնահատել մասնագետ պատրաստելու բուհական գործընթացը Ձեր ֆակուլտետի օրինակով «1»-նշանակում է «շատ վատ», «5»ը՝ «շատ լավ»

- 25.1 շատ վատ-0,7%
- 25.2 վատ -1,5%
- 25.3 միջին- 18%
- 25.4 լավ-56,2%
- 25.5 շատ լավ -23,7%

26. Ինչպե՞ս էիք սովորում բուհում (Ձեր առաջադիմության ցուցանիշը ըստ ստացած գնահատականների)

- 26.1 վատ-0,3%
- 26.2 միջակ-13,3%
- 26.3 լավ-54,2%
- 26.4 գերազանց-32,2%

27. Ձեր աշխատանքային կարգավիճակը

- 27.1 վարձու բանվոր -1,6%
- 27.2 ծառայող (ստորին և միջին օղակի պաշտոնյա) -26,2%
- 27.3 որակավորված մասնագետ, մտվորական -26,2%
- 27.4 փոքր և միջին աշխատանքային կոլեկտիվի (մինչև 15 հոգի) ղեկավար -1,7%
- 27.5 աշխատանքային մեծ կոլեկտիվի ղեկավար (16 և ավելի հոգուց բաղկացած) -0,4%
- 27.6 անհատ ձեռներեց -2,3%
- 27.7 սեփական բիզնեսն ունեցող գործարար -0,1%
- 27.8 տնային տնտեսուհի -13,9%
- 27.9 սովորող (ասպիրանտ) -4,3%
- 27.10 գործազուրկ -22,9%
- 27.11 այլ (գրել) - 0,5%

28. Աշխատանքային բնագավառը

Պետական սեկտոր

- 28.1 արդյունաբերական ձեռնարկություն -3,9%
- 28.2 կառավարման մարմիններ -3,7%
- 28.3 իրավապահ մարմիններ -1,3%
- 28.4 արդարադատության համակարգ -0,7%
- 28.5 զինված ուժեր -0,9%
- 28.6 գիտակրթական համակարգ -11,3%
- 28.7 առողջապահություն -2,8%

Ոչ պետական սեկտոր

- 28.8 արդյունաբերական ձեռնարկություն -4,3%
- 28.9 գյուղատնտեսություն -0,7%
- 28.10 ծառայությունների ոլորտ -14,4%
- 28.11 առևտուր -4,8%
- 28.12 առողջապահություն -1,2%
- 28.13 կրթության համակարգ -3,8%
- 28.14 հաս. կազմակերպություններ (3-րդ սեկտոր) 2,1%
- 28.15 այլ (գրել) -0,7%
- 28.16 ֆինանսահաշվային -1,9%
- 28.17 մշակույթ – 1,2%

Հարցազրուցվար !

Եվ վերջում մի հարց, որը վերաբերվում է Հայաստանից որոկավորված մասնագետների և

աշխատուժի արտահոսքին

29. Ձեր կարծիքով հետևյալ գործոնները որքանով են էական և ազդեցիկ արտագաղթի խթանման գործում

գործոնները	էական է	որոշ չափով էական է	էական չէ	դժվ. են պատ.
29.1 աշխատատեղերի բացակայություն	79.0%	10.9%	8.3%	1.8%
29.2 աշխատանքի դիմաց վարձատրության նվազ չափը	83.3%	11.8%	4.3%	0.7%
29.3 քաղաքական անկայունությունը	29.8%	30.4%	31.7%	8.1%
29.4 պատերազմի վտանգը	17.4%	22.8%	51.7%	8.2%

30. Ձեր ընտանեկան կարգավիճակը

- 30.1 ամուրի (չամուսնացած)-62,8%
- 30.2 ամուսնավորված -0,9%
- 30.3 ամուսնացած -36,3%

31.1 Սեռը

- 31.1 արական -31,6%
- 31.2 իգական -68,4%

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

ՀԱՎԵԼՎԱԾ 2ա Հետազոտության ընտրանքն՝ ըստ ակունքային և համամասնական սկզբունքների

Պետական բուհեր				
		Շրջ. թիվն ըստ պաշտոնական վիճակագրության	Տեսակարար կշիռը ըստ պաշտ. վիճ. տվյալների ընտրանքում ընդգրկված բուհերի շրջ. ընդհ. թվից	Հետազոտության ընտրանքը
N	Բուհ		%	շրջ.
1.	ԵՊՀ	2190	31.6%	275
2.	ՀՊՃՀ	1055	15.2%	132
3.	ՀՊՃՀ Գյումրի	133	1.9%	17
4.	ՀՊՃՀ Կապան	68	1.0%	9
5.	ՀՊՄՀ	561	8.1%	70
6.	ԵՊՏԻ	642	9.3%	81
7.	ԵրՊԲՀ	385	5.6%	49
8.	ՀԳԱ	517	7.5%	64
9.	ՎՍԻ	359	5.2%	45
10.	ԵրՃՇՀ	243	3.5%	30
11.	ԵրՊԼՀ	315	4.5%	39
12.	Կոնսերվատորիա	209	3.0%	26
13.	ԳՊՀ	111	1.6%	14
14.	ԵԳԱ	71	1.0%	9
15.	ԵրԿԹԻ	69	1.0%	9
ընդ. ընտրանքում ընդգրկված պետական բուհերի շրջանավարտներ		6 928	100%	870
ընդ. ՀՀ պետական բուհերի շրջանավարտներ		7 677		
Ոչ պետական բուհեր				
16.	Եր. տնտեսախրավ. համ.	150	16.2%	53
17.	«Հայբուսակ»	147	15.7%	52
18.	«Հյուսիսային»	117	12.5%	41
19.	Լ. Քալաշյանի անվ. հայկակ. բաց համ.	101	10.8%	36
20.	«Գլաձոր»	100	10.7%	35
21.	«ՄՖԲ» Ֆինանսական ակադեմիա	62	6.6%	22
22.	Ինտերլինգվա	57	6.1%	20
23.	Կառավարման և ինֆ. տեխն. համ.	54	5.8%	19
24.	Մովսես Խորենացու անվ. համ.	48	5.1%	17
25.	Երևանի մենեջմենթի համ.	47	5.0%	16
26.	Եվրասիա միջազգային համ.	27	2.9%	10
27.	ԳՀԱ «ՌԻբարտու» համ.	24	2.6%	9
ընդ. ընտրանքում ընդգրկված ոչ պետական բուհերի շրջանավարտներ		934	100%	330
ընդ. ՀՀ ոչ պետական բուհերի շրջանավարտներ		2 907		
ՀՀ պետական և ոչ պետական բուհերի առկա ուսուցման համակարգի 2002թ. շրջանավարտների ընդհանուր թիվը		10 584		1200

ՀԱՎԱԵԼՎԱԾ 2ր Հետազոտության ընտրանքում ընդգրկված մասնագիտությունների բնութագիրն՝ ըստ բուհերի և համապատասխան ֆակուլտետների¹¹

1 Մաթեմատիկա - 22 / 1.8%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Մաթեմատիկա - 14
2.	ՎՍԻ	Մաթեմատիկա - 8

2 Կիրառական մաթեմատիկա, ինֆորմատիկա, համակարգչային տեխնոլոգիաներ – 83 / 6.9%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա - 27
2.	ՀՊՃՀ Երևան	Կոմպյուտերային համակարգեր և ինֆորմատիկա - 21
3.	ՀՊՃՀ Երևան	Կիրառական տեխնոլոգիա - 18
4.	Լ. Քալաշյանի անվ. հայկական բաց համ.	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրերի ապահովում - 3
5.	Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համ.	Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ - 9
6.	«Մ. Խորենացու» անվ. համ.	Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա - 4

3 Քիմիա - 24 / 2%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Քիմիական - 9
2.	ՀՊՃՀ Երևան	Քիմիական տեխնոլոգիաներ և բնապահպանության ճարտարագիտություն - 15

4 Ֆիզիկա - 14 / 1.2%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Ֆիզիկայի - 8
2.	ՎՍԻ	Ֆիզիկա - 6

5 Կենսաբանական մասնագիտություններ – 33 / 2.3%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Կենսաբանություն - 20
2.	ՎՍԻ	Կենսաբանություն և քիմիա - 8
3.	ՎՍԻ	Կենսաբանություն և էկոլոգիա - 5

6 Աշխարհագրություն, պատմություն և աշխարհագրություն – 19 / 1.6%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Աշխարհագրություն - 10
2.	ԵՊՄՀ	Պատմա-աշխարհագրական – 8
3.	ԳՊՀ	Պատմություն - 1

7 Միջազգային հարաբերություն – 43 / 3.6%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Միջազգային հարաբերություն – 24
2.	Լ. Քալաշյանի անվ. հայկական բաց համ.	Միջազգային հարաբերություն – 1
3.	Երևանի տնտեսաիրավագիտական համ.	Միջազգային հարաբերություն – 9
4.	«Գլաճոր»	Միջազգային հարաբերություն - 9

8 Տնտեսագիտական մասնագիտություններ բացի ԵՊՏԻ-ից – 158 / 13.2%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Տնտեսագիտություն - 37
2.	ՀՊՃՀ Գյումրի	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (թեթև արդյունաբերության ճյուղում) - 12
3.	ՀՊՃՀ Կապան	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում - 4
4.	ՀԳԱ	Տնտեսագիտություն - 22
5.	ԳՊՀ	Հաշվապահական հաշվառում, ֆին. և վարկ - 4
6.	Երևանի տնտեսաիրավագիտական համ.	Տնտեսագիտություն - 14
7.	«Հայբուսակ»	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում - 9

¹¹ Գլխավոր համախմբության ելակետային տվյալներն ըստ ֆակուլտետների (մասնագիտությունների) սահմանվել են բուհերի արխիվների տրամադրած ցուցակների համաձայն:

8.	«Հայրուսակ»	Հաշվապահական հաշվառում և աուդիտ - 6
9.	«Հյուսիսային»	Տնտեսագիտություն - 8
10.	Լ. Քալաշյանի անվ. հայկական բաց համ.	Կառավարում - 9
11.	«Գլաճոր»	Ֆինանսներ և վարկ - 6
12.	«ՄՖԲ» Ֆինանսական ակադեմիա	Ֆինանսներ և վարկ - 17
13.	«ՄՖԲ» Ֆինանսական ակադեմիա	Հաշվապահական հաշվառում և աուդիտ - 5
14.	Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարան	Մենեջմենթ և քիզնես - 6
15.	Երևանի մենեջմենթի համ.	Տնտեսագիտություն - 1
16.	Եվրասիա միջազգային համ.	Տնտեսագիտություն - 4

		9 Սոցիոլոգիա, սոց. աշխատանք – 13 / 1.1%
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Սոցիոլոգիա, սոց. աշխատանք - 13

		10 Հոգեբանություն և Փիլիսոփայություն – 21 / 1.8%
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Հոգեբանություն և Փիլիսոփայություն – 13
2.	ԳՀՍ «ՌԻբարտու» համ.	Հոգեբանություն - 8

		11 Իրավագիտություն – 102 / 8.5%
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Իրավաբանական – 31
2.	ԳՊՀ	Իրավագիտություն – 1
3.	Երևանի տնտեսաիրավագիտական համ.	Իրավաբանություն և իրավահոգեբանություն – 30
4.	«Հյուսիսային»	Իրավաբանական – 6
5.	Լ. Քալաշյանի անվ. հայկական բաց համ.	Իրավագիտություն – 9
6.	«Գլաճոր»	Իրավագիտություն – 19
7.	Եվրասիա միջազգային համ.	Իրավաբանական - 6

		12 Անգլերեն, քարգմանչություն – 97 / 8.1%
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Ռոմանագերմանական – 32
2.	ԳՊՀ	Անգլերեն – 2
3.	«Հայրուսակ»	Օտար լեզու (անգլ.) – 9
4.	«Հյուսիսային»	Օտար լեզուներ – 15
5.	Լ. Քալաշյանի անվ. հայկական բաց համ.	Օտար լեզու – 8
6.	Ինտերլինգվա	Օտար լեզու – 20
7.	Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համ.	Թարգմանչական – 4
8.	«Մ. Խորենացու» անվ. համ.	Ռոմանագերմանական - 4
9.	Երևանի մենեջմենթի համ.	Տեխնիկական քարգմանչություն – 2
10.	ԳՀՍ «ՌԻբարտու» համ.	Օտար լեզու – 1

		13 Արևելագիտություն – 20 / 1.7%
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Արևելագիտություն - 20

		14 Լրագրություն – 10 / 0.8%
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Ժուռնալիստիկա - 5
2.	«Գլաճոր»	Լրագրություն – 1
3.	Երևանի մենեջմենթի համ.	Լրագրություն - 4

		15 Աստվածաբանություն – 6 / 0.5%
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Աստվածաբանություն – 6

		16 Ռուս քանասիրություն – 8 / 0.7%
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊՀ	Ռուս քանասիրություն - 8

		17 Ընդերքաբանություն – 20 / 1.7%
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ՀՊՃՀ Երևան	Ընդերքաբանություն և մետալուրգիա - 15

2.	ՀՊՃՀ Կապան	Սև և գունավոր մետաղների մետաղագործություն – 2
3.	ՀՊՃՀ Կապան	Օգտակար հանածոների ստորգետնյա մշակումների ըստ հանքային աշխ. – 3

18 Տրանսպորտային համակարգեր – 12 / 1%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ՀՊՃՀ Երևան	Տրանսպորտային համակարգեր – 12

19 Էներգետիկա, Էլեկտրոտեխնիկա -23 / 1.9%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ՀՊՃՀ Երևան	Էլեկտրոտեխնիկա - 6
2.	ՀՊՃՀ Երևան	Էներգետիկա - 17

20 Մեքենաշինություն, ճարտարագիտական - 25 / 2.1%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ՀՊՃՀ Երևան	Մեքենաշինություն – 13
2.	ՀԳԱ	Ճարտարագիտություն. գյուղ. մեք. և սարք. - 12

21 Ռադիոտեխնիկա և կապի համակարգեր – 16 / 1.3%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ՀՊՃՀ Երևան	Ռադիոտեխնիկա և կապի համակարգեր – 16

22 Թեթև արդյունաբերություն – 7 / 0.6%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ՀՊՃՀ Գյումրի	Տեքստիլ և թեթև արդյունաբերության արտադրանքի գեղ. նախագծում – 2
2.	ՀՊՃՀ Գյումրի	Տրիկոտաժի և կաշվի արտադրանքի տեխնոլոգիա - 3
3.	Լ. Քալաշյանի անվ. հայկական բաց համ.	Տեքստիլ և թեթև արդյունաբերության արտադրանքի գեղ. նախագծում - 2

23 Հայոց լեզու և գրականություն – 19 / 1.6%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ԵՊՄՀ	Հայոց լեզու և գրականություն – 12
2.	Գ.ՊՀ	Հայոց լեզու և գրականություն – 3
3.	«Մ. Խորենացու» անվ. համ.	Բանասիրական – 4

24 Ռեժիսուրա և դերասանական արվեստ – 15 / 1.3%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ԵՊՄՀ	Կուլտուրայի, մաս. հանդիսությունների ռեժիսուրա - 3
2.	ԵՊՄՀ	Կուլտուրայի, ռեժիսուրա - 3
3.	ԵրԿԹԻ	Դերասանական արվեստ – 8
4.	ԵրԿԹԻ	Ռեժիսուրա - 1

25 Մանկավարժական մասնագիտություններ – 69 / 5.8%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ԵՊՄՀ	Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա - 21
2.	ԵՊՄՀ	Նախադպրոցական մանկավարժ. և հոգեբ. - 15
3.	«Հայրուսակ»	Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա - 5
4.	«Հյուսիսային»	Մանկավարժություն - 12
5.	Լ. Քալաշյանի անվ. հայկական բաց համ.	Մանկավարժություն և հոգեբանություն - 3
6.	«Մ. Խորենացու» անվ. համ.	Դպրոցական մանկավարժություն - 5
7.	ՎՄԻ	Նախադպրոցական մանկավարժ. և հոգեբ. - 7

26 Դեֆեկտոլոգիա - 9 / 0.8%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ԵՊՄՀ	Դեֆեկտոլոգիա - 9

27 Ֆինանսահաշվային – 37 / 3.1%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ԵՊՏԻ	Ֆինանսահաշվային - 37

28 Տնտեսական կառավարում ԵրՊՏԻ – 34 / 2.8%		
	Բոնի	Ֆակուլտետ
1.	ԵՊՏԻ	Կառավարում - 22
2.	Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համ.	Մենեջմենթ և քիզնետ - 6
3.	Երևանի մենեջմենթի համ.	Կառավարում (մենեջմենթ) - 7

29 Առևտուր – 22 / 1.8%		
	Բոնի	Ֆակուլտետ

1.	ԵՊՏԻ	Կոմերցիա և ապրանքագիտություն – 22
30 Բուժական գործ – 29 / 2.4%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊԲՀ	Բուժական – 23
2.	«Հայրուսակ»	Բուժական գործ - 6
31 Մանկաբուժություն – 10 / 0.8%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊԲՀ	Մանկաբուժության – 10
32 Ատամնաբուժություն – 26 / 2.2%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊԲՀ	Ատամնաբուժական – 9
2.	«Հայրուսակ»	Ստոմատոլոգիա - 17
33 Բուժկանխարգելում, դեղագիտական – 7 / 0.6%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵՊԲՀ	Բուժկանխարգելում – 3
2.	ԵՊԲՀ	Գեղագիտական - 4
34 Ագրարային մասնագիտություններ – 17 / 1.4%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ՀԳԱ	Ագրարային – 15
2.	ԳՊՀ	Ագրոնոմիա և աշխարհագրություն – 2
35 Երաժշտական մասնագիտություններ – 26 / 2.2%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	Կոմսերվատորիա	Դաշնամուր – 13
2.	Կոմսերվատորիա	Լարային և փողային, հարվածային և ժող գործիքներ - 13
36 Անասնաբուժություն; անասնաբուժություն - 6 / 0.5%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ՀԳԱ	Անասնաբուժություն; անասնաբուժություն - 6
37 Պարենմթերքների տեխնոլոգիա - 9 / 0.8%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ՀԳԱ	Պարենմթերքների տեխնոլոգիա - 9
38 Ֆիզկուլտուրա - 8 / 0.7%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ՎՍԻ	Ֆիզ. դաստիար. և սպորտ - 8
39 Գեղարվեստի մասնագիտություններ – 12 / 1.0%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ՎՍԻ	Կերպարվեստ և գծագրություն – 3
2.	ԵԳԱ	Գեղանկարչություն -4
3.	ԵԳԱ	Դիզայն – 4
4.	ԵԳԱ	Արվեստի պատմություն և տեսություն – 1
40 Ճարտարապետություն – 9 / 0.8%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵրճԸՀ	Ճարտարապետություն - 9
41 Շինարարական այլ մասնագիտություններ – 21 / 1.8%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵրճԸՀ	Արդյունաբերություն և քաղաքային շինարարություն – 11
2.	ԵրճԸՀ	Քաղաքային շինարարություն և տնտեսություն – 10
42 Ֆրանսերեն, գերմաներեն – 39 / 3.3%		
	Բուհ	Ֆակուլտետ
1.	ԵրՊԼՀ	Ֆրանսերեն – 23
2.	ԵրՊԼՀ	Գերմաներեն – 16

Աշխատանքային զբաղվածության ու գործազրկության ծավալները և տարբեր բուհերի շրջանավարտների

Պետական բուհեր						
		Աշխատողների ընդհ. քիվը %-ով	Աշխ-ը համ. է մասնագիտությանը %	Չի համ. %	Գործազ. մակարդակը	Չաշխ. քիվը
1.	ԵՊՀ	63.6%	53.1%	10.5%	20.4	16
2.	ՀՊՃՀ	59.4%	33.8%	25.6%	29.3	11.3
3.	ՀՊՃՀ Գյումրի	56.3%	25.0%	31.3%	31.3	12.5
4.	ՀՊՃՀ Կապան	55.5%	44.4%	11.1%	33.3	11.1
5.	ՀՊՄՀ	60.9%	36.6%	32.4%	18.3	12.7
6.	ԵՊՏԻ	60.5%	43.2%	17.3%	29.6	9.9
7.	ԵրՊԲՀ	46.9%	44.9%	2.0%	8.2	44.9
8.	ՀԳԱ	26.6 %	34.4%	23.5%	15.6	26.6
9.	ՎՍԻ	46.7 %	33.3%	13.3%	26.7	26.7
10.	ԵրՃՀ	76.7%	56.6%	20 %	20	3.3
11.	ԵրՊԼՀ	59 %	48.7%	10.3%	28.2	12.8
12.	Կոնսերվատորիա	57.7 %	50%	7.7%	7.7	34.6
13.	Գ.ՊՀ	78.5 %	64,7%	14,3%	14,3	7,1
14.	ԵԳԱ	77.8%	66.7%	11.1%	22.2	0
15.	ԵրԿԹԻ	66.7%	44.4%	22.2%	22.2	11.1
	Ընդհ. պետական բուհերում	61.1%	44.6%	16.6%	22	16,9
Ոչ պետական բուհեր						
		Աշխատողների ընդհ. քիվը	Համ. է	Չի համ.	Գործազ. քիվը	Չաշխ. քիվը
16.	Եր. տնտեսաիրավ. համ.)	50.9%	30.2%	20.7%	30.2	18.9
17.	«Հայբուսակ»	57.7%	36.5%	21.2%	7.7	34.6
18.	«Հյուսիսային»	48.8 %	17%	31.8%	31.7	19.5
19.	Լ. Քալաշյանի անվ. հայկակ. բաց համ	61.1%	25%	36.1%	22.2	16.7
20.	«Գլաձոր»	51.4%	28.6%	22.9%	34.3	14.3
21.	«ՄՖԲ» Ֆինանսական ակադեմիա	72.7%	36.4%	36.3%	18.2	9.1
22.	Ինտերլինգվա	45%	35%	10%	55	0
23.	Կառավարման և ինֆ. տեխն. համ.	47.4%	36.8%	10.6%	31.6	21.1
24.	Մովսես Խորենացու անվ. համ.	52.9%	11.8%	41.2%	5.9	41.2
25.	Երևանի մենեջմենթի համ. (16)	62,5%	37.5%	25%	31.3	6.3
26.	«Եվրասիա» միջազգային համ.	60%	50%	10%	20	20
27.	ԳՀԱ «Ռիթարտու» համ.	66.7%	55.6%	11.1%	22.2	11.1
	Ընդ. մասնավոր բուհերում	55.2%	30.6%	24.5%	25.5	19.4
	Ընդամենը պետական և մասնավոր բուհերում	59.5%	40.8%	18.7%	22.9	17.6

Հավելված 4. Աշխատանքային զբաղվածության և գործազրկության մակարդակները, աշխատանքի համապատասխանությունն ու անհամապատասխանությունը ստացած մասնագիտությանը՝ ըստ մասնագիտությունների

	Ֆակուլտետ	Աշխ. զբաղ. մակարդ-ը	Աշխ-ը համ.է մասնագ.	Աշխ-ը չի համ. մասն.	Գործազրկ. մակարդ-ը	Չաշխ. թիվը
1.	Մաթեմատիկա	72.7%	54.5%	18.2%	13.6%	13.6%
2.	Կիրառական մաթեմատիկա, ինֆորմատիկա, համակարգչային տեխնոլոգիաներ	68.6%	55.4 %	13.2%	18.1%	13.3%
3.	Քիմիա	62.5%	41.7%	20.8%	16.7%	20.8%
4.	Ֆիզիկա	64.3%	50%	14.3%	21.4%	14.3%
5.	Կենսաբանական մասնագիտություններ	48.5%	24.2%	24.2%	30.3%	21.2%
6.	Աշխարհագրություն, պատմ. և աշխարհագրություն	73.7%	52.6%	21.1%	15.8%	10.5%
7.	Միջազգային հարաբերություններ	53.4%	23.2%	30.2%	27.9%	18.6%
8.	Տնտեսագիտական մասն. բացի ԵՊՏԻ-ից	46.8%	41.1%	5.7%	20.9%	17.7%
9.	Սոցիոլոգիա, սոց. աշխատանք	61.6%	46.2%	15.4%	7.7%	30.8%
10.	Հոգեբանություն և փիլիսոփայություն	61.9%	57.1%	4.8%	28.6%	9.5%
11.	Իրավագիտություն	57.8%	45.1%	12.8%	28.4%	13.7%
12.	Անգլերեն, քարգմանչություն	53.6%	34%	19.6%	28.9%	17.5%
13.	Արևելագիտություն	40%	25%	15 %	40%	20%
14.	Լրագրություն	80%	70%	10%	10%	10%
15.	Աստվածաբանություն	33.4%	16.7%	16.7%	50%	16.7%
16.	Ռուս բանասիրություն	87.5%	62.5%	25. %	0%	12.5%
17.	Ընդերքաբանություն	45%	20%	25%	50%	5%
18.	Տրանսպորտային համակարգեր	58.3%	16.7%	41.6%	33.3%	8.3%
19.	Էներգետիկա, էլեկտրոտեխնիկա	73.9%	39.1%	34.8%	26.1%	0%
20.	Մեքենաշինություն, ճարտարագիտական	48%	24%	24%	28%	24%
21.	Ռադիոտեխնիկա և կապի համակարգեր	68.8%	56.3%	12.5%	25%	6.3%
22.	Թեթև արդյունաբերություն	71.4%	28.6%	42.9%	28.6%	0%
23.	Հայոց լեզու և գրականություն	73.7%	42.1%	31.6%	5.3%	21.1%
24.	Ռեժիսուրա և դերասանական արվեստ	80%	33.3%	46.7%	13.3%	6.7%
25.	Մանկավարժական մասնագիտություններ	46.3%	26.1%	20.3%	24.6%	29%
26.	Դեֆեկտոլոգիա	66.6%	33.3%	33.3%	22.2%	11.1%
27.	Ֆինանսահաշվաչին	70.3%	54.1%	16.2%	24.3%	5.4%
28.	Տնտեսական կառավարում	70,6%	44,1%	26,5%	17,6%	11,8%
29.	Կոմերցիա և ապրանքագիտություն	31,8%	13,6%	18,2%	50%	18,2%
30.	Բուժական գործ	41,5%	34,5%	7%	10,3%	48,3%
31.	Մանկաբուժություն	30%	30%	0%	10%	60%
32.	Ատամնաբուժություն	57,7%	53,9%	3, 8%	3,8%	38,5%
33.	Բուժկանխարգելում և դեղագիտություն	87.5%	87.5%	0%	0%	14.3%
34.	Ազրոկենսաբանական մասնագիտություններ	60.9%	39.1%	21.7%	13%	26.1%
35.	Երաժշտական մասնագիտություններ	57,7%	50%	7,7%	7,7%	34,6
36.	Պարենամթերքների տեխնոլոգիա	44,4%	11,1%	33,3%	22,2%	33,3%
37.	Ֆիզկուլտուրա	37,5%	37,5%	0%	37,5%	25%
38.	Գեղարվեստի մասնագիտություններ	83,3%	75%	8,3%	16,7	0%
39.	Ճարտարապետություն	77,8%	66,7%	11,1%	22,2%	0%
40.	Շինարարական մասնագիտություններ	76,2%	52,4%	23,8%	19%	4,8%
41.	Ֆրանսերեն, գերմաներեն	59%	48,7%	10,3%	28,2%	12,8%
	Ընդի.	59.5 %	40.8%	18.7%	22.9%	17.6%

**4. «ԳԻՆԴ» ԳՈՎԱԶԴԻԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՊԱՀԱՆՁԱՐԿ ԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՏԵՆՏ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Բովանդակություն

4.1. Հետազոտության նկարագրությունը

4.2. Աշխատանքի պահանջարկն ըստ ֆիզիկական և մտավոր, կայուն և ժամանակավոր բնութագրերի, տնտեսության պետական և մասնավոր հատվածների

4.3. Տարբեր մասնագիտությունների տեսակարար կշիռն աշխատանքի պահանջարկում՝ ըստ «Գինդ» շաբաթաթերթի հայտարարությունների

4.4. Հավելվածներ

4.1. Հետազոտության նկարագրությունը

Աշխատաշուկան բնութագրող կառուցվածքային կարևոր բաղադրիչներից են՝ աշխատանքի առաջարկն ու պահանջարկը, զբաղվածության ծառայությունները, հիմնադրամներն ու բորսաները, աշխատուժի վերապատրաստման ծառայությունները, Ինչպես նաև այդ ոլորտում գործառնող գովազդային գործակալություններն ու լրատվամիջոցները:

Տարբեր երկրների փորձը վկայում է, որ պաշտոնական տվյալները ոչ միշտ են արտացոլում աշխատանքի շուկայի, այդ թվում՝ աշխատանքի առաջարկի և պահանջարկի, գործազրկության և զբաղվածության իրական պատկերը¹:

Փորձագետների գնահատականներով, հետխորհրդային Հայաստանում աշխատանքի առաջարկի անընդհատ աճի և պահանջարկի նվազման հետևանքով ՀՀ աշխատանքի շուկան վերջին տարիներին բնութագրվում է բարձր լարվածությամբ²:

ՀՀ աշխատաշուկայում առկա աշխատանքի պահանջարկի մասին բազմակողմանի և առավել անմիջական պատկերացում ստանալու նպատակով սույն ծրագրի շրջանակներում իրականացվել է «Գինդ» գովազդային շաբաթաթերթի 2005թ-ի հունվար-օգոստոս ամիսներին լույս տեսած 15 համարներում հրապարակված՝ աշխատուժ վարձելու մասին 1504 հայտարարություններ և աշխատանքի հրավերներ:

¹ «Միջին մասնագիտական կրթությունը Հայաստանում: Վարչաիրավական հարցեր, համակարգի գործունեությունը մասնագիտական զբաղվածություն, ֆինանսական խնդիրներ», Երևան, 2002թ., էջ 21:

² Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան, 2004թ., էջ 110-113:


Ինչպես ցույց տվեց պրակտիկան, «Գինդ»-ի տվյալ շաբաթվա շատ հայտարարություններ կրկնվում էին նաև հաջորդ շաբաթվա համարում, ուստի հետագոտող խումբը նպատակահարմար գտավ ուսումնասիրել շաբաթաթերթի ամեն 2-րդ համարը: Այսինքն, յուրաքանչյուր ամիս՝ երկու համար:

4.2. Աշխատանքի պահանջարկն ըստ ֆիզիկական և մտավոր, կայուն և ժամանակավոր բնութագրերի, տնտեսության պետական և մասնավոր հատվածների


Ուսումնասիրությունը վկայում է, որ աշխատանքի պահանջարկի գերակշռող մասը վերաբերում է ֆիզիկական աշխատանք պահանջող աշխատատեղերին, և այն աշխատատեղերին, որոնց համար անհրաժեշտ բաղադրիչ է հանդիսանում ֆիզիկական աշխատանքը՝ 69,1%: Մտավոր աշխատանքի պահանջարկը կազմում է 30,1%:

Հայտարարությունների 88,4%-ը առաջարկում է կայուն, մշտական աշխատանք, 0,4%-ը ժամանակավոր աշխատանքի հայտարարություններ են, իսկ 11,2%-ի դեպքում էլ չի նշվում աշխատանքի ժամանակավոր կամ մշտական լինելը: *Տես գրաֆիկներ 1; 2:*

Գրաֆիկ 1. Աշխատանքի պահանջարկն ըստ կայուն և ոչ կայուն աշխատատեղերի



Գրաֆիկ 2. Մտավոր և ֆիզիկական աշխատանքի բնութագիրն ըստ կայունության




Աշխատանքի պահանջարկի 88%-ը բաժին է ընկնում մասնավոր, ոչ պետական ընկերություններին ու հաստատություններին: 11.9%-ի դեպքում չի նշվում հաստատության սեփականության ձևը, իսկ պետական հաստատությունների աշխատանքի պահանջարկի արտացոլումը «Գինդ»-ի հայտարարություններում կազմում է 0.1%:

Տարիքային խմբերի առումով, հայտարարությունների մեծամասնությունը ունի բավականին լայն ընդգրկում: Տարիքային սահմանափակումները բացակայում են ուսումնասիրված հայտարարությունների 86.1%-ի դեպքում: Իսկ պահանջարկի 14.8%-ն էլ վերաբերում է մասնավորապես 18-39 տարեկաններին; *Տես հավելված 2:*

Գործատուները հաճախ կարևորում են աշխատանքային փորձի առկայությունը՝ որպես որակյալ աշխատանքի գրավական:

Աշխատանքային փորձը պահանջվում է հայտարարությունների 52.4%-ի դեպքում, իսկ 6.3%-ի պարագայում էլ համարվում է ցանկալի (*գրաֆիկ 3*):

Գրաֆիկ 3. *Աշխատանքային փորձի կարևորումը գործատուների կողմից (ըստ «Գինդ» շաբաթաթերթի՝ աշխատանքի հրավերների ուսումնասիրության տվյալների)*



4.3. Տարբեր մասնագիտությունների տեսակարար կշիռն աշխատանքի պահանջարկում՝ ըստ «Գինդ» շաբաթաթերթի հայտարարությունների

Ո՞ր մասնագիտություններն են առավել մեծ տեղ գրավում աշխատանքի պահանջարկի կառուցվածքում, ըստ «Գինդ» շաբաթաթերթի հատարարությունների:

Ուսումնասիրության տվյալների համաձայն, հայտարարությունների ամենամեծ խումբը՝ 48,26%-ը վերաբերում է **արհեստագործական կրթության տարրեր մասնագիտությունների:**

Արհեստագործական մասնագիտությունների խմբում ըստ պահանջարկի **առաջին տեղում** են առևտրի և սննդի արդյունաբերության ոլորտի մասնագիտությունները՝ 22.5%

(վաճառողներ, հսկիչ-գանձապահներ՝ 8,1%, բարձնողներ, բուժետույաններ և մատուցողներ՝ 10,2%, խոհարարներ, հրուշակագործներ՝ 4,1%)³:

Երկրորդ տրանսպորտի և կապի բնագավառի մասնագիտություններն են՝ 13%: Այս խմբի մասնագիտությունների մեջ առանձնանում են վարորդները՝ ընդհանուր պահանջարկում 7,7% ներկայացվածությամբ⁴, ավտոմոբիլային տրանսպորտի շահագործող-նորոգող մասնագիտությունները՝ 2,9%, հեռախոսային կապի տեխնիկական սպասարկման ոլորտի մասնագիտությունները՝ 2,4%:

Արհեստագործական մասնագիտությունների պահանջարկի շրջանակներում՝ ըստ տեսակարար կշռի, **երրորդ խումբը կազմում են շինարարական մասնագիտությունները՝ 4%:**

Չորրորդ խմբի մեջ մտնում են մեքենաշինության և մետաղագործության ոլորտի մասնագիտությունները՝ 2,8% (եռակցող, խառատ, թիթեղագործ, փականագործ, գործիքագործ և այլն):

Արհեստագործական մասնագիտությունների պահանջարկի կառուցվածքում **հինգերորդ խումբը կազմում են գրասենյակային աշխատանքների կազմակերպման ոլորտի մասնագիտությունները** (քարտուղարուհի-ռեֆերենտ, գործավար՝ օտար լեզվի և համակարգչի իմացությամբ)՝ 2,1%:

Աշխատանքի ընդհանուր պահանջարկի մեջ՝ ըստ ծավալների **երկրորդ մասնագիտական կրթություն չպահանջող աշխատանքն է** (բանվոր, դռնապան, հավաքարար, առաքիչներ և այլն)՝ 18.9%:


Աշխատանքի հրավիրման առաջարկությունների վերլուծության տվյալների համաձայն՝ ըստ վարկանիշի, **երրորդ միջին մասնագիտական կրթության մասնագիտություններն են՝ 18,4%:** Համեմատաբար ավելի շոշափելի է պահանջարկը հաշվապահ, հաշվապահ-հաշվետուգողների, կառավարիչների (մենեջմենթ), շուկայաբանների և առևտրի ոլորտի մասնագիտությունների՝ 2,9%, ինչպես նաև դեղագործություն, քույրական և ատամնաբուժական գործ մասնագիտությունների՝ 2,8%, նկատմամբ:

Պահանջարկի ընդհանուր ծավալներում ունեցած տեսակարար կշռով **չորրորդը** բարձրագույն կրթությամբ մասնագիտություններն են՝ 14.4%: (*Տես գրաֆիկ 4*): Դրանց մեջ առանձնանում են բժշկի (առանձնապես՝ ատամնաբույժի)՝ 4,7%, տնտեսագիտություն և կառավարում, շուկայաբանություն՝ 3.7%, կիրառական մաթեմատիկա, հաշվապահական համալիրներ և ցանցեր, համակարգչային ծրագրավորում՝ 2,1%, և թարգմանչություն՝ 1,1%, մասնագիտությունները: (*Գրաֆիկ 4*):

³ Դրանց մի մասը կարող է դիտարկվել ինչպես նախնական (արհեստագործական), այնպես էլ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների շարքում:

⁴ Այս ցուցանիշները մեկնաբանելի են ինչպես տնտեսության ծավալների ընդհանուր աճի միտումներով, այնպես էլ Երևան քաղաքում տրանսպորտային և տաքսի ծառայությունների ցանցի՝ վերջին տարիների ընթացքում նկատվող աճի իրողությամբ:

Գրաֆիկ 4. Տարբեր մասնագիտությունների տեսակարար կշիռը աշխատանքի ընդհանուր պահանջարկում՝ ըստ «Գինդ» շաբաթաթերթի հայտարարությունների ուսումնասիրության



«Գինդ» շաբաթաթերթում հրապարակվող առաջարկությունների միայն 4.45%-ի դեպքում է հայտարարվում առաջարկվող աշխատավարձի չափը: Ըստ եղած տվյալների, առաջարկվող միջին աշխատավարձը կազմում է 75 380 դրամ: Տարբեր աշխատանքների և մասնագիտությունների համար առաջարկվող աշխատավարձի միջին չափերը հետևյալներն են.

Աղյուսակ 1. Տարբեր մասնագիտությունների համար առաջարկվող աշխատավարձի միջին չափը

Արհեստագործական մասնագիտություններ	
Ավտոմոբիլային տրանսպորտի շահագործում և նորոգում (ավտովերանորոգող-փականագործ, ավտոէլեկտրիկ)	40 000 դրամ
Թեթև (տրիկոտաժի, կարի) արտադրության ջուլիակներ, դերձակներ, օպերատորներ, գործող բանվորներ	55 000 դրամ
Վաճառողներ, հսկիչ-գանձապահներ	58 000 դրամ
Հացթուխ, բուֆետապան, մատուցող	50 000 դրամ
Գրասենյակային աշխատանք կատարողներ (քարտուղար-ռեֆերենտ, գործավար)	35 000 դրամ
Կանաչապատող-ծաղկաբույժ	35 000 դրամ
Միջին մասնագիտական կրթության մասնագիտություններ	
Էլեկտրական և էլեկտրամեխանիկական սարքավորումների տեխնիկական շահագործում և սպասարկում	27 500 դրամ
Տնային տնտեսության վարում	75 000 դրամ

Գովազդի կազմակերպում	50 000 դրամ
Մասնագիտական կրթություն չպահանջող աշխատանքներ	
Առաքիչ	64 285 դրամ
Բանվոր	66 464 դրամ
Դռնապան	90 000 դրամ
Գիսպետչեր	62 500 դրամ

Աշխատանքի հրավիրող հայտարարությունների մի մասում պոտենցիալ աշխատողներին ներկայացվում են նաև լրացուցիչ պահանջներ՝ սեփական մեքենա ունենալու իրողություն (5,9%), լեզուների և համակարգչի իմացություն (3,5%), արտաքին բարետես տվյալներ (3,5%) և այլն:

Ինչպես վկայում են «Գինդ» շաբաթաթերթի՝ աշխատուժ վարձելու մասին հայտարարությունների վերլուծության արդյունքները, աշխատաշուկայում բավականին զգալի է արհեստագործական մասնագիտությունների նկատմամբ պահանջարկը: Ուստի, միանգամայն հիմնավորված է թվում 2003թ-ից նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցի վերականգման քաղաքականությունը: Դա արդարացված է ինչպես աշխատաշուկայի և տնտեսության զարգացման պահանջների բավարարման, այնպես էլ աղքատության հաղթահարման ռազմավարության տեսանկյունից:

4.4. Հավելվածներ

Հավելված 1. Աշխատանքի պահանջարկի ընդհանուր կառուցվածքը՝ «Գինը» շաբաթաթերթի 1504 հայտարարությունների վերլուծության տվյալներով⁵

		Պահանջարկի տեսակարար կշիռը աշխատանքի պահանջարկի ընդհանուր ծավալում	Գասիչը
N	I Արհեստագործական կրթության մասնագիտություններ	48.26%	
	Մեքենաշինություն և մետաղագործություն	2.79%	0100
1.	եռակցող	0.93%	0102
2.	խառատ, թիթեղագործ, հղկող	0.93%	0103
3.	փականագործ, գործիքագործ	0.47%	0103
4.	մետաղամշակում	0.47%	0104
5	Քիմիական արտադրություն (ռետինե իրերի, կոշկեղենի արտադրության դրոշմող բանվոր)	0.07%	0209
	Էլեկտրատեխնիկական և էլեկտրոնային սարքերի, սարքավորումների նորոգում և սպասարկում	0.73%	0300
6	էլեկտրական սարքավորումներ սպասարկող էլեկտրամոնտյոր, միկրոսխեմաներ և կիսահաղորդչային սարքեր հավաքող	0.53%	0301
7	ռադիոէլեկտրոնային սարքավորումներ (հեռուստացույց, մագնիտաֆոն, և այլն) նորոգող և սպասարկող մեխանիկներ	0.20%	0302
	Շինարարություն	4.00%	0400
8	երկաթ-բետոնյա կոնստրուկցիաներ մոնտաժող բանվոր	0.60%	0401
9	երեսպատող-սալիկապատող վարպետներ	0.07%	0403
10	մանրահատակագործություն, ատաղձագործություն	1.06%	0404
11	կահույք պատրաստող և կոմպլեկտավորող վարպետներ	1.40%	0404
12	ծեփագործություն, ներկարարություն	0.60%	0405
13	սանտեխնիկ-փականագործ, գազաեռակցող	0.27%	0408
	Տրանսպորտ և կապ	13.03%	0500
14	երկաթուղային շարժակազմի (վագոններ, էլեկտրաջերմաքարշ, մետրոյի և տրոլեյբուսի վագոններ) սպասարկող վարպետներ	0.07%	0501
15	ավտոմոբիլային տրանսպորտի շահագործում և նորոգում (տրակտորիստ, մեքենավար, ավտովերանորոգող-փականագործ, ավտոէլեկտրիկ)	2.93%	0503
16	ավտոմեքենայի վարորդ	7.65%	0503 (07)
17	կաբելային գծեր վերանորոգող, հեռախոսային կապի մոնտյոր, հեռախոսավարուհի	2.39%	0504
	Սպառողական ապրանքների արտադրություն	1.93%	0600
18	տրիկոտաժի արտադրության ջուլիակներ, կարող, գործող բանվորներ	0.40%	0602
19	օրթոպեդիական կոշիկի մոդելյորներ և կոշկակարներ	0.53%	0603
20	կարի արտադրության մասնագետներ, օպերատորներ, դերձակներ	1.00%	0604
	Առևտրի և սննդի սպասարկում	22.47%	0700
21	առևտրի սպասարկում իրականացնող վաճառողներ, հսկիչ գանձապահներ	8.11%	0701
22	հացթուխներ, բարմեններ, բուֆետպաններ և մատուցողներ	10.24%	0701
23	խոհարարներ, հրուշակագործներ	4.12%	0702
	Արվեստի և ոսկերչական իրերի մշակում և սպառաստում	0.40%	0704

⁵ Մասնագիտությունների անվանումները և դասիչներն ներկայացված են ըստ ՀՀ կառավարության 1997թ., 2002թ. և 2003թ. որոշումներով սահմանված նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկի:

24	մանրանկարչություն, կիսանկարժեք քարերի մշակում և պատրաստում, գեղարվեստական իրերի պատրաստում, ոսկերչություն և աղամանդագործություն	0.27%	0704
25	գորգագործ, ասեղնագործ, գորելենագործ, քարի գեղարվեստական փորագրում	0.13%	0704
26	Գրասենյակային աշխատանքների կազմակերպիչներ (քարտուղար-ռեֆերենտ, գործավար՝ օտար լեզվի և կոմպյուտերի իմացությամբ)	2.10%	0705
	Գյուղատնտեսություն	0.74%	0800
27	կանաչապատող-ծաղկաբույծ	0.47%	0802
28	անասնաբուծության և անասնաբուծության կրտսեր մասնագետ (կրտսեր անասնաբույժ, շերամապահ և այլն)	0.27%	0808
	II Միջին մասնագիտական կրթության մասնագիտություններ	18.44%	Գասիչը
	Իրավունք, սոցիալական աշխատանք, հումանիտար մասնագիտություններ	0.13%	0200
29	թարգմանություն, գործավարություն, սպասարկման կազմակերպում	0.13%	0207-0210
	Կրթություն	0.27%	0300
30	երաժշտական կրթություն	0.27%	0310
	Առողջապահություն	2.79%	0400
31	դեղագործություն	1.53%	0405
32	քույրական գործ, ատամնատեխնիկական գործ	1.26%	0406
	Մշակույթ և արվեստ	2.00%	0500
33	պարարվեստ	0.20%	0506
34	դիզայն (բստ ճյուղերի)	1.80%	0514
	Տնտեսագիտություն և կառավարում	2.86%	0600
35	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և հաշվետուզում (բստ ճյուղերի)	0.27%	0601
36	մենեջմենթ /կառավարում/ (բստ ճյուղերի)	1.32%	0602
37	շուկայաբանություն և առևտուր (բստ ճյուղերի)	1.26%	0607; 0608
	Օգտակար հանածոների արդյունահանում	0.07%	0900
38	գազանավթամուղների և գազանավթապահեստարանների կառուցում և շահագործում, հանքահորային և ստորերկրյա շինարարություն	0.07%	0905-0908
	Մետաղագործություն և մեքենաշինություն	0.20%	1100; 1200
39	սև և գունավոր մետաղների ձուլման արտադրություն	0.07%	1103
40	մեքենաշինության տեխնոլոգիա, հաստոցաշինություն	0.07%	1201;1211
41	ավտոմոբիլաշինություն և տրակտորաշինություն	0.07%	1205
	Տեխնոլոգիական մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	0.60%	1700
42	վերամբարձ տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում	0.60%	1706
43	Էլեկտրատեխնիկա (Էլեկտրական և էլեկտրամեխանիկական սարքավորումների տեխնիկական շահագործում և սպասարկում)	0.27%	1806
	Էլեկտրոնիկա և միկրոէլեկտրոնիկա, ռադիոտեխնիկա և հեռահաղորդակցություն	0.47%	2000
44	կապի ցանցեր և հաղորդակցման(կոմուսացիոն) համակարգեր, կապի միջոցների շահագործում	0.27%	2004; 2009
45	ռադիոկապ, ռադիոհաղորդում և հեռուստատեսություն, հնչյունային տեխնիկայի սպասարկում	0.20%	2006; 2020
	Ավտոմատացում և կառավարում	0.07%	2100
46	տեխնոլոգիական գործընթացների և արտադրությունների ավտոմատացում (բստ ճյուղերի)	0.07%	2101
	Սպասարկում	8.11%	2300
47	սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և	2.06%	2302; 2307

	զբոսաշրջային համալիրներում, զբոսաշրջություն		
48	վարսավիրական արվեստ, կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	5.19%	2304; 2312
49	տնային տնտեսության վարում	0.27%	2306
50	գովազդ	0.60%	2308
	Անտառային պաշարների վերարտադրություն և վերամշակում	0.47%	2600
51	փայտամշակման տեխնոլոգիա	0.47%	2602
	Սպառողական ապրանքների տեխնոլոգիա	0.13%	2800
52	հագուստի պատրաստման տեխնոլոգիա	0.07%	2809
53	կաշվե իրերի արտադրություն, կաշվի և մորթու տեխնոլոգիա	0.07%	2810; 2811
	III Բարձրագույն կրթությամբ մասնագիտություններ	14.36%	Դասիչը
54	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, համակարգչային ծրագրավորում	2.06%	2200
55	Պարենամթերքի տեխնոլոգիա (պահածոների և սննդախտանյութերի, կաթի և կաթնամթերքի, մսամթերքի տեխնոլոգիա)	0.20%	2700 (2708; 2709; 2711)
56	Տնտեսագիտություն և կառավարում (տնտեսական կառավարում, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում)	3.72%	0600; 0620
57	Բանկային ոլորտի աշխատող (ֆինանսներ և վարկ)	0.07%	0604
58	Շինարարություն և ճարտարապետություն	0.20%	2900
59	Լրագրություն	0.07%	0214
60	Իրավաբանություն	0.53%	0211
61	Կրթություն (ուսուցիչներ, դասուսույցներ)	0.93%	0300
62	Վոկալ արվեստ, էստրադային արվեստ	0.20%	0510; 0513
63	Ճարտարագիտություն	0.13%	1200
64	Քիմիա	0.13%	0110
65	Սոցիոլոգիա	0.07%	0203
66	Դերասանական արվեստ	0.07%	0501
67	Բժշկական գործ, ստոմատոլոգիա	4.72%	0401; 0404
68	Կենսաբանություն	0.13%	0116
69	Անասնաբուժություն	0.07%	3108
70	Թարգմանչական գործ՝ համակարգչի իմացությամբ	1.06%	0533
	IV Կրթություն չպահանջող աշխատանք	18.94%	
71	դռնապան	0.79%	
72	բանվոր	10.70%	
73	մատակարարներ-առաքիչներ	4.45%	
74	դիսպետչեր	1.40%	
75	այլ	1.60%	

Հավելված 2. «Գինը» շաբաթաթերթի՝ աշխատանք առաջարկող հայտարարությունների կոնտենտ վերլուծության միաչափ տվյալներ

Ուսումնասիրված հայտարարությունների բաշխվածությունն ըստ 2005թ. հունվար-օգոստոս ամիսների
1. ամիսը

1	2	3	4	5	6	7	8
13.6%	13.3%	13.4%	13.3%	13.2%	13.3%	13.2%	6.6%

2. Պահանջվող մասնագիտությունը _____

3. Աշխատանքի բնույթը					
3.1 Ֆիզիկական , ֆիզիկական և մտավոր աշխատանք 69.9%			3.2 Մտավոր 453 30.1%		
4.1 62,5% Մշտական աշխատանք	4.2 0.4% Ժամանակավոր աշխատանք	4.3 7% Չի նշվում	4.4 25.9% Մշտական աշխատանք	4.5 0% Ժամանակավոր աշխատանք	4.6 4.2% Չի նշվում

5. Աշխատանքը

- 5.1 պետական հաստատությունում է 0.1%
- 5.2 մասնավոր հաստատությունում է 88%
- 5.3 չի նշվում 11.9%

6. Պահանջվող մասնագիտություններն ըստ ենթադրվող կրթամակարդակի

- 6.1 արհեստագործական կրթության մասնագիտություններ 48,02%
- 6.2 միջն. մասնագիտական կրթության մասնագիտություններ 17,81%
- 6.3 բարձրագույն կրթության մասնագիտություններ 15,02%
- 6.4 մասնագիտական կրթություն չպահանջող աշխատանք 19,15%

7. Առաջարկվող միջին ամսական աշխատավարձի չափը ___ 75 380 ___

8. Տարիքային սահմանափակումներ

- 8.118-25 տարեկան 8.0%
- 8.226-39 տարեկան 6.8%
- 8.340-55 տարեկան 1.7%
- 8.456 և ավելի 0.2%
- 8.5տարիքային այլաբնույթ սահմանափակումներ 2.3%
- 8.6տարիքային սահմանափակում չկա 86.1%

9. Աշխատանքային փորձը

- 9.1պահանջվում է 52.4%
- 9.2ցանկալի է 6.3%
- 9.3չի պահանջվում 41.4%

10. Ներկայացվող այլ պահանջներ

- 10.1 արտաքին բարետես տվյալներ 3.6%
- 10.2 մեքենա ունենալու փաստ 5.9%
- 10.3 լեզուների իմացություն 2.1%

- 10.4 հարմար բնակավայր 0.8%
- 10.5 այլ 0.3%
- 10.6 լրացուցիչ պահանջներ ներկայացված չեն 87.2%
- 10.7 համակարգչի իմացություն 1.4%

5. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՈՎ

Բովանդակություն

- 5.1. Հետազոտության մեթոդական հիմքերը
- 5.2. Մասնագիտությունների վարկանիշը : Հասարակական հեղինակության և եկամտաբերության փոխկապվածությունը
- 5.3. Կրթությունը հայ հասարակության արդիականացման տեսանկյունից
- 5.4. Մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը որպես որոշիչ գործոն
- 5.5. Եզրակացություն
- 5.6. Հավելված

5.1. Հետազոտության մեթոդական հիմքերը

Սոցիալական խմբերի ուղղահայաց շերտավորման /ստրատիֆիկացիայի/ հիմնական չափորոշիչներից մեկը մասնագիտությունն է: Մասնագիտական շերտավորումը համընդգրկուն է, մասնագիտությունը հաճախ հանդես է գալիս իբրև սոցիալական մի շերտից մյուսը տեղափոխվելու միջոց: Հատկապես երիտասարդների սոցիալական կարգավիճակների սանդղակով բարձրանալուն կարող է նպաստել կրթության միջոցով համապատասխան մասնագիտության ձեռքբերումը, քանզի մարդու սոցիալական դիրքը բնութագրող կարևոր չափանիշներ են նրա զբաղվածության ոլորտը, որը մասնագիտության արդյունք է, և կատարված աշխատանքի հեղինակականությունը, որը մեծապես կախված է մասնագիտության վարկանիշից:

Մասնագիտությունների վարկանիշը որոշելու տարբեր եղանակներ կան: Օրինակ՝ կարելի է մասնագիտությունները գնահատել ըստ հետևյալ վեց չափանիշների. եկամտի, ապագայի նկատմամբ վստահության, կարիերայի հնարավորության, աշխատանքի պայմանների, ֆիզիկական պահանջների և սթրեսի աստիճանի: Մեր հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է մասնագիտությունների եկամտաբերության և հասարակական հեղինակության փոխհարաբերությունն ըստ Երևանի բնակչության կարծիքի: Հարցման են ենթարկվել 15 տարեկանից բարձր 604 մարդ: 2001թ. ՀՀ բնակչության մարդահամարի արդյունքների հիման վրա իրականացվել է բազմաստիճան համամասնական ընտրանք ըստ սեռի (44,2% տղամարդ և 55,8% կին), վեց տարիքային խմբերի և կրթության մակարդակի (33,4% բարձրագույն, 21,9% միջին մասնագիտական և 44,7% բոլոր մյուսները): Հարցվողների թիվը որոշվել է ըստ հետևյալ բանաձևի.

$$Nt^2s^2$$

$n = \frac{Nt^2s^2}{N\Delta^2 + t^2s^2}$, որտեղ՝ n -ը ընտրանքային համախմբությունն է, N -գլխավոր ($N= 858106$),

s^2 – հետազոտվող հատկանիշի դիսպերսիան է ($s^2= 0,2$),

$1- \alpha = 0,90$ $t = 1,65$

$\Delta = 0,03$ (ներկայացուցչականության սխալը վերցվել է 3%)

արդյունքում ստացվել է, որ $n = 604$:

Հավաքագրված տվյալները մշակվել են քանակական վիճակագրական մեթոդներով SPSS համակարգչային ծրագրի միջոցով:

5.2. Մասնագիտությունների վարկանիշը: Հասարակական հեղինակության և եկամտաբերության փոխկապվածությունը

Հարցման համար առանձնացված 54 հիմնական մասնագիտությունների եկամտաբերության և հասարակական հեղինակության վերաբերյալ հարցվողների սուբյեկտիվ պատկերացումների հիման վրա Երևանի բնակչության համար կառուցվել է մասնագիտությունների հետևյալ վարկանշային սանդղակը, որից երևում է, որ Հայաստանում ավելի մեծ հասարակական հեղինակություն են վայելում այն մասնագիտությունները, որոնք բարձր եկամտաբերություն են ենթադրում և համապատասխան մտային աշխատանք պահանջում (տե՛ս Աղյուսակ 1.):


Աղյուսակ 1.¹ Մասնագիտությունների վարկանիշը

Վարկանիշը	Մասնագիտության անվանումը	հասարակական հեղինակությունը (%)	եկամտաբերությունը (%)	Վարկանիշը	Մասնագիտության անվանումը	հասարակական հեղինակությունը (%)	եկամտաբերությունը (%)
1.	իրավաբան	4.49	4.54	28.	սոցիոլոգ	3.53	3.25
2.	բժիշկ	4.50	4.43	29.	սպորտսմեն	3.58	3.17
3.	բանկային ոլորտի աշխատող	4.36	4.56	30.	արվեստագետ	3.74	2.94
4.	ծրագրավորող	4.38	4.49	31.	բուժքույր	3.36	3.27
5.	տնտեսագետ	4.34	4.25	32.	ուսուցիչ	3.68	2.92
6.	մաքսավոր	3.79	4.55	33.	արհեստավոր	3.31	3.28
7.	միջազգայնագետ	4.13	4.12	34.	ուստիկան	2.92	3.66
8.	հաշվապահ	4.02	4.14	35.	մաթեմատիկոս	3.58	2.97
9.	թարգմանիչ	4.02	4.07	36.	վարսավիր	3.12	3.41
10.	օդաչու	4.05	3.95	37.	անասնաբույժ	3.35	3.13
11.	համալսարանի դասախոս	4.07	3.92	38.	սոց. աշխատող	3.28	3.17
12.	ճարտարապետ	4.05	3.78	39.	պատմաբան	3.54	2.82
13.	դիզայներ	3.89	3.86	40.	ֆիզիկոս	3.50	2.86
14.	քաղաքագետ	3.81	3.84	41.	քարտուղարուհի, գործավար	3.10	3.24
15.	երգիչ	3.63	3.72	42.	նկարիչ	3.56	2.75
16.	ֆերմեր	3.59	3.76	43.	կենսաբան	3.46	2.75
17.	բրոքեր	3.48	3.86	44.	հրուշակագործ	3.18	3.01
18.	ոսկերիչ	3.51	3.81	45.	դերձակ	3.11	3.00
19.	հոգեբան	3.80	3.42	46.	քիմիկոս	3.36	2.72
20.	զինվորական	3.52	3.68	47.	երկրաբան	3.16	2.72
21.	դերասան	3.82	3.16	48.	վաճառող	2.84	2.96
22.	դեղագործ	3.54	3.41	49.	վարորդ	2.84	2.93
23.	լրագրող	3.57	3.37	50.	փականագործ	2.85	2.68
24.	շինարար	3.54	3.39	51.	եռակցող	2.83	2.64
25.	երաժիշտ	3.62	3.29	52.	գող, ավազակ	1.79	3.31
26.	ինժեներ	3.60	3.20	53.	մարմնավաճառ	1.49	3.46
27.	հասարակայնության հետ կապերի մասնագետ	3.41	3.39	54.	սևագործ բանվոր	2.54	2.26

¹ Ուսպոնդեմոները 5 բալանոց սանդղակով գնահատել են աղյուսակում բերված մասնագիտությունները ըստ հասարակական հեղինակության և եկամտաբերության: Մուգ ֆոնով առանձնացված են առավել մեծ և համեմատաբար ցածր վարկանիշ ունեցող մասնագիտությունները:

Ըստ հասարակական հեղինակության մասնագիտությունները կարելի է բաժանել երեք խմբի՝ իրենց ենթախմբերով՝ բարձր, միջին և ցածր հեղինակություն վայելող մասնագիտությունների: Առաջին խմբում ըստ վարկանշային հաջորդականության ընդգրկված են *բժշկի, իրավաբանի, ծրագրավորողի, բանկային ոլորտի աշխատողի, տնտեսագետի, միջազգայնագետի /դիվանագիտական ոլորտի աշխատողի/, դասախոսի, օդաչուի, ճարտարապետի, հաշվապահի և թարգմանչի* մասնագիտությունները: Բանն այն է, որ տվյալ մասնագիտություններն ընկալվում են մեր ռեսպոնդենտների կողմից որպես եկամտաբեր, իսկ բարձր եկամտաբերությունը ենթադրում է բարձր հասարակական հեղինակություն: Ցածր հեղինակություն ունեն ֆիզիկական աշխատանք պահանջող մասնագիտությունները (եռակցող, վարորդ, վաճառող, փականագործ, ոստիկան և այլն), ինչպես նաև երկրաբանի, սոցիալական աշխատողի, անասնաբույժի, քիմիկոսի մասնագիտությունները, որոնք եկամտաբեր չեն: Ըստ Ս.Հ. Գոլդհորփի սխեմայի² պոստինդուստրիալ հասարակություններում մտավոր աշխատանք պահանջող մասնագիտությունները ֆիզիկական աշխատանքի վրա հիմնված մասնագիտություններից ավելի բարձր վարկանիշ ունեն, որովհետև ավելի եկամտաբեր են, տալիս են վարչական իշխանության հնարավորություն: Գոլդհորփի համաձայն, բավական է մասնագիտությունների սանդղակը կառուցել ըստ դրանց եկամտաբերության, և այն ինքնըստինքյան կարտահայտի նաև մասնագիտության հասարակական հեղինակությունը: Նման մոտեցման պարագաներում մեր վարկանշային սանդղակը կունենա հետևյալ տեսքը.

Գրաֆիկ 1. Վարկանշային սանդղակ



² Goldhorpe S. H., 1997: The .Goldhorpeti Class Schema, Constructing Classes: Toward a New Social Classification for the UK, Swindon

- | | | |
|-----------------------------|-------------------------|--|
| 1. շինարար | 19. սևագործ բանվոր | 37. թարգմանիչ |
| 2. լրագրող | 20. ուսուցիչ | 38. մարմնավաճառ |
| 3. վարորդ | 21. ֆերմեր | 39. միջազգայնագետ |
| 4. ոսկերիչ | 22. տնտեսագետ | 40. բուժբույր |
| 5. դերձակ | 23. պատմաբան | 41. արվեստագետ |
| 6. քաղաքագետ | 24. ինժեներ | 42. երգիչ |
| 7. երաժիշտ | 25. եռակցող | 43. գող, ավագակ |
| 8. վաճառող | 26. քիմիկոս | 44. երկրաբան |
| 9. վարսավիր | 27. սոցիոլոգ | 45. ֆիզիկոս |
| 10. դեղագործ | 28. հաշվապահ | 46. արհեստավոր |
| 11. բանկային ոլորտի աշխատող | 29. ծրագրավորող | 47. օդաչու |
| 12. քարտուղարուհի, գործավար | 30. դերասան | 48. կենսաբան |
| 13. փականագործ | 31. ճարտարապետ | 49. զինվորական |
| 14. իրավաբան | 32. դիզայներ | 50. հրուշակագործ |
| 15. բրոքեր | 33. բժիշկ | 51. սոց. աշխատող |
| 16. ոստիկան | 34. հոգեբան | 52. հասարակայնության հետ կապերի մասնագետ |
| 17. նկարիչ | 35. սպորտսմեն | 53. մաքսավոր |
| 18. մաթեմատիկոս | 36. համալսարանի դասախոս | 54. անասնաբույժ |

Բայց ինչպես երևում է վարկանշային ընդհանուր սանդղակից (*տե՛ս աղյուսակ 1*), Երևանի բնակիչների համար ոչ բոլոր եկամտաբեր մասնագիտություններն են ենթադրում համապատասխան հասարակական հեղինակություն, և ոչ բոլոր հեղինակավոր մասնագիտություններն են համարվում եկամտաբեր: Ստորև բերված են մի շարք մասնագիտություններ, որոնց ենթադրվող եկամտաբերության և հեղինակության միջև կա մեծ խզում (*տե՛ս աղյուսակ 2*):

Աղյուսակ 2. Ըստ եկամտաբերության և հասարակական հեղինակության վարկանիշների զգալիորեն տարբերվող մասնագիտություններ

Թիվ	մասնագիտություն	վարկանիշային կարգն ըստ եկամտաբերության	վարկանիշային կարգն ըստ հեղինակության
1	ուսուցիչ	45	18
2	արվեստագետ	43	17
3	դերասան	37	13
4	նկարիչ	48	26
5	պատմաբան	47	29
6	մաթեմատիկոս	41	24
7	կենսաբան	49	35
---	-----	-----	-----
1	մարմնավաճառ	21	54
2	ոստիկան	20	47
3	գող, ավագակ	28	53
4	բրոքեր	13	34
5	վարսավիր	24	44
6	ոսկերիչ	15	32
7	մաքսավոր	2	16

Ինչպես կարելի է նկատել, առաջին յոթ մասնագիտությունները Երևանի բնակչության կողմից շատ ցածր են գնահատվում եկամտաբերության առումով, իսկ հեղինակության տեսակետից միջին դիրքեր են զբաղեցնում: Աղյուսակի մյուս յոթ մասնագիտություններն,


ընդհակառակը, հեղինակավոր չեն համարվում (բացառություն է այստեղ միջին հեղինակությամբ օժտված մաքսավորի մասնագիտությունը), սակայն եկամտաբերության տեսակետից անհամեմատ ավելի բարձր վարկանիշներ ունեն (իսկ մաքսավորի մասնագիտությունը երևանցիների զգալի մասի կողմից ամենաեկամտաբերն է համարվում):

Անշուշտ, մասնագիտությունների վարկանիշը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են եկամուտը, իշխանությունը և արտոնությունները, որոնք ամենատարբեր սոցիալական խմբերի կողմից կարևորվում են բոլոր հասարակություններում՝ անկախ մշակութային առանձնահատկություններից: Այն մասնագիտությունները, որոնք մարդկանց օժտում են իշխանությամբ, ենթադրում են բարձր եկամուտներ և բարձր են գնահատվում: Նման եզրակացության է եկել Թրեյմանը, համադրելով վաթսուն տարբեր երկրներում իր կողմից իրականացրած հետազոտությունների արդյունքները³: Թրեյմանը փոխկապվածություն է հաստատում մասնագիտության հասարակական հեղինակության և եկամտաբերության միջև, քանի որ մասնագիտության վարկանիշը ձևավորվում է նրանից ակնկալվող եկամտից ելնելով: Նրա կարծիքով, արևմտյան արժեքների գերիշխանությամբ է պայմանավորված բոլոր արդիական (մոդեռն) հասարակություններում մասնագիտությունների վարկանիշների նմանությունը: Հետևաբար, եթե որևէ հասարակությունում մասնագիտությունների գնահատման հարցում ի հայտ են գալիս էական տարբերություններ, ապա այդ հասարակությունը արդիական չէ:

Այս առումով հայ հասարակությունը, մի կողմից, ցուցաբերում է ավանդական հասարակությանը բնորոշ հատկանիշներ (*տե՛ս աղյուսակ 2*), մյուս կողմից էլ, այնուամենայնիվ, մոտենում է արդիական հասարակություններին, քանզի մեզանում նույնպես հիմնականում ամենահեղինակավոր են համարվում բարձր վարձատրվող մասնագիտությունները (*տե՛ս աղյուսակ 1*): Սույն հետազոտության միջոցով բացահայտված՝ մասնագիտությունների հասարակական հեղինակության և եկամտաբերության վերաբերյալ երևանցիների պատկերացումների հետևյալ փոխկապվածությունը (*տե՛ս գրաֆիկ 2*) այդ դրույթի լավագույն հաստատումն է:

³ տե՛ս Treiman D. J., 1977: Occupational Prestige in Comparative Perspective. New York; Academic Press Թրեյմանը հեղինակավոր մասնագիտությունների իր սանդղակը կառուցում է սոցիոտոտեսական ցուցիչների հիման վրա՝ կարևորելով կրթություն→մասնագիտություն→եկամուտ հարաբերությունը, որտեղ մասնագիտությունը, ձևավորվելով համապատասխան կրթության միջոցով, ենթադրում է նաև կրթության մակարդակին համապատասխան եկամուտ:

Գրաֆիկ 2. Մասնագիտությունների հասարակական հեղինակության և եկամտաբերության փոխկապվածությունը (կորելյացիա)



Գծապատկերից երևում է, որ փոխկապվածությունը մասնագիտությունների հասարակական հեղինակության և եկամտաբերության միջև մեծ չէ ($r = 0,61$), բայց այդքան էլ հեռու չէ Թրեյմանի կողմից նշված հասարակությունների արդիականության ցուցիչի շեմից ($r \geq 0,75$):

5.3. Կրթությունը հայ հասարակության արդիականացման տեսանկյունից


Մասնագիտությունը կրթությունը և եկամուտները միմյանց հետ կապող կարևորագույն օղակներից է, բայց մեր հասարակությունում կրթական բարձր մակարդակը դեռևս չի ապահովում բարձր եկամուտներ: Այդ փաստը արտացոլվում է մասնագիտությունների վարկանշային սանդղակում, որտեղ կրթական բարձր մակարդակ և որոշակի հիմնարար գիտական պատրաստվածություն ենթադրող այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են *ինժեները, մաթեմատիկոսը, ֆիզիկոսը, կենսաբանը և քիմիկոսը* ըստ եկամտաբերության զբաղեցնում են համապատասխանաբար 34, 41, 46, 49, և 50-րդ վարկանշային ստորին դիրքերը՝ զիջելով բուժքույրի, քարտուղարուհու և նույնիսկ ավելի ցածր կրթական մակարդակ ենթադրող (օրինակ՝ վարսավիր) մասնագիտություններին:

Դա բացատրում է, թե ինչու վերջին տարիներին նվազել է այդ մասնագիտությունների գծով ՀՀ բուհեր դիմող միջնակարգ դպրոցի շրջանավարտների թիվը: Մասնագիտություն ընտրելիս մարդիկ առավել առջնորդվում են ենթադրվող զբաղմունքի եկամտաբերությամբ (30%-ը), քան մասնագիտության հեղինակությամբ (17,1%-ը): Ընդ որում, տղամարդկանց և կանանց պատասխաններում նկատվում է զգալի տարբերություն: Ընտանիքի ֆինանսական ապահովման գործում տղամարդու և կնոջ միջև դերերի ավանդական բաժանումից ելնելով՝ եկամտաբերությամբ առավել հետաքրքրված են արական սեռի ներկայացուցիչները (37,1%), քան իգական (24,3%):

Հարցման մասնակիցները ավելի են կարևորում պաշտոնը (26,8%) և լավ վարձատրվող աշխատանքը (23%), քան հեղինակություն վայելող աշխատանքը (18,4%): Այդ պատճառով շատ ցածր են գնահատվում ըստ եկամտաբերության նաև *նկարչի, պատմաբանի, ուսուցչի, արվեստագետի և դերասանի* մասնագիտությունները (համապատասխան 48, 47, 45, 43 և 37-րդ տեղերը): Պատահական չէ, որ մշակույթի ոլորտում աշխատող ռեսպոնդենտների 54,5%–ը իրենց ընտանիքների ֆինանսական դրությունը գնահատելիս նշել է, որ իրենք հազիվ են ծայրը ծայրին հասցնում: Եվ դա այն դեպքում, երբ միջին հաշվով բոլոր հարցվածների միայն 32,5%–ն է այդպես պատասխանել:

Այնուամենայնիվ, հայ ավանդական հասարակությունը արդիականացման միտում ունի, որը դրսևորվում է հարցման ենթարկվածների 39,4%-ի կողմից լավ կրթությունն իրեն հասարակության մեջ բարձր դիրք զբաղեցնելու անհրաժեշտ որակ նշելու հանգամանքում: Ինչպես երևում է գրաֆիկ 3-ից այս առումով մեծապես կարևորվել են խելքը (51,7%), ինչպես նաև հարստությունը (39,2%) և ազդեցիկ ազգականներն ու ընկերները (37,7%): Կա որոշակի տարբերություն կանանց և տղամարդկանց պատասխաններում: Կանայք համեմատաբար ավելի շատ են կարևորում լավ կրթությունը (43,9%), իսկ տղամարդիկ՝ հարստությունը (42,7%) և ազդեցիկ ազգականներին ու ընկերներին (45,3%):

Գրաֆիկ 3. Հասարակական բարձր դիրք զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները



Արդիականացման առումով հատկանշական է նաև, որ երիտասարդ ռեսպոնդենտների խմբերում (15-20 և 21-29 տարեկան) լավ կրթությունն էլ ավելի է կարևորվում (համապատասխանաբար՝ 42% և 43,4%), ինչպես նաև խելքը (56,8% և 56,6%): Ընդորում, մինչև 20 տարեկան երիտասարդների կողմից հարստությունն ու ունեցվածքը մյուս տարիքային խմբերի համեմատ ավելի քիչ է կարևորվում (28,4%): Կարելի է եզրակացնել, որ Հայաստանում առկա է լավ կրթություն ստանալու պահանջարկ: Սակայն զբաղվածության տարբեր ոլորտների ներկայացուցիչների արժեքային դիրքորոշումները կրթության հարցում նույնպես տարբեր են: Կրթությունն իբրև հասարակության մեջ բարձր դիրք զբաղեցնելու անհրաժեշտ պայման հաճախ նշվում է գիտության (75%), իրավապահ (71,4%), ֆինանսական (57,9%), սպասարկման (55,6%) և կրթության (48,7%) ոլորտների աշխատակիցների, սովորողների (46,5%) և տնային տնտեսուհիների (46,5%) պատասխաններում: Նվազ նշանակություն ունի լավ կրթությունը բանվորների (նշվում է ռեսպոնդենտների այդ կատեգորիայի պատասխանների միայն 27,6%-ում), գործազուրկների (29,9%), արհեստավորների և առևտրականների (29,4%) համար: Բայց եթե դա ինչ-որ տեղ հասկանալի է, ապա այն, որ հարցված գործարարների միայն 15,8% և իշխանության և կառավարման մարմիններում ծառայողների 27,3%-ն է կարևորում լավ կրթությունը, խիստ մտահոգիչ է, քանզի վկայում է, որ զբաղվածության այդ կարևոր ոլորտները մեզանում արդիականացման առումով ետ են մնացել, ժամանակակից չափանիշների հիման վրա չեն գործառնում, ուստի և խորը գիտելիքներ և լավ կրթություն չեն պահանջում:

Դա փաստում են ներկայացվող սոցիոլոգիական հետազոտության այն տվյալները, որ հարցման ենթարկված գործարարների միայն 52,6%-ն ունի բարձրագույն կրթություն, իսկ կառավարման մարմինների խմբի ներկայացուցիչների մեջ կան միջնակարգ կրթություն ունեցողներ: Հաշվի առնելով, որ բարձրագույն կրթությունը մեծապես կոչված է սպասարկելու այդ ոլորտները, պարզ է դառնում, թե ինչու մեր բուհերի շրջանավարտները չեն կարողանում առանց բարդությունների աշխատանքի տեղավորվել կառավարման մարմիններում և բիզնեսի բնագավառում:


Ջարմանալիորեն մեծ է միջնակարգ կրթությամբ մարդկանց թիվը նաև զբաղվածության այնպիսի ոլորտներ ներկայացնող ռեսպոնդենտների մեջ, ինչպիսիք են տեղեկատվական և իրավապահ ոլորտները (համապատասխանաբար՝ 44,4% և 28,6%): Փոխարենը բավականին մեծ է բարձրագույն կրթությամբ ռեսպոնդենտների մասնաբաժինը արհեստավորների և առևտրով զբաղվածների շրջանում (19,1%): Ըստ մասնագիտության աշխատանք գտնելու և համապատասխան վարձատրություն ստանալու հետ կապված դժվարությունները ստիպում են մարդկանց փոխել իրենց մասնագիտությունը կամ դառնալ գործազուրկ: Հարցվածների 22,4%-ի ընտանիքների անդամների շարքերում կան վերջին 10 տարվա ընթացքում իրենց մասնագիտությունը փոխած անհատներ: Հիմնական պատճառը 32,6%-ի համար նախկին մասնագիտության ցածր եկամտաբերությունն է: 28,1%-ը որպես մասնագիտությունը

փոխելու հիմնական պատճառն ունի 20%-ը՝ կարիերայի հեռանկարի բացակայությունը և 18,5%-ը՝ նախասիրության փոփոխությունը:

Բայց մասնագիտության փոփոխությունը միշտ չէ, որ հանգեցրել է հասարակության մեջ ընտանիքի սոցիալական դիրքի բարձրացմանը: Վերջին 5 տարվա ընթացքում դա տեղի է ունեցել միայն հարցվածների 24%-ի ընտանիքներում (կամ մասնագիտություն փոխածների շուրջ 35%-ի ընտանիքներում): 61,4%-ի ընտանիքի սոցիալական դիրքը մնացել է նույնը, իսկ 14,6%-ի պարագայում այն նվազել է:

Այս կապակցությամբ խնդիրն այն է, որ հարցվողների միայն 4,5%-ի համար է բարձր կրթական մակարդակը սոցիալական դիրքի վերընթաց փոփոխության հիմք հանդիսացել (*տե՛ս գրաֆիկ 4.*) մինչդեռ որպես հիմնական գործոն այստեղ 33,7%-ի կողմից նշվում է լավ աշխատանքի ձեռքբերումը⁴: Ստացվում է, որ մեզանում լավ աշխատանքը չի ենթադրում լավ կրթություն, ինչն, անշուշտ, մեր հասարակության արդիականացման ցածր աստիճանի ցուցանիշ է:

Գրաֆիկ 4. Ընտանիքի սոցիալական դիրքի փոփոխությունը պայմանավորող գործոնները



- 1 ԷՅ Ի Յ ԲԷՅ Ի Յ ԿՍՉ Օ՝ԵՍՄ՝ՆՁՈՍ
- 2 Յ ԲԷՅ Ի Յ ԿՍՆ Յ ԿՆՅ Ձ՝Ի ՁՈՁՈՁՈՅՉՈ 1ՁՈՆԵ
- 3 Յ ԲԷՅ Ի Յ ԿՍՉ ԻՁՆՁՈՆԻ Ա
- 4 ՕՅ ԻՆ ՝ԻՅ ՍՁՈ՝ Կ՝ՆԱ
- 5 ԲՆՉՅ ՁՅ Ի Չ ՆԿՅ ՆՅ Ի ՁՆՁՈՁՈՁՈՅԱ
- 6 ՁՈՅ՝ՕՅ Ի ՍՅ ԵԿՅ . ՉԻ ՁՈՁՈՅ ԿՅ ՆԱ՝ՆԻՁՈՍԱ
- 7 ԵԿՅ ՈՁՈՁՈՁՈՁՈՅՆՉ ԻՁՆՁՈՆԻ Ա
- 8 ՍՅ ՆՈՆ ԻՆՁՁՈՁՈՅ ԿՅ ՍՅ ԻՅ ՆՅՅ ԻԱ
- 9 ԱԿԻ Յ ԿՍՉ Յ ԲԷՅ Ի ՁՈ Յ ԿՅՅ ՍԿ՝ՆՉՈ ՁՆ՝Չ Ս՝ԻՉ ԻՁՆՁՈՆԻ Ա
- 10 Օ՝ԵԿ՝Ն՝ՁՈՁՈՁՈՅԱ

⁴ Ուշագրավ է, որ հարցվածների 12,3%-ը իրենց ընտանիքների սոցիալական դիրքի փոփոխությունը պայմանավորում է արտագնա աշխատանքով:

11 ¹Áí ³ñ³ ÝáóÙ »Ù á³í ³ëË³ Ý»É

12 ^Áé³ Ý. áóÁóóÝÁ

Արդիական հասարակություններում համապատասխան մասնագիտական կրթությունը կարող է մարդուն հնարավորություն ընձեռել տեղ զբաղեցնելու հասարակության ուղղահայաց աստիճանակարգման վերին օղակներում: Հարցման մասնակիցների 59,9%-ի պատասխաններում *իրավաբանի* մասնագիտությունն է նշվում որպես հասարակության մեջ բարձր դիրքի հասնելու առաջնային միջոց: Ըստ առաջնայնության աստիճանի, հասարակությունում բարձր դիրք գրավելու լավագույն հնարավորություններ ընձեռող մյուս մասնագիտությունները երևանցիների պատասխաններում հետևյալ կերպ են դասակարգվել. *բժիշկ* (48,7%), *տնտեսագետ* (41,2%), *ծրագրավորող* (22,4%), *բանկային ոլորտի աշխատող* (12,9%), *բիզնեսի ոլորտի մենեջեր* (12,1%): Ընդ որում, եթե կանայք շատ բարձր են դասում բժշկի մասնագիտությունը, ապա տղամարդիկ, ընդհակարակը, նախապատվությունը տալիս են ծրագրավորողին:

Ըստ Հասարակական կարծիքի ուսումնասիրման համառուսական կենտրոնի (ÄÖËÎ Ì) տվյալների (2004) նույն մասնագիտությունների գծով կրթության է ձգտում նաև Ռուսաստանի բնակչությունը⁵: 2004թ. ապրիլի 2-4 Ուկրաինայի բոլոր մարզերում *Ռազումկովի կենտրոնի* կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտության տվյալները վկայում են, որ գրեթե նույն հաջորդականությամբ են դասավորվել մասնագիտություններն ըստ Ուկրաինայի բնակչության համար ունեցած գրավչության (իրավաբան, բժիշկ, տնտեսագետ, բանկային ոլորտի աշխատող, բիզնեսմեն, հաշվապահ, ծրագրավորող և այլն)⁶:

Հասարակական կյանքի արդիականացման նմանատիպ հիմնախնդիրներ լուծող ետխորհրդային հանրապետությունների հասարակությունները մասնագիտությունների վարկանիշի հանդեպ նույնատիպ վերաբերմունք են դրսևորում, ինչը հաստատում է Թրեյմանի այն թեզը, որ նմանատիպ հասարակություններում մասնագիտությունների վարկանիշները հաստատուն են: Բայց արդյո՞ք նրանք հաստատուն են նաև բոլոր սոցիալական խմբերում:

Պատասխանը դրական է, քանզի ինչպես վկայում է ներկայացվող սոցիոլոգիական հետազոտության՝ մասնագիտությունների գնահատմանը վերաբերվող արդյունքների վերլուծությունը, իրենց տնային տնտեսությունների ֆինանսական դրությամբ միմյանցից տարբերվող սոցիալական խմբերի ներկայացուցիչների գնահատականներում էական տարբերություններ չկան: Օրինակ՝ ամենաբարձր վարկանիշ ունեցող առաջին հինգ մասնագիտություններին տրված գնահատականները գրեթե նույնական են բոլոր սոցիալական խմբերում: Ուշագրավ է իրեն ֆինանսական առումով հազիվ ծայրը ծայրին հասցնող համարող խմբի վարկանիշային գնահատականների համեմատությունը նրանց

⁵ Տե՛ս http://i2r.ru/static/223/out_12083.s.html


⁶ Տե՛ս „Çäðèàèî í ääàèè“ îð 29 ì äÿ 2004 ä., N21.

գնահատականների հետ, ովքեր իրենց ֆինանսական կարողությունը բարեգործությամբ զբաղվելու կարողության չափ բարձր են գնահատում: Այդ համեմատությունը փաստում է, որ մասնագիտությունների վարկանշային սանդղակում առաջին տեղը զբաղեցնող իրավաբանի մասնագիտության առաջին և երկրորդ խմբերի գնահատականների միջին թվաբանականի տարբերությունը փոքր է 0,2-ից: Այդպես են գնահատվում նաև մյուս առաջնակարգ վարկանշային մասնագիտությունները:

5.4. Մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը որպես որոշիչ գործոն

Ճիշտ կրթական քաղաքականություն մշակելու և իրագործելու տեսակետից կարևոր է իմանալ նաև, թե ինչով են առաջնորդվում մարդիկ մասնագիտություն ընտրելիս: Գրաֆիկ 5-ում պատկերված է, թե հարցման արդյունքում ինչպես են հարաբերվել մասնագիտության ընտրությունը պայմանավորող հիմնական գործոնները:

Գրաֆիկ 5. Մասնագիտության ընտրության վրա ներազդող հիմնական գործոնների հարաբերական կշիռը



Ինչպես երևում է գծապատկերից, հարցվողների հարաբերական մեծամասնության համար (34,9%) որոշիչ է հոգեկան բավարարվածությունն ու հետաքրքրությունը (հարցված կանանց 40,7%-ն է այդպես կարծում, տղամարդկանց՝ 27,7%-ը), և միայն 16,4%-ն է առաջնորդվել մասնագիտություն ձեռքբերելու մատչելիությամբ: Մատչելիությունը շատ ավելի էական է 40-49 տարեկանների խմբի ներկայացուցիչների համար, ինչը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ հիմնականում հենց այդ տարիքի մարդիկ ունեն սովորող երեխաներ և հոգ են տանում նրանց կրթության ծախսերի համար: Իսկ հոգեկան բավարարվածությամբ և հետաքրքրություններով կողմնորոշվում են հատկապես 15-20 տարեկանները: Քանի որ ներկայումս սովորողների հիմնական մասը հենց այդ տարիքային խմբին է պատկանում, իսկ սովորողների միայն 7%-ն է իրենց ընտանիքների ֆինանսական դրությունը որպես հազիվ ծայրը ծայրին հասցնող բնութագրում (39,5%-ը նշում է, որ ընտանիքները նույնիսկ խնայողություններ են կատարում, 2,4%-ը դրանից էլ բարձր է գնահատում իրենց ֆինանսական դրությունը), ապա պարզ է, թե ինչու մասնագիտություն ընտրելիս այդ տարիքային խումբը առավել կարևոր է համարում մասնագիտության համապատասխանությունը իրենց հետաքրքրություններին:

Հետևաբար, պոտենցիալ սովորողների մոտ մասնագիտության հանդեպ հետաքրքրություն առաջացնելով՝ կարելի է ներագրել մասնագիտությունների ընտրության գործընթացի վրա մեր հասարակության և մասնավորապես տնտեսության հետագա զարգացման պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Ուստի պետք է կրթական քաղաքականության իրագործման շրջանակներում իրականացնել դեռահասների մասնագիտական կողմնորոշմանը օգնող տեղեկատվական բնույթի միջոցառումներ՝ հետաքրքրություն առաջացնելով նրանց մոտ այս կամ այն մասնագիտության նկատմամբ:

Անհրաժեշտ է նաև աշխատանք տանել ծնողների հետ, որովհետև հարցվածների 25,2%-ի (կանանց 29,4%-ի և տղամարդկանց 19,9%-ի) համար հենց ծնողների կարծիքն է մասնագիտության ընտրության որոշիչ գործոն: Իսկ ծնողների 82,7%-ը չի ցանկանում, որ երեխաները մասնագիտությամբ նմանվեն իրենց, 65,4%-ն էլ իրենց երեխաներին ավելի լավ կրթություն է ցանկանում: Բոլոր սոցիալական խմբերի ներկայացուցիչներն էլ իրենց երեխաների համար ավելի բարձր կարգավիճակ են ուզում: Բայց հատկապես միջնակարգ և ցածր կրթական մակարդակ ունեցող և իրենց ընտանիքների ֆինանսական դրությունը ծանր համարողներն են գտնում, որ երեխաները չպետք է նմանվեն իրենց՝ կրթական մակարդակով⁷: Այս առումով ավանդականությունը զիջել է իր դիրքերը, և դաշտը սկզբունքորեն բաց է նաև պետական կրթական մարմինների հոգատար միջամտության համար:

⁷ Հետաքրքիր է, որ նաև բարձրագույն կրթություն ունեցողների 71%-ը չի ուզում, որ զավակները մասնագիտությամբ նմանվեն իրենց իսկ 28,9%-ը իրենց երեխաների համար ավելի բարձր կրթական մակարդակ է ցանկանում, ինչը կարելի է մեկնաբանել որպես դժգոհություն ստացված կրթության որակից:

5.5. Եզրակացություն

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Երևանի բնակչության համար, անկախ նրա սոցիալական մասնատվածությունից, հասարակական հեղինակություն են վայելում հիմնականում այն մասնագիտությունները, որոնք բարձր եկամտաբերություն են ենթադրում: Չնայած տվյալ սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծությունը բացահայտել է իրենց հեղինակության և եկամտաբերության տեսակետից զգալիորեն տարբեր վարկանիշ ունեցող մի շարք մասնագիտություններ, այնուամենայնիվ, ըստ այդ երկու չափանիշների գնահատականների միջև գոյություն ունի կորելացիոն կապ, որը շատ հեռու չէ արևմտյան արդիական հասարակությունների ցուցանիշից: Դա վկայում է այն մասին, որ հայ հասարակությունում ընթանում են արդիականացման գործընթացներ: Եվ կրթական քաղաքականության խնդիրն է ժամանակակից և արդյունավետ մեթոդներով նպաստել մեր հասարակության արդիականացմանը:

5.6. ՀԱՎԵԼՎԱԾ

«Մասնագիտությունների վարկանիշը Երևանի բնակչության գնահատականներով» սոցիոլոգիական հետազոտության հարցաթերթը՝ միաչափ տվյալներով

ՀԱՐՑԱԹԵՐԹ

1. **Ձեր ընտանիքի որևէ անդամ վերջին 10 տարվա ընթացքում փոխել է արդյոք իր մասնագիտությունը կամ հատուկ դասընթացների միջոցով ձեռք է բերել նոր մասնագիտություն:**
 - 1.1 այո – 22.4%
 - 1.2 ոչ (անցնել հարց 3-ին) – 76.2%
 - 1.3 չգիտեմ (անցնել հարց 3-ին) – 1.5%

2. **Եթե այո, ապա որո՞նք են եղել մասնագիտությունը փոխելու հիմնական պատճառները**
 - 2.1 նախկին մասնագիտության անկիրառելիությունը – 28.1%
 - 2.2 նախասիրության փոփոխությունը – 18.5%
 - 2.3 աշխատանքային կարիերայում հեռանկարի բացակայությունը – 20%
 - 2.4 մասնագիտության ցածր եկամտաբերությունը – 32.6%
 - 2.5 այլ - 0.7%
 - 2.6 դժվարանում եմ պատասխանել -

3. **Ձեր կարծիքով ի՞նչ որակներ են պետք անձին հասարակության մեջ բարձր դիրք զբաղեցնելու համար (տալ մինչև 3 պատասխան)**
 - 3.1 հարստություն, ունեցվածք – 39.2%
 - 3.2 լավ կրթություն – 39.4%
 - 3.3 խելք (ճիշտ մտածողություն) – 51.7%
 - 3.4 մասնագիտական վարպետություն (հմտություններ) – 30%
 - 3.5 լավ վարձատրվող աշխատանք – 23%
 - 3.6 հեղինակություն վայելող աշխատանք – 18.4%
 - 3.7 պաշտոն – 26.8%
 - 3.8 ազդեցիկ ազգականներ և ընկերներ – 37.7%
 - 3.9 հմայիչ արտաքին – 8.9%
 - 3.10 շրջապատող մարդկանց նկատմամբ ուշադիր վերաբերմունք – 10.8%
 - 3.11 արտասահման այցելելու հնարավորություն – 5.8%
 - 3.12 համապատասխան բնակության վայր – 1.7%
 - 3.13 կենցաղային բարվոք պայմաններ – 4%
 - 3.14 այլ _____ - 2%
 - 3.15 դժվարանում եմ պատասխանել

4. **Ըստ Ձեզ ո՞ր մասնագիտություններն են այսօր հնարավորություն տալիս հասարակության մեջ բարձր դիրքի հասնելուն (նշել, ըստ առաջնայնության աստիճանի, 3 պատասխան)**

	Մասնագիտություն	Պատասխ. ընդ. քվից	Ռեպրոնդ. ընդ. քվից		Մասնագիտություն	Պատասխ. ընդ. քվից	Ռեպրոնդ. ընդ. քվից
4.1	Իրավաբան	20%	59.9%	4.4	Ծրագրավորող	7.5%	22.4%
4.2	Բժիշկ	16.2%	48.7%	4.5	Բանկի աշխատող	4.3%	12.9%
4.3	Տնտեսագետ	13.7%	41.2%	4.6	Բիզնես-մենեջեր	4.0%	12.1%

5. Գնահատեք ստորև բերված մասնագիտությունները 5 բալանոց սանդղակով (որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, 5-ը՝ ամենաբարձր) ըստ հասարակական հեղինակության և եկամտի (այն մասնագիտությունները, որոնց մասին հարցվորը տեղեկացված չէ՝ տալ 0 միավոր)

N	Մասնագիտության անվանումը	հասարակական հեղինակությունը	եկամտաբերությունը	N	Մասնագիտության անվանումը	հասարակական հեղինակությունը	եկամտաբերությունը
1.	շինարար	3.54%	3.39%	28.	հաշվապահ	4.02%	4.14%
2.	լրագրող	3.57%	3.37%	29.	ծրագրավորող	4.38%	4.49%
3.	վարորդ	2.84%	2.93%	30.	դերասան	3.82%	3.16%
4.	ոսկերիչ	3.51%	3.81%	31.	ճարտարապետ	4.05%	3.78%
5.	դերձակ	3.11%	3.00%	32.	դիզայներ	3.89%	3.86%
6.	քաղաքագետ	3.81%	3.84%	33.	բժիշկ	4.50%	4.43%
7.	երաժիշտ	3.62%	3.29%	34.	հոգեբան	3.80%	3.42%
8.	վաճառող	2.84%	2.96%	35.	սպորտսեն	3.58%	3.17%
9.	վարսավիր	3.12%	3.41%	36.	համալսարանի դասախոս	4.07%	3.92%
10.	դեղագործ	3.54%	3.41%	37.	թարգմանիչ	4.02%	4.07%

11.	բանկային ոլորտի աշխատող	4.36%	4.56%	38.	մարմնավաճառ	1.49%	3.46%
12.	քարտուղարուհի, գործավար	3.10%	3.24%	39.	միջազգայնագետ	4.13%	4.12%
13.	փականագործ	2.85%	2.68%	40.	բուժքույր	3.36%	3.27%
14.	իրավաբան	4.49%	4.54%	41.	արվեստագետ	3.74%	2.94%
15.	բրդեր	3.48%	3.86%	42.	երգիչ	3.63%	3.72%
16.	ուստիկան	2.92%	3.66%	43.	գող. ավագակ	1.79%	3.31%
17.	նկարիչ	3.56%	2.75%	44.	երկրաբան	3.16%	2.72%
18.	մաթեմատիկոս	3.58%	2.97%	45.	ֆիզիկոս	3.50%	2.86%
19.	սևագործ բանվոր	2.54%	2.26%	46.	արհեստավոր	3.31%	3.28%
20.	ուսուցիչ	3.68%	2.92%	47.	օդաչու	4.05%	3.95%
21.	ֆերմեր	3.59%	3.76%	48.	կենսաբան	3.46%	2.75%
22.	տնտեսագետ	4.34%	4.25%	49.	զինվորական	3.52%	3.68%
23.	պատմաբան	3.54%	2.82%	50.	հրուշակագործ	3.18%	3.01%
24.	ինժեներ	3.60%	3.20%	51.	սոց. աշխատող	3.28%	3.17%
25.	եռակցող	2.83%	2.64%	52.	հասարակայնության հետ կապերի մասնագետ	3.41%	3.39%
26.	քիմիկոս	3.36%	2.72%	53.	մաքսավոր	3.79%	4.55%
27.	սոցիոլոգ	3.53%	3.25%	54.	անասնաբույժ	3.35%	3.13%

6. Վերջին 5 տարվա ընթացքում Չեր ընտանիքի սոցիալական դիրքը հասարակության մեջ կրե՞լ է արդյոք որևէ լուրջ փոփոխություն

- 6.1 ոչ, չի կրել (*անցնել հարց 8-ին*) – 61.4%
- 6.2 այն ավելի է բարձրացել – 24.0%
- 6.3 դիրքն ավելի է նվազել – 14.6%

7. Ստորև նշվածներից ո՞րն գործոններն են պայմանավորել Չեր ընտանիքի սոցիալական դիրքի փոփոխությունը

- 7.1 լավ աշխատանքի ձեռքբերում – 33.7%
- 7.2 բարձր կրթության մակարդակը – 4.5%
- 7.3 շրջապատի հնարավորությունը – 4.9%
- 7.4 ժառանգությունը – 0.4%
- 7.5 ձեռներեցությունը – 3.7%
- 7.6 աշխատանքը հանրապետությունից դուրս – 12.3%
- 7.7 աշխատանքի կորուստը – 12.3%
- 7.8 ցածր եկամուտները – 12.3%
- 7.9 ունեցած մասնագիտության արժեզրկումը – 4.9%
- 7.10 խնայողությունների կորուստը – 4.5%
- 7.11 ընտանիքի աշխատող անդամներից որևէ մեկի կորուստը – 4.1%
- 7.12 այլ _____ - 2.1%
- 7.13 դժվարանում են պատասխանել

8. Հետևյալ դրույթներից ո՞րն է բնութագրում Չեր տնային տնտեսության ֆինանսական դրությունը

- 8.1 մենք հազիվ ենք ծայրը ծայրին հասցնում – 32.5%
- 8.2 դրամը բավականեցնում է ինչպես սննդի, այպես էլ հագուստի համար, սակայն մենք խնայողություններ չենք կարող անել – 43.5%
- 8.3 դրամը բավականեցնում է ինչպես սննդի, այնպես էլ հագուստի համար, մենք
- 8.4 նույնիսկ խնայողություններ ենք կատարում - 22.4
- 8.5 դրամը բավականեցնում է ամեն ինչի համար, մենք մեզ ոչնչից չենք զրկում – 0.2%
- 8.6 մենք կարող ենք զբաղվել բարեգործությամբ - 0.5%
- 8.7 դժվարանում են պատասխանել – 1%

9. Դուք ունե՞ք արդյոք երեխաներ

- 9.1 այո – 62.3%
- 9.2 ոչ (*անցնել հարց 11-ին*) – 37.7%

Հարցնել նրանց, ովքեր ունեն երեխաներ

10. Դուք կցանկանա՞ք, որ Չեր երեխաները նմանվեն Չեզ հետևյալ հատկանիշներով

Հարցն ուղղված է ծնողներին	այո	ոչ	դժվ. պատ.
10.1 կրթության մակարդակով	34.3%	65.4%	0.3%
10.2 մասնագիտությամբ	16.5%	82.7%	0.8%
10.3 ֆինանսական կարողությամբ	14.4%	84.6%	1.1%
10.4 հասարակական դիրքով և հեղինակությամբ	38.6%	60.4%	1.1%

11. Չեզ համար մասնագիտություն ընտրելիս որո՞նք են եղել հիմնական որոշիչ գործոնները (*նշել մինչև 2 պատասխան*)

- 11.1 ծնողների կարծիքը – 14.0%
- 11.2 ծանոթների, բարեկամների ազդեցությունը – 2.3%
- 11.3 մասնագիտության հեղինակությունը – 9.5%
- 11.4 ենթադրվող զբաղմունքի եկամտաբերությունը – 16.7%
- 11.5 մասնագիտություն ձեռքբերելու մատչելիությունը – 9.1%
- 11.6 հասարակության մեջ իշխանության (մարդկանց նկատմամբ ազդեցության) հնարավորությունը – 0.6%
- 11.7 ստեղծագործական մոտեցման և ինքնադրսևորման հնարավորությունները – 6.4%
- 11.8 հոգեկան բավարարվածությունը և հետաքրքրությունը – 19.4%
- 11.9 մասնագիտության համար պահանջվող անձնական հատկանիշների առկայությունը – 9.9%
- 11.10 պատահականությունը – 8.7%
- 11.11 շրջապատ ձեռք բերելու կարողություն – 1.1%
- 11.12 այլ _____ - 1.3%
- 11.13 դժվարանում եմ պատասխանել – 1.1%

Տեղեկություններ հարցվողի մասին

12. Հարցվողի տարիքը

- 12.1 15-20 տարեկան – 14.6%
- 12.2 21-29 տարեկան – 18.7%
- 12.3 30-39 տարեկան – 16.9%
- 12.4 40-49 տարեկան – 19.4%
- 12.5 50-64 տարեկան – 18.2%
- 12.6 65 և ավելի տարեկան – 12.3%

13. Կրթությունը

- 13.1 միջնակարգ - 44.7%
- 13.2 միջն. մասնագիտական – 21.9%
- 13.3 բարձրագույն – 33.4%

14. Մեռը

- 14.1 արական – 44.2%
- 14.2 իգական – 55.8%

15. Ջրաղմունքը

- 15.1 բանվոր – 4.8%
- 15.2 ծառայող (իշխանության և կառավարման մարմինների աշխատակից) – 1.8%
- 15.3 մշակույթի ոլորտի աշխատող – 1.8%
- 15.4 կրթության ոլորտի աշխատող – 6.5%
- 15.5 գիտության ոլորտի աշխատող – 0.7%
- 15.6 առողջապահության ոլորտի աշխատակից (բժիշկ) – 3.1%
- 15.7 տեղեկատվական ոլորտի աշխատակից – 1.5%
- 15.8 գործարար մարդ - 3.1%
- 15.9 իրավապահ ոլորտի աշխատակից – 1.2%
- 15.10 ֆինանսական ոլորտի աշխատակից – 3.1%
- 15.11 արդյունաբերական ոլորտի աշխատակից – 6.1%
- 15.12 զինծառայող – 1.0%
- 15.13 արհեստավոր կամ առևտրական – 11.3%
- 15.14 գյուղատնտեսության ոլորտի աշխատակից – 0.2%
- 15.15 տնային տնտեսուհի – 16.7%
- 15.16 սովորող – 14.2%
- 15.17 գործազուրկ – 11.1%
- 15.18 այլ (գրել) _____

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

6. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՅՎԱԾ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

- 6.1. Հետազոտության մեթոդական և մեթոդաբանական հիմքերը
- 6.2. Հետազոտված կազմակերպությունների ընդհանուր նկարագիրը
- 6.3. Աշխատակազմի համալրման խնդիրները
- 6.4. Աշխատողների որակավորման բարձրացման և վերապատրաստման հիմնախնդիրը
- 6.5. Գործատուների գնահատականն ու վերաբերմունքը մասնագիտական ուսումնական հաստատություններին
- 6.6. Մասնագիտական ուսումնական հաստատություններին գործատուների օժանդակության պատրաստակամությունը՝ անհրաժեշտ կադրերի պատրաստման և աշխատակիցների որակավորման բարձրացման գործում
- 6.7. Գործատուների կանխատեսումներն ու ակնկալիքները տնտեսության զարգացման, աշխատաշուկայի ծավալների և աշխատանքի պահանջարկի վերաբերյալ առաջիկա 5-10 տարիների ընթացքում
- 6.8. Որքանով է հնարավոր կանխատեսել և բավարարել աշխատանքի պահանջարկի ծավալները մոտակա և միջնաժամկետ հեռանկարում
- 6.9. Հավելվածներ

6.1. Հետազոտության մեթոդական և մեթոդաբանական հիմքերը

Աշխատաշուկայում տեղի ունեցող գործընթացների մասին անմիջական պատկերացում կազմելու, առկա միտումների վերհանման և մոտակա ու միջին հեռանկարի համատեքստում որոշակի կանխատեսումներ անելու համար վիճակագրական տվյալների ու ամփոփագրերի կողքին տեղեկատվության արժեքավոր աղբյուր են նաև գործատուների շրջանում իրականացվող սոցիոլոգիական հարցումներն ու հետազոտությունները:

Այդ նպատակով 2005թ. սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին անցկացվեց ընտրանքային հետազոտություն Երևան քաղաքում, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում գործող կազմակերպություններում:

Հետազոտությունն ընդգրկում է բարձր տեխնոլոգիաների, գյուղատնտեսական մթերքների արտադրության, սննդի վերամշակման, զբոսաշրջության և հանգստի կազմակերպման (հյուրանոցներ, առողջարաններ) ոլորտների 322 կազմակերպություններ:

Հարցումն անցկացվել է ստանդարտացված հարցազրույցի մեթոդով: Հարցմանը մասնակցել են կազմակերպությունների սեփականատեր - տնօրենները կամ նրանց կողմից լիազորված՝ կազմակերպության կառավարման ու զարգացման հարցերում իրազեկ պատասխանատու անձինք:

Հարցման ենթակա կազմակերպությունների խմբավորումը (գերփոքր՝ 1-5 աշխատակից, փոքր՝ 6-15, միջին՝ 16-50 և խոշոր՝ 51 և ավելի աշխատակիցներ)

իրականացվել է ըստ աշխատողների թվաքանակի՝ հիմք ընդունելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված չափորոշիչները: Կազմակերպությունների քանակն ըստ մարզերի և գործունեության ոլորտների որոշելու (բաշխելու) համար հիմք են ընդունվել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պետական վիճակագրական մոնիտորինգում ընդգրկված կազմակերպությունների քանակային բաշխվածության վերաբերյալ տվյալները, որոնք հրապարակվում են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

Գլխավոր համախմբության կազմակերպությունների բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի և գործունեության ոլորտների բնութագրվում է աղյուսակ 1-ում բերված համամասնությամբ.

Աղյուսակ 1. Գլխավոր համախմբության կազմակերպությունների բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի և գործունեության ոլորտների.

Աշխատողների թվաքանակի չափորոշիչը	Գործունեության ոլորտը				Ընդամենը
	Բարձր տեխնոլոգիաներ	Գյուղատնտեսություն	Սննդի վերամշակում	Զբոսաշրջություն և հանգստի կազմ.	
Գերփոքր	183	19	108	99	409
Փոքր	32	19	82	62	195
Միջին	14	8	19	16	57
Խոշոր	13	4	19	6	42
Ընդամենը	242	50	228	183	703

Ըստ այդմ, հարցման ենթակա կազմակերպությունների բաշխումն իրականացվել է՝ հաշվի առնելով վերոնշյալ համամասնությունները:

Արդյունքում ձևավորված ընտրանքային համախմբությունը ըստ կազմակերպությունում աշխատողների թվաքանակի և գործունեության ոլորտների բնութագրվել է աղյուսակ 2-ում ներկայացված համամասնությամբ:

Աղյուսակ 2. Ընտրանքային համախմբության կազմակերպությունների բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի և գործունեության ոլորտների.

Աշխատողների թվաքանակի չափորոշիչը	Գործունեության ոլորտը				Ընդամենը
	Բարձր տեխնոլոգիաներ	Գյուղատնտեսություն	Սննդի վերամշակում	Զբոսաշրջություն և հանգստի կազմ.	
Գերփոքր	78	12	46	43	179
Փոքր	15	11	37	27	90
Միջին	6	6	10	7	29
Խոշոր	6	3	10	5	24
Ընդամենը	105	32	103	82	322

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, հարցման ենթակա կազմակերպությունների քանակը 322 է, որը կազմում է գլխավոր համախմբության **45.8%-ը**:

Ցածր հաճախականություն ունեցող (փոքր թվով կազմակերպություններ պարունակող) որոշ ենթախմբեր ներկայացուցչականության ապահովման նկատառումներով հետազոտվել են ամբողջությամբ: Բարձր հաճախականությամբ ենթախմբերում հետազոտվել է ձեռնարկությունների մի մասը՝ ըստ արձանագրված համամասնությունների: (Հավելված 3):

6.2. Հետազոտված կազմակերպությունների ընդհանուր նկարագիրը

Ուսումնասիրված կազմակերպությունները գործունեություն են ծավալում բարձր տեխնոլոգիաների (32.6%), գյուղատնտեսության (9.9%), սննդի վերամշակման և արդյունաբերության (32.0%), զբոսաշրջության և հանգստի կազմակերպման (25.5%) ոլորտներում:

Հետազոտված կազմակերպությունները միջին վիճակագրական ցուցանիշներով ունեն 17.5 աշխատակից: *Տես աղյուսակ 3:*

Աղյուսակ 3. *Հետազոտված կազմակերպությունների միջին վիճակագրական չափերն ըստ աշխատակիցների թվաքանակի և տարրեր կրթամակարդակ ունեցող աշխատակիցների թիվը դրանց կազմում (%-ով)*

	Տնտեսության ճյուղը	Կազմակերպ. միջին վիճ. չափերը՝ մարդ	Տարբեր կրթամակարդակ ունեցող աշխատակիցների թիվը տվյալ ոլորտի կազմակերպություններում ըստ հետազոտության արդյունքում ստացված միջին վիճակագրական տվյալների (%-ներով)			
			բարձրագույն	միջին մասնագիտ.	արհեստագործական	մասնագիտական կրթություն չունեցող աշխատողներ
1.	Բարձր տեխնոլոգիաներ	11.43	90.4%	5.2%	0.9%	3.5%
2.	Գյուղատնտեսություն	13.15	22.6%	21.1%	7.5%	49.2%
3.	Սննդի վերամշակում և արդյունաբերություն	30.59	23.5%	31.1%	3.9%	41.5%
4.	Չբոսաշրջություն և հանգստի կազմակերպում	10.46	33.7%	22.1%	4.8%	39.4%
Միջին ցուցանիշները հետազոտված բոլոր կազմակերպությունների համար		17.51	39.3%	23.5%	3.5%	33.6%

Կազմակերպությունների 7.4%-ն իրենց հիմնական գործունեությունից բացի զբաղվում են նաև սեփական արտադրության իրացմամբ (առևտրով), կամ էլ, ինչպես բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող կազմակերպությունների պարագայում է, նաև՝ վճարովի դասընթացներ կազմակերպելով:

6.3. Աշխատակազմի համալրման խնդիրները

Հարցմանը մասնակցած գործատուների 89.1%-ին բավարարում է իրենց աշխատակիցների առկա քանակը: Նրանց 3.4%-ի մոտ էլ, իրենց իսկ գնահատականով, առկա է աշխատուժի ավելցուկ: Եվ միայն 7.5%-ն է նշում, որ տվյալ պահին ունի լրացուցիչ աշխատողների կարիք: Լրացուցիչ աշխատուժի անհրաժեշտությունը համեմատաբար ավելի մեծ է բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործառնող կազմակերպությունների շրջանում՝ 14.3%, և գլխավորապես վերաբերում է համակարգչային ծրագրավորման ոլորտի մասնագետներին: Հարցման պահին կազմակերպություններում եղած աշխատուժի պահանջարկի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. *Աշխատակազմի համալրման խնդիրներն ըստ տարբեր ոլորտների կազմակերպությունների*

	Աշխատակիցների քանակը բավարարում է	Կան ավելորդ աշխատակիցներ	Առկա է լրացուցիչ աշխատակիցների պահանջարկ
1. Բարձր տեխնոլոգիաներ	84.8%	1%	14.3%
2. Գյուղատնտեսություն	93.9%	0%	6.1%
3. Սննդի վերամշակում և արդյունաբերություն	93.2%	5.8%	1%
4. Զբոսաշրջություն և հանգստի կազմակերպում	87.8%	4.9%	7.3%
<i>Ընդամենը՝ ըստ հարցմանը մասնակցած կազմակերպությունների</i>	<i>89.1%</i>	<i>3.4%</i>	<i>7.5%</i>

Ո՞ր մասնագիտություններին և որքանով է վերաբերում հետազոտված կազմակերպություններում առկա աշխատուժի պահանջարկը:

Աղյուսակ 5. *Պահանջարկ ունեցող մասնագիտություններ*


	Մասնագիտությունը	Բարձր տեխնոլոգ.	Գյուղատնտես.	Սննդի վերամշակում և արդյունաբերություն	Զբոսաշրջություն և հանգստի կազմ.	Ընդ.
1.	ծրագրավորող	160	2	-	-	162
2.	հաշվապահ	1	-	-	2	3
3.	մարկետոլոգ	0	-	-	3	3
4.	հրուշակագործ, խոհարար	-	-	-	1	1
5.	սննդի վերամշակման և արդյունաբերության ոլորտի որակ. մասնագետ	-	2	2	-	4
6.	սպասրկող անձնակազմ	2	-	-	-	2
7.	գրասենյակային աշխատող	1	1	-	6	8
8.	գյուղատնտ., ֆերմ. տնտ. ոլորտի որակյալ մասնագետ	-	2	-	-	2
	<i>Ընդամենը՝ ըստ հարցմանը մասնակցած կազմակերպությունների</i>	<i>164</i>	<i>7</i>	<i>2</i>	<i>12</i>	<i>185</i>

Ի՞նչ ճանապարհով և եղանակներով են բավարարում աշխատուժի պահանջարկը հարցմանը մասնակցած գործատուները: Այս հարցի պատասխանները վկայում են, որ Հայաստանում դեռևս կարգավորված և ինստիտուցիոնալիզացված չեն գործատու-աշխատող, կազմակերպություն-աշխատաշուկա հարաբերությունները:

Գործատուների 60.1%-ը աշխատակիցների պակասը լրացնելու անհրաժեշտության դեպքում նախ դիմում է իր ծանոթներին ու բարեկամներին, այնուհետև այդ գործին մասնակից է դարձնում իր կազմակերպության աշխատակիցներին՝ 38.8% և ապա միայն տալիս հայտարարություն ՁԼՄ-ներում՝ 29.5%: 14%-ը ինքն է հետևում հրապարակված հայտարարություններին: 7.1%-ը դիմում է աշխատանքի տեղավորման գործակալությունների օգնությանը, 1.65%-ը՝ աշխատանքի և զբաղվածության ծառայության կենտրոններին:

Միայն 5%-ն է նոր աշխատակիցներ ընտրելու նպատակով դիմում մասնագիտական ուսումնական հաստատություններին (բուհեր, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ): *Տես գրաֆիկ 1:*

Գրաֆիկ 1. Նոր աշխատակիցների որոնման հիմնական միջոցները, որոնց դիմում են հարցմանը մասնակցած գործատուներն աշխատուժի պահանջարկի դեպքում



Հետազոտության արդյունքների կորելյացիոն վերլուծությունը վկայում է, որ կազմակերպության ծավալների խոշորացմանը զուգահեռ գործատուները սկսում են ավելի ու ավելի հաճախակի դիմել աշխատակիցների ընտրության ինստիտուցիոնալիզացված ձևերին ու մեթոդներին: Օրինակ, եթե գերփոքր և փոքր ձեռնարկատերերի 65,3%-ը նոր աշխատակիցների ընտրության հարցում ապավինում է ծանոթ-բարեկամների օգնությանը, ապա այդ «ավանդական» մեթոդից օգտվում է միջին և խոշոր ձեռնարկատերերի 46,5%-ը: Եթե քափուր աշխատատեղերի մասին հայտարարություն է տալիս և մրցույթներ անցկացնում գերփոքր և փոքր կազմակերպությունների 25,1%-ը, ապա այդ արդյունավետ

մեթոդը կիրառվում է միջին (34,9%) և խոշոր (60,7%) կազմակերպությունների 45,1%-ի կողմից:

Մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կապը ևս միջին (14%) և խոշոր (17,9%) կազմակերպությունների դեպքում շատ ավելի առարկայական է և հեռանկարի առումով խոստումնալից է, քան փոքր (2,7%) և գերփոքր (1,7%) ձեռնարկությունների դեպքում:

Այս առումով շատ կարևոր են ինչպես աշխատանքի և զբաղվածության ծառայության, աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունների գործառնության ծավալների ընդլայնումը՝ գործատու-աշխատաշուկա կապի արդյունավետության բարձրացման առումով, այնպես էլ գործատուների և մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև կայուն կապերի հաստատմանն ու համագործակցությանն ուղղված ճկուն մեխանիզմների ձևավորումը:

6.4. Աշխատողների որակավորման բարձրացման և վերապատրաստման հիմնախնդիրը


Տնտեսության զարգացումը, նոր տեխնոլոգիաների և աշխատանքի կազմակերպման նոր մեթոդների ներդրումը ենթադրում է կադրերի ժամանակ առ ժամանակ վերապատրաստման անհրաժեշտություն:

Հարցմանը մասնակցած գործատուների 26,3%-ը նշում է, որ իր աշխատակիցներն ունեն մասնագիտական որակավորումն ու հմտությունները բարելավելու կարիք: Այդ ցուցանիշը գրեթե հավասարապես վերաբերում է հետազոտության ընտրանքում արտացոլված՝ տնտեսության 4 ճյուղերը ներկայացնող ձեռնարկություններին: Փոքր-ինչ ավելի մեծ է զբոսաշրջության և հանգստի կազմակերպման ոլորտի ձեռնարկությունների աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման կարիքը՝ 30,5%:

Աշխատակիցների վերապատրաստման անհրաժեշտությունն ավելի նկատելի է խոշոր կազմակերպություններում (57,1%), որտեղ նոր տեխնոլոգիաների ներդրումը գնալով ավելի լուրջ ծավալներ է ընդունում:


Թեև աշխատակիցների որակավորման բարձրացման կարիք ունեն ձեռնարկությունների 23,6%-ը, սակայն նրանցից միայն 12,1%-ն է կարողանում ապահովել իր աշխատակիցների վերապատրաստումը: Այդ տվյալները տարբեր են ըստ հետազոտված կազմակերպությունների ծավալների, ինչպես նաև ըստ տնտեսության ճյուղերի: *Տես գրաֆիկներ 2; 3:*

Գրաֆիկ 2. Սեփական աշխատակիցների որակավորման բարձրացման և վերապատրաստման կարիք ունեցող կազմակերպությունների և այդ խնդիրը լուծողների հարաբերակցությունն ըստ կազմակերպության ծավալների



- Աշխատակիցների վերապատրաստման կարիք ունեցող կազմակերպություններ
- Կազմակերպություններ, որոնք կարողանում են ապահովել իրենց աշխատակիցների վերապատրաստումը

Գրաֆիկ 3. Աշխատակիցների վերապատրաստման կարիք ունեցող և այդ գործընթացն ապահովող կազմակերպությունների հարաբերակցությունն ըստ տնտեսության ճյուղերի



- Աշխատակիցների վերապատրաստման կարիք ունեցող կազմակերպություններ
- Կազմակերպություններ, որոնք կարողանում են ապահովել իրենց աշխատակիցների վերապատրաստումը

Գրաֆիկ 3-ից երևում է, որ աշխատակիցների որակավորման բարձրացման և վերապատրաստման գործընթացը շատ ավելի թույլ հիմքերի վրա է գյուղատնտեսության և զբոսաշրջության և հանգստի կազմակերպման ոլորտի կազմակերպություններում:

Ի՞նչ եղանակով են ապահովում աշխատակիցների որակավորման բարձրացումը հետազոտված կազմակերպություններում: Այդ խնդիրը լուծող ընկերությունների (12,1%) հիմնական մասը՝ 9%, աշխատողների վերապատրաստումը կազմակերպվում է տեղում՝ սեփական ուժերով: 5,6%-ը վճարում է կարճաժամկետ դասընթացներ անցնելու համար:

Ընդամենը 2,2%-ն է կարողանում գործուղել իր աշխատակիցներին՝ սովորելու մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ հոգալով ուսման ծախսերը:

Մասնագետների վերապատրաստման օղակն այն ոլորտն է, որտեղ նոր ձևավորվող և տնտեսապես կայունացող կազմակերպությունները ունեն ավելի ու ավելի հատակեցվող պահանջմունքներ և որտեղ մասնագիտական ուսումնական հաստատությունները ինչպես պետության, այնպես էլ տնտեսվարող սուբյեկտների և տարբեր դրամաշնորհային ծրագրերի օգնությամբ կարող են համագործակցության ձեռք մեկնել կազմակերպություններին՝ այդ փոխհարաբերությունները դարձնելու ավանդական և կանոնակարգված:

6.5. Գործատուների գնահատականն ու վերաբերմունքը մասնագիտական ուսումնական հաստատություններին

Ինչպե՞ս են գնահատում գործատուները վերջին 3 տարիների ընթացքում աշխատանքի ընդունված մասնագետների՝ ուսումնական հաստատություններում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները:

Գործատուներին առաջարկվել էր 5 միավորանոց սանդղակով գնահատել երտասարդ աշխատակիցների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները: Միջին վիճակագրական տվյալներով արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ունեցողների համար գործատուների գնահատականը կազմել է 3,1 միավոր, իսկ բարձրագույն կրթությամբ մասնագետների համար 3,2 միավոր: Համեմատաբար ցածր են զբոսաշրջության և հանգստի կազմակերպման ոլորտի գործատուների գնահատականները՝ արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ունեցողների համար՝ 2,4 միավոր, իսկ բարձրագույն կրթությամբ մասնագետների համար՝ 2,8 միավոր:

Ընդհանուր առմամբ, գործատուների կողմից երիտասարդ մասնագետների գիտելիքների ու հմտությունների գնահատականները միջինը 1 միավորով ավելի ցածր են աշխատաշուկայում առաջին քայլերն անող, 2002թ-ին բուհերն ավարտած շրջանավարտների ինքնագնահատականներից: (Տես «Շրջանավարտ 2002» հետազոտության տվյալները):


Եթե 2002թ-ի ՀՀ բուհերի շրջանավարտների 54,9%-ը գտնում է, որ ուսումնառության տարիներին ստացած գիտելիքները անհրաժեշտ են և բավարար աշխատաշուկայում աշխատանք գտնելու և մասնագիտական գործունեություն ծավալելու համար, ապա այդ տեսակետը պաշտպանում է գործատուների 40,2%-ը: Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կապակցությամբ գործատուներն ավելի զուսպ են գնահատականներում: Նրանց միայն 28,3%-ն է այդ ուսումնական հաստատությունում ստացած գիտելիքներն անհրաժեշտ ու բավարար համարում ՀՀ աշխատաշուկայում աշխատանք գտնելու և մասնագիտական գործունեություն ծավալելու համար: *Տես գրաֆիկ 4:*

Գործատուների և երիտասարդ մասնագետների գնահատականների տարբերությունը ուսումնական հաստատություններում մասնագետների պատրաստման գործընթացի տարբեր կողմերի վերաբերյալ, երիտասարդ մասնագետների բարձր, իսկ գործատուների համեմատաբար ցածր գնահատականները, վկայում են մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության և աշխատաշուկայում ձևավորված պահանջարկի որոշակի անհամապատասխանության մասին:

Այս իրողությունը լրացուցիչ փաստարկ է մասնագետների պատրաստման գործընթացներում գործատուների շահագրգիռ մասնակցությունն ապահովելու

կարևորության, ինչպես նաև ուսումնական հաստատություններում՝ աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքներին համապատասխան կրթական ճկուն քաղաքականություն մշակելու անհրաժեշտության օգտին: Խնդրի լուծումը, թերևս, պետք է փնտրել ուսումնական հաստատությունների կառավարող խորհուրդների կազմում գործարար աշխարհի ներկայացուցիչների ներգրավման, ուսումնական հաստատություններում կարիերայի զարգացման և աշխատաշուկայի ուսումնասիրությանը զբաղվող կենտրոնների ստեղծման, ինչպես նաև մասնագետների պատրաստման գործում արտադրական պրակտիկայի դերի կարևորման գործընթացներում:¹

Գրաֆիկ 4. Գործատուների և բուհերի շրջանավարտների գնահատականները մասնագիտական կրթական հաստատություններում դասավանդվող գիտելիքների և հմտությունների վերաբերյալ




- Գործատուների գնահատականներն ու կարծիքը նախնական և միջին մասնագիտական կրթության վերաբերյալ
- Գործատուների գնահատականներն ու կարծիքը բուհական կրթության վերաբերյալ
- ՀՀ բուհերի 2002թ. շրջանավարտների կարծիքը բուհական կրթության վերաբերյալ

¹ Կարևոր է նաև բուհերում առարկայական ծրագրերի վերանայումը՝ ելնելով շուկայական տնտեսության ժամանակակից պահանջներից, ինչպես օրինակ, բժշկության մեջ ներկա 80-ից ավել նեղ մասնագիտությունների ցանկը նախատեսվում է կրճատել՝ առաջնությունը տալով ընտանեկան բժշկությանը:

6.6. Մասնագիտական ուսումնական հաստատություններին գործատուների օժանդակության պատրաստակամությունը՝ անհրաժեշտ կադրերի պատրաստման և աշխատակիցների որակավորման բարձրացման գործում

Մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ պատրաստ է համագործակցել և նրանց տարբեր կերպ աջակցել հարցմանը մասնակցած գործատուների 17,7%-ը: Ընդ որում, կազմակերպության ծավալների աճին զուգահեռ աջակցության պատրաստակամությունն ու հնարավորություններն աճում են: *Տես գրաֆիկ 5:*

Գրաֆիկ 5. Մասնագիտական ուսումնական հաստատություններին՝ կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում օժանդակելու՝ կազմակերպությունների պատրաստակամությունն ըստ վերջիններիս չափերի



Մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցելու և դրանց նյութական ու մասնագիտական առումներով աջակցելու՝ գործատուների պատրաստակամությունը շատ կարևոր և խոստումնալից գործոն է, որը կարիք ունի խրախուսման և ինստիտուցիոնալ կարգավորման:

Ինչպե՞ս են պատկերացնում մասնագիտական ուսումնական հաստատություններին իրենց աջակցությունը հարցմանը մասնակցած գործատուները:

Կազմակերպությունների ղեկավարներն այդ աջակցությունը տեսնում են գլխավորապես ապագա մասնագետների արտադրական պրակտիկան ձեռնարկության ներսում կազմակերպելու ձևով՝ 14,6%: Այս առումով մեծ են խոշոր ձեռնարկությունների հնարավորություններն ու պատրաստակամությունը՝ 42,9%: Աջակցության երկրորդ տարբերակը, ըստ գործատուների պատասխանների, ֆինանսական միջոցների տրամադրումն է՝ 5%: Մասնագիտական ուսումնական հաստատություններին ֆինանսական


օգնություն և աջակցություն պատրաստ է ցուցաբերել խոշոր կազմակերպությունների 28,6%-ը:

Աջակցության երրորդ եղանակը ապագա մասնագետների ուսման ծախսերը հոգալն է: Նման պատրաստակամություն հայտնել է հարցմանը մասնակցած գործատուների 1,9%-ը, իսկ խոշոր ձեռնարկությունների՝ 14,3%-ը:

Գործատուների 1,2%-ն էլ (խոշոր կազմակերպությունների 7,1%-ը) պատրաստ է ուսումնական հաստատություններին տրամադրել ուսուցանող մասնագետներ: Գույքի և սարքավորումների տրամադրման պատրաստակամություն են հայտնել միայն խոշոր կազմակերպությունների ներկայացուցիչները՝ 7,1% (կամ հարցման մասնակիցների 0,6%-ը): *Տես գրաֆիկ 6:*

Գրաֆիկ 6. Մասնագիտական ուսումնական հաստատություններին աջակցելու ձևերն ու պատրաստակամությունը:

Համեմատության համար գրաֆիկում ընդհանուր ցուցանիշների կողքին ներկայացված է նաև միջին և խոշոր կազմակերպությունների առաջարկությունների ու հնարավորությունների ծավալը:



- Աջակցության պատրաստակամություն հայտնող գործատուները հարցման մասնակիցների ընդհանուր թվում
- Աջակցության պատրաստակամություն հայտնող գործատուները միջին կազմակերպությունների խմբում
- Աջակցության պատրաստակամություն հայտնող գործատուները խոշոր կազմակերպությունների խմբում

Այսպիսով, ստեղծվել է մի իրավիճակ, երբ գործատուները կարիք ունեն մասնագետների և իրենց աշխատողների որակավորման բարձրացման, իսկ մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ նյութական և գործնական աջակցության: Գործատուների մի մասը, հատկապես խոշոր և միջին կազմակերպությունները, կարող են և պատրաստ են աջակցել մասնագիտական ուսումնական հաստատություններին, իսկ վերջիններս էլ որոշակի աջակցության դեպքում ի վիճակի են բավարարել գործատուների աճող պահանջմունքները: Խնդիրը մնում է համագործակցության եղանակների և գործուն մեխանիզմների ձևավորումը, որոնք կնպաստեն թե մասնագետների պատրաստման գործընթացի և թե կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացմանը: Իբրև սկիզբ այդ մեխանիզմների դերում, ինչպես արդեն նշվել է, կարող են հանդես գալ գործատուների ընդգրկումը բուհական ու ֆակուլտետային խորհուրդներում, աշխատաշուկայի որոշակի հատվածի ուսումնասիրմամբ և երիտասարդ մասնագետների կարիերայի զարգացման խնդիրներով զբաղվող կենտրոնների ձևավորումը, գործատուների հետ համատեղ արտադրական պրակտիկայի կազմակերպումը և դրա արդյունավետության բարձրացումը:

6.7. Գործատուների կանխատեսումներն ու ակնկալիքները տնտեսության զարգացման, աշխատաշուկայի ծավալների և աշխատուժի պահանջարկի վերաբերյալ առաջիկա 5-10 տարիների ընթացքում

Դեպի աշխատաշուկան կողմնորոշվող մասնագիտական ուսումնական հաստատությունների և այդ ոլորտում քաղաքականություն իրականացնող կառույցների գործունեության արդյունավետ ծրագրավորման առումով արժեքավոր են տնտեսության և աշխատաշուկայի զարգացման տեմպերի ուսումնասիրությունը, միջնաժամկետ և հեռանկարային կանխատեսումները:

Այդ առումով կարևոր են տնտեսության և աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակը բնութագրող ցուցանիշները, վերջին տարիներին արձանագրված միտումները, տնտեսության տվյալ ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունն ու նախատեսված ծրագրերը, ինչպես նաև փորձագիտական կանխատեսումներն ու վերլուծությունները, այդ թվում նաև՝ տնտեսվարող սուբյեկտների ակնկալիքներն ու ծրագրերը:

Տվյալ հետազոտության շրջանակներում վերջիններիս դերում հանդես են գալիս հարցմանը մասնակցած գործատուների կանխատեսումներն ու գնահատականներն իրենց տնտեսության զարգացման տեմպերի և ապագայի վերաբերյալ:

Ուսումնասիրության տվյալները վկայում են, որ վերջին երեք տարիների ընթացքում (2003-2005թթ.) հետազոտված կազմակերպությունների 52,1%-ի տնտեսական

գործունեության ծավալները աճել են միջինը 46,3%-ով: 16,3%-ի ծավալները նվազել են միջինը 34,8%-ով: Իսկ 31,7%-ի ծավալները մնացել են նույնը:

Ընդհանուր առմամբ, հետազոտված կազմակերպություններում տնտեսության ծավալները վերջին երեք տարվա ընթացքում միջին վիճակագրական տվյալներով աճել են 18,5%-ով: Իսկ տնտեսության մեջ զբաղվածների թիվն աճել է 24,1%-ով: *Տես հավելված 2:*

Նշված ցուցանիշները տարբեր են հետազոտության ընտրանքում ընդգրկված՝ տնտեսության 4 ճյուղերի կազմակերպություններում: *Տես աղյուսակ 6:*

Աղյուսակ 6. Տնտեսության ծավալների և աշխատողների թվի աճը հետազոտված կազմակերպություններում վերջին 3 տարիների ընթացքում (2003-2005թթ)

	Տնտեսության ճյուղերը	Տնտ. ծավալների միջին վիճակագրական աճը 2003-2005թթ	Աշխատակիցների թվի միջին վիճակագրական աճը 2003-2005թթ
1.	Բարձր տեխնոլոգիաներ	26.3%	22.7%
2.	Գյուղատնտեսություն	0.8%	0%
3.	Սննդի վերամշակում և արդյունաբերություն	24.9%	31.2%
4.	Զբոսաշրջություն և հանգստի կազմակերպում	10.2%	4.8%
	Ընդամենը՝ հետազոտված ձեռնարկություններում	18.5%	24.1%

Ինչպես երևում է աղյուսակից, հետազոտված կազմակերպություններում տնտեսական աճը առայժմ աչքի է ընկնում էքստենսիվ բնութագրով: Երբ աշխատակիցների թվի աճը համեմատաբար ավելի մեծ ցուցանիշներ է արձանագրում, քան տնտեսական գործունեության ծավալները:

Ըստ տնտեսության ճյուղերի, վերջին երեք տարիների ընթացքում տնտեսական գործունեության ծավալների աճի ավելի մեծ ցուցանիշներ են գրանցել բարձր տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի հետ կապված գործունեություն իրականացնող կազմակերպությունները: Իսկ աշխատողների թվի աճի ցուցանիշը ավելի մեծ է եղել սննդի վերամշակման և արդյունաբերության ձեռնարկություններում:

Ինչպիսի՞ն են ձեռնարկատերերի ու գործատուների կանխատեսումները սեփական տնտեսության ծավալների և աշխատողների թվաքանակի աճի տեմպերի մասին առաջիկա հինգ և տասը տարիների համար:

Հարցման մասնակիցների մի զգալի մասը դժվարացել է կանխատեսումներ անել իր կազմակերպության գործունեության ծավալների աճի կամ նվազման վերաբերյալ առաջիկա հինգ (49,7%) և տասը (58,6%) տարիների համար:

Փոքր-ինչ ավելի մեծ է անորոշությունը, երբ հարցը վերաբերում է աշխատակիցների թվի կանխատեսմանը մոտակա հինգ (56,1%) և տասը (63,6%) տարիների համար:

Այս իրողությունն, անշուշտ, մեկնաբանելի և կանխատեսելի էր հետազոտության կազմակերպիչների համար: Դժվար է կանխատեսումներ անել դինամիկ, երբեմն էլ՝ դրամատիկ փոփոխություններ ապրող տնտեսության ու հասարակության պայմաններում: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ Հայաստանի տնտեսությունը շատ զգայուն է ներքին ու արտաքին իրավիճակային գործոնների ու ազդակների (ներքին և արտաքին քաղաքական գործընթացներ, էներգակիրների գների փափախություն, ոչ պատերազմի-ոչ խաղաղության իրավիճակ տարածաշրջանում) նկատմամբ, ապա գործատուների մի զգալի մասի զգուշավորությունը կանխատեսումներ անելու առումով դառնում է հասկանալի:

Այնուհանդերձ, հարցմանը մասնակցած գործատուների 36%-ը տրամադրված է լավատեսորեն և ակնկալում է իր կազմակերպության տնտեսական գործունեության ծավալների աճ առաջիկա 5 տարիների ընթացքում՝ մինչև 60,5%: 3,1%-ը տրամադրված է հոռետեսորեն և կանխատեսում է իր տնտեսության ծավալների կրճատում մինչև 4,8%: 11,2%-ն էլ նշում է, որ ըստ իր պլանների ու կանխատեսումների սեփական կազմակերպության տնտեսական գործունեության ծավալները կմնան նույնը:

Դրական սպասելիքներն ու վստահությունը փոքր ինչ ավելի քիչ են, երբ խոսքը գնում է մինչև 2015թ. ընկած ժամանակահատվածի մասին: (Հարցման մասնակիցների 28%-ը ակնկալում է իր ձեռնարկության տնտեսական գործունեության մինչև 124,6%-ի աճ 2005թ-ի համեմատությամբ): Փոխարենը ավելի մեծ է կանխատեսումներից խուսփող ու ձեռնպահ մնացող ռեսպոնդենտների թիվը (58,6%): *Տես աղյուսակ 7:*

Աղյուսակ 7. Գործատուների կանխատեսումներն ու ակնկալիքները առաջիկա հինգ և տասը տարիների համար


Կանխատեսումներ տնտեսության ծավալների փոփոխության վերաբերյալ				Կանխատեսումներ կազմակերպություններում զբաղված աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ			
		5տարի հետո	10 տարի հետո			5տարի հետո	10 տարի հետո
1.	Ծավալները կաճեն	36%	28%	1.	Թվաքանակը կաճի	27.4%	20.9%
2.	Ծավալները կնվազեն	3.1%	3.1%	2.	Թվաքանակը կնվազի	3.1%	3.1%
3.	Ծավալները կմնան նույնը	11.2%	10.3%	3.	Թվաքանակը կմնա նույնը	13.4%	12.5%
4.	Դժվարացել են պատասխանել	49.7%	58.6%	4.	Դժվարացել են պատասխանել	56.1%	63.6%

Վերլուծելով դրական, բացասական և տնտեսության ծավալների վերաբերյալ կայունության կանխատեսումներ ունեցող գործատուների պատասխանները, կարելի է արձանագրել հետևյալ ցուցանիշները հետազոտության ընտրանքում ընդգրկված կազմակերպությունների տնտեսական գործունեության ծավալների փոփոխության վերաբերյալ:

Հինգ տարի անց դրանց տնտեսական գործունեության ծավալները կաճեն միջինը 40,3 %-ով, իսկ 2015թ-ի համար աճը, ըստ գործատուների կանխատեսումների կկազմի միջինը 81,2%՝ 2005թ-ի ցուցանիշների համեմատությամբ:

Ինչ վերաբերում է աշխատակիցների թվաքանակի փոփոխության վերաբերյալ կանխատեսումներին, ապա ստացված տվյալների համաձայն, հետագուտված կազմակերպությունների համար մինչև 2010թ-ը աշխատակիցների թվաքանակը կավելանա միջինը 46,1%-ով, իսկ մինչև 2015թ-ը՝ 74%-ով²: *Տես գրաֆիկ 7:*


Գրաֆիկ 7. Տնտեսության ծավալների և աշխատակիցների թվաքանակի կանխատեսվող աճը մինչև 2010թ. և 2015թ.՝ 2005թ-ի ցուցանիշների համեմատությամբ




Ինչպես երևում է գրաֆիկ 7-ից, տնտեսության ինտենսիվ զարգացման վերաբերյալ կանխատեսումները հետզհետե գերակայող են դառնում էքստենսիվ զարգացման վերաբերյալ կանխատեսումների նկատմամբ: Տնտեսական գործունեության ծավալների աճի և աշխատակիցների թվաքանակի փոփոխությանը վերաբերող կանխատեսումները տարբեր են ըստ հետագոտության ընտրանքում արտացոլված՝ տնտեսության չորս ճյուղերի: *Տես գրաֆիկ 8-ի ա; բ; գ; դ:*

Գրաֆիկ 8 ա. Տնտեսության ծավալների և աշխատակիցների թվաքանակի կանխատեսվող աճը առաջիկա 5 և 10 տարիներին բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններում (ըստ կազմակերպությունների ղեկավարների գնահատականների)


² Կազմակերպությունների տնտեսական գործունեության ծավալների և աշխատողների թվաքանակի աճի միջին վիճակագրական տվյալները հաշվարկվել են և գրաֆիկում ներկայացված են որոշակի, այսինքն՝ դրական, բացասական և «0-ական» աճի կանխատեսումներ ունեցող գործատուների գնահատականների հիման վրա:



Գրաֆիկ 8 ք. *Գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների տնտեսական գործունեության ծավալների և աշխատակիցների թվաքանակի կանխատեսվող աճը մինչև 2010թ. և 2015թ. (ըստ կազմակերպությունների ղեկավարների գնահատականների)*




Գրաֆիկ 8 գ. *Սննդի վերամշակման և արդյունաբերության կազմակերպությունների տնտեսական աճի ծավալները և աշխատակիցների թվաքանակի կանխատեսվող աճի միտումները մինչև 2010թ. և 2015թ. (կազմակերպությունների ղեկավարների գնահատականներով)*



Գրաֆիկ 8 դ. *Ջրուսաշրջության և հանգստի կազմակերպման ձեռնարկությունների տնտեսական գործունեության ծավալների և աշխատակիցների թվաքանակի աճի*

վերաբերյալ կանխատեսումները մինչև 2010թ. և 2015թ. (կազմակերպությունների ղեկավարների գնահատականներով)



Ստացված որոշ տվյալներ լրացուցիչ մեկնաբանությունների կարիք ունեն։ Եթե զբոսաշրջության և հանգստի կազմակերպման, սննդի վերամշակման և արդյունաբերության ոլորտում գործատուների կանխատեսումներն իրատեսական են թվում և համահունչ են տնտեսության զրգացման միտումների ու օրինաչափությունների հետ, ապա որոշակի հարցադրումներ են առաջացնում գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների կանխատեսումները։ 2003թ-ի տվյալներով ՀՀ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թիվը աշխատանքային զբաղվածություն ունեցողների ընդհանուր թվի մեջ կազմում էր 45,8%: *Տես հավելված 1:*

Նախկին Խորհրդային միության վերջին տարիների տվյալներով գյուղատնտեսության մեջ զբաղվածների թիվը կազմում էր մինչև 20%: Չարգացած տնտեսություն ունեցող երկրների համար այդ թիվը կազմում է մինչև 10%, նույնիսկ՝ 2-3%:

Թերևս պետք է ենթադրել, որ գյուղատնտեսության ոլորտի հայաստանյան գործարարները (հարցմանը մասնակցած տվյալ ոլորտի գործատուների 88,8%-ը ներկայացնում է գերփոքր և փոքր կազմակերպություններ) իրենց կանխատեսումներում առաջնորդվում են առավելապես էքստենսիվ զարգացման տրամաբանությամբ: Մինչդեռ, գյուղատնտեսության ինտենսիվ, որակական զարգացումը ենթադրում է տեխնիկայի և նոր տեխնոլոգիաների ծավալների ավելացում, ինչը տնտեսության ծավալների աճին զուգահեռ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության ծավալների առաջանցիկ աճի վերաբերյալ կանխատեսումները դարձնում է կասկածելի:

Որքանո՞վ և ո՞ր մասնագիտություններին են վերաբերում աշխատատեղերի ավելացման մասին կանխատեսումներն՝ ըստ գործատուների:

Ակնկալվող պահանջարկն կառուցվածքն ըստ տարբեր մասնագիտությունների ներկայացված է աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8.

		Կամխատեսվող աշխատատեղերի քանակն՝ ըստ հետագուոված 322 կազմակերպությունների	
Մասնագիտություններ		5 տարի հետո	10 տարի հետո
1.	Ծրագրավորողներ, համակարգչային դիզայներ-ինժեներ, համակարգչային տեխնիկա նորոգողներ	552	68
2.	Տնտեսագետ-ֆինանսիստներ, հաշվապահներ	34	29
3.	Մարկետոլոգներ, վաճառքի գործակալներ, բրոքերներ	20	32
4.	Մենեջերներ (կառավարման ոլորտի մասնագետներ, արմինիստրատորներ)	18	10
5.	Հրուշակագործներ, խոհարարներ	16	4
6.	Զբոսաշրջության ոլորտի մասնագետներ (գիդ, էքսկուրսավար, ոլորտի կազմակերպիչ)	11	15
7.	Մննդի արդյունաբերության և վերամշակման ոլորտի որակավորված մասնագետ (տեխնոլոգ, ապրանքագետ, լաբորանտ)	151	105
8.	Սպասարկող անձնակազմ (արհեստագործական և միջին մասնագիտական կրթությամբ աշխատակիցներ, ռադիոտեխնիկ, էլեկտրիկ ևն)	7	10
9.	Գրասենյակային աշխատողներ (քարտուղարուհի, ռեֆերենտ, համակարգչ. օպերատոր)	6	3
10.	Թարգմանիչ	17	13
11.	Իրավաբան	1	1
12.	Բժիշկ	2	2
13.	Առաքիչներ	31	19
14.	Գյուղատնտ., ֆերմերային տնտեսության ոլորտի որակավորված մասնագետներ՝ անասնաբույժ, անասնաբույժ, ագրոնոմ, բուսաբույժ	18	18
15.	Մեխանիզատոր, մեխանիկ, վարորդ	15	21
16.	Բանվորներ	112	71

6.8. Որքանով է հնարավոր կանխատեսել և բավարարել աշխատուժի պահանջարկի ծավալները մոտակա և միջնաժամկետ հեռանկարում

Տնտեսության և աշխատաշուկայի հետագոտությունը, դրանում առկա միտումների վերհանումը, անշուշտ, կարևոր գործոն կարող են հանդիսանալ մասնագիտական ուսումնական հաստատություններում ըստ տարբեր մասնագիտությունների պետական կրթաթոշակների հատկացման, պետական աջակցության նպատակային բաշխման համար: Կարելի է անել նման հաշվարկներ ստացված կանխատեսումների ու գնահատականների հիման վրա: Օրինակ:

Վերջին տվյալներով Հայաստանում բարձր և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում զբաղվածների թիվը կազմում է 5 000 մարդ: Ըստ բարձր տեխնոլոգիաների բնագավառում գործունեություն ծավալող 105 կազմակերպությունների ուսումնասիրության

տվյալների, նախատեսվում է, որ մինչև 2015թ-ը դրանցում գրադվածների թիվը ավելանալու է ևս 213,4%-ով: Այսինքն, կկազմի մոտավորապես 15 715 մարդ:

Սակայն, գործատուների կանխատեսումները ոլորտի ծավալների աճի և աշխատակիցների թվի ավելացման վերաբերյալ, թերևս կարելի է զգուշավոր և համեստ համարել: Քանի որ առայժմ Հայաստանի տարածքի փոքր մասն է օգտվում Ինտերնետ կապի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ընձեռած ծառայություններից, մարզերում գործող կրթական հիմնարկների և տնտեսությունների մի զգալի մասը դեռևս չունի համակարգչային տեխնոլոգիաների կիրառման՝ ձևավորված մշակույթ և ավանդույթներ: Եթե այդ խնդիրները և դրանց հաղթահարման անհրաժեշտությունը ևս ավելացնենք գործատուների կանխատեսումներին, ապա տասը տարվա ընթացքում ոլորտում ակնկալվող աշխատատեղերը կարող են և ավելին լինել:

Այնուամենայնիվ, վերլուծելով մասնագիտական կրթության պետական և ոչ պետական հատվածում համակարգչային ծրագրավորողների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտի մասնագետներ պատրաստելու տեմպերն ու ծավալները, կարելի է արձանագրել, որ 6 պետական և 2 միջպետական կարգավիճակ ունեցող բուհերում (ԵՊՀ, ՀՊՃՀ, ՀՊՄՀ, ՎՊՄՀ, ԳՊՀ, ԳՊՄԻ, ԵՏԱԿ, ՀՌՄՀ) ու դրանց մասնաճյուղերում առաջիկա 5 տարիների ընթացքում ամեն տարի պատրաստվելու են 600-700 մասնագետներ: Նախնական մասնագիտական կրթության համակարգում ևս նախատեսվում է ամեն տարի պատրաստել ծրագրավորման և համակարգչային տեխնիկայի նորոգման 500 կրտսեր մասնագետներ:

Պետք է հաշվի առնել նաև ոչ պետական բուհերի համապատասխան ֆակուլտետների շրջանավորտներին, որոնք, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, առաջիկա 5 տարիների ընթացքում կարող են տալ տարեկան 170-ից մինչև 200 շրջանավարտներ՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտացումներով:

Այնպես որ, գործատուների կողմից առաջիկա 10 տարիների համար կանխատեսվող տարեկան առնվազն 1000 մասնագետների պահանջարկը բարձր տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ մասնագիտական կրթական համակարգը ծավալային առումով ի վիճակի է բավարարել: Այլ հարց է խնդրի որակական կողմը՝ մասնագետների մոտ խորը գիտելիքների և աշխատաշուկայում անհրաժեշտ հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը: Այս առումով շատ կարևոր է ՀՀ մասնագիտական կրթության համակարգում կառուցվածքային վերափոխումներին զուգահեռ իրականացնել նաև բովանդակային, առարկայական-ծրագրային լուրջ բարեփոխումներ, ապահովելով դասավանդման նորագույն ծրագրերի ներդրման, դասախոսական անձնակազմի պարբերաբար վերապատրաստման և որակավորման բարձրացման կայուն հնարավորություններ:

Մասնագիտական կրթության հաստատությունների կառավարման գործընթացներում մասնակից դարձնելով գործատուներին և նրանց ներկայացուցիչներին՝ անհրաժեշտ է մասնագետների պատրաստման գործում հաշվի առնել նրանց պահանջները և ներդնել հնարավորությունները: Այդպիսի համագործակցության օրինակելի նախադեպ է բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայտնի «Synopsis» կազմակերպության և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի փոխշահավետ համագործակցությունը, ինչպես նաև նույն կազմակերպության և Երևանի պետական համալսարանի

ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ռադիոֆիզիկայի և ֆիզիկայի ֆակուլտետների միջև՝ 2005թ. նոյեմբերին կնքված պայմանագրով սկիզբ առած համագործակցությունը: Այդ համագործակցությունը շահավետ է ինչպես գործատուի, այնպես էլ բուհի համար՝ թե ֆինանսական և թե բովանդակային-ծրագրային զարգացումների առումներով:

Որոշակի հաշվարկներ և կանխատեսումներ կարելի է անել նաև գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների ոլորտի կապակցությամբ: Այդ բնագավառի համար մասնագետներ են պատրաստում 9 միջին մասնագիտական հաստատություններ՝ տարեկան տալով մոտ 250 շրջանավարտներ՝ ոլորտի մասնագիտացումներով: Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիայի առկա և հեռակա բաժինները ամեն տարի ավարտում են մոտավորապես 900 շրջանավարտներ:

Առայժմ թույլ է սննդի վերամշակման և արդյունաբերության նախնական և միջին մասնագիտակա կրթության մասնագետների պատրաստման օղակը: Մինչդեռ աշխատաշուկայում կա այդ մասնագետների կարիքը և առաջիկայում էլ կավելանա, ըստ գործատուների կանխատեսումների՝ տարեկան 5 - 5,5%-ով:

Ինչ վերաբերում է զբոսաշրջության և հանգստի կազմակերպման ոլորտին, ապա տնտեսության այս ճյուղի համար բարձրագույն կրթությամբ մասնագետներ սկսել են պատրաստվել միայն վերջին 4-5 տարիների ընթացքում՝ Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի, Հայ-ռուսական սլավոնական համալսարանի, ռուսաստանյան բուհերի հայաստանյան որոշ մասնաճյուղերի և ոչ պետական մեկ բուհի կողմից:³ Ջբոսաշրջության ոլորտի մասնագետներ պատրաստում են նաև 3 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնց ընդհանուր թողունակությունը կազմում է տարեկան մինչև 80 շրջանավարտ: Տնտեսության այս ճյուղի զարգացման շոշափելի միտումները, սակայն՝ դեռևս թույլ տեմպերը և թույլ կապը գործատուների և մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև տվյալ ոլորտում ևս համապատասխան մեխանիզմների և նոր մեթոդների ներդրման խնդիրներ են առաջարկում:⁴

Անշուշտ, տնտեսության զարգացման տեմպերի և աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխությունների հետազոտումը կարևոր գործոն է մասնագիտական կրթության բնագավառում առաջնահերթությունները ճշգրտելու և պետական քաղաքականության բաղադրիչները հստակեցնելու համար: Սակայն այդ մեթոդը չի կարող բավարար լինել աշխատաշուկայի անընդհատ աճող և փոփոխվող պայմանների համատեքստում արդյունավետ և ճկուն քաղաքականություն իրականացնելու համար:

³ Տվյալներն ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության

⁴ Ջբոսաշրջության և սննդի արդյունաբերության ոլորտներում աշխատաշուկայի զարգացման ծավալների կանխատեսումը և դրանց՝ մասնագիտական կրթության հաստատությունների գործունեության համապատասխանության մասին վերլուծություններն ավելի են դժվարանում և մոտավոր բնութագրեր ստանում՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տեղեկատվական մատչելի բազաներում հիշյալ ոլորտներում զբաղվածության ծավալների մասին տվյալների բացակայության պատճառով:

6.9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Զբաղվածների բաշխումն ըստ տնտեսության ճյուղերի

	Միջին տարեկան	2002		2003	
		Ընդամենը, հազ. մարդ	Ընդամենի նկատմամբ, %	Ընդամենը, հազ. մարդ	Ընդամենի նկատմամբ, %
	<i>Ընդամենը</i>	<i>1106.4</i>	<i>100</i>	<i>1107.6</i>	<i>100</i>
1.	Արդյունաբերություն	143.1	12.9	138.8	12.5
2.	Գյուղատնտեսություն	498.8	45.1	507.0	45.8
3.	Անտառտնտեսություն	2.0	0.2	2.0	0.2
4.	Շինարարություն	36.1	3.3	41.8	3.3
5.	Տրանսպորտ և կապ	40.2	3.6	37.2	3.8
6.	Առևտուր, հարալին սնունդ	99.6	9.0	105.0	9.5
7.	Բնակարանային- կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	30.2	2.7	32.6	2.9
8.	Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	66.9	6.0	60.3	5.4
9.	Կրթություն	117.7	10.6	111.7	10.1
10.	Մշակույթ և արվեստ	20.6	1.9	20.5	1.9
11.	Գիտություն և գիտական սպասարկում	13.2	1.2	12.3	1.1
12.	Վարկավորում և ապահովագրություն	5.2	0.5	5.0	0.5
13.	Կառավարման ապարատ	23.8	2.2	25.0	2.3
14.	Այլ	9.0	0.8	8.2	0.7

Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն. «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 1997-2003թթ. վիճակագրական ժողովածու»: Երևան, 2004, էջ 30:

Հավելված 2.

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Գ Ո Ր Ծ Ա Տ Ո Ւ Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Ր

0. հարցաթերթի համարը _____

Այս ընտրանքային հետազոտությունը անց է կացվում Հայաստանում Միավորված Ազգերի Կազմակերպության Ջարգացման Ծրագրի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից՝ «Աջակցություն մասնագիտական կրթության ոլորտում պետական քաղաքականությանը» ծրագրի շրջանակներում:

Հարցման նպատակն է ուսումնասիրել ՀՀ աշխատաշուկայում առկա իրավիճակը, գոյություն ունեցող միտումները և Ձեր օգնությամբ կանխատեսումներ անել առաջիկա 5-10 տարիների համար:

Հետազոտության տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված, վիճակագրական տվյալների ձևով: Ձեր ձեռնարկության անունը որևիցե ձևով չի օգտագործվելու:

Ձեր իրազեկ պատասխաններն ու գնահատականները կօգնեն եզրակացություններ անել ՀՀ աշխատաշուկայում որոշ մասնագիտությունների նկատմամբ առկա պահանջարկի, մյուսների՝ ավելցուկի վերաբերյալ, և այդ ամենը հաշվի առնել մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող քաղաքականություն մշակելիս:

Շնորհակալություն ժամանակ տրամադրելու համար:

1. հարցագրուցավարի կողմ _____

2. Տնտեսական ոլորտը, որտեղ կազմակերպությունն իրականացնում է իր գործունեությունը

2.1 բարձր տեխնոլոգիաներ (համակարգչային տեխնիկայի հետ կապված գործունեություն) – 32.6%

2.2 գյուղատնտեսություն (գյուղատնտեսական մթերքների արտադրություն) – 9.9%

2.3 սննդի արդյունաբերություն, վերամշակող ձեռնարկություններ – 32.0%

2.4 զբոսաշրջության և դրա հետ կապված ծառայություններ (հանգստի կազմակերպում, հյուրանոցային, առողջարանային բիզնես) – 25.5%

2.5. տվյալ կազմակերպության կողմից իրականացվող գործունեության այլ ուղղություններ, տեսակներ (գրել) առևտուր – 7.1%

2.6 Վճարովի դասընթացներ – 0.3%

3. Խնդրում եմ նշել Ձեր կազմակերպության աշխատողների ընդհանուր թիվը՝ ներառյալ ղեկավարներին, բանվորներին, սպասարկող անձնակազմին, հիմնական և համատեղությամբ աշխատողներին, վճարվող և կամավոր աշխատակիցներին, ընտանիքի անդամներին և ցանկացած այլ անձանց, ովքեր ինչ-որ ձևով ներգրավված են Ձեր ձեռնարկության գործունեության մեջ:

գրել թիվը _____ 17.51 _____

4. Հարցազրուցավարին! Դասակարգել կազմակերպության տեսակն՝ ըստ աշխատողների թվի, հետևյալ սանդղակում

- 4.1. գերփոքր (1 -5) – 55.3%
- 4.2. փոքր (6 -15) – 22.7%
- 4.3. միջին (16- 50) – 13.4%
- 4.4. խոշոր (51 և ավելի) – 8.7%

5. Ձեր կազմակերպության աշխատողների թիվն ըստ կրթական հետևյալ մակարդակների.

	Կրթամակարդակը	Աշխատողների թիվը (միջին վիճ. ցուցանիշներով)
5.1	Բարձրագույն կրթությամբ մասնագետներ	6.88%
5.2	Միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետներ	4.11%
5.3	Արհեստագործական կրթությամբ մասնագետներ	0.61%
5.4	Աշխատողներ, որոնց պարագայում կրթամակարդակը կարևոր չէ	5.89%

6. Ձեզ բավարարու՞մ է արդյոք Ձեր աշխատակիցների ներկայիս քանակը:

- 6.1. բավարարում է (*անցնել 10-րդ հարցին*) – 89.1%
- 6.2. ոչ, կազմակերպությունում կան ավելորդ աշխատակիցներ (*անցնել 10-րդ հարցին*) – 3.4%
- 6.3. ոչ, կազմակերպությունն ունի աշխատողների կարիք – 7.5%

Եթե ունեք աշխատողների կարիք, ապա ասացեք, խնդրեմ,

7;8;9. Ի՞նչ մասնագետներ են Ձեզ անհրաժեշտ կազմակերպության պահանջարկը բավարարելու և/կամ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Նշեք նաև պահանջվող կրթամակարդակը և աշխատողների թիվը:

	7. Մասնագիտությունները	8. Պահանջվող կրթության մակարդակը	9. Պահանջվող աշխատուժի թվաքանակը
1.	Ծրագրավորող – 55.2%	բարձրագույն – 86.2%	162
2.	հաշվապահներ – 10.3%	մասնագիտական – 10.3%	3
3.	մարկետոլոգ - 6.9%	արհեստագործական – 3.4%	3
4.	հրուշակագործ, խոհարար – 3.4%		1
5.	սննդի վերամշակման և արդյունաբերության որակ. մասնագետ - 6.9%		4
6.	սպասարկող անձնակազմ – 3.4%		2
7.	գրասենյակի աշխատողներ – 10.3%		8
8.	գյուղ., ֆերմ. տնտ. ոլորտի որակ. մասնագետ – 3.4%		2

10. Ըստ Ձեզ, Ձեր աշխատակիցներն ունե՞ն արդյոք իրենց մասնագիտական որակավորումն ու հմտությունները բարելավելու կարիք:

10.1. այո – 23.6% 10.2. ոչ – 70.8% (անցնել 14-րդ հարցին)

10.3. դժվ. եմ պատասխանել - 5.6% (անցնել 14-րդ հարցին)

Եթե այո, ապա.

11. Նշված ոլորտներից, ո՞ր բնագավառներում Ձեր աշխատակիցներն ունեն

վերապատրաստման կարիք:

*Միջինը՝ ըստ դրա կարիքն ունեցող
ձեռնարկությունների*

	Հմտություններ	Վերապատրաստման կարիք ունեցողների միջին թիվը
11.1	Հմակարգչով աշխատելու ընդհանուր հմտություններ – 14%	2.24
11.2	Համակարգչային ծրագրավորման խորը գիտելիքներ – 7.5%	3.71
11.3	Հաղորդակցման հմտություններ – 7.1%	3.87
11.4	Կոլեկտիվում (թիմում) աշխատելու հմտություններ – 8.4%	8.96
11.5	Օտար լեզուների իմացություն – 11.2%	2.58
11.6	Աշխարհագրական և պատմամշակութային ոլորտի գիտելիքներ – 4.3%	2.0
11.7	Կառավարելու հմտություններ – 9.3%	2.60
11.8	Հաշվապահական հաշվարկներ կատարելու հմտություններ – 10.9%	1.43
11.9	Անասնաբուժական, անասնաբուժական գիտելիքներ – 2.8%	2.0
11.10	Բուսաբուժական գիտելիքներ – 2.2%	3.0
11.11	Սննդի ու պարենամթերքի պատրաստման տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքներ – 7.1%	4.17
11.12	այլ (գրել) – 0.3%	1

12. Դուք ներկայումս արդյո՞ք ապահովում եք ձեռնարկության աշխատակիցների

վերապատրաստումը:

12.1 այո – 12.1%

12.2 ոչ – 11.5% (անցնել 14-րդ հարցին)

13. Եթե այո, ապա ինչպե՞ս

13.1 կազմակերպում եք տեղում՝ սեփական ուժերով – 9%

13.2 գործուղում եք սովորելու մասնագիտական ուսումնական հաստատություններում, հոգալով ուսման ծախսերը – 2.2%

13.3 վճարում եք այլ կարճաժամկետ դասընթացներ անցնելու համար – 5.6%

13.4 այլ տարբերակներ – 0.9%

14. Վերջին 3 տարվա ընթացքում Դուք վարձե՞լ եք կամ փորձե՞լ եք վարձել արդյոք նոր աշխատակիցներ:

14.1 այո – 60.6%

14.2 ոչ – 39.4% (անցնել 16-րդ հարցին)

15. Եթե այո, ապա նկատի ունենալով Ձեր փորձը, ինչպե՞ս եք գնահատում նրանց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները:

	Շատ վատ	Վատ	Բավ.	Լավ	Գերազանց	Միջին վիճ. գնահատ.
15.1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ունեցողներ	5.3%	9.6%	58.8%	25.4%	0.9%	3,1
15.2. Բարձրագույն կրթություն ունեցողներ	3.1%	5.5%	60.7%	28.2%	2.5%	3,2

16. Համաձայն եք արդյոք *բուհական* կրթության վերաբերյալ հետևյալ դատողությունների հետ:

		այո, համաձայն եմ	ոչ, համաձայն չեմ	դժվարանում եմ պատասխանել
16.1	Բուհում ստացած գիտելիքները անհրաժեշտ են ու բավարար աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար	40.2%	50.8%	9.0%
16.2	Դրանք անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար	57%	36.8%	6.2%
16.3	Դրանք անհրաժեշտ չեն աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար	5.9%	82.3%	11.5%
16.4	Դասավանդվող գիտելիքները հնացած են և չեն համապատասխանում ներկա պահանջներին	33.3%	40.5%	26.2%
16.5	Դասավանդվող գիտելիքներն ունեն գլխավորապես տեսական բնույթ, բավարար չեն գործնական գիտելիքներն ու հմտությունները	59.8%	11.8%	23.8%
16.6	Դասավանդվող գիտելիքներն ունեն գլխավորապես էմպիրիկ (փորձնական-կիրառական) բնույթ, թերի է տեսական գիտելիքների ավանդման գործը	8.1%	43%	48.9%
16.7	Թերի են ավանդվող թե՛ տեսական և թե՛ գործնական գիտելիքները	23.1%	19.6%	57.3%

17. Համաձայն եք արդյոք *արհեստագործական և միջին մասնագիտական* կրթության վերաբերյալ հետևյալ դատողությունների հետ:

		այո, համաձայն եմ	ոչ, համաձայն չեմ	դժվարանում եմ պատասխանել
17.1	Մասնագիտական ուսումնական հաստատություններում ստացած գիտելիքները անհրաժեշտ են ու բավարար աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար	28.3%	61.4%	10.3%
17.2	Դրանք անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար	57%	30.5%	12.4%
17.3	Դրանք անհրաժեշտ չեն աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար	13.4%	69.5%	17.1%
17.4	Դասավանդվող գիտելիքները հնացած են և չեն համապատասխանում ներկա պահանջներին	37.7%	35.2%	27.1%
17.5	Դասավանդվող գիտելիքներն ունեն գլխավորապես տեսական բնույթ, բավարար չեն գործնական գիտելիքներն ու հմտությունները	57.3%	18.4%	24.3%
17.6	Դասավանդվող գիտելիքներն ունեն գլխավորապես էմպիրիկ (փորձնական-կիրառական) բնույթ, թերի է տեսական գիտելիքների ավանդման գործը	12.5%	43%	44.5%
17.7	Թերի են ավանդվող թե՛ տեսական և թե՛ գործնական գիտելիքները	24.9%	17.8%	57.3%

18. Քանի՞ տարի է Ձեր կազմակերպությունը գործում տնտեսության տվյալ ոլորտում:
գրել - միջինը՝ 6.9 տ.

Եթե կազմակերպությունը չունի 3 տարվա պատմություն, ապա անցեք հարց 23 և 24-ին

Եթե ձեռնարկությունը գործում է 3 և ավելի տարիներ, ապա հարցրեք.

19; 20. Վերջին 3 տարիների ընթացքում Ձեր տնտեսության ծավալները ավելացել են, թե՞ նվազել

19.	(Հմապատասխան տարբերակի համարը վերցնել շրջանակի մեջ)	20.	Մոտավորապես քանի՞ տոկոսով
19.1	Ծավալներն ավելացել են – 52.1%	20.1	46.34%
19.2	Ծավալները նվազել են – 16.3%	20.2	34.84%
19.3	Ծավալները մնացել են նույնը – 31.7%	աճի և նվազման ընդհ. ցուցանիշը՝ միջինը՝ 18.46%	

21; 22. Վերջին 3 տարիների ընթացքում Ձեր տնտեսության մեջ զբաղվածների (աշխատողների) թիվը ավելացել է, թե՞ նվազել

21.	(Հմապատասխան տարբերակի համարը վերցնել շրջանակի մեջ)	22.	Աշխատողների թվի փոփոխության չափը (մարդ)
21.1	Աշխատողների թիվը ավելացել է - 41.3%	22.1	12.84
21.2	Աշխատողների թիվը նվազել են – 16.3%	22.2	6.3
21.3	Աշխատողների թիվը մնացել են նույնը – 42.5%	աճի ընդհ. ցուցանիշը՝ միջինը – 4.21 մարդ կամ 24.1%	

23; 24. Հաշվի առնելով Ձեր ձեռնարկության աշխատանքի ներկա տեմպերն ու արտաքին (արտակազմակերպական) պայմանները ինչպիսի՞ն են Ձեր կանխատեսումները առաջիկա 5 և 10 տարիների համար:

23.	Առաջիկա տարիների ընթացքում Ձեր ձեռնարկության գործունեության ծավալները կաճե՞ն, կնվազե՞ն, թե կմնան նույնը: (Համապատասխան վանդակում դնել «+» նշանը)			24.	Մոտավորապես քանի՞ տոկոսով (գրել համապատասխան վանդակում, պատասխանի բացակայության դեպքում դնել «-» նշանը)	
		5 տարի հետո	10 տարի հետո		5 տարի հետո	10 տարի հետո
23.1	Ծավալները կաճեն	36%	28%	24.1	60.48%	124.57%
23.2	Ծավալները կնվազեն	3.1%	3.1%	24.2	48%	41.25%
23.3	Ծավալները կմնան նույնը	11.2%	10.3%	Ընդ.՝ աճ 40,34% և 81,19%		
23.4	Դժվարանում են պատասխանել	49.7%	58.6%			

25; 26. Ինչպե՞ս կփոխվի Ձեր կազմակերպությունում զբաղված աշխատողների թվաքանակը

5 և 10 տարի հետո:

25. (Համապատասխան վանդակում դնել «+» նշանը)				26. Աշխատողների թվի փոփոխության մոտավոր չափը մարդ (գրել համապատասխան վանդակում, պատասխանի բացակայության դեպքում դնել «-» նշանը)		
		5 տարի հետո	10 տարի հետո		5 տարի հետո	10 տարի հետո
25.1	Կավելանա	27.4%	20.9%	26.1	13.86	24.3
25.2	Կնվազի	3.1%	3.1%	26.2	8.0	11.25
25.3	Կմնա նույնը	13.4%	12.5%			
25.4	Դժվարանում են պատասխանել	56.1%	63.6%	Ընդ. աճը	8.08 մարդ կամ՝ 46.14%	12.95 մարդ կամ 74%

Եթե հարցվողը նշում է, որ 5 կամ 10 տարի անց կազմակերպությունում աշխատողների թիվը ավելանալու է, ապա տվեք հարց 27-ը (մյուսների համար անցեք հարց 28-ին)

27. Ըստ Ձեր կանխատեսումների, աշխատատեղերի ավելացումը, ո՞ր մասնագիտություններին և որքանով կառնչվի 5 տարի հետո և 10 տարի հետո:

		Կանխատեսվող աշխատատեղերի քանակն՝ ըստ հետազոտված 322 կազմակերպությունների	
		5 տարի հետո	10 տարի հետո
Մասնագիտություններ			
27.1.	Ծրագրավորողներ, համակարգչային դիզայներ-ինժեներ, համակարգչային տեխնիկա նորոգողներ	552	68
27.2.	Տնտեսագետ-ֆինանսիստներ, հաշվապահներ	34	29
27.3.	Մարկետոլոգներ, վաճառքի գործակալներ, բրոքերներ	20	32
27.4.	Մենեջերներ (կառավարման ոլորտի մասնագետներ, ադմինիստրատորներ)	18	10
27.5.	Հրուշակագործներ, խոհարարներ	16	4
27.6.	Զբոսաշրջության ոլորտի մասնագետներ (գիդ, էքսկուրսավար, ոլորտի կազմակերպիչ)	11	15
27.7.	Մննդի արդյունաբերության և վերամշակման ոլորտի որակավորված մասնագետ (տեխնոլոգ, ապրանքագետ, լաբորանտ)	151	105
27.8.	Սպասարկող անձնակազմ (արհեստագործական և միջին մասնագիտական կրթությամբ աշխատակիցներ, ռադիոտեխնիկ, էլեկտրիկ ևն)	7	10
27.9.	Գրասենյակային աշխատողներ (քարտուղարուհի, ռեֆերենտ, համակարգչ. օպերատոր)	6	3
27.10.	Թարգմանիչ	17	13
27.11.	Իրավաբան	1	1
27.12.	Բժիշկ	2	2
27.13.	Առաքիչներ	31	19
27.14.	Գյուղատնտ., ֆերմերային տնտեսության ոլորտի որակավորված մասնագետներ՝ անասնաբույժ, անասնաբույժ, ագրոնոմ, բուսաբույժ	18	18
27.15.	Մեխանիկատոր, մեխանիկ, վարորդ	15	21
27.16.	Բանվորներ	112	71

28. Վերջին 3 տարիների ընթացքում եղել է արդյոք դեպք, երբ ցանկացել եք աշխատանքի վերցնել որևէ մասնագետի, սակայն դա Չեզ չի հաջողվել:

28.1 այո – 15.2%

28.2 ոչ – 84.8% (անցնել հարց 30)

29. Եթե այո, ապա նշեք համապատասխան մասնագիտությունը (կամ աշխատանքի բնույթը):

29.1 ծրագրավորող – 15

29.2 տնտեսագետ - 3

29.3 հաշվապահներ - 2

29.4 մարկետոլոգ - 3

29.5 մենեջեր – 4

29.6 հրուշկագործ, խոհարար – 5

29.7 տուրիզմի մասնագետ – 2

29.8 սննդի արտ. և վերամշակում - 6

29.9 սպասարկող անձնակազմ - 4

29.10 գրասեն. աշխատող – 2

29.11 թարգմանիչ – 2

29.12 առաքիչներ – 2

29.13 գյուղ., ֆերմ. տնտ. որակավ. մասնագետ – 4

29.14 մեխանիկատոր, մեխանիկ – 1

29.15 այլ - 4

30. Խնդրում եմ նշել այն հիմնական պատճառները, որոնց հետևանքով հնարավոր չի եղել վարձել անհրաժեշտ աշխատողների:

30.1 Ես մեծ ջանքեր չեմ գործադրել որակյալ աշխատուժի որոնման գործում - 4.1%

30.2 Չափազանց շատ մրցակցություն կա որակյալ մասնագետների ձեռք բերման համար – 12.2%

30.3 Չկան համապատասխան մասնագիտություններ ունեցող թեկնածուներ – 40.8%

30.4 Եղած մասնագետները չունեն համապատասխան որակավորում – 30.6%

30.5 Թեկնածուները չունեն բավարար ընդհանուր հմտություններ – 20.4%

30.6 Թեկնածուները չունեն անհրաժեշտ աշխատանքային փորձ – 10.2%

30.7 Ցածր աշխատավարձի պատճառով, որը գրավիչ չէ որակյալ մասնագետների համար – 14.3%

30.8 Աշխատանքային պայմանների անհարմարավետությունը թեկնածուների համար – 4.1%

30.9 Այլ (նշել) – 0%

31. ՈՒ՞մ եք դիմում աշխատողների պահանջարկի դեպքում (հնարավոր են մեկից ավելի պատասխաններ)

- 31.1 Աշխատանքի և զբաղվածության ծառայության կենտրոն – 1.6%
- 31.2 Աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալություններ – 7.1%
- 31.3 Դիմում եմ մասնագիտական ուսումնական հաստատություններ (բուհեր, ուսումնարաններ, տեխնիկումներ և այլն) – 5%
- 31.4 Տալիս եմ հայտարարություն – 29.5%
- 31.5 Հետևում եմ տրված հայտարարություններին – 14.6%
- 31.6 Ծանոթներին/բարեկամներին – 61.2%
- 31.7 Սեփական աշխատակիցներին – 38.8%
- 31.8 Այլ գործարարների – 1.6%
- 31.9 Այլ պատասխան (գրել) – 3.4%

32. Դուք պատրաստ եք օժանդակել մասնագիտական ուսումնական հաստատություններին Ձեզ անհրաժեշտ մասնագիտական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման գործում:

- 32.1 այո – 17.7%
- 32.2 ոչ – 82.3% (ավարտել հարցազրույցը)

33. Եթե այո, ապա ինչպե՞ս

- 33.1 Տրամադրել ֆինանսական միջոցներ – 28.1%
- 33.2 Հոգալ ուսանողների ուսուցման ծախսերը – 10.5%
- 33.3 Տրամադրել գույք, արտադրական սարքավորումներ – 3.5%
- 33.4 Կազմակերպել արտադրական պրակտիկան տեղում – 82.5%
- 33.5 Տրամադրել ուսուցանող մասնագետներ – 7%
- 33.6 այլ (նշել) – 0%

Շնորհակալություն հարցազրույցի համար!

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

34. Մարզը

- 34.1. Երևան – 67.1%
- 34.2. Արմավիր – 6.2%
- 34.3. Վայոց ձոր – 11.8%
- 34.4. Գեղարքունիք – 14.9%

35. Բնակավայրը, որտեղ գտնվում է ձեռնարկությունը (կամ դրա գրասենյակը)

36. Ձեռնարկության անվանումը _____

37. Ձեռնարկության կազմակերպչաիրավական ձևը _____

38. Հարցվողի ազգանունը և անունը _____

39. Պաշտոնը _____

40. Հեռախոսը _____

**Հվելված 3. Հետազոտության գլխավոր և ընտրանքային համախմբությունները
Գլխավոր համախմբություն**

		Բարձր տեխ	Ֆերմեր	Սնունդ և վերամշ	Զբոսաշրջ.և հանգիստ	Ընդ.
Երևան	Գերփոքր	177	3	80	67	327
	Փոքր	31	3	67	16	117
	Միջին	14	2	7	2	25
	Խոշոր	13	2	14	0	29
	Ընդ.	235	10	168	85	498
Վայոց ձոր	Գերփոքր	2	11	23	5	41
	Փոքր	0	2	6	4	12
	Միջին	0	3	8	3	14
	Խոշոր	0	0	3	4	7
	Ընդ.	2	16	40	16	74
Գեղարքունիք	Գերփոքր	1	0	3	27	31
	Փոքր	1	10	4	41	56
	Միջին	0	0	2	11	13
	Խոշոր	0	0	1	2	3
	Ընդ.	2	10	10	81	103
Արմավիր	Գերփոքր	3	5	2	0	10
	Փոքր	0	4	5	1	10
	Միջին	0	3	2	0	5
	Խոշոր	0	2	1	0	3
	Ընդ.	3	14	10	1	28
Ընդամենը	Գերփոքր	183	19	108	99	409
	Փոքր	32	19	82	62	195
	Միջին	14	8	19	16	57
	Խոշոր	13	4	19	6	42
	Ընդամենը	242	50	228	183	703

Ընտրանքային համախմբություն

		Բարձր տեխ	Ֆերմեր	Սնունդ և վերամշ	Զբոսաշրջ.և հանգիստ	Ընդամենը
Երևան	Գերփոքր	74	2	34	29	139
	Փոքր	14	2	29	7	52
	Միջին	6	1	3	1	11
	Խոշոր	6	1	6	0	13
	Ընդ.	100	6	72	37	215
Վայոց ձոր	Գերփոքր	1	7	10	2	20
	Փոքր	0	1	3	2	6
	Միջին	0	2	4	1	7
	Խոշոր	0	0	2	3	5
	Ընդ.	1	10	19	8	38
Գեղարքունիք	Գերփոքր	1	0	1	12	14
	Փոքր	1	6	2	17	26
	Միջին	0	0	1	5	6
	Խոշոր	0	0	1	2	3
	Ընդ.	2	6	5	36	49
Արմավիր	Գերփոքր	2	3	1	0	6
	Փոքր	0	2	3	1	6
	Միջին	0	3	2	0	5
	Խոշոր	0	2	1	0	3
	Ընդ.	2	10	7	1	20
Ընդամենը	Գերփոքր	78	12	46	43	179
	Փոքր	15	11	37	27	90
	Միջին	6	6	10	7	29
	Խոշոր	6	3	10	5	24
	Ընդամենը	105	32	103	82	322

**7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Բովանդակություն

7.1. Ներածական դիտողություններ

7.2. Աշխատանքի շուկայում իրավիճակը և պահանջարկը

7.3. Բանվորական կադրերի պատրաստման գործող համակարգը

7.1. Ներածական դիտողություններ

Մինչ անկախության ձեռք բերումը և սոցիալ-տնտեսական արմատական բարեփոխումները Հայաստանում գործում էր տնտեսության հիմնական ոլորտներն ընդգրկող բանվորական մասնագիտությունների ուսուցման համակարգ՝ աճող սերնդի այն մասի համար, որոնք տարբեր պատճառներով չէին կարող կամ չէին ցանկանում ստանալ ավելի բարձր մակարդակի միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն: Արհեստագործական կրթության համակարգի հիմքը պրոֆտեխնիկական ուսումնարաններն էին (ՊՏՈՒ): Անցյալում գործող համակարգի հիմնական ցուցանիշները ներկայացված են ստորև՝

Աղյուսակ 1.¹ Պրոֆտեխնիկական հաստատությունների գործունեության հիմնական ցուցանիշները

	Ուսումնական հաստատությունների քանակը	Ուսանողների թվաքանակը, հազ. մարդ
1975	80	36.0
1980	100	53.1
1985	101	47.0
1990	91	23.1
1995	83	11.0
2000	56	5.1

ՊՏՈՒ-ները գործում էին Երևանում /մոտ մեկ երրորդը/ և ՀՀ բոլոր մարզերում:

Բացի դրանից, երիտասարդները ձեռք էին բերում մասնագիտություններ անմիջականորեն ձեռնարկություններում՝ ուսումնակադրային կոմբինատներում, ինչպես նաև արտադրամասերում՝ «վարպետ-աշկերտ» համակարգով:

Անկախ Հայաստանում նախնական (արհեստագործական) կրթության համակարգը, ավելի քան տասնամյա անորոշության և անկման ճանապարհ անցնելուց հետո, 2001թ.-ին

¹ Տվյալներն ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և Հայաստանի ազգային դիտակետի ուսումնասիրության՝ «Միջին մասնագիտական կրթությունը Հայաստանում: Վարչաիրավական հարցեր, համակարգի գործունեություն, մասնագիտական զբաղվածություն, ֆինանսական խնդիրներ. վիճակագրական վերլուծություն»: Երևան, 2002:

լիվլիդացվեց: Նախկին արհեստագործական կրթության հաստատությունները վերածվեցին ավագ դպրոցների, որոնք, սակայն, չհասցրեցին ծրագրային լուրջ փոփոխություններ իրականացնել: 2003թ.-ին «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ մտցնելուց հետո վերջին 2 տարվա ընթացքում նախնական մասնագիտական կրթության համակարգը սկսեց վերականգնվել: Դրան նպաստեցին 3 գործոններ.

Առաջին՝ տնտեսության որոշակի զարգացմանը և աշխատանքի շուկայի ընդլայնմանը գուղահեռ ձևավորվեց շինարարների, լեռնագործների, թեթև արդյունաբերության, առևտրի և ծառայությունների ու այլ ոլորտներում աշխատողների պահանջարկ:

Երկրորդ՝ գիտակցվեց նաև այն փաստը, որ ետդպրոցական մասնագիտական կրթությունը քոլեջներում և բուհերում հասանելի է (ի դեպ, ինչպես նաև խորհրդային տարիներին) միջնակարգ դպրոցն ավարտող ոչ բոլոր շրջանավարտների համար, որի հետևանքով միջնակարգ դպրոցի 40% և ավելի շրջանավարտներ, հատկապես Հայաստանի գյուղերում և փոքր քաղաքներում կյանք են մտնում չունենալով ոչ մի մասնագիտություն:

Վերջապես, *երրորդ՝* նախնական մասնագիտական կրթության համակարգի զարգացման համար արտասահմանյան դոնոր-կազմակերպությունները, առաջին հերթին ՏԱՄԻՍ-ը, առաջարկում են լուրջ ծրագրեր և օգնություն:

Այդուհանդերձ, իհարկե, չի կարող խոսք լինել պրոֆտեխնիկական կրթության խորհրդային համակարգի պարզ վերարտադրության մասին: Այսօր արմատապես փոխվել են սոցիալ-տնտեսական պայմանները և արհեստագործական կրթության համակարգը պետք է կազմակերպել շուկայական տնտեսության օրենքներին համապատասխան: Խոշոր, նույնիսկ գիզանտ արդյունաբերական ձեռնարկությունների փոխարեն այժմ պատվիրատուին և բանվորական ուժի գնորդներին աշխատանքի շուկայում պահանջարկ թելադրում են տասնյակ հազարավոր փոքր և միջին ձեռնարկություններ, որոնք, որպես կանոն, իրենց կադրերի հետևողական պատրաստման համար պատրաստ չեն վճարել:

Բացի դրանից, ձևավորվել է ինքնազբաղվածների հսկայական բանակ, առաջին հերթին գյուղացիական տնտեսություններում, որտեղ ընդհանրապես բացակայում է գործատու հասկացությունը և այս խավը պետք է ինքն հոգա անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և հմտությունների ձեռք բերման մասին: Վերջապես, շեշտակի կիճատվել են պետական բյուջեի ֆինանսական հնարավորությունները, որն այժմ ի վիճակի չէ բավարար ծավալով ֆինանսավորել համակարգի տեխնոլոգիական զարգացման և ապահովման համար:

7.2. Աշխատանքի շուկայում իրավիճակը և պահանջարկը

ՀՀ աշխատանքի շուկայում իրավիճակն առաջին հերթին որոշվում է տնտեսության տարբեր բնագավառներում բանվորների և ծառայողների իրական բաշխվածությամբ: Այս բաշխվածության մասին տվյալները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.² Աշխատողների քանակությունն ըստ տնտեսության ոլորտների և հատվածների 2003թ.-ին

Ոլորտներ	հազ.մարդ	%
1	2	3
Ընդամենը՝ տնտեսության ոլորտներում	1107.6	100.0
<i>այդ թվում՝</i>		
Արդյունաբերություն	138.8	12.5
գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	509.0	46.0
Շինարարություն	37.2	3.4
Տրանսպորտ և կապ	41.8	3.8
Առևտուր և հասարակական սնունդ	105.0	9.5
Բնակչության տնտեսություն կենցաղային ծառայություններ	32.6	2.9
Առողջապահություն, ֆիզկուլտուրա, սոցիալական ապահովագրություն	60.3	5.4
Կրթություն, կուլտուրա, արվեստ	132.2	11.9
Գիտություն և գիտական ծառայություններ	12.3	1.1
Վարկավորում և ապահովագրություն	5.0	0.5
Կառավարման վարչակազմ	25.0	2.3
Այլ ոլորտներ	8.4	0.7

Աղյուսակից ակնհայտ է, որ աշխատանքային կադրերը կենտրոնացված են հիմնականում հետևյալ ոլորտներում՝

գյուղատնտեսության -	46.0%
արդյունաբերության -	12.5%
առևտրի և հասարակական սնունդի -	9.5%
շինարարության և տրանսպորտի -	7.2%
Ընդամենը	75.2%

Բացարձակ թվերով այն կազմում է 800 հազար մարդ:

Ծանոթագրություն: Անհրաժեշտ է ասել, որ փորձագիտական գնահատականներով առևտրի և հասարակական սնունդի ոլորտներում «ստվերային զբաղվածություն» երևույթի հետևանքով իրականում զբաղվածների թիվը էապես ավելին է, քան ներկայացնում է պաշտոնական վիճակագրությունը:

Արդյունաբերական ձեռնարկությունները (հիմնականում մասնավոր) իրենք ի վիճակի են և պարտավոր են շուկայական հիմունքներով իրենք իրենց ապահովել կադրերով, այդ թվում պայմանագրեր կնքելով համապատասխան ՆՄՈՒՀ-ների հետ: Ինչ-որ չափով դա վերաբերում է նաև շինարարությանը, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտներին:

Ազրոհամակարգում 340 հազար ֆերմերային տնտեսություններ որակյալ կադրերով ապահովելու հիմնախնդիրը պահանջում է լուրջ քննարկումներ և արդյունավետ պետական քաղաքականության մշակում:

² «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2004», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004:

Բանվորական կադրերի պահանջարկի մասին որոշակի տեղեկատվություն տալիս են հետևյալ աղբյուրներից վերցված տվյալները՝ ա) ՀՀ զբաղվածության ծառայություն, բ) Տավուշի և Լոռու մարզերի գործատուների հարցման տվյալներ³, գ) 2005թ.-ի հունվար-օգոստոս ամիսներին «Գինդ» շաբաթաթերթում տպագրված՝ աշխատուժ վարձելու մասին հայտարարություններից վերցված տվյալների վերլուծություններ:

Ա) Բանվորական մասնագիտությունների պահանջարկն աշխատանքի շուկայում ըստ Ջրաղվածության ծառայությանը հղած գործատուների դիմումների ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Աշխատանքի շուկայում բանվորական մասնագիտությունների պահանջարկի կառուցվածքը 01.09.2005թ.-ի դրությամբ⁴

<i>Տնտեսության ոլորտը</i>	<i>Երևան</i>	<i>Մարզեր</i>	<i>Ընդամենը</i>
Ծառայությունների ոլորտ	135	13	148
Արտադրության (բանվորական մասնագիտություններ)	290	42	332
Կարողներ	47	120	167
Տրանսպորտ (վարորդներ)	27	2	29
Պահակներ, հավաքարարներ	167	2	169
Այլ	84	36	120
Ընդամենը	750	215	965

Բ) Վանաձոր քաղաքի 444 գործատուների հարցման տվյալների համաձայն (որը կազմում է քաղաքում գործող ձեռնարկությունների 1/3 մասը) ներկայումս և մոտ հեռանկարում քաղաքին անհրաժեշտ են 2000 բանվորներ, այդ թվում՝

- փականագործ - 373
- շինարար - 454
- էլեկտրագազաեռակցող - 219
- կարողներ - 154
- ԷՀՄ-ների օպերատորներ - 126
- որակավորում չունեցող բանվորներ – 675

Ընդամենը 2001

Իջևան քաղաքի գործատուների նմանատիպ հարցումը (ընդգրկված էին բոլոր գործատուները) ի հայտ բերեց բանվորների պահանջարկը, որը կազմեց ավելի քան 150 մարդ:

Գյուղական տեղանքում (16 գյուղ Լոռիում և 20-ը՝ Տավուշում) բանվորական մասնագիտությունների պահանջարկը կազմել է 125 մարդ, գլխավորապես՝ մեխանիզատորներ, շինարարներ և կենցաղսպասարկման մասնագետներ:

³ Չեկույց Իջևանի, Իջևանի ենթաշրջանի, Վանաձորի և Վանաձորի ենթաշրջանի գործատուների ընտրանքային հետազոտությունների արդյունքների: Երևան, ԵՄ ՏԱՄԻՍ-ՄՎՈՒԻ, 2004թ.

⁴ ՀՀ զբաղվածության ծառայության տվյալների հիման վրա կազմել է տնտ. գիտ. դոկ. Ա.Սեյրումյանը

Գ) «Գինը» շաքաթաթերթում տրված հայտարարությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ բանվորական մասնագիտությունների պահանջարկը հունվար-օգոստոս ամիսներին կազմել է 1021 մարդ կամ բոլոր հայտարարությունների 67.9%-ը: Առանձին մասնագիտությունների առումով պատկերը բերված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Արհեստագործական մասնագիտությունների պահանջարկն ըստ «Գինը» շաքաթաթերթի հայտարարությունների 2005թ. հունվար-օգոստոս⁵

<i>Տնտեսության ոլորտներ</i>	<i>Ընդամենը</i>	<i>%</i>
Առևտուր և սպասարկման ոլորտ (վաճառողներ, մատուցողներ, խոհարարներ, բարմեններ և այլն)	338	46.6
Տրանսպորտ և կապ (վարորդներ, ավտոմեխանիկներ և այլն)	196	27.0
Շինարարություն	60	8.3
Սեքենաշինություն և մետաղամշակում, քիմիա, էլեկտրատեղնիկա	54	7.4
Թեթև արդյունաբերություն	29	4.0
Գրասենյակային աշխատողներ	31	4.3
Գյուղատնտեսություն	11	1.5
Արվեստի ոսկերչական իրերի մշակում և պատրաստում	6	0.8
Ընդամենը	726	100

Ինչպես երևում է աղյուսակից, Երևան քաղաքի աշխատանքի շուկայում ամենամեծ պահանջարկը նկատվում է առևտրի, սպասարկման և տրանսպորտի ոլորտներում: Բացի դրանից փնտրվել են 285 մասնագիտական կրթություն չպահանջող աշխատողներ:

7.3. Բանվորական կադրերի պատրաստման գործող համակարգը

Ինչպես զարգացած երկրների, այնպես էլ նախկին խորհրդային պրակտիկայում բանվորական կադրերի պատրաստմամբ հետաքրքրված էին երկու կողմեր՝ ա) պետությունը, ելնելով աճող սերնդի սոցիալական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից և բ) գործատուները, որոնք ներկայացնում են խոշոր և միջին ձեռնարկությունները, ելնելով զարգացման սեփական շահագրգռվածությունից:

Ներկայումս բանվորական կադրերի պատրաստման ապահովման ամբողջ բեռը դրված է, փաստորեն, միայն պետության ուսերին, ի դեպ նրա հնարավորությունների կտրուկ կրճատման պայմաններում:

«Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ մտցնելուց հետո պրոֆտեխնիկական կրթության համակարգի հիմքը դարձան նախնական (արհեստագործական) ուսումնարանները:

Բացի դրանից, օրենքը (հոդվ. 22, կետ 4) նախատեսում է բանվորական ուսուցման հնարավորություն նաև ձեռնարկությունների ուսուցման կենտրոններում, որտեղ վերածնվում է «վարպետ-աշակերտ» ուսուցման ավանդական համակարգը:

Ներկայումս (2005թ.) երկրում գործում են 28 Նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնարաններ (ՆՄՈՒ), այդ թվում՝ ք.Երևանում՝ 11, ք.Գյումրիում՝ 3,

⁵ 2 ընթացքում 3. անվճար կրթություն է ստացել 48,26%: Շրջանակում կրթությունը ստացել են 338 մարդ (46,6%), 196 մարդ (27,0%), 60 մարդ (8,3%), 54 մարդ (7,4%), 29 մարդ (4,0%), 31 մարդ (4,3%), 11 մարդ (1,5%), 6 մարդ (0,8%):

ք.Արովյանում՝ 2, ինչպես նաև մեկական Էջմիածնում, Մարալիկում, Աշտարակում, Թալինում, Ծաղկահովտում, Եղվարդում, Բյուրեղավանում, Հրազդանում, Սևանում, Մարտունիում, Բերդում և Քաջարանում, որտեղ 10-ամյա և 8-ամյա դպրոցների բազայի վրա սովորում են 1980 պատանիներ և աղջիկներ: Եվս 700 երիտասարդներ բանվորական մասնագիտություններ են ձեռք բերում միջնակարգ մասնագիտական ուսուցման հաստատություններում (քոլեջներում):

Ուսուցումն իրականացվում է 8 խումբ մասնագիտություններով՝

1. մեքենաշինություն և մետաղագործություն,
2. քիմիական արտադրություն,
3. սարքեր, սարքավորումներ, էլեկտրակայաններ և ցանցեր,
4. շինարարություն,
5. տրանսպորտ և կապ,
6. սպառողական ապրանքների արտադրություն,
7. առևտուր և սպասարկում,
8. գյուղատնտեսություն:

Ուսումնարաններն անհավասարաչափ են բաշխված հանրապետության տարածքում: Եթե Երևան քաղաքում գործում են 11-ը, Շիրակում՝ 5-ը, Կոտայքում՝ 3-ը, ապա Լոռու, Վայոց Ձորի, Արմավիրի, Արարատի մարզերում չկա և ոչ մի հատ: Մյուս կողմից՝ 11 ուսումնարան գտնվում է ՀՀ ԿԳՆ ենթակայության տակ, 6-ը՝ Երևանի քաղաքապետարանի, իսկ մյուսները՝ մարզապետարանների, որը լուրջ հիմնախնդիր է միասնական մեթոդաբանության մշակման և ֆինանսավորման առումներով:

Պրոֆտեխնիկական կրթության համակարգի պետական ֆինանսավորումը պետբյուջեից 2005թ.-ին կազմել է ընդամենը 669612.3 դրամ կամ տարեկան մեկ սովորողի հաշվով մոտավորապես 300 ԱՄՆ դոլար, այդ թվում 149432.4 դրամ կրթաթոշակ:

Այս ֆինանսավորումն ապահովում է համակարգի պահպանման նվազագույն ծախսերը միայն (անձնակազմի աշխատավարձ, թոշակներ, կոմունալ ծախսեր և այլն), իսկ զարգացման ծախսերի համար նախատեսված ֆինանսավորումը՝ արդիական տեխնիկայի ձեռք բերում, ուսուցման մեթոդիկաների մշակում, կադրերի որակավորման բարձրացում, գիտելիքների թարմացում և այլն, ուսումնարանները պետք է հայթայթեն ինքնուրույնաբար:

Միևնույն ժամանակ, **ՆՍՈՒ կարգավիճակը որպես պետական ոչ առևտրական կազմակերպության՝ «Պետական ոչ առևտրական կազմակերպությունների մասին» (2002թ.) ՀՀ օրենքին համապատասխանությունը թույլ է տալիս նրանց ունենալ լրացուցիչ եկամուտներ մի շարք ձեռնարկատիրական բնույթի գործունեություններից, ինչպիսիք են՝ կադրերի որակավորման բարձրացումը և վերապատրաստումը, բնակչության համար ապրանքների արտադրությունը, ծառայությունների մատուցումը և այլն:**⁶

Տեսականորեն այս ամենը թույլ են տալիս ստանալ էական հավելում պետական

⁶ Այդ առումով ուշագրավ է նաև արտասահմանյան երկրների փորձը: Տե՛ս, օրինակ, Vocational Training in Germany. BYBB, 2002.

ֆինանսավորմանը, միայն թե գործնականում ապրանքների և ծառայությունների շուկայի ընդհանուր սահմանափակվածության պայմաններում այս հնարավորությունները համարյա չեն իրականացվում: Այս փաստը հիմնավորվել է նաև ք.Երևանի 10 ՆՄՈՒ-երի տնօրենների մասնակցությամբ 2005թ. հոկտեմբերին ֆոկուս խմբում հիմնախնդրի քննարկումների անցկացման արդյունքում:

Այդուհանդերձ, պետպատվերով սովորողներին վճարվում են թոշակներ մոտավորապես 10 ԱՄՆ դոլարի չափով: Բայց նշենք, որ ցածր թոշակները և հանրակացարանների բացակայությունը նախկինի պես թույլ չեն տալիս գյուղերի միջնակարգ դպրոցներն ավարտած հազարավոր շրջանավարտների, հատկապես աղքատ ընտանիքներից, ստանալ մասնագիտություններ քաղաքներում գործող ՆՄՈՒ-երում:

Կադրերը

ՆՄՈՒ-երի մանկավարժական անձնակազմը ցածր վարձատրության և վերատրակավորման համակարգի բացակայության հետևանքով բնութագրվում է մասնագիտական որակավորման ոչ բավարար աստիճանով:

Ուսուցման ծրագրերը և կրթության որակը

Ուսումնարանները բավականին ազատ են ուսուցման պլանների իրագործման հարցում, քանի որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն նրանք ղեկավարվելով ՀՀ ԿԳՆ սահմանած պետական ստանդարտներով, ինքնուրույն մշակում և հաստատում են ուսուցման պլանները և առարկայական ծրագրերը: Ինչ վերաբերում է ուսուցման որակին, ապա ըստ անցկացված սոցիոլոգիական հետազոտության⁷ իրականում պիտանի և կիրառական է երիտասարդ մասնագետների կրթության ընթացքում ստացած գիտելիքների և հմտությունների միայն 40%-ը, իսկ մնացած 60-ը՝ նրանք ձեռք են բերում աշխատանքի ընթացքում: ՆՄՈՒ-երի շրջանավարտների համար այս խնդիրը ավելի սուր է արտահայտված, քանի որ տեխնիկական միջոցները, լաբորատոր բազան, օգտագործվող ուսումնական տեխնոլոգիաները և ձեռնարկները չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Բաժնի վերջում նշենք, որ ներկայումս ՀՀ ԿԳՆ-ն ՏԱՍԻՍ-ի հետ համատեղ մշակել են Հայաստանում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացման ռազմավարական ծրագիր, որը ներառում է 12 նպատակներ և խնդիրներ⁸:

- բաց և ժողովրդավարական համակարգի ձևավորում,
- ուսուցման անընդհատության և շարունակականության ապահովում,
- ներկայացվող կրթական ծառայությունների որակի ապահովում,

⁷ Կրթության, աղքատության և տնտեսական ակտիվության ՄԱԿ-ի ՁԾ, Երևան, 2002թ., էջ 63:

⁸ Ռազմավարություն: ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ուսուցման: Երևան, Arcadis BMB, 2004թ.:

- հմտությունների ապահովում ըստ անհատական կարողությունների,
- հմտությունների ապահովում ըստ տնտեսության և աշխատանքի շուկայի կարիքների,
- ծախսերի արդյունավետության ապահովում,
- ՄԿՈՒ տարբեր ձևերի ներառումը միասնական օրենսդրական շրջանակում,
- մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման և ղեկավարման ռացիոնալացում,
- սոցիալական գործընկերության ապահովում,
- թափանցիկության և հավատարմագրման ապահովում,
- ինտեգրում կրթության բնագավառում միջազգային զարգացումներին,
- ուսուցում ողջ կյանքի ընթացքում:

7.4.Եզրակացություններ և առաջարկություններ

7.4.1. Հայաստանում աղքատության գլխավոր պատճառներից մեկը զբաղվածության ցածր մակարդակն է:

Այս երևույթն ընդունված է գլխավորապես բացատրել աշխատանքի շուկայում բանվորական ուժի պահանջարկի ցածր մակարդակով:

Այնուամենայնիվ, ինչպես փորձագետների, գործատուների հարցումների, վիճակագրական տվյալների վերլուծությունը (օրինակ, Ջբաղվածության հանրապետական ծառայությունից կամ թափուր տեղերի համար հայտարարություններից ստացված) ցույց են տալիս, որ գլխավորապես քաղաքներում, ինչպես նաև գյուղերում գոյություն ունի մի շարք բանվորական մասնագիտությունների պահանջարկ: Ի դեպ, այստեղ խոսք է գնում որակավորում ունեցող բանվորների մասին, որոնք լիովին տիրապետում են իրենց մասնագիտություններին ժամանակակից մակարդակով:

Վիճակագրական տվյալների և էմպիրիկ հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես Երևանում, այնպես և մարզերում (գյուղական բնակավայրերը ներառած) գոյություն ունի մասնագետների իրական պահանջարկ այնպիսի բանվորական մասնագիտությունների գծով, ինչպիսիք են՝

- վաճառող, մատուցող, խոհարար, հրուշակագործ, բարմեն,
- վարորդ և ավտոմեխանիկ,
- շինարար,
- մետաղամշակման մասնագետներ, այդ թվում՝ փականագործներ, եռակցողներ,
- թեթև արդյունաբերության ոլորտի մասնագետներ և այլն:

7.4.2. Բացի դրանից, թերևս տեղին է արձանագրել, որ սոցիոլոգիական հետազոտությունների սահմանափակ հնարավորությունները և Ջբաղվածության ծառայության տվյալների վերլուծությունը թույլ չեն տալիս օբյեկտիվորեն ֆիքսել ներկայիս աշխատանքի շուկայում որակյալ բանվորական ուժի առավել իրական և մասսայական

պահանջարկը զբաղվածության երկու գլխավոր ոլորտներում (*տե՛ս աղյուսակ 1*)՝ ա) գյուղատնտեսությունում՝ ֆերմեր-հողագործի կամ անասնապահի կարգավիճակով և բ) առևտրի և ծառայությունների ոլորտում:

Ի դեպ, և՛ առաջին, և՛ երկրորդ հատվածում խոսք է գնում ոչ թե բանվորական ուժի մասին ընդհանրապես՝ առանց տեսական գիտելիքների և մասնագիտական պատրաստվածության, որոնց դեֆիցիտ, ակնհայտ է, որ չկա, այլ այն անձանց, որոնք ստացել են գոնե նվազագույն համակարգված մասնագիտական կրթություն: Այսպես, գյուղերում գոյություն ունի բանվորական ուժի ավելցուկ, որը և պայմանավորում է իրական գործազրկությունը և աշխատանքային արտագաղթի սեզոնային նշանակալի ծավալները: Բայց, երիտասարդները, որոնք շարունակում են իրենց ծնողների գործը ու փոխարինում նրանց հողագործության և անասնապահության ոլորտներում, չեն տիրապետում ագրոարտադրության ժամանակակից տեխնոլոգիաներին և ֆերմերական տնտեսության կառավարման հմտություններին, տարեցտարի շարունակում են կրկնել նախորդ սերնդից ժառանգած գործելաձևը և տեխնոլոգիական փորձը, քանի որ ո՛չ միջնակարգ դպրոցներում սովորելու տարիներին, ո՛չ էլ դրանից հետո նրանք չեն ուսանում ժամանակակից ֆերմերական տնտեսություն վարելու իմացություններ և հմտություններ:

Համանման իրավիճակ է ստեղծվել նաև առևտրի և ծառայությունների ոլորտներում, որտեղ որպես վաճառողներ, բարձեմներ և մատուցողներ, շրջիկ գործակալներ և հյուրանոցային ծառայողներ են աշխատում պաշտոնական վիճակագրության տվյալներով 105 հազար (ոչ պաշտոնական, փորձագիտական տվյալներով՝ 150-200 հազար) պատանիներ և աղջիկներ (*տե՛ս աղյուսակ 2-ը և դրա մեկնաբանությունները*), որոնց ճնշող մեծամասնությունը չունի որևէ տեսական և գործնական մասնագիտական պատրաստվածություն:

7.4.3. Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության համակարգի վերածնունդը՝ ներկայացված ընդամենը 28 ՆՄՈՒ-երով, երկրում կատարում է դեռ առաջին քայլերը: ՏԱՄԻՄ-ի հետ համատեղ մշակվել է նրա զարգացման ռազմավարական ծրագիր: Տվյալ գործընթացը ղեկավարում են կոմպետենտ անձինք: Սակայն, գոյություն ունի հիմնախնդիր, որի լուծումը կապված է բազմաթիվ բարդությունների հետ, այն է՝ այնպիսի ֆինանսավորման ասպահովում, որը թույլ կտա հոգալ ոչ միայն համակարգի պահպանման, այլև զարգացման ծախսերը: **Ակնհայտ է, որ դա հնարավոր կլինի միայն գործատուների հետ սերտ համագործակցության պայմաններում, նրանց կողմից պահանջվող քանակի և որակի կադրերի պատրաստման համար վճարելու պատրաստակամության առկայության դեպքում,** որն այսօր առանց վճռական միջոցառումների կիրառման, այդ թվում՝ օրենսդրական բնույթի, դժվար է ակնկալել: Մյուս կողմից, ինչպես ցույց տվեց ֆոկլուս խմբում հիմնախնդրի քննարկումը՝ բյուջեից ճիշտ է նվազագույն, սակայն կայուն ֆինանսավորման առկայության պայմաններում ՆՄՈւ-երը բավարար շահագրգռվածություն հանդես չեն ցուցաբերում

շուկայական պայմաններին համահունչ լրացուցիչ ֆինասական միջոցներ հայթայթելու գործում:

7.4.4. Առաջարկություններ

Ստեղծված ժողովրդագրական, սոցիալական և տնտեսական պայմաններում նախնական (արհեստագործական) մասնագիտական համակարգը պետք է լուծի երկու խումբ խնդիրներ՝

- սոցիալական՝ ներառելով աղքատության դեմ պայքարը,
- տնտեսական՝ այսինքն շուկայի ապահովումը որակյալ բանվորական կադրերով:

Սոցիալական խնդիրներից գլխավորը՝ գյուղական և փոքր քաղաքների պատանիներին գյուղատնտեսական ոլորտի տարբեր մասնագիտությունների ուսուցանումը, հաշվի առնելով, որ նրանց ավելի բարձր մակարդակի մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունները էականորեն սահմանափակ են (հատկապես Արարատյան հարթավայրի սահմաններից դուրս):

Այժմ պատանիները փոքր քաղաքներից և գյուղերից, որտեղ կենտրոնացված է երիտասարդների հիմնական մասը, Ազգային Բանակում ծառայելուց հետո վերադառնալով իր փոքր հայրենիքը չի գտնում գոյատևելու հեռանկարներ, այսինքն ընտանիք կազմելու, որևէ եկամուտ բերող տնտեսական գործունեությամբ զբաղվելու և այլն:

Կարևոր է, որ պետությունը կարողանա ապահովել այս խմբին պատկանող իր երիտասարդ համաքաղաքացիներին անվճար, մեկնարկային կապիտալով՝ այն է մասնագիտությամբ:

Հիմնախնդրի տեխնիկական լուծումը պահանջում է լուրջ քննարկումներ ՏԱՄԻՍ-ի Մասնագիտական կրթության զարգացման ծրագրի շրջանակներում՝ ներառելով համակարգի զարգացման ռազմավարությունում ընդունված որոշումները: Անհրաժեշտ է մշակել գյուղատնտեսական տարրեր ընդգրկող մասնագիտական կրթության կազմակերպման սկզբունքները, ժամկետները և ուսուցման բովանդակությունը՝ դասախոսական կադրերի ընտրություն, դասագրքեր և այլն: Նշենք, որ հիմնախնդրի նախնական քննարկումը ֆոկուս խմբում թույլ չտվեց ուրվագծել հիմնախնդրի լուծման որոշակի ռազմավարություն:

Շուկայական հարաբերությունների պայմաններում նախնական մասնագիտական ուսուցման համակարգում ներգրավվելու և համագործակցության ձևավորման առումով առավել հեռանկարային հատվածները առևտրի և ծառայությունների ոլորտներն են՝ հետևյալ պատճառներով.

ա) Ինչպես նշվեց վերևում, երկրի ներկայիս տնտեսության այս հատվածներում կենտրոնացված է երիտասարդների մի ստվար զանգված, որի ճնշող մեծամասնությունը չունի նախնական մասնագիտական կրթություն:

բ) Մյուս կողմից, կապված զբոսաշրջության բնագավառի առաջնահերթ զարգացման հետ, ակնհայտ է, որ պետք է միջազգային ստանդարտների մակարդակին հասցնել այն անձանց որակավորումը, որոնք զբաղված են սպասարկման ոլորտում՝ ներառած առևտուրը, ինչպես այն ընդունված է բոլոր երկրներում, ուր այցելում են բազմահազար զբոսաշրջիկներ: Այնուամենայնիվ, այսօր այս բնագավառում տասնյակ հազարավոր զբաղվածներ չունեն տարրական պատկերացումներ ժամանակակից ծառայությունների կանոնների մասին:

գ) Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ բարձր մրցակցությունն այս բնագավառում արդեն այսօր հուշում է գործատուներին փնտրել մրցակցային առավելություններ կադրերի մեջ: Մինչդեռ ձեռներեցների մեծ մասը՝ «պահանջվում են երիտասարդ աղջիկներ հաճելի արտաքինով» տխրահոչակ կարգախոսից դեռ չի հրաժարվել: Սակայն, ակնհայտ է, որ խոշոր վաճառասարահների և ռեստորանների շատ տերերի շուտով պարզ կդառնա, որ միայն հաճելի արտաքինը դեռ բավական չէ, և վաճառողի կամ մատուցողի մասնագիտություններին տիրապետելու համար պետք է սովորել, ինչպես այն ընդունված է քաղաքակիրթ աշխարհում, իսկ դրա համար պետք է վճարել:

դ) Վերջապես, տվյալ ոլորտի բարձր շահութաբերությունը թույլ է տալիս մտածել, որ բավականին թվով գործատուներ առանց տատանվելու 300-500 ԱՄՆ դոլար կտրամադրեն լավ կրթված աշխատակից ձեռք բերելու համար:

Այլ կերպ ասած, հիմքեր կան ենթադրելու, որ գոյություն ունի բավականին մեծ շուկա ՆՄՈ-ների կողմից սպասարկումների ոլորտին կադրերի պատրաստման ուղղությամբ շահութաբեր ծառայություններ մատուցելու համար: Սկսելով մի քանի խոշոր օբյեկտներից, գործը շատ շուտով (մրցակցության սկզբունքից ելնելով) կարող է ընդունել լայն մասշտաբներ:

Գլխավոր հիմնախնդիրն այստեղ բարձր որակավորում ունեցող և նախաձեռնող կադրերի հիմնախնդիրն է, ինչը և հաստատել է ՆՄՈՒ-ների տնօրենների հետ անցկացված ֆոկուս խմբի շրջանակներում կազմակերպված քննարկումը:

Տվյալ հիմնախնդրի լուծման կարևորությունը ընդգծված է նաև ՀՀ-ում մասնագիտական կրթության զարգացման ռազմավարության փաստաթղթերում և պետք է դառնա ոլորտում իրականացվող բարեփոխումների կարևոր օղակներից մեկը:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մասնագիտական կրթության բնագավառում պետության ֆինանսական մասնակցության ձևերն ու եղանակները: Կրթության վարկավորման պետական համակարգի ներդրման անհրաժեշտությունը

1.1 Մասնագիտական կրթության ֆինանսավորման պետպատվերի և վարկանիշային-փոխատեղման համակարգերի դրական ու թերի կողմերը

Մասնագիտական կրթության բնագավառում պետության կողմից ընդհանուր կառավարման ու վերահսկողության գործառույթները հանգում են ինչպես համապատասխան օրենսդրական և իրավական դաշտի ձևավորմանը, ոլորտի զարգացման պետական ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, կրթության պետական չափորոշիչների, ծրագրերի սահմանմանը, ընդունմանն ու դրանց երաշխավորմանը, այնպես էլ համակարգի ֆինանսավորմանն ու աջակցության այլ ձևերին:

Խորհրդային Հայաստանում բարձրագույն մասնագիտական կրթությունն ուներ խիստ կենտրոնացված, պլանային բնույթ և իրականացվում էր անվճար:

1990թ-ից սկսած, արդեն անկախացման ուղին բռնած Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում ներդրվեց վճարովի ուսուցման համակարգը: Սկսեցին գործել առաջին ոչ պետական բուհերը: *(Տես հավելված 1):* Վճարովի ուսուցման ներդրումը թույլ տվեց քաղաքական և տնտեսական ճգնաժամի պայմաններում հիմնականում պահպանել, իսկ ապա նաև ծավալային առումով զարգացնել բարձրագույն մասնագիտական կրթության համակարգը:

1991-թ-ից մինչև 2004/2005 ուս. տարին պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով սովորող ուսանողների թիվն աճել է մինչև 68,5%: *Տես աղյուսակ 1:*

Աղյուսակ 1. Պետական բուհերի թիվը և դրանցում սովորող ուսանողների թիվը՝ ըստ տարբեր տարիների¹

	1990/91	1999/ 00	2000/ 01	2001/ 02	2002/ 03	2003/ 04	2004/05
Պետական բուհերի թիվը	14	16	19	20	20	20	20
Ուսանողների ընդհանուր թիվը (հազ.)	48.9	39.8	43.6	47.4	54.1	55.9	62.5
Պետպատվերով (անվճար) սովորող ուսանողների	47.1	15.8	16.1	16.6	16.0	19.2	19.7
	<i>96.3%</i>	<i>42.9%</i>	<i>36.9%</i>	<i>35.0%</i>	<i>29.6%</i>	<i>34.3%</i>	<i>31.5%</i>

¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

թիվը (հազ.)							
Վճարովի համակարգում սովորող ուսանողների թիվը (հազ.)	1.8	24.0	27.5	30.8	38.1	36.7	42.8
	3.7%	57,1%	63,1%	65,0%	70,4%	65,7%	68,5%

Մասնագիտական կրթության վճարովի հատվածի աճին զուգընթաց, ՀՀ տնտեսական ցուցանիշների բարելավման հետ միասին ավելանում են նաև բուհական և ետբուհական մասնագիտական կրթությանը պետական բյուջեից հատկացվող գումարները: *Տես աղյուսակ 2:*

Աղյուսակ 2. ՀՀ պետական բյուջեից հատկացումները մասնագիտական կրթության համակարգին 2002-2006 թթ. (հազ. դրամ)²

	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.
Բուհական և ետբուհական մասնագ. կրթ.	3 637 446, 1	4 004 306, 0	3 886 319, 5	4 305 532, 3	5 302 409, 3
Միջին մասնագիտական	1 140 968, 5	1 165 996, 9	1 213 269, 2	1 454 468, 4	1 827 555, 9
Նախնական մասնագիտական	391 150, 4	309 623, 4	359 907, 3	669 612, 3	1 014 485,6

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտին բյուջետային հատկացումների մոտ 3/4-ը ծախսվում է անվճար կրթության և ուսման վարձավճարների փոխհատուցման նպատակով: Բուհական և ետբուհական մասնագիտական կրթության համակարգի պետական հատկացումների մյուս մասն էլ կազմում են պետպատվերով սովորող ուսանողներին տրամադրվող կրթաթոշակները: Այդ թիվը 2004/2005 ուս. տարվա համար կազմում է 85 129 000 դրամ ամսական կամ 1 021 548 000 դրամ տարեկան³:

ՀՀ ԱՎԾ տվյալներով 2005թ. դրությամբ անվճար համակարգում սովորում են 19 708 ուսանողներ⁴: Ըստ ՀՀ ԿԳՆ տվյալների, անվճար ուսուցմամբ մեկ ուսանողին ընկնող ծախսերը գործող պետական նորմատիվների համաձայն կազմում են 166,5 հազ. դրամ (ըստ պետական բուհերում սահմանված վարձավճարների չափերի՝ 243,5 հազ. դրամ)⁵: Այսինքն, 2005թ. համար որպես բուհական և ետբուհական կրթության համակարգում սովորող ուսանողների վարձավճարների փոխհատուցում պետական բյուջեում նախատեսվել է միջինացված գնահատականներով 3 281 382 հազ. դրամ, որը կազմում է նույն տարվա պետական բյուջեով բուհական և ետբուհական համակարգին հատկացված գումարի 76,2%:

² Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. ինտերնետային կայք՝ <http://www.mfc.gov.am/>

³ Դա կազմում է 2005թ-ին բուհական և ետբուհական մասնագիտական կրթական համակարգին հատկացված միջոցների 23,7%-ը:

⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

⁵ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ: «Բարձրագույն կրթություն»: Պրակ 1: Երևան, 2005թ., էջ 111:

Պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների, այդ թվում նաև բուհերի անվճար ուսուցման տեղերի (նախկինում՝ պետպատվերի տեղերի, ներկայումս՝ պետական կրթաթոշակների) թիվը յուրաքանչյուր տարի հաստատում է ՀՀ կառավարությունը՝ ելնելով համապատասխան մասնագետների պահանջարկից և տվյալ տարվա պետական բյուջեով մասնագիտական կրթության համար նախատեսված գումարների ծավալից: Իսկ վճարովի ուսուցման տեղերի թիվը որոշվում է՝ հաշվի առնելով ուսումնական հաստատությունների հայտերը և նրանց հնարավորությունները՝ շենքային պայմաններով ապահովվածությունը, համապատասխան մանկավարժական կադրերի, ուսումնածրագրային գրականության առկայությունը և այլն:

Անվճար սովորելու իրավունքը ուսանողները ձեռք են բերում ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա, մրցութային սկզբունքով: Մինչև 2005/2006 ուս. տարին անվճար սովորելու իրավունքը պահպանվում էր ուսման ողջ ընթացքում՝ անկախ ընթացիկ քննությունների արդյունքում արձանագրված առաջադիմությունից:

Պետպատվերի սկզբունքով ուսման ողջ ընթացքում անվճար ուսուցման համակարգն ըստ էության կոչված էր և կարող էր լուծել հիմնականում երկու խնդիր. *ա) բավարարել համապատասխան մասնագետների նկատմամբ հասարակության և տնտեսության տարբեր ճյուղերի պահանջարկը և բ) խրախուսել բարձր առաջադիմությունը:*

Սակայն այդ երկու խնդիրների լուծման առումով էլ տվյալ համակարգը **արդյունավետ չէր և ուներ այլ թերություններ ևս.**

Նախ, դեռևս արմատական փոխակերպումներ ապրող շուկայական տնտեսության և հասարակության պայմաններում գործնականորեն անհնար է ճշգրիտ կանխատեսել տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման, աշխատուժի նկատմամբ դրանց պահանջարկի ծավալները 10-15 և ավելի տարիների հեռանկարում: Այդ համատեքստում էլ ավելի հիպոթետիկ կարող են լինել պետական բուհերին իջեցվող պետպատվերի ծավալները:

Ընդորում, ոչ միայն պետական իրավասու ծառայություններն ու վերլուծական կենտրոնները չեն կարող և միջազգային սկզբունքների համաձայն պարտավոր էլ չեն որոշել, թե մի քանի տարի հետո որ մասնագիտության գծով քանի աշխատողի կարիք կզգացվի⁶, այլև, ինչպես ցույց են տալիս սույն ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունները, գործատուները ևս դժվարանում են, երբեմն էլ տալիս են ոչ այնքան հիմնավոր և ոչ այնքան իրազեկ կանխատեսումներ⁷:

Երկրորդ: Սովորողների առաջադիմությունը խթանելու գործոնը ևս պետպատվերի համակարգում չի կարող տևական և լուրջ նշանակություն ունենալ: Փորձը ցույց է տալիս, որ բարձր միավորներով բուհ ընդունված բազմաթիվ ուսանողներ հետագայում ցուցաբերում են ցածր առաջադիմություն, իսկ վճարովի հիմունքներով սովորող շատ ուսանողներ սկսում են

⁶ ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարություն: «Բուհական կրթություն»: ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ: Երևան, 2005, էջ 113:

⁷ Տե՛ս Մաս 1, «Գործատուների շրջանում անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ», §7; 8:

ցուցաբերել ավելի բարձր առաջադիմություն, քան անվճար ուսանելու իրավունք ունեցողները:

Երրորդ: Քննարկվող համակարգը կոռուպցիոն ռիսկեր էր ենթադրում ընդունելության քննությունների փուլում: Բնականաբար մեծ էր գալթակությունը համեմատաբար քիչ գումար ծախսելով կամ ծանոթ-բարեկամական կապերը գործի դնելով ազատվել ուսումնառության տարիների ընթացքում պարբերաբար վարձավճար մուծելու հոգսից:

Չորրորդ: Պետպատվերի արդեն նախկին դարձող համակարգը շահավետ չէր նաև տնտեսապես. հնարավոր չէ շատ թե քիչ որոշակի հաշվարկներ անել պետության կամ հասարակության կորուստների և օգուտի մասին: Պետպատվերի միջոցով բուհերի ֆինանսավորումը վերջին տարիներին ուներ ոչ թե պետության և հասարակության համար ծառայությունների գնման, այլ գլխավորապես տրանսֆերտային վճարումների բնույթ, որոնք ուղղված են պետական բուհական համակարգի ընդհանուր աջակցությանը: Հնարավորությունների համեմատ չնչին է նաև սոցիալական պաշտպանության և աջակցության գործառույթի արդյունավետությունը:

Մինչդեռ, ***կրթությունն ինքնանպատակ արժեք չէ, և դրա հետ են կապված տնտեսական և սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծման հնարավորություններ:***

2005թ. սեպտեմբերի 8-ի և 15-ի թիվ 1986-Ն և 2114-Ն որոշումներով ՀՀ կառավարությունը էական փոփոխություններ մտցրեց բուհական կրթության պետական ֆինանսավորման համակարգում⁸: Պետպատվերի իջեցման՝ իրեն սպառած համակարգից անցում կատարվեց ***պետական կրթաթոշակների տրամադրման ռոտացիոն-ռեյտինգային (փոխատեղման-վարկանիշային) ավելի ճկուն համակարգին:***

Այս համակարգը իր մեջ պարունակում է նաև հնի մի շարք դրվագներ: «Պետական կրթաթոշակների քանակն ըստ մասնագիտությունների ձևավորվում է պետական մարմինների հայտերի հիման վրա՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման գերակայությունները»⁹:

Առաջին կուրսեցիներին անվճար ուսման իրավունք (պետական կրթաթոշակ) տրվում է ՀՀ կառավարության կողմից՝ ըստ մասնագիտությունների հաստատված տեղերին համապատասխան քանակությամբ՝ ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա¹⁰:

⁸ Տե՛ս ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 8-ի և 15-ի թիվ 1986-Ն և 2114-Ն որոշումները «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» և «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ տալու կարգը հաստատելու մասին»:

⁹ ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 8-ի թիվ 1986-Ն որոշում, կետ 4-րդ:

¹⁰ Տե՛ս նույնը, կետ 10-րդ:

Սակայն պետության աջակցությամբ անվճար սովորելու ուսանողի իրավունքը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին՝ ուսանողի տարեկան միջին առաջադիմության արդյունքների հիման վրա, մրցութային հիմունքներով:

Անվճար սովորելու իրավունքի տրամադրման նոր սկզբունքը առաջադիմության խրախուսման և ընդունելության քննությունների փուլում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով լուրջ առավելություններ ունի նախկին համակարգի համեմատությամբ: ***Մակայն այստեղ ևս կան թերություններ և մասնագիտական կրթության համակարգին պետության ֆինանսական աջակցության արդյունավետությունը սահմանափակող իրողություններ:***

Առաջին: Ընդունելության քննությունների փուլին հատուկ կոռուպցիոն ռիսկերը տեղափոխվում են ընթացիկ՝ միջանկյալ և կիսամյակային քննությունների փուլ: Եվ ***երկրորդ՝*** նախկինի պես այս համակարգը ևս աչքի է ընկնում տնտեսական ցածր և սոսկ հիպոթետիկ շահավետությամբ: Պահպանվում է պետական ֆինանսավորման տրանսֆերտային բնույթը՝ գլխավորապես բուհական համակարգին աջակցելու նպատակով:

Առաջին խմբի խնդիրների լուծումներ կարելի է առաջարկել ընթացիկ քննություններում գրավոր ու տեստային տարբերակների ավելացման և խիստ սանկցիաների կիրառման ձևով: Ի դեպ, այդ փորձը դրականորեն կիրառվում է, օրինակ, Հայաստանի ֆրանսիական համալսարանում: Ընթացիկ քննությունների 3/4-ն այստեղ իրականացվում է գրավոր և մեծ մասամբ տեստային տարբերակներով: Ընդորում, գրավոր աշխատանքները անանուն են և հիշեցնում են ՀՀ պետական բուհերի ընդունելության քննությունների ընթացքում տարիներ շարունակ կիրառվող ծածկագրման մեթոդը, երբ ուսանողի անունը հայտնի է դառնում միայն գնահատականի արձանագրումից հետո: Առկա է նաև խիստ վերահսկողության և սանկցիաների մեխանիզմ ինչպես կարգը խախտած դասախոսի, այնպես էլ ուսանողի նկատմամբ:

Սակայն այս եղանակի ներդրման և անգամ կոռուպցիոն երևույթների իսպառ վերացման դեպքում էլ բարձրագույն կրթության ֆինանսավորման ոլորտում պետության քաղաքականությունը անվճար ուսուցման իրավունք տվող կրթաթոշակների ռոտացիոն-ռեյտինգային համակարգի կիրառմամբ սահմանափակելը պակաս արդյունավետ պետք է համարել: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է չիրացված հնարավորություններին:

Չպետք է մոռանալ, որ կրթությունը հասարակության մեջ որոշակի կարգավիճակի, աշխատանքի երաշխիք է, աղքատության հաղթահարման, սոցիալական վիճակի բարելավման, սոցիալական լարվածության թոթափման և վերջապես՝ տնտեսական ու հասարակական զարգացման հզոր գործոն:

Ուստի շատ կարևոր է, որ մասնագիտական կրթության ոլորտում պետության ֆինանսական մասնակցության և քաղաքականության հիմնահարցերը դիտարկվեն Հայաստանի Հանրապետության համար օրախնդիր՝ աղքատության հաղթահարման, կրթության մատչելիության ապահովման, ուղղահայաց մոբիլության (հասարակական

շերտերի միջև անցողունակության) առումով բաց համակարգի ձևավորման, կաստայականացման և կոռուպցիայի դեմ պայքարի, սոցիալական իրավիճակի մեղմացման ու բարելավման և, իհարկե, տնտեսության փոփոխվող ու աճող պահանջների բավարարման հիմնախնդիրների համատեքստում:

Այդ տեսանկյունից Հայաստանի Հանրապետությանը բնորոշ ֆինանսական սուղ հնարավորությունների, ինչպես նաև տնտեսական տարբեր ռիսկերի առկայության պայմաններում շատ ավելի արդյունավետ, հասցեական, նպատակային և հեռանկարային կարող է լինել **ուսման վարկավորման պետական համակարգի** ներդրումը:

Այդ համակարգը ինչպես արդեն նախկին դարձող պետպատվերի, այնպես էլ դեռևս ներդրվող ռոտացիոն-ռեյտինգային համակարգերի նկատմամբ ունի մի շարք հիմնարար առավելություններ: Ուսման վարկավորման պետական համակարգի ներդրումը ՀՀ մասնագիտական (նախ և առաջ բարձրագույն) կրթության ոլորտում այդ բնագավառում իրականացվող բարեփոխումների հաջորդ կարևոր փուլը պետք է լինի:

1.2 Կրթության պետական վարկավորման և աջակցության համակարգի առավելություններն ու արդյունավետությունը

Ա) Կրթության պետական վարկավորման և աջակցության (ԿՊՎԱ) համակարգը ֆինանսական սուղ ռեսուրսներ ունեցող Հայաստանի պայմաններում **շահավետ է և կանխում է մասնագիտական կրթության ոլորտին տրամադրվող գումարների անարդյունավետ ծախսը¹¹**: ԿՊՎԱ համակարգը ենթադրում է (ինչպես դա ընդունված է նման փորձ ունեցող զարգացած երկրների պրակտիկայում) սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ցուցաբերած սովորողներին առանց տոկոսագումարի, 8-10 տարով կրթական վարկերի (փոխառությունների) տրամադրում, որոնք ենթակա են վերադարձման բուհն ավարտելուց հետո 4-5, մինչև 10 տարվա ընթացքում¹²:

Այս համակարգի ներդրումը թույլ կտա 4-5 տարի անց կրթության ֆինանսավորման նպատակով բյուջետային հատկացումներին ամեն տարի ավելացնել կրթական վարկերի միջոցով ուսում ստացած և աշխատաշուկայում արդեն իրենց տեղը գտած մասնագետների ամենամսյա փոխանցումները (տրանսֆերտները): Որքան էլ վերջիններս ինֆլյացիայի արդյունքում արժեզրկված, այնուհանդերձ կընդլայնեն կրթության պետական ֆինանսավորման և աջակցության հնարավորությունները և թույլ կտան ավելի ու ավելի մեծ թվով կարիքավոր երիտասարդների օգտվել պետական աջակցության համակարգից:

Բ) ԿՊՎ տարբերակի պարագայում նվազագույնի կհասցվեն կոռուպցիոն ռիսկերը: Քանզի սոցիալապես ապահով խավը (մեծ մասամբ թերևս) կնախընտրի կատարել ուսման

¹¹ Տնտեսական զարգացման առաջանցիկ տեմպեր ունեցող շատ երկրներ ևս կարևորում են մասնագիտական կրթության և գիտական հետազոտությունների ֆինանսավորման խնայողական կամ «վերադարձնող» համակարգերը: Տե՛ս հավելված 2:

¹² Վարկերի վերադարձման ժամանակահատվածի սահմանման քաղաքականությունը պետք է լինի հստակ, սակայն ճկուն, եթե հաշվի առնենք նաև որոշակի արտոնությունների ու տարկետման հնարավորությունները՝ բանկում ծառայելու, աշխատանք չունենալու և այլ պարագաներում:

վարձի սահմանված վճարումները, քան զարտուղի ճանապարհով ստանալ պետական վարկ, որը, թեպետև տարիներ անց, ենթակա է վերադարձման:

Գ) ԿՊՎ համակարգը պահպանում է ինչպես մինչբուհական, այնպես էլ բուհական և ընդունելության քննությունների բարձր ցուցանիշներն ու **կրթական առաջադիմությունը խրախուսելու՝ ռոտացիոն-ռեյտինգային համակարգի արժեքավոր կողմերը:** Վարկը տամադրվում է բարձր առաջադիմություն ունեցող դիմորդներին, և դրա տրամադրումը կարող է կասեցվել կամ դադարեցվել բուհական ընթացիկ քննությունների արդյունքում, օրինակ, երկու կիսամյակ անընդմեջ ցածր առաջադիմություն ցուցաբերելու դեպքում:

Դ) ԿՊՎ համակարգը ապահովում է բարձրագույն (և ընդհանրապես մասնագիտական) կրթության մատչելիությունը բնակչության բոլոր խավերի համար, ինչը հիմնարար նշանակություն ունի հասարակության կայուն զարգացման և սոցիալական վիճակի բարելավման առումով¹³:

Ե) ԿՊՎ համակարգը էապես համահունչ է աղքատության հաղթահարման ռազմավարությանը: Այն հնարավորություն է ընձեռում սոցիալապես անապահով խավի՝ բարձր առաջադիմություն և կայուն գիտելիքներ ունեցող ներկայացուցիչներին պետության աջակցությամբ մասնագիտական կրթություն ստանալ և դրա շնորհիվ բարելավել իրենց սոցիալական վիճակը:

Զ) ԿՊՎ համակարգը նպաստում է սոցիալական մոբիլության առկայությանը հասարակական տարբեր շերտերի ու խավերի միջև և խոչընդոտում կաստայացմանն ու սոցիալական բևեռացմանը: Այլապես, բարձր վարձավճար պահանջող և վերջին տարիներին «էլիտար» դարձած այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են իրավաբանությունը, բժշկագիտությունը, միջազգայնագիտությունը, կարող են դառնալ ունևոր խավի մենաշնորհը՝ խորացնելով մտահոգիչ միտումներ ունեցող սոցիալական շերտավորման ու բևեռացման գործընթացները:

Է) Վերջապես, ԿՊՎ համակարգի միջոցով մասնագիտական կրթության ֆինանսավորման տարբերակը շատ ավելի հասցեական և ճկուն է, զգայուն է տնտեսության պահանջների նկատմամբ, քան պետպատվերի կամ անվճար ուսման իրավունքի վարկանիշային փոխանցման տարբերակները: Լրացնելով վերջինիս, ԿՊՎ-ն զարգացնում և օրգանապես ամբողջացնում է բուհական կրթության ֆինանսավորման ու աջակցության պետական մեխանիզմները:

Հասարակական համակարգերի կառավարումը շատ ավելի արդյունավետ և ռացիոնալ է, երբ նրանցում առկա են ինքնակարգավորման և ինքնակառավարման մեխանիզմներ:

Իհարկե կարելի է հսկայական միջոցներ ծախսել, կանխատեսումներ անել 5-10-15 կամ 20 տարի անց տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման տեմպերի ու ծավալների,

¹³ Հասարակության տարբեր շերտերի համար մասնագիտական կրթության համակարգի անհավասար մատչելիության ու դրա շտկման անհրաժեշտության մասին տես «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարություն», կետ 1.1; 1.3: «Բարձրագույն կրթություն» պ. 1, Երևան, 2005թ., էջ 84-92:

աշխատաշուկայում 33 խումբ և 437 անուն մասնագիտությունների¹⁴ նկատմամբ հնարավոր պահանջարկի վերաբերյալ և այդ վարկածների հիման վրա հաստատել տարբեր մասնագիտությունների գծով պետական կրթաթոշակների չափաբաժինը: Սակայն այդ համակարգը չի կարող լինել հեռանկարային և արդյունավետ:

Իհարկե, չի կարելի թերագնահատել մարկետինգային հետազոտությունների դերը մասնագիտական կրթության բնագավառում քաղաքականություն իրականացնող կազմակերպությունների և ապագա մասնագետների իրագեկման ու կողմնորոշման առումով: Բայցևայնպես, շատ ավելի արդյունավետ և տնտեսության պահանջարկին արձագանքելու տեսանկյունից ճկուն կարող է լինել մասնագիտական կրթության պետական վարկավորման համակարգը, երբ յուրաքանչյուր դիմորդի, մասնագիտական կողմնորոշման տեղեկատվական աջակցությանը զուգահեռ, տրվում է նաև պետության ֆինանսական աջակցությունը ստանալու հնարավորություն:

1.3 Կրթության պետական վարկավորման համակարգի ներդրման ռիսկերը

Եվ միջազգային փորձի ուսումնասիրությունը, և ՀՀ բուհերի ու այլ մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավար մարմինների ներկայացուցիչների հետ ֆոկուս խմբերի եղանակով անցկացված քննարկումները հուշում են, որ հիմնական մտահոգությունը հանգում է ***վարկերի վերադարձման հիմնախնդրին***: Խնդիր, որն ընդհանրապես քննարկման առարկա չէր կարող լինել պետպատվերի իջեցման կամ փոխատեղման սկզբունքով անվճար կրթության իրավունքի տրամադրման տարբերակներում:

ԿՊՎ համակարգի պարագայում վարկի վերադարձման խնդիրն, իհարկե, արժանի է քննարկման: Պետությունից ստացած գումարի վերադարձման հնարավորությունը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ (տնտեսության զարգացման ծավալներ, աշխատատեղերի առկայություն, աշխատավարձի չափ և այլն), այնպես էլ սուբյեկտիվ (վարկառուի մասնագիտական որակներ ու հմտություններ, կարիերայի հաջող կամ անհաջող ընթացք, պատասխանատվության զգացում և այլն) գործոններով:

Կան նաև այլ մեխանիզմներ ու մոտեցումներ, որոնք այդ հիմնախնդրի դրական լուծման լուրջ նախադրյալներ կարող են լինել: Այդ առումով ուշագրավ է կրթության վարկավորման համակարգ ունեցող երկրների փորձը:

1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին ԱՄՆ-ում չվերադարձված կրթական վարկերի ծավալները հասել էին այդ երկրի համար մտահոգիչ ցուցանիշի՝ 22%-ի: Ֆեդերալ իշխանությունները սկսեցին հոգ տանել շրջանավարտների աշխատանքի տեղավորման մասին, ներգրավել նրանց հանրային կարևորություն ունեցող տարբեր ծրագրերում, մշակվեցին վարկի վճարման գրաֆիկի տարկետման և զեղչման մեխանիզմներ:

¹⁴ ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների խմբերն ու ցանկը սահմանվել են ՀՀ կառավարության 1997թ. մայիսի 29-ի թիվ 154 որոշմամբ:

Այդ միջոցառումների շնորհիվ 2004թ-ի տվյալներով չվերադարձված կրթական վարկերի ծավալը իջավ 5,2%-ի¹⁵:

Կան չվճարումների դեմ պայքարի այլ մեթոդներ ևս: Ինչպես օրինակ՝ վճարման պարտականությունների փոխանցումը գործատուներին: Այդ սկզբունքը կիրառվում է Ավստրալիայում, Նոր Զելանդիայում: Որոշ երկրներում էլ կրթության վարկերի վերադարձման հարցերով զբաղվում են հարկային մարմինները, ինչպես, օրինակ, Մեծ Բրիտանիայում: Այդ երկրում չվերադարձված վարկերի ծավալը կազմում է 4%:

Կան նաև մտահոգիչ փաստեր և վիճակագրական տվյալներ: Կրթական վարկերի չվերադարձման խոշոր՝ մինչև 80%-ի հասնող ցուցանիշներ են գրանցվել 1980-ական թվականներին Բրազիլիայում, Մեքսիկայում, Քենիայում¹⁶:

Այսուհանդերձ, կարելի է սահմանել կրթության պետական վարկավորման այնպիսի նախապայմաններ ու սկզբունքներ, որոնք կնվազեցնեն վարկերի չվերադարձման հետ կապված ռիսկերը:

1.4 Հայտ ներկայացնողին կրթության պետական վարկի տրամադրման սկզբունքները

Տարբեր երկրներում վաղուց արդեն իրողություն է, իսկ ԱՊՀ անդամ երկրներում հետզհետե աշխուժանում է կրթության վարկավորման ոլորտում մասնավոր բանկերի շահույթ հետապնդող գործունեությունը:

Բանկերը պոտենցիալ վարկառուին ներկայացնում են մի շարք պահանջներ և վարկ են տրամադրում տնտեսական տարբեր ռիսկերից ապահովագրող ու իրենց համար շահավետ պայմաններով:

Ռուսաստանի Դաշնության մի շարք հայտնի բանկեր (ինչպես, օրինակ, «І âðêî ì áàì ê»-ը, «Նի ԻՇ ձաի է»-ը, «Նիáâðáàì ê»-ը) վարկ տրամադրելիս հաշվի են առնում.

- հայտատուի կամ նրա ծնողների սոցիալական դրությունը
- վարկառուի կամ նրա ծնողների ապահովվածությունը աշխատանքով, եկամուտների մակարդակը, վճարունակությունը
- գրավադրման ենթակա անշարժ գույքի առկայությունը
- վարկառուից պահանջվում է ունենալ անհրաժեշտ գումարի 20-30%-ը իսկ բանկը վճարում է վարձավճարի մնացած 70-80%-ը
- վարկի տարեկան տոկոսադրույքը կազմում է՝

ԱՄՆ արժույթով կամ եվրոյով՝ 12-15%

ազգային տարադրամով՝ 21-25%¹⁷:

Կրթական վարկերի տրամադրման այդպիսի նախապայմանները հանգեցնում են նրան, որ մասնավոր բանկերի կողմից առաջարկվող ծառայություններից օգտվում են

¹⁵ Տե՛ս http://www.ng.ru/education/2005-02-04/8_almamater.html :

¹⁶ Տե՛ս http://www.ng.ru/education/2005-02-04/8_almamater.html :

¹⁷ Տե՛ս http://www.prokredo.ru/ru/about_us/press/index.php?from13=4&id13=18; տես նաև <http://test.educared.rbc.ru/ru/credits/us/>

հիմնականում սոցիալապես քիչ թե շատ ապահով խավերի նեկայացուցիչները: Թեև կրթության վարկառուների թիվը ավելանում է, սակայն առանձնակի «բում» չի արձանագրվում:

Հայաստանում կրթության վարկավորման ոլորտում առաջատարը «ACBA» բանկն է: Այստեղ վարկի առավելագույն գումարը կազմում է 800\$: Վարկի տևողությունը 3-12 ամիս է, իսկ տարեկան տոկոսադրույքը կազմում է 14,2%¹⁸:

Մասնավոր բանկերի մուտքը կրթության վարկավորման ոլորտ ունի իր դրական նշանակությունը հատկապես բուհական համակարգին ֆինանսական աջակցության առումով: Սակայն այն չի կարող լուծել լուրջ և հանրային հնչեղություն ունեցող սոցիալական խնդիրներ: Այդ առաքելությունը պետք է իրականացնի պետությունը տնտեսական, սոցիալական հեռանկարային ծրագրերի միջոցով և դրանց համատեքստում:

Կրթության պետական վարկավորման համակարգը չունի կոմերցիոն բնույթ: Պետությունը վարկը տրամադրում է առանց տոկոսադրույքի: Վարկը տրվում է ոչ թե տվյալ պահին վարկառուի վճարունակության գործոնը հաշվի առնելով, այլ հենց սոցիալապես անապահով խավերի նեկայացուցիչներին (այս նախապայմանը՝ մասնագիտական կրթության վարկավորման պետական հիմնադրամի միջոցների ավելացմանը զուգահեռ կարող է վերանայվել կամ հանվել): **Գլխավոր գործոնը կամ երաշխիքը, որի հիման վրա պետք է տրամադրել վարկը, ինտելեկտուալ կապիտալն է՝** կրթական առաջադիմության ցուցանիշը (ըստ հանրակրթական կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական վկայականի և բուհի ընդունելության քննությունների):

Հենց այդ գործոնն էլ հիմնական երաշխիք կարող է լինել վարկի վերադարձման համար: Այդ են հուշում սույն ծրագրի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների և վիճակագրական տվյալների վերլուծությունները:

ՀՀ բուհերի 2002թ-ի շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների տվյալները վկայում են, որ շուկայական հարաբերությանունների արմատավորմանը զուգահեռ աշխատանքի տեղավորման հարցում ավանդական ծանոթ-բարեկամական կապերին աստիճանաբար փոխարինում են աշխատողի մասնագիտական որակները, գիտելիքներն ու հմտությունները: Եթե ուսումնառության տարիներին թույլ առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների 26%-ն է 3 տարի անց աշխատանք գտել իր մասնագիտությամբ, ապա լավ սովորողների շրջանում բուհում ստացած մասնագիտությամբ աշխատանք ունեցողների թիվը կազմում է 35,5%: **Իսկ գերազանց առաջադիմություն ունեցած ուսանողների 52,3%-ն արդեն ունի ստացած մասնագիտությանը համապատասխանող կայուն և մշտական աշխատանք**¹⁹: Ուսումնառության տարիներին գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների շրջանում աշխատանքային ընդհանուր զբաղվածության մակարդակը կազմում է 67,1%: Եթե

¹⁸ Տե՛ս <http://test.acba.am/mainframe.php?akt1=9#top>

¹⁹ Տե՛ս «Շրջանավարտ 2002» սոցիալազգիական հետազոտության արդյունքների վերլուծությունը, §6:

հաշվի առնենք նաև 17,6% կազմող տնտեսապես ոչ ակտիվ հատվածին²⁰, ապա ստացված տվյալները լավատեսական եզրակացություններ անելու լուրջ հիմքեր են ընձեռում:

Վերոհիշյալ ուսումնասիրության տվյալներն արձանագրում են նաև, որ 3 տարի առաջ բուհերն ավարտած և ՀՀ աշխատաշուկայում արդեն իրենց տեղն ունենցող երիտասարդ մասնագետների միջին ամսական եկամուտը (աշխատավարձը) կազմում է **63,7 հազ. դրամ** (կամ 142 \$՝ այդ ժամանակահատվածում ձևավորված կուրսին համապատասխան)²¹:

ՀՀ ԿԳ նախարարության տվյալներով, անվճար համակարգում սովորող մեկ ուսանողին ընկնող ծախսերը, ըստ գործող պետական նորմատիվների, կազմում են 166,5 հազ. դրամ (370\$)՝ ընդամենը և 112,4 հազ. դրամ՝ առանց կրթաթոշակի: Ըստ պետական բուհերում սահմանված վարձավճարների չափերի այդ ցուցանիշը կազմում է 243,5 հազ. դրամ (541\$), իսկ ոչ պետական բուհերում սահմանված վարձավճարների չափերի համաձայն՝ 188,9 հազ. դրամ (420\$): *Տես հավելված 3:*

Գործող պետական նորմատիվների համաձայն, բակալավրիատում սովորելու 4 տարիների համար անվճար համակարգում սովորող մեկ ուսանողին ընկնող ծախսերը կկազմեն 666 հազ. դրամ (1 480 \$), իսկ ըստ պետական բուհերում գործող վարձաչափերի՝ 974 հազ. դրամ (2 165 \$):

Բուհն ավարտելուց հետո աշխատանքի անցնելով և միջինը 150\$-ին համարժեք դրամ աշխատավարձ ստանալու դեպքում վարկառու նախկին շրջանավարտը ամսական միջինը 35-50\$-ին համարժեք դրամ Կրթության վարկավորման պետական ֆոնդին փոխանցելու դեպքում 4-5 տարվա ընթացքում ի վիճակի է լրիվ մարել վարկի գումարը:

Այլ է խնդիրը աշխատանք չունեցող շրջանավարտների պարագայում: Նման դեպքերում պետությունը կարող է նրանց աշխատանք առաջարկել՝ ներգրավելով պետական և հանրային կարևորություն ունեցող ծրագրերում, կամ գործուղել հեռավոր ու սահմանամերձ բնակավայրեր, որտեղ տվյալ մասնագետների կարիքը առանձնակի սրությամբ է զգացվում²²: Փոխարենը պետությունը կարող է անել զիջումներ՝ կազմելով վարկի մարման նոր գրաֆիկ, անել տարկետումներ, սահմանել զեղչեր՝ գործուղված մասնագետի բնակության, տրանսպորտային և այլ անհրաժեշտ ծախսերը հաշվի առնելով:

ՀՀ կառավարությունը, իդեմս լիազոր մարմնի, ձեռքի տակ ունենալով մարկետինգային հետազոտությունների տվյալներ ու կանխատեսումներ տնտեսության ճյուղերի զարգացման և դրանցում աշխատանքի պահանջարկի դինամիկայի վերաբերյալ, կարող է սահմանել որոշակի գործակիցներ տարբեր մասնագիտությունների համար անվճար սովորելու իրավունք տվող պետական փոխառությունները (վարկերը) ու կրթաթոշակները նպատակային բաշխելու համար: Դա թույլ կտա, օրինակ, համեմատաբար ավելի քիչ քանակությամբ կրթաթոշակներ հատկացնել այն մասնագիտությունների գծով, որտեղ առկա

²⁰ Տե՛ս նույն հետազոտության արդյունքների վերլուծությունը, §3:

²¹ Տե՛ս նույն հետազոտության արդյունքների վերլուծությունը, §7:

²² ՀՀ բուհերի շրջանավարտների մասնակցությամբ անցկացված հետազոտության արդյունքներն, օրինակ, ցույց տվեցին, որ բավականին բարձր է անասնաբույժ-անասնաբույժների շրջանում գործազրկության մակարդակը: Ընդ որում, գործազուրկ անասնաբույժ-անասնաբույժների ճնշող մեծամասնությունը բնակվում է Երևանում: Մինչդեռ ՀՀ գյուղական բնակավայրերում զգալի է այդ մասնագետների կարիքը:

է «գերարտադրություն» ու շուկայի գերհագեցվածություն և, ընդհակառակը, խրախուսել այն մասնագետների պատրաստումը, որոնց կարիքը տնտեսությունն իրապես ունի:

1.5 ՀՀ բուհերում ուսանողական նպաստներ տալու անհրաժեշտությունը և հնարավոր բարեփոխումներն այդ համակարգում

Միանգամայն արդարացված և մեկնաբանելի է պետության կողմից 1-ին, 2-րդ խմբերի և մինչև 16 տարեկան մանկուց հաշմանդամ; առանց ծնողական խնամքի մնացած; պարտադիր զինծառայության ընթացքում հաշմանդամ դարձած; զոհված զինծառայողի և ազատամարտիկի երեխա-ուսանողների ուսման վրաձավճարի լրիվ փոխհատուցման տարբերակը²³:

Սակայն ավելորդ շռայլություն է թվում տեղական ինքնակառավարման մարմինների հայտերի հիման վրա տարածքային կառավարման մարմինների կողմից նպատակային ուսուցման գործուղված ուսանողների ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցումը նպաստի ձևով, ինչպես դա սահմանված է ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 15-ի թիվ 2114-Ն որոշման 4-րդ կետի «դ» ենթակետով:

Ավելի ճիշտ կլինի նպատակային ուսման գործուղված ուսանողներին հեշտացված տարբերակով (ներքին, սահմանափակ մրցույթով կամ այլ արտոնյալ պայմաններով) տրամադրել կրթական պետական վարկ (փոխառություն), իսկ չվերադարձնելու դեպքում, օրենքով սահմանված կարգով, այդ պարտականությունը փոխանցել ուսանողին գործուղող տեղական կամ տարածքային մարմնին:

Ուսանողական նպաստների ձևով մասնակի գեղչերի համակարգը, որը սահմանված է ՀՀ կառավարության թիվ 2114-Ն որոշմամբ և նախատեսում է ուսանողի սոցիալական վիճակի ու բարձր առաջադիմության հաշվառմամբ կիրառել ուսման վրաձավճարի գեղչեր տարբեր կատեգորիաների սովորողների համար, միանգամայն արդարացված և համահունչ է պետության կողմից իրականացվող սոցիալական ապահովության գործառույթների ընդհանուր տրամաբանությանը և, բացի այդ, կրթության պետական վարկավորման հետ միասին լուրջ գործոն է սովորողների առաջադիմությունը խրախուսելու առումով:

*

* *

Այսպիսով:

Ստեղծված սոցիալական և տնտեսական պայմաններում, հաշվի առնելով բուհական և ետբուհական (ինչպես նաև արհեստագործական և միջին մասնագիտական) կրթական համակարգի պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացման, կրթական առաջադիմության խրախուսման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, բարձրագույն կրթության մատչելիության ավելացման, աղքատության հաղթահարման, սոցիալական մոբիլության առումով բաց համակարգի ձևավորման, սոցիալական բևեռացման և

²³ Տե՛ս ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 15-ի թիվ 2114-Ն որոշումը «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ տալու կարգը հաստատելու մասին»:

լարվածության թոթափման խնդիրները, նպատակահարմար է ՀՀ պետական բուհերում ներդրվող՝ պետական կրթաթոշակների հատկացման վարկանիշային-փոխատեղման սկզբունքին զուգահեռ ներդնել *կրթության պետական վարկավորման (փոխառությունների տրամադրման) համակարգը*:

Նախնական փուլում կարելի է այդ համակարգը կիրառել մեկ կամ երկու պետական բուհերում, ապա, համոզվելով դրա արդյունավետության մեջ, ավելացնել այդ նպատակով հատկացվող միջոցներն ու ԿՊՎԱ համակարգի գործառնության ծավալները:

ՀՀ ԿԳՆ կառուցվածքում անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական կրթության պետական վարկավորման և աջակցության հիմնադրամ, որի ակտիվները կլրացվեն մասնագիտական կրթության համար պետական բյուջեում նախատեսվող գումարներից, վարկի շնորհիվ կրթություն ստացած վարկառուների փոխանցումներից, մվիրատվություններից, դրամաշնորհներից և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներից: *(Մխենյա 1.)*

Բուհերի ընդունելության քննություններից հետո որոշակի ժամկետում հիմնադրամին, պետական աջակցություն ստանալու նպատակով, կարող են դիմել սոցիալապես անապահով և առաջադիմության բարձր ցուցանիշներ ունեցող ուսանողները:

Վարկը տրամադրելիս ԿՊՎԱ հիմնադրամը պետք է առաջնորդվի հայտատուի սոցիալական անապահովվածության (ժամանակի ընթացքում հիմնադրամի միջոցների ավելացմանը զուգահեռ այդ պայմանը կարող է վերանայվել) և կրթության առաջադիմության բարձր (իրավականորեն սահմանված) ցուցանիշներով:


Վարկը կարող է տրամադրվել մինչև 8 կամ 10 տարի ժամկետով: Վարկառուի ուսումնառության տարիները կդիտվեն որպես վարկի արտոնյալ տրամադրման ժամանակահատված, իսկ բուհը (մասնագիտական ուսումնական հաստատությունը) ավարտելուց հետո 4 կամ 5 տարիները՝ վարկի վերադարձման ժամանակահատված:

ԿՊՎԱ հիմնադրամը վարկառուի կրթական առաջադիմության վերաբերյալ ամենամյա հաշվետվության հիման վրա կարող է շարունակել վարկային միջոցների տրամադրումը մինչև վարկառուի կրթության ավարտը, սակայն պարբերաբար (օրինակ, երկու կիսամյակ անընդմեջ) ցածր առաջադիմության դեպքում կարող է կասեցնել կամ դադարեցնել վարկի տրամադրումը:

ԿՊՎԱ հիմնադրամը պետք է համագործակցի բուհերում ստեղծված կարիերայի զարգացման կենտրոնների, զբաղվածության ծառայության, աշխատանքի տեղավորման մասնավոր և այլ կենտրոնների հետ՝ ուսումն ավարտելուց հետո աշխատանք չգտած վարկառու մասնագետներին զբաղվածության հարցում տեղեկատվական առումով աջակցելու և վարկային միջոցների վերադարձմանը նպաստելու նպատակով:

ԿՊՎԱ համակարգի ներդրման մյուս մեխանիզմներն ու սկզբունքները կարող են հստակեցվել և իրավական համապատասխան ձևակերպումներ ստանալ շահագրգիռ կողմերի և կազմակերպությունների համատեղ քննարկումների ընթացքում:

Մխենա 1. ԿՊՎԱ հիմնադրամի մուտքի և ելքերի հնարավոր սխեմա



2. Մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման օղակներում գործատուների ներգրավման

և

արտադրական (արտագնա) պրակտիկայի կազմակերպման բարելավման անհրաժեշտությունը

Հաճախ են հնչում տեսակետներ, թե մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատանքը և այնտեղ ավանդվող գիտելիքները միշտ չէ, որ համապատասխանում են տնտեսության մեջ և աշխատաշուկայում ձևավորված պահանջմունքներին:

Սույն ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունները ևս տալիս են այդպիսի գնահատականները հաստատող որոշ տվյալներ:

ՀՀ բուհերի 2002թ. շրջանավարտների 45.2%-ը նշում է, որ լիարժեք մասնագետ դառնալու և ՀՀ աշխատաշուկայում աշխատանք գտնելու առումով իրենց ստացած

գիտելիքները բավարար կարելի է համարել մասամբ (28.6%) կամ էլ դրանք համարում է անբավարար (16.6%)²⁴: Եթե բուհերի շրջանավարտները սեփական ֆակուլտետի օրինակով մասնագետների պատրաստման գործընթացը գնահատում են «լավ» («4» միավոր՝ միջինացված ցուցանիշներով), ապա գործատուները վերջին երեք տարիների ընթացքում բուհերն ավարտած երիտասարդների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները գնահատում են «բավարար»՝ 3,2 միավոր, իսկ արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստացածներինը՝ 3,1 միավոր (5 միավորանոց համակարգով):

Գործատուների 36,8%-ը գտնում է, որ բուհերում դասավանդվող գիտելիքները անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար՝ աշխատաշուկայում լիարժեք մասնագիտական գործունեություն ծավալելու համար: Նրանց 40,5%-ն էլ պաշտպանում է այն կարծիքը, թե դասավանդվող գիտելիքները հնացած են և չեն համապատասխանում ներկա պահանջներին: Մոտավորապես այդպիսին են գործատուների գնահատականները նաև նախնական և միջին մասնագիտական կրթության վերաբերյալ²⁵:

Անշուշտ, մասնագիտական ուսումնական հաստատության գործունեության հաջողությունը անմիջականորեն պայմանավորված է տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությամբ: Այդ առումով արժեքավոր են ամենատարբեր մարկետինգային, սոցիոլոգիական հետազոտությունները, վիճակագրական տվյալների վերլուծությունները: **Մակայն շուկայական տնտեսության և բուհական (ինչպես նաև նախնական և միջին մասնագիտական) ուսումնական հաստատությունների ընդլայնվող ինքնուրույնության պայմաններում խիստ կարևոր է ձևավորել ուսումնական հաստատության կառավարման այնպիսի օղակներ ու մեխանիզմներ, որոնք անմիջական կապ կիրականացնեն տնտեսվարող սուբյեկտների, գործատուների հետ:** Դա լայն հնարավորություններ կընձեռի մասնագետների պատրաստման գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների ու ծրագրերի մշակման գործում գործատուներին ու նրանց ներկայացուցիչներին մասնակից դարձնելու, նրանց պահանջները հաշվի առնելու և շրջանավարտների հետագա աշխատանքային զբաղվածության որոշակի երաշխիքներ ստեղծելու առումով:

Այդ իմաստով արժեքավոր է «Բուհական և ետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներից բխող՝ բուհերի կառավարման նոր կարգը, որը սահմանվել է «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ-ի հունիսի 23-ի թիվ 975 որոշմամբ:

²⁴ Տե՛ս «Շրջանավարտ 2002» սոց. հետազոտության արդյունքների վերլուծությունը, §8:

²⁵ Տե՛ս «Գործատուների շրջանում անցկացված ընտրանքային հետազոտության արդյունքները», §5, նույնի՝ հավելված 2:

Վերջինս հնարավորություն է ընձեռում լիազոր մարմնին բուհի կառավարման խորհրդի կազմում առաջադրել տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչների, հայտնի գործատուների (կետ 7-րդ):

Ճիշտ կլիներ, թերևս, հետագա բարեփոխումների ընթացքում իրավական հիմքեր ձևավորել (գուցե կառավարող խորհրդի կազմը չորս մասի բաժանելուց զատ կամ դրա փոխարեն այլ սկզբունքներ սահմանելով) բուհի կառավարման խորհրդում գործատուների առնվազն 10% ներգրավվածություն ապահովելու համար, այդպիսի թեկնածուների առաջադրման հնարավորություն ընձեռելով նաև բուհի կառուցվածքային միավորներին:

Նույն տրամաբանությամբ անհրաժեշտ է խրախուսել բուհի կառուցվածքային միավորների (ֆակուլտետներ, դեպարտամենտներ) խորհուրդների կազմում տվյալ մասնագիտությունների հիմնական «սպառող» հանդիսացող գործատուների և գործարար աշխարհի ներկայացուցիչների ընդգրկումը:

Այդպիսի փոխներթափանցվածությունը թույլ կտա ոչ միայն ճշգրտել և շուկայի պահանջներին առավելագույնս համապատասխանեցնել բուհերի և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը, այլև գործատուներին մասնակից կդարձնի ուսումնական հաստատության առջև կանգնած խնդիրների լուծմանը: Մասնավորապես այդպիսի կարևոր խնդիրներից մեկը արտադրական (արտագնա) պրակտիկայի կազմակերպման հարցն է:

Աստիճանաբար հաղթահարվող տնտեսական ճգնաժամի, ձեռնարկությունների ու կազմակերպությունների պարապուրդի կամ ոչ լիարժեք գործունեության պարագայում քայքայվել են սովորողների արտադրական պրակտիկայի կազմակերպման ավանդական կապերն ու հնարավորությունները: **Արտադրական պրակտիկան վերածվել է ուսումնական գործընթացի հաճախ ձևական և գործառնության առումով թույլ օղակի:** Մինչդեռ մասնագետների պատրաստման գործընթացի այդ բաղադրիչը կոչված է կարևոր դեր խաղալու ոչ միայն սովորողների գործնական հմտությունների ձևավորման ու զարգացման, այլև աշխատաշուկայում նրանց ինտեգրմանը նպաստելու, գործնական կապերի ձևավորման առումով:

Սույն ծրագրի շրջանակներում անցկացված հետազոտությունները ցույց են տալիս, որ բուհերի՝ արդեն աշխատանք ունեցող շրջանավարտների միայն 25,1%-ի (հարցմանը մասնակցածների ընդհանուր թվի 12,9%-ի) համար է, որ արտադրական պրակտիկայի ընթացքում ձևավորված կապերն ու ծանոթությունները որոշակի դեր են խաղացել աշխատանք գտնելու հարցում²⁶: Մինչդեռ այդ ցուցանիշը կարող էր առնվազն կրկնակին լինել, ինչպես ցույց է տալիս զարգացած տնտեսություն և բուհական կրթության ավանդույթներ ունեցող երկրների պրակտիկան:

²⁶ Տե՛ս «Շրջանավարտ 2002» սոց. հետազոտության արդյունքների վերլուծությունը, §6:

Ուշագրավ է, որ հարցմանը մասնակցած գործատուների 17,7%-ը պատրաստ է համագործակցել և տարբեր եղանակներով աջակցել մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեությանը: Նման պատրաստակամություն է հայտնել խոշոր կազմակերպությունների ղեկավարների 53,6%-ը:

Գործատուները մասնագիտական ուսումնական հաստատություններին իրենց աջակցությունը պատկերացնում են ֆինանսական օգնություն ցուցաբերելու՝ 5% (խոշոր կազմակերպությունների 28,6%-ը), ապագա մասնագետների մի մասի ուսման ծախսերը հոգալու՝ 1,9% (խոշոր կազմակերպությունների 14,5%-ը), ուսուցանող մասնագետներ, անհրաժեշտ գույք և սարքավորումներ տրամադրելու 1,2% (խոշոր կազմակերպությունների 7,1%-ը) և, որ ամենակարևորն է, **արտադրական պրակտիկան ձեռնարկությունում կազմակերպելու՝ 14,6%** (այդպիսի պատրաստակամություն է հայտնել խոշոր կազմակերպությունների ղեկավարների 42,9%-ը) եղանակներով²⁷:

Գործատուների հետ անմիջական կապն ու համագործակցությունը բուհերին (և մյուս մասնագիտական ուսումնական հաստատություններին) լայն հնարավորություն է ընձեռում ոչ միայն մասնագետների պատրաստման գործում նրանց պահանջմունքներն անմիջականորեն հաշվի առնելու, այլև նրանց հնարավորությունները կրթության կազմակերպման գործընթացում ներդնելու համար²⁸:

*

* *

Հետևություն:

Բարձրագույն կրթության բովանդակությունը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով կարևոր է **ապահովել և իրավական գործուն մեխանիզմներ ստեղծել ուսումնական հաստատության կառավարման օղակներում գործատուների ներգրավման համար**: Մասնավորապես, փոփոխություններ անելով ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի թիվ 975 որոշման մեջ՝ կարելի է բուհերի կառավարման խորհուրդներում գործատուների և գործարար աշխարհի ներկայացուցիչների առնվազն 10% ներկայացվածություն ապահովել՝ այդպիսի թեկնածուների ներկայացման հնարավորություն տալով ոչ միայն կառավարության լիազոր մարմնին, այլև բուհերի կառուցվածքային ստորաբաժանումներին:

Անհրաժեշտ է խրախուսել նաև գործատուների ներգրավվածությունը բուհերի կառուցվածքային ստորաբաժանումների (ֆակուլտետ, դեպարտամենտ) խորհուրդներում:

²⁷ Տե՛ս «Գործատուների շրջանում անցկացված ընտրանքային հետազոտության արդյունքներ», §6:

²⁸ Այդպիսի համագործակցության դրական օրինակ է բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայտնի «Synopsis» ընկերության և Հայաստանի ճարտարագիտական համալսարանի փոխշահավետ համագործակցությունը, նույն ընկերության և Երևանի պետական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ռադիոֆիզիկայի և ֆիզիկայի ֆակուլտետների միջև՝ 2005թ-ի նոյեմբերին կնքված պայմանագրով սկիզբ առած համագործակցությունը:

Անհրաժեշտ է վերանայել և բարեփոխել մասնագիտական ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ հանդիսացող արտադրական (արտագնա) պրակտիկայի կազմակերպման մեթոդական սկզբունքներն ու պլանները՝ կարևորելով բուհի կողմից նշանակված խորհրդատու-ղեկավարի և անմիջական ղեկավար-մասնագետի համաձայնեցված աշխատանքը պրակտիկայի ընթացքում, ինչպես նաև պրակտիկայի արդյունքում սովորողի ներկայացրած հաշվետվության (զեկույց, կուրսային աշխատանք, ավարտական կամ դիպլոմային աշխատանք) նշանակությունը մասնագիտական առարկաների և քննությունների շարքում:

Կարևոր է պրակտիկայի արդյունավետ կազմակերպման նպատակով օգտագործել բուհի և ֆակուլտետի խորհրդում ընդգրկված գործատուների և այլ օժանդակ հնարավորություններ, պրակտիկայի գործընթացը ապահովել ռեալ ֆինանսական հատկացումներով:

3. Աշխատաշուկայի հետ մասնագիտական ուսումնական հաստատությունների կապի համակարգման և կարիերայի զարգացման կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը

Խորհրդային համակարգի փլուզման և շուկայական տնտեսության ձևավորման մեկնարկային փուլից սկսած՝ Հայաստանում դադարեց գործել մասնագիտական կրթության հաստատությունների շրջանավարտներին աշխատանքի տեղավորման պետական համակարգը:

Տնտեսության և տնտեսական հարաբերությունների վերափոխման գործընթացներին մասնագիտական կրթության համակարգը կարողացավ արձագանքել առավելապես ծավալային, քանակական և ֆինանսական վերափոխումներով (ներդրվեց ուսուցման վճարովի համակարգ, ստեղծվեցին ոչ պետական ուսումնական հաստատություններ և այլն): Որպես հարաբերականորեն պահպանողական և իներցիալ համակարգ, մասնագիտական կրթության համակարգը դեռևս կարիք ունի կառուցվածքային-ֆունկցիոնալ և բովանդակային բարեփոխումների:

Ինչպես անցկացված սոցիոլոգիական հարցումները, այնպես էլ բուհերի և նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարության մասնակցությամբ ֆոկուս-խմբերի եղանակով կազմակերպված քննարկումները հաստատում են աշխատաշուկայի հետ մասնագիտական կրթական հաստատությունների քիչ թե շատ կայուն ու կանոնակարգված կապերի բացակայությունը: Եղած թույլ առնչություններն էլ ունեն չհամակարգված, տարերային բնույթ և պայմանավորված են բուհի առանձին աշխատակիցների (ֆակուլտետի ղեկան, ամբիոնի վարիչ, պրակտիկայի ղեկավար) կամ

առանձին գործատուների անհատական նախաձեռնություններով: Մինչդեռ, մասնագիտական ուսումնական հաստատությունների գլխավոր խնդիրը և մրցակցային առավելությունը պետք է լինի աշխատաշուկայի պահանջարկին արագ արձագանքելու և այն բավարարելու առաքելությունը:

Բուհերի և մյուս մասնագիտական ուսումնական հաստատությունների հաճախ մեկուսի, ինքնաբավ գործունեությունը հանգեցնում է արդյունավետության անկման և աշխատաշուկայի պահանջարկի տեսակետից ոչ լիարժեք մասնագետների պատրաստման:

Բացի այդ, վերջին տարիներին ձևավորված ավանդույթի համաձայն, բուհերի ընդունելության կենտրոնացված քննությունների ավարտից հետո պետական բուհերի ղեկավարները, առաջնորդվելով բուհի ֆինանսական մուտքերն ավելացնելու տրամաբանությամբ, դիմում են ՀՀ կենտրոնական ընդունող հանձնաժողովին՝ առանց տարկետման իրավունքի տեղերն ավելացնելու և մրցույթից դրական միավորներով դուրս մնացած դիմորդների մի մասին ևս որպես ուսանող հրամանագրելու խնդրանքով: Բուհերի ղեկավարները դիմում-խնդրանքները հիմնավորում են նաև ՀՀ տնտեսության մեջ տվյալ մասնագիտությունների պահանջարկի առկայության մասին փաստարկներով:

Սակայն, ինչպես ցույց են տալիս բուհերի ղեկավարների հետ կազմակերպված ֆոկուս քննարկման արդյունքները, իրենց շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցում բուհերի ներկայացուցիչները հիմնականում հակված են խնդիրը պետության ու կառավարության իրավասությանը թողնելու, երբեմն էլ՝ դրսևորելով միակողմանի քննադատական դիրքորոշում:

Մինչդեռ, բուհերի ինքնավարության սահմանների ընդլայնումը ենթադրում է նաև պատասխանատվության սահմանների ընդլայնում: Որքանով որ պետությունը և բուհերը համատեղ են իրականացնում մասնագետի պատրաստման գործը, այդքանով էլ բուհերը պետք է կիսեն աշխատաշուկայում մասնագետների ինտեգրման հոգսն ու պատասխանատվությունը:

Աշխատաշուկայի հետ բուհի կապերի համակարգման, առաջարկի և պահանջարկի հետազոտման, դրան համապատասխան՝ բուհի գործունեության կարգավորման, ինչպես նաև աշխատաշուկայում շրջանավարտների ինտեգրմանը նպաստելու առումով հասունացել է բուհերում *կարիերայի զարգացման կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը*: Նպատակահարմար է դրանք ձևավորել բուհի՝ արտաքին հարաբերություններով զբաղվող ստորաբաժանումների կառուցվածքում կամ ուսումնական վարչություններին կից, դրանց փոխանցելով նաև սովորողների արտադրական պրակտիկայի կազմակերպման գործառույթները:

Կարիերայի զարգացման կենտրոնը բուհի կազմում գործող կառույց է, որի նպատակն ու գլխավոր խնդիրներն են.

- աջակցություն բուհի շրջանավարտներին աշխատանքային գրադավածության և կարիերայի զարգացման հարցերում
- գործարար աշխարհի, գործատուների և բուհի շրջանավարտների միջև կապերի ձևավորում ու զարգացում
- խորհրդատվություն բուհի ղեկավարությանը աշխատաշուկայի պահանջարկին առավել համապատասխան քաղաքականություն և կրթական ծրագրեր մշակելու հարցում
- բուհի և շրջանավարտների միջև փոխդարձ կապի և աջակցության մթնոլորտի ձևավորում:

Այդ խնդիրների լուծման ճանապարհին կարիերայի զարգացման կենտրոնը պետք է իրականացնի մի շարք գործառույթներ.

- աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի նպատակային ուսումնասիրություններ, խորհրդատվության ներկայացում բուհի ղեկավարությանը, տեղեկատվական նյութերի պատրաստում շրջանավարտների, ուսանողների և դիմորդների համար
- բուհի կողմից պատրաստվող մասնագիտությունների՝ աշխատաշուկայում ունեցած առաջարկի և պահանջարկի մշտական ուսումնասիրություն
- բուհի շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում, նրանց աշխատանքային կենսագրության և կարիերայի վերաբերյալ տեղեկատվության վիճակագրական վերլուծություն
- աշխատաշուկայում եղած պահանջարկի՝ աշխատանքի հրավերների վերաբերյալ թարմ տեղեկատվության պարբերաբար մատակարարում բուհի շրջանավարտներին
- սովորողների մասնագիտական պրակտիկայի նախապատրաստում և կազմակերպում
- շրջանավարտների մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում
- բուհի տարբեր տարիների շրջանավարտների միջև կապի ձևավորում հանդիպումների, գիտաժողովների, տարբեր միջոցառումների կամակերպման միջոցով
- աջակցություն բուհի շրջանավարտներին միավորող հասարակական կազմակերպությունների ստեղծմանը:

Բազմապրոֆիլ բուհերում կարիերայի զարգացման կենտրոնները կարող են ունենալ իրենց ստորաբաժանումներն՝ ըստ պատրաստվող մասնագիտությունների, իսկ մեծաքանակ ուսանողներ ունեցող և ուսուցման տարբեր ձևեր (առկա, հեռակա, դրսեկություն և այլն) կիրառող ֆակուլտետներում կարելի է ձևավորել կարիերայի հետազոտման ու զարգացման սեփական կենտրոններ:

ՀՀ բուհերում կարիերայի զարգացման կենտրոնների ինստիտուտի ձևավորման համար ուսանելի և արժեքավոր կարող են լինել Հայաստանի ամերիկյան համալսարանում գործող՝

կարիերայի զարգացման կենտրոնի հարուստ փորձն ու աշխատանքի սկզբունքները²⁹, մասամբ նաև Հայաստանի պետական ճարտարագիտական համասարանում այդպիսի կենտրոնի ստեղծման իրողությունը:

4. Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման մեխանիզմների ձևավորումը

Մասնագիտական կրթության որակի բարձրացման և արդիական բովանդակության ապահովման կարևոր միջոցներից մեկը պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման ինստիտուտի և կայուն համակարգի առկայությունն է:

Բարձրագույն և ետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքը սահմանում է. «Բուհական և ետբուհական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողները պարտավոր են ..., ոչ պակաս, քան հինգ տարին մեկ, սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում» (հոդվ. 19, կետ 6, ենթակետ 5):

Օրենքի այս պահանջն իրագործելու համար դեռևս չկան անհրաժեշտ կառույցներ և իրավական լծակներ:

Բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման, որակավորման բարձրացման գործընթացը ներկայումս ունի տարերային բնույթ և որպես կանոն իրականացվում է վերապատրաստվողի նախաձեռնությամբ: Այդ գործին մեծապես նպաստում են ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպություններն ու ակադեմիական փոխանակման ծառայությունները (TACIS, IREX, “Eurasia” Foundation, Open Society Institute, UNDP, DAAD, OAAD և այլն): Սակայն հազվադեպ է, որ այդ կազմակերպությունների օգնությամբ որակավորումը բարձրացրած կամ արտասահմանյան գիտակրթական կենտրոններում վերապատրաստված մասնագետները ձեռք բերած փորձն ու գիտելիքները կանոնավոր կերպով փոխանցում են գործընկերներին: Այդպիսի գործուղումներն ու վերապատրաստումները շատ դեպքերում ունենում են անձնական, անհատական նշանակություն:

ՀՀ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման ու վերապատրաստման գործընթացի կարգավորման, առաջավոր փորձի փոխանակման, կրթության բովանդակության ու մեթոդների արդիականացման նպատակով ներկա փուլում անհրաժեշտ է բուհերի դասախոսների որակավորման բարձրացման՝ կանոնավոր գործող կառույցի ստեղծումն ու զարգացումը: Այդ կառույցի կարևորությունը էլ

²⁹ <http://www.aua.am>

ավելի է ընդգծվում՝ կապված Բոլոնիայի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալու և եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու գործընթացների հետ:

Որակավորման բարձրացման և վերապատրաստման համակարգի ձևավորման առումով ուշագրավ են հանրակրթական դպրոցների ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի գործունեությունը, ինչպես նաև ԵՊՀ-ում դասախոսների շարունակական կրթության ապահովման և մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով 2002թ. ստեղծված՝ ետբուհական մասնագիտական կրթության վարչության շրջանակներում իրականացվող աշխատանքները³⁰:

Դեռևս 1968թ-ից ԵՊՀ-ում գործել է բուհերի դասախոսների որակավորման բարձրացման ֆակուլտետ: Այդ ֆակուլտետի ունկնդիրների շարքերում կային ինչպես Հայաստանի, այնպես էլ ԽՍՀՄ մյուս հանրապետությունների բուհերից գործուղված մասնագետներ: 1968-2002թթ. ժամանակահատվածում ԵՊՀ-ի որակավորման բարձրացման ֆակուլտետն ունեցել է 4 250 ունկնդիր, որոնցից 251-ը՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից:

1990-ական թվականներին մասնագիտական կրթության համակարգի ընդհանուր ճգնաժամի հետևանքով խիստ նվազեց որակավորման բարձրացման ֆակուլտետի ունկնդիրների թիվը: 1997թ-ից մինչև 2002թ-ը ներառյալ ԵՊՀ որակավորման բարձրացման ֆակուլտետն ունեցել է 149 ունկնդիր: *Տես հավելված 4:*

Հաշվի առնելով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման անհրաժեշտությունը, լրացուցիչ մասնագիտական կրթության նկատմամբ ձևավորված պահանջարկը, ԵՊՀ-ում 2002թ-ին ստեղծվեց ետբուհական մասնագիտական կրթության վարչություն՝ երկու ստորաբաժանումներով՝ ետբուհական կրթության (ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի) բաժին և լրացուցիչ մասնագիտական կրթության բաժին: Վերջինիս գործառույթների շրջանակն ընդգրկում է.

- ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և մասնագետների շարունակական կրթության ապահովումը
- ԵՊՀ գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպումը
- ՀՀ բուհերի դասախոսների, քաղաքացիական ծառայողների որակավորման բարձրացման, մասնագիտական վերապատրաստման և ստաժավորման կազմակերպումը
- ետբուհական լրացուցիչ կրթական ծրագրերով ուսուցման պահանջարկի ուսումնասիրումը, դրան համապատասխան ուսումնական պլանների ու ծրագրերի ստեղծման ապահովումը

³⁰ ԵՊՀ ետբուհական մասնագիտական կրթության վարչության ժամանակավոր կանոնադրությունն ու ժամանակավոր կանոնակարգը հաստատվել է 2002թ.՝ ԵՊՀ ռեկտորի հրամանով:

- մասնագետների որակավորման բարձրացման և լրացուցիչ կրթության համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակումը, ուսումնամեթոդական գրականության հրատարակման կազմակերպումը:

2002թ-ին ուսումնական ծրագրերի թարմացումից և նոր բաղադրիչներով հարստացումից հետո մինչև 2005թ-ը ներառյալ ԵՊՀ լրացուցիչ կրթության բաժնի իրականացրած ծրագրերի շնորհիվ վերապատրաստման և որակավորման բարձրացման կուրսեր են անցել ԵՊՀ-ի 630 դասախոսներ, 53 վարչական աշխատողներ, ՀՀ այլ պետական բուհերի (այդ թվում նաև Արցախի պետական համալսարանի) 228 դասախոսներ, ՀՀ ոչ պետական բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի 15 ներկայացուցիչներ:

ԵՊՀ լրացուցիչ կրթության բաժինը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ միասին 2002-2005թթ. դասընթացներ է կազմակերպել նաև 1220 քաղծառայողների համար:

Ընդօրինակելով ԵՊՀ դրական փորձը, 2005թ-ից արդեն դասախոսների որակավորման բարձրացման ծառայություններ են սկսել ձևավորել նաև Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Երևանի պետական բժշկական համալսարանը:

Ասել է, թե պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կարիք ունեն բոլորը, սակայն այդ գործի լոկալ և առանձին վերցրած բուհի սահմանափակ միջոցներով կազմակերպումը չի կարող արդյունավետ լինել:

Անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարությունը և նրա լիազոր մարմինը ընդունեն ՀՀ բարձրագույն և ետբուհական կրթության մասին օրենքից բխող որոշումներ և ենթաօրենսդրական ակտեր՝ կոորդինացնելով և համակարգելով բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման ու վերապատրաստման գործընթացը:

ՀՀ ԿԳՆ մասնագիտական կրթության վարչությունում անհրաժեշտ է ձևավորել առանձին աշխատանքային խումբ կամ բաժին, որը կհետազոտի և կսահմանի որակավորման բարձրացման կարիք ունեցող մասնագիտությունների ցանկը, բարձրագույն կրթության կառավարման տարբեր օղակները ներկայացնող պատասխանատուների կազմը (ֆակուլտետի ղեկան, ամբիոնի վարիչ, ուսումնական վարչության ղեկավար և այլն), կիրավիրի արտասահմանյան հայտնի մասնագետներ, կմշակի դասընթացների կազմակերպման մեթոդիկան, կհետազոտի ՀՀ բուհերի պոտենցիալն ու պահանջները մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման առումով:

Սկզբնական փուլում, օրինակ, բուհերի դասախոսների և ուսումնական պրոցեսի կազմակերպիչների որակավորման բարձրացման գործում ընդհանուր առմամբ առաջնային կարող են լինել գիտելիքները եվրոպական կրթական համակարգի հիմնարար սկզբունքների, կրեդիտների փոխանցման միասնական համակարգի, որակի և գիտելիքների գնահատման եվրոպական ցանցի, ՀՀ մասնագիտական կրթության համակարգում իրականացվող

բարեփոխումների տրամաբանության և խնդիրների վերաբերյալ: Բուհերի ղեկավարների և նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացված ֆոկուս քննարկումները վկայում են, որ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման տեսանկյունից պետք է կարևորել նաև գիտելիքներն ու հմտությունները տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների, ժամանակակից մանկավարժական մեթոդների, ժամանակակից հումանիտար հիմնախնդիրների ոլորտներում, գիտության պատմության և փիլիսոփայության, գիտական հետազոտության մեթոդաբանության, կրթության կառավարման և ինովացիոն գործունեության բնագավառներում, անշուշտ նաև՝ գիտության ու կրթության արդի ձեռքբերումները նեղ մասնագիտական ոլորտներում³¹:

Անհրաժեշտ է նաև կատարել աշխատանքի բաժանում տարբեր մասնագիտությունների գծով առաջատար դիրքեր զբաղեցնող բուհերի միջև: Օրինակ, տեղեկատվական-համակարգչային տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների վերապատրաստումը կարելի է կազմակերպել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, մանկավարժական գիտությունների ներկայացուցիչներին՝ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում, հասարակական գիտությունների ոլորտի մասնագետներին՝ Երևանի պետական համալսարանում, այդ նպատակով հրավիրելով հայտնի մասնագետներ նաև այլ բուհերից և արտերկրից՝ հնարավորինս օգտվելով նաև միջազգային կազմակերպությունների աջակցությունից:

Խնդիրը, սակայն, պետք է մնա ԿԳՆ ուշադրության, ընդհանուր իրավասության, ֆինանսական աջակցության ու հոգածության կենտրոնում և համակարգվի իրավական ակտերով ու որոշումներով³²:

5. Բուհական երկաստիճան կրթության և դրա հետ կապված՝ շուկայական պահանջարկի անհամապատասխանության մասին

ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության՝ երկաստիճան համակարգի անցնելու դժվարությունները զգալիորեն պայմանավարված են նաև ՀՀ կրթության և գիտության բնագավառից դուրս գտնվող հանգամանքներով: Աշխատանքային շուկայում դեռևս տարբերություն չի դրվում բակալավրի և մասգիստրոսի դիպլոմների միջև: Ստացվում է, որ մագիստրոսական կրթություն ունեցող անձը ոչ մի առավելություն չունի աշխատանքի

³¹ 2005թ-ին ՌԳ պետական բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման առաջնահերթ ուղղությունների մասին տես http://www.gain.ru/documents/Minobr/Prik_m/prink379_04.htm

³² ՌԳ ԿԳՆ պետական բուհերի դասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով, օրինակ, 2005թ-ի համար լրացուցիչ հատկացրել էին մոտավորապես 3մլն. 120հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ֆինանսական լրացուցիչ միջոցներ, իջեցվել էին հանձնարարականներ բուհերին և ԿԳՆ իրավասու օղակներին: Տե՛ս նույն տեղում:

ընդունվելիս: Բացառությունը միայն ասպիրանտուրայի ընդունելությունն է: Այսինքն, խնդիրը լուծված է միայն կրթության և գիտության համակարգում: Բնականաբար, այդպիսի իրավիճակը երիտասարդների մոտ անտարբերություն է առաջացնում մագիստրոսական կրթության նկատմամբ, և նրանք շարունակում են իրենց կրթությունը բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում կամ բանակից տարկետման իրավունք ստանալու համար (տղաների պարագաներում), կամ պարզապես որևէ բանով զբաղված լինելու համար (աշխատանք չգտած և չամուսնացած աղջիկներ), կամ էլ որևէ այլ կողմնակի նպատակից ելնելով:

Խնդիրն ունի մեկ այլ կողմ ևս. ականա ստացվում է, որ մեր հասարակական կյանքի և ոչ մի ոլորտ մագիստրոսական կրթության կարիք չունի (բացի գիտության ոլորտից), բակալավրիատի շրջանակներում ձեռք բերված գիտելիքները լի ու լի բավարարում են մեր հասարակության բոլոր ոլորտների զարգացման պահանջները, և բարձրագույն կրթության երկաստիճան համակարգը ներմուծվել է լոկ Բոլոնիայի համաձայնագրին միանալու և եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու համար:

Ուստի պետք է հետևողական լինել և օրենսդրորեն ամրագրել բոլոր այն պաշտոնների ցանկը (առաջին հերթին բյուջետային աշխատողների համար. առաջատար մասնագետների, գլխավոր կամ բարձրագույն պաշտոններ և այլն), որոնք զբաղեցնելու համար անհրաժեշտ է մագիստրոսական կրթություն ունենալ: Օգտվելով միջազգային առաջադեմ փորձից՝ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել մի շարք օրենքներում՝ առաջին հերթին «Բուհական և ետբուհական կրթության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներում: Մասնավորապես, ***նպատակահարմար է մագիստրոսական կրթությունը օրենսդրորեն պարտադիր համարել քաղաքացիական ծառայության համակարգի գլխավոր և բարձրագույն պաշտոններ զբաղեցնելու համար*** (կամ էլ քաղաքացիական պաշտոնների զբաղեցման համար հայտարարված մրցույթների ընթացքում մագիստրոսական կրթությունը հավասարեցնել որոշակի տարիների՝ մասնագիտական աշխատանքային ստաժի հետ):

6. Գործատուներին ՀՀ բուհերում նպատակային ուսման

գործուղելու իրավունք տալու մասին

Գործատուների և մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև անմիջական կապի ու համագործակցության ձևավորման, բուհերի շուկայամետ գործունեության զարգացման նպատակով ***անհրաժեշտ է ստեղծել իրավական մեխանիզմներ, որոնք թույլ կտան գործատուներին. խոշոր և միջին տնտեսվարող սուբյեկտներին (տարածքային կառավարման մարմինների օրինակով, սակայն առանց տեղական ինքնակառավարման մարմինների միջնորդության ու հայտերի) բուհերում***

նպատակային ուսման գործուղել դիմորդների, որոնք հետագայում պետք է աշխատեն գործուղած ձեռնարկություններում:

Ձեռնարկությունը պետք է հոգա իր կողմից նպատակային ուսման գործուղված սովորողի ծախսերը: Ձեռնարկությունների կողմից գործուղված դիմորդներին ընդունելության քննությունների ժամանակ պետք է տրվեն որոշակի արտոնություններ՝ սահմանափակ մրցույթի անցկացման ձևով³³:

Սակայն խոսքը չի վերաբերում բոլոր բուհերին կամ տնտեսվարող սուբյեկտներին ընդհանրապես: Այլապես կստացվի ընդունելության քննությունների համակարգը նոր արտոնություններով ծանրաբեռնելու անհեռատես քայլ:

ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով տնտեսության զարգացման առաջնահերթությունները, ՀՀ տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերում տնտեսվարող սուբյեկտներին աջակցելու նպատակով կարող է նրանց ներկայացրած հայտերի և ճյուղային նախարարությունների միջնորդությունների հիման վրա **վճարովի տեղերի շրջանակներում** սահմանել որոշակի քվոտաներ կամ հատկացնել լրացուցիչ **վճարովի տեղեր**³⁴ տվյալ կատեգորիայի դիմորդների համար, սահմանելով նաև այն բուհերի ու մասնագիտությունների (ֆակուլտետների) ցանկը, որտեղ կարող են դիմել տնտեսվարող սուբյեկտների կողմից գործուղված դիմորդները:

Նման իրավունք կարող է տրվել, օրինակ, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային գոտիներում գործունեություն ծավալող գյուղատնտեսական և սննդի վերամշակման ձեռնարկություններին, հանքարդյունաբերության, լեռնամետալուրգիայի, մետաղամշակման ոլորտի կազմակերպություններին՝ համապատասխանաբար անասնաբուժություն և անասնաբուծություն, օգտակար հանածոների ստորգետնյա մշակումներ, օգտակար հանածոների հարստացում, բաց հանքային աշխատանքներ, գունավոր մետաղների մետաղագործություն մասնագիտությունների գծով:

Հայաստանի Հանրապետության տնտեսության համար հեռանկարային և ռազմավարական ճյուղերում տնտեսվարող սուբյեկտներին՝ բուհում ուսանելու համար նպատակային գործուղման իրավունքի վերապահումը.

- կաջակցի տնտեսության տվյալ ոլորտի ձեռնարկությունների զարգացմանը,

³³ ՀՀ պետական բուհերի 2005թ. առկա ուսուցման ընդունելության կանոնների համաձայն (մաս 3-րդ, կետ 24) ՀՊՄՀ-ում, ԵրՊԼՀ_ում, ԳՄԻ-ում, ՎՄԻ-ում, ՀՊՃՀ Գորիսի մասնաճյուղում սահմանված անվճար տեղերի 50-ական տոկոսի չափով տեղեր էին հատկացվել տարածքային կառավարման մարմինների կողմից գործուղված դիմորդների համար՝ մանկավարժական մասնագիտությունների, ՀԳԱ-ում՝ անասնաբուժություն մասնագիտության գծով, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի հայտերի հիման վրա՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզչական ֆակուլտետում՝ անվճար տեղերի 30%-ի չափով: Տե՛ս «ԴԻմորդ 2005»: ՀՀ պետական բուհերի 2005թ. առկա ուսուցման ընդունելության կանոններ: Երևան, 2005, էջ 9-10:

³⁴ Այդ տեղերը պետք է լինեն վճարովի, ի տարբերություն տարածքային մարմինների կողմից գործուղված դիմորդների համար սահմանված տեղերի, որոնք անվճար են (ուսման վարձը փոխհատուցվում է պետության կողմից):

- լրացուցիչ աջակցություն կհանդիսանա բուհերի, հատկապես վերջին տարիներին համեմատաբար քիչ դիմորդներ ունեցող ֆակուլտետների համար,
- կխթանի և կնպաստի բուհերի (և մյուս մասնագիտական ուսումնական հաստատությունների) շուկայամետ գործունեությանը,
- կնպաստի մասնագիտական ուսումնական հաստատությունների և գործատուների միջև կայուն կապերի ու համագործակցության ձևավորմանը:

7. ՀՀ բուհերում ուսման վարձաչափի սահմանման մասին

Իրականացված ծրագրի շրջանակներում կազմակերպված քննարկումներն ու ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՀ բուհական համակարգում առկա խնդիրներից մեկն էլ կապված է ուսման վարձի չափի սահմանման սկզբունքների հետ:

Ներկայումս ուսման վարձաչափերը, ըստ էության, սահմանվում են սոսկ առաջարկի և պահանջարկի հարաբերակցության հիման վրա, ելնելով տարբեր մասնագիտությունների գծով ընդունելության քննությունների մրցութային վարկանիշից:

ՀՀ կառավարությունը և նրա լիազոր մարմինը չունեն իրավական լուրջ լծակներ ու մեխանիզմներ այդ ոլորտում քաղաքականությունը կանոնակարգելու համար:

Առաջիկայում, թերևս, անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ և իրավական փաստաթղթեր, որոնք հնարավորություն կտան պահանջել բուհից սահմանվող վարձաչափը հիմնավորել առաջին հերթին ուսումնական գործընթացի ծախսատարությամբ, կկրճատեն մեկ սովորողի ուսման համար պետական նորմատիվներով նախատեսված և բուհերի կողմից սահմանված վարձավճարների միջև եղած տարբերությունները:

Այդ քայլերը ենթադրվում են կրթության սոցիալական դերով ու նշանակությամբ, սոցիալական պետության գործառույթներով, ինչպես նաև հասարակության տարբեր շերտերի համար կրթության մատչելիության գործակցի բարձրացման քաղաքականությամբ:

8. Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ինտեգրվելու քաղաքականությունը որպես ՀՀ բուհական համակարգի զարգացման կարևոր գրավական

ՀՀ բարձրագույն կրթության համակարգի զարգացման հեռանկարները եվրոպական բարձրագույն կրթության համակարգում ինտեգրվելու և եվրոպական կրթական տարածքում գործելու ռազմավարությունը մնում է ՀՀ պետական քաղաքականության ներկայիս առաջնահերթություններից մեկը:

Բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության զարգացման նպատակով սույն ծրագրում ներկայացված առաջարկությունները, բխելով հասարակության և կրթական համակարգի զարգացման ներքին հիմնախնդիրներից, էապես միտված են

եվրոպական կրթական դաշտին ինտեգրվելու քաղաքականության բաղադրիչների իրագործմանը: Այդ քաղաքականության ծրագրային հիմնադրույթները հստակ ձևակերպված են «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությամբ», որի հետևողական իրագործումը բարձրագույն կրթության, տնտեսության և հասարակության զարգացման կարևոր գրավականներից մեկն է:

9. Առաջարկություններ նախնական և միջին մասնագիտական

կրթության ոլորտի համար

Նախնական (արհեստագործական) կրթական համակարգի վերականգնումը և միջին մասնագիտական կրթության հաստատությունների ցանցի զարգացումն ու արդիականացումը Հայաստանում կարևորվում է կրթական համակարգի օղակների ամբողջականացման, հասարակության ընդհանուր կրթամակարդակի բարձրացման, տնտեսության զարգացման, զբաղվածության մակարդակի ավելացման ու գործազրկության կրճատման, աղքատության հաղթահարման ու սոցիալական լարվածության թոթափման տեսանկյուններից:

2005թ. դրությամբ նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացման ուղղությամբ կատարվել են էական քայլեր. ընդունվել են ոլորտը կարգավորող հիմնական իրավական փաստաթղթեր՝ «Կրթության մասին» (1999թ.) և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (2005թ.) ՀՀ օրենքները, «Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը» (2004թ.), իրականացվել են դրամաշնորհային հետազոտական ծրագրեր:

Ոլորտի արդյունավետ և նպատակային զարգացման համար, սակայն, անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ ու հետազոտություններ:

Սույն ծրագրի շրջանակներում հավակնություններ չունենալով սպառիչ լուծումներ առաջարկել համակարգի առջև ծառայած բոլոր հիմնախնդիրներին, փորձագետների խումբը նպատակահարմար է գտնում ներկայացնել ոլորտի զարգացման ռազմավարության համար սկզբունքային մի քանի առաջարկություններ ու երաշխավորություններ:

9.1. Նկատի ունենալով նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առավելապես տարածաշրջանային դերն ու նշանակությունը, դրանց մասնագիտական կողմնորոշման, ուսումնական ծրագրերի մշակման խնդիրների լուծումն անհրաժեշտ է իրականացնել տվյալ տարածաշրջանի (մարզ, ենթաշրջան) սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի համատեքստում՝ տարածքային կառավարման մարմինների և ճյուղային նախարարությունների մասնագետների հետ միասին:

9.2. Իրավական փաստաթղթերի մակարդակով խրախուսել (ընդհուպ մինչև հարկային ժամանակավոր արտոնությունների սահմանում տնտեսավարող սուբյեկտների համար)

նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման, դրանց նյութատեխնիկական բազայի հարստացման, ուսումնական ծրագրերի մշակման, արտադրական ուսուցման և պրակտիկայի կազմակերպման աշխատանքներում գործատուների ներգրավվածությունն ու մասնակցությունը:

Գա կապահովի նաև կրթության բովանդակության շուկայամետ բնույթը, որոշակի երաշխիքներ ստեղծելով շրջանավարտների հետագա աշխատանքային զբաղվածության համար:

9.3. Բուհերում ստեղծվող կարիերայի զարգացման կենտրոնների համանմանությամբ անհրաժեշտ է ձևավորել կառույցներ, որոնք կզբաղվեն աշխատաշուկայի որոշակի հատվածում առաջարկի և պահանջարկի հետազոտման, ՆՄՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների շրջանավարտների աշխատանքային զբաղվածությանն աջակցելու, սովորողների արտադրական պրակտիկայի կազմակերպման, ետուսումնական աշխատանքային կարիերայի մոնիտորինգի, ուսումնական հաստատությունների ղեկավարության ու ոլորտի կառավարման օղակների համար համապատասխան տեղեկատվության ու խորհրդատվության ներկայացման խնդիրներով:

Հաշվի առնելով, սակայն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սուղ հնարավորությունները, նպատակահարմար է այդ օղակները ձևավորել տարածքային կառավարման կրթության բաժինների կառուցվածքում, կանոնակարգելով դրանց անմիջական կապն ու համագործակցությունը ինչպես տեղի մասնագիտական ուսումնական հաստատությունների, այնպես էլ ՀՀ ԿԳՆ մասնագիտական կրթության վարչության հետ:

9.4. ՀՀ սոցիալական ապահովության և կրթության ու գիտության նախարարությունների համատեղ ուժերով և ֆինանսավորմամբ նախնական և միջին մասնագիտական կրթական ուսումնական հաստատություններում կազմակերպել զբաղվածության ծառայության տարածաշրջանային կենտրոններում գրանցված գործազուրկների կարճատև ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, մշակելով անհրաժեշտ մեթոդական ու ծրագրային փաթեթներ:

Ձևավորել համապատասխան իրավական դաշտ և կանոնակարգ աշխատակիցների վերապատրաստման և մասնագիտական ուսուցման կարիք ունեցող կազմակերպությունների և մասնագիտական կրթության հաստատությունների փոխշահավետ համագործակցության համար:

9.5. ՀՀ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ և ղեկավարությամբ կազմակերպել որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացներ ՆՄՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների դասավանդողների և արտադրական ուսուցման վարպետների համար, այդ նպատակով

հնարավորինս կոորդինացնելով նաև ոլորտում ծրագրեր իրականացնող միջազգային և հասարակական կազմակերպությունների հնարավորությունները:

9.6. Առաջնորդվելով զբաղվածության մակարդակի ավելացման, աղքատության հաղթահարման և ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման տրամաբանությամբ, **անհրաժեշտ է հնարավորություն տալ և խրախուսել նախնական ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին իրականացնելու նաև «ոչ կրթական», արտադրական ծրագրեր:** Օրինակ, ուսումնական հաստատությանը կից ստեղծել արտադրամաս, փոքր ձեռնարկություն (ավտովերանորոգման, կենցաղային և էլեկտրական սարքավորումների նորոգման, գեղարվեստական իրերի պատրաստման և այլն), կնքել վճարովի ծառայությունների մատուցման ու համագործակցության պայմանագրեր տվյալ ոլորտի ձեռնարկությունների հետ:

Դա թույլ կտա ոչ միայն ընդլայնել արտադրական ուսուցման հնարավորությունները, այլև ֆինանսական միջոցների հայթայթման (աշխատավարձի բարձրացման, շենքային պայմանների բարելավման) լրացուցիչ աղբյուր կդառնա ուսումնական հաստատության համար: Բացի այդ, սովորողներին թեև ոչ լրիվ զբաղվածության հնարավորություն ընձեռելով, կարող է նաև լրացուցիչ խթան, «կատալիզատոր» հանդիսանալ տնտեսության տվյալ ոլորտում դրական տեղաշարժերին նպաստելու առումով:

Անհրաժեշտ է առաջնորդվել նաև այն տրամաբանությամբ, որ մասնագետը, որպես տնտեսության գլխավոր գործոն, ի վիճակի է վերափոխիչ գործունեություն ծավալել տնտեսության մեջ, իսկ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ ոչ միայն բավարարել տնտեսության և աշխատաշուկայի պահանջարկը, այլև ունենալով տնտեսական գործունեության և մասնագիտական պոտենցիալի արտադրական գործադրման որոշակի հնարավորություններ՝ շտկումներ և ինովացիաներ մտցնել տնտեսության տվյալ ոլորտում:

9.7. Հաշվի առնելով նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգի գործունեության տնտեսական ու սոցիալական կարևոր նշանակությունը, և այն, որ այդ **հաստատություններում սովորողները**, որպես կանոն, սոցիալապես ավելի անապահով խավերի ներկայացուցիչներ են, առաջիկա 5-10 տարիների ընթացքում պետությունը պետք է անվճար կրթության իրականացման ավելի մեծ հնարավորություններ ընձեռի նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, քան բուհական համակարգում, ավելացնելով այդ նպատակով հատկացվող բյուջետային միջոցները:

9.8. Պետք է նաև վերանայել մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների ցանկը՝ աշխատաշուկայի տարածաշրջանային և հանրապետական հատվածների մոնիտորինգի հիման վրա, համապատասխանեցնելով այն տնտեսության կողմից թելադրվող պահանջներին:

Հավելված 1. ԳՂ բարձրագույն ուսումնական (ԲՈՒՂ) և միջին մասնագիտական (ՄՍՈՒՂ) պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների թիվը

10. Հավելվածներ


	Ուսումնական տարին	1988/1989	1989/1990	1990/1991	1991/1992	1992/1993	1993/1994	1994/1995	1995/1996	1996/1997	1997/1998	1998/1999	1999/2000	2000/2001	2001/2002	2002/2003
1	Բազմապրոֆիլ ԲՈՒՂ-եր	1	1	1	2	2	2	2	2	2	2	2	2	4	4	4
2	Մասնագիտացված ԲՈՒՂ-եր	12	12	13	12	12	12	12	13	13	14	14	14	15	16	16
3	Պետական ԲՈՒՂ-եր	13	13	14	14	14	14	14	15	15	16	16	16	19	20	20
4	Պետական ՄՍՈՒՂ-եր	65	69	70	69	70	69	72	72	72	75	78	77	75	77	77
5	Ոչ պետական ԲՈՒՂ-եր	1	2	10	24	33	35	40	40	75	87	84	82	71	71	72
6	Ոչ պետական ՄՍՈՒՂ-եր	0	0	0	0	0	0	...	7	12	12	12	34	30	22	23
7	Արտերկրյա ԲՈՒՂ-երի մասնաճյուղեր, համատեղ ԲՈՒՂ-եր	0	0	0	0	0	0	0	1	4	5	5	7	9	14	17

Աղբյուր՝ ԳՂ ԱԿԾ.

«Հայաստանի վիճակագրական տարեգիրք»,

«Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» վիճակագրական ժողովածու

Հավելված 2. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորման բնութագիրը տարբեր երկրներում: (Հորիզոնական առանցքը ցույց է տալիս ուսման ֆինանսավորումը, իսկ ուղղահայաց առանցքը ցույց է տալիս հետազոտությունների և հետազոտական խորհուրդների ֆինանսավորումը)¹



UK- Սեժ Բրիտանիա, US- Ամերիկայի Միացյալ Նահանգներ, JAP-Ճապոնիա, PL- Լեհաստան, CR- Խորվաթիա, HUN- Հունգարիա, BEL- Բելգիա, AUS- Ավստրիա, FRA- Ֆրանսիա, A- Ավստրալիա, GER- Գերմանիա, NZE- Նոր Զելանդիա, DK- Դանիա, SWE- Շվեդիա, NL- Նիդերլանդներ,

¹ Աղբյուրը **Արհմիջոցառում Թ**. Օբի աի ր նաի ա ր աի ծյաի եա: Օաի աի օեե Օբի աի նեժի աաի եյ աւնթաի ր աժաչի աաի եյ ե ր ի եեՕե+անեեե եօժի ա նեՕօաօեե ի աժաի e+աի ի սօ նժաանՕա. "Օր եաժժեՕաՕոեի ա օր ժաաեաի եա". 2003, N3(26), թ. 51-60: Տե'ս նաև <http://www.ecsocmane.edu.ru/univman/msg/152411.html>:

Հավելված 3. 2002թ. անվճար ուսուցմամբ սովորող մեկ ուսանողին ընկնող ծախսը ըստ բուհերի (հազ. դրամ)

Բուհի անվանումը	Ըստ գործող պետական նորմատիվների		Ըստ պետական բուհերի վարձավճարի չափերի	Յուրաքանչյուր մասնագիտության գծով սահմանված վարձավճարը ոչ պետական բուհերի կողմից
	ընդամենը	առանց կրթաթոշակի		
Երևանի պետական համալսարան	167.6	109.2	221.4	171.4
ՀՊՃՀ	165.2	107.5	196.5	189.4
Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ	117.8	61.3	318.9	200.0
ԵՊՃԻ	150.0	94.3	204.5	200.1
Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան	153.4	96.3	169.5	160.1
Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան	119.4	61.3	350.0	196.6
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	465.8	407.9	338.8	332.7
Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա	374.0	316.0	359.5	339.4
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ	282.5	224.4	317.8	317.8
Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ	187.6	128.3	182.9	164.4
Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ	142.0	84.7	147.1	139.7
Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան	188.3	129.0	661.1	261.1
Հայկական գյուղատնտեսական ակադեմիա	226.6	169.0	191.3	170.8
Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ	212.2	155.7	180.0	180.0
Միջինը՝	166.5	112.4	243.5	188.9

Աղբյուրը՝ ՀՀ ԿԳ նախարարություն «Բարձրագույն կրթություն», պր. 1: Երևան, 2005թ., էջ 111:

Հավելված 4. ԵՊՀ որակավորման բարձրացման ֆակուլտետի 1997-2002թթ. ուսանողների թիվը

տարեթիվը	1997	1998	1999	2000	2001	2002	ընդամենը
մասնագիտությունը							
Ֆիզիկա	22	-	20	16	5	12	75
Մաթեմատիկա	-	33	15	11	12	3	74
Ընդամենը	22	33	35	27	17	15	149

Աղբյուրը՝ ԵՊՀ ետքուհական մասնագիտական կրթության վարչություն

11. Օգտագործված գրականություն և աղբյուրներ

1. «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Երևան, 2003թ.:
2. «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 1997-2003թթ. վիճակագրական ժողովածու»: ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004:
3. «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Մասնագիտական կրթություն և մասնագիտական զարգացում»: Երևան, 2003թ.:
4. Կրթությունը Հայաստանում: Երևան, 2004:
5. Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում: ՄԱԿ-ի ԶԾ, Երևան, 2002թ.:
6. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2001թ. հունվար-դեկտեմբերին; 2002թ. հունվար-դեկտեմբերին; 2005թ. հունվար-սեպտեմբերին, 2004թ. հունվար-դեկտեմբերին»: Տեղեկատվական զեկույցներ: ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004թ.:
7. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2003թ. և դինամիկ շարքեր»: Վիճակագրական ժողովածու: ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004թ.:
8. «ՀՀ սոցիալական վիճակը 2004թվականին», ՀՀ ԱԾՎ, Երևան 2005թ.:
9. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004թ
10. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ ցուցանիշներ): Երևան, 2003:
11. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ք. Երևանի ցուցանիշներ): Երևան, 2003:
12. ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարություն: «Բարձրագույն կրթություն»: ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ: Երևան, 2005թ.:
13. ՀՀ պետական բուհերի 2005թ. առկա ուսուցման ընդունելության կանոններ: «Դիմորդ 2005»: Երևան, 2005:
14. «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին», «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» և «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ տալու կարգը հաստատելու մասին»՝ ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի, սեպտեմբերի 8-ի, 15-ի, թիվ 975; 1986-Ն; 2114-Ն որոշումները:
15. *Սեյրուժյան Ա.*, «Աշխատանքի շուկայի և զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, 2004թ.:
16. «Միջին մասնագիտական կրթությունը Հայաստանում: Վարչաիրավական հարցեր, համակարգի գործունեությունը մասնագիտական զբաղվածություն, ֆինանսական խնդիրներ», Երևան, 2002թ.:
17. Ռազմավարություն ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման: Երևան, 2004թ.:
18. Ուսուցման ռազմավարություններ ուղղված տեղական զարգացմանը: Երևան, ՀԱԴ, 2004թ.:
19. “Economics Careers, Jobs and Degree Information”, www.CareerOverview.com, 2004.
20. Global education digest 2005: Comparing Education Statistics Across the World. UNESCO Institute for Statistics, Montreal, 2005.
21. *Goldhorpe S. H.*, The ,Goldhorpe’s Class Schema, Constructing Classes: Toward a New Social Classification for the UK, Swindon. 1997.

22. "Labour market mismatches in euro area countries", European Central Bank, March 2002.
23. *Treiman D. J.*, Occupational Prestige in Comparative Perspective. Academic Press, New York, 1977.
24. Vocational Training in Germany. BYBB, 2002
25. *Ááéíáá Á.Ó., Èèñ Í.È., Ñòðáæáá Á.È.* "Áí ñóáàðñòáá-ó÷-áñòí èèè ÑÍ Á í à ñòáðòá ááñýðèèáðèý Ì Í Í í í áðàçí ááí èþ äèý òñòí ÷èáí áí ðàçàèðèý", Ì èí ñè, 2005.
26. *Áí ññáí ðòáéí Ó.* Ôèí áí í ñáí à í áí ðýæáí èà: òáí ááí òèè Ôèí áí ñèðí ááí èý á ùñòááí í áðàçí ááí èý è í í èèð÷èè èé è óðñ á ñèòóáòèè í áðáí è÷-áí í ùò ñðááñòá. "Óí èááðñèòáðñèí á óí ðááèáí èà". 2003, N3(26). <http://www.ecsocmon.colu.ru/univman/msg/152411.htm>
27. *Áðááí áá È.* "Ðí ññèý à Áí èí í ñèí ì ì ðí òáññá: ñáðááèí à áí èüøí áí í óèè." "Á ùñòáá í áðàçí ááí èà á Ðí ññèè", N4. 2004. <http://courier.com.ru/cour0467/2800.htm>
<http://dancor.sumy.ua/articles/1245.htm>
28. „Çaðèàèí í áááèè“. 29 ì äý 2004 á., N21.
29. *Èèþáá Á.È., Í áòóóí áá Á.Ñ.* Ýèí í í í èà èèáññè÷-áñèí áí óí èááðñèòáðòá á í áðáóí áí úé í áðèí á. www.ecsocman.edu.ru/univman/msg/244362.html
30. *Í èéí èááá Þ.* Ðàèòèí á í ðí Ôáñèè: Ñááí áí ý è ÷áðàç í ýòü èàð. Áàçàòá "Ááí èí ð". 03.06.2004. http://www.prokredo.ru/ru/about_us/press/index.php?from13=4&id13=18
31. *Ñááèöèáý Í.* Àèüí à-ì áòáð á èðááèò. http://www.ng.ru/education/2005-02-04/8_almamater.html
32. *Øòáéáá Í áòáð.* Èðááèò í í á çàèí á IQ. <http://www.credits.ru/consumer/articles/137/>
<http://www.ecsocmane.edu.ru/univman/msg/152411.html>
http://www.ng.ru/edocation/2005-02-04/8_almamater.html
http://www.prokredo.ru/ru/about_us/press/index.php?from13=4&id13=18
<http://test.educred.rbc.ru/ru/credits/us/>
<http://test.acba.am/mainframe.php?akt1=9#top>
http://i2r.ru/static/223/out_12083.s.html
<http://www.mfe.gov.am/>
<http://www.aua.am>
http://www.gain.ru/Documents/Minobr/Prik_m/prink379_04.htm
<http://www.ilo.org/public/english/230/index.htm>
<http://www.mmcc.ru/main.php?id=1>
<http://www.rabotaplus.com.ua>
<http://informkiosk.com/West%20Europe/Germany/Political-2-4.html>
http://international.edu.ru/analytics/national_systems/2373/

